


ԳՈՏԱՐ ՌՇՏՈՒՆԻ



ՀԱՅՈՑ ԲԱԽՏԻ  
ՃԱՄՓԱՆԵՐՈՎ

9(47.925)

Պ-58

հ.Ձ

ԳՈՒԾՐ ՈՇՏՈՒՆԻ

*Ներկերևաբանական  
խնայող քաղաքացի  
Զբաղմունք  
Ներքին  
հետաքննչ*

# ՀԱՅՈՑ ԲԱՆՏԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ

19.04.22

6443

Զրուցավեպ Ռշտունյաց

Ծիծեռնակը բույն էր շինում,  
Եվ շինո՞ւմ էր, և երգո՞ւմ,  
Ամեն մի շուղ կպցնելիս  
Առաջվա բույնն էր հիշում:

ԵՐԵՎԱՆ  
ԼՈՒՄԱՎՆ  
2022



ՀՏԴ 94(479.25):82-31  
ԳՄԴ՝ 63.3(52)+84-44  
Ռ-588

Ռշտունի Գոհար

Ռ-588 Հայոց բախտի ճամփաներով:  
Պատմագեղարվեստական ստեղծագործություն  
/ Գ. Ռշտունի.- Եր.: Լուսակն, 2022.- 272 էջ:

Ռուսերենից թարգմանեց հեղինակը:

Ավելի քան քսան գրքերի հեղինակ Գոհար Ռշտունին ձեր ուշադրության է ներկայացնում հայ ականավոր հրամանատար Սպարապետի, Հայաստանի իշխան Թեոդորոս Ռշտունու մասին գիրքը: Գիրքը նաև պատմում է հայ ժողովրդի պատմության մեջ Ռշտունի ազգանվան հետ կապված իրադարձությունների մասին: Եվ այն ընդգրկում է այս պատմության երկու հազարամյակները: Պատերազմներ Պարսկաստանի, Բյուզանդիայի, արաբների, քաթոլ-մոնղոլների, օսմանցիների, երկաթուղիների և բոլշևիկների հետ...

Շապիկյան դրված է Հայաստանի վաստակավոր նկարիչ Ռուբեն Արուտչյանի «Տիգրան Մեծ, Արածանիի ճակատամարտ» 2017 ստեղծագործության մի հատված: կտավ / ակրիլ 2 x 3 մ:

ՀՏԴ 94(479.25):82-31  
ԳՄԴ՝ 63.3(52)+84-44

ISBN 978-9939-899-12-1

© Լուսակն, 2022

*Այս պատմավեպը խորին հարգանքով և մեծ սիրով  
նվիրում եմ ծնողներին և նրանց ծնողների հիշատակին*

### Երախտագիտության տողեր

Իմ յուրաքանչյուր գրքում ես երախտագիտությունս եմ հայտնում նրանց, ում պարտական եմ հերթական հոգեզավակյա ի հայտ գալու համար: Արժեքավոր հուշումների համար երախտագիտությունս եմ հայտնում մեր նշանավոր ազգագրագետ *Հրանուշ Խառատյանին*, Հայաստանի վաստակավոր նկարիչ *Ռուբեն Արուտչյանին*՝ գրքի կազմի հրաշալի նկարազարդման համար, երախտապարտ եմ այն առիթին, որն ինձ ծանոթացրեց հայտնի գրականագետ Շեկտոր Ռշտունու որդու՝ *Տիգրան Ռշտունու* հետ: Շտրիակալ եմ ազատամարտիկ ավագ գրչընկերոջս՝ *Հովիկ Վարդումյանին*, ձեռագիրս մեծ հոգատարությամբ հարդարելու համար:

Երախտապարտ եմ *Անուշիկին*՝ իմ սիրելի ու հոգատար դստերը, ով գիտի ստեղծել աշխատանքի հարմարավետ պայմաններ, ում շնորհիվ կարող եմ իրականացնել իմ մտահոյացումները՝ գրքեր գրել ու հրատարակել, ինչպես և եղբորս հրաշալի թոժոնուհուն՝ *Լիլի Ղարիբյանին* հայերեն տեքստը նուրբ և մանրակրկիտ հղկելու համար:

Եվ, իհարկե, երախտապարտ եմ այն հարագատներին և մտերիմներին, որոնց ներկայությունն իմ կյանքում չափազանց կարևոր է լիարժեք գոյություն ունենալու և ստեղծագործելու համար:

Եվ, վերջապես, երախտագիտությունս եմ հայտնում ընթերցողիս, ով կընթերցի գիրքս ու կհասկանա, թե ինչի մասին եմ ցանկացել խոսել իր հետ:

## ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Գոհար Ռշտունին իր գրական հայտը ներկայացրեց 90-ականների երկրորդ կեսին, թեև ստեղծագործել սկսել է շատ ավելի վաղ: Առաջին գիրքը ռուսերեն բանաստեղծությունների ժողովածուն էր: Թեև հեղինակը ստեղծագործում է և՛ հայերեն, և՛ ռուսերեն, բայց առաջին գրքերը, այդ թվում՝ «Մանուկ Բեյը», Էդվարդ Իսաբեկյանի «Իզդիթ» վեպի թարգմանությունը, «Հուշեր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մասին», «Գարոլինալ Գրիգոր Աղաջանյան», «Լազարների ընտանիքի ճաճանկներում», «Ընդհանուր հայկական գեն» (պատմական ակնարկների ժողովածու) ուղղված էին ռուս ընթերցողին...

Հայ ընթերցողը նույնպես տեղյակ էր Գոհարի գրքերի մասին, և այդ հետաքրքրությունն առավել բորբոքվեց Չարենցի «Գապկազ թամաշա»-ի ռուսերեն թարգմանությամբ, ապա նաև՝ չափածոյի ու պատմվածքների հայերեն ժողովածուների լույս ընծայումից հետո (հրատարակել է բանաստեղծությունների և պատմվածքների ավելի քան տասը ժողովածու, այդ թվում՝ հայոց լեզվով): Հետաքրքրվածությունն, անշուշտ, կար, մինչդեռ հայ ընթերցող հանրությունը դժվար էր հարմարվում նույնանուն մեկ այլ (ընթերցողը մինչ այդ ճանաչում էր Գոհար Ռշտունի լրագրող-հրատարակախոսին), այն էլ երկվեզու, հեղինակի երևան գալու փաստի հետ:

Առավել դժվար էր վիճակը գրողական հանրույթի շրջանակում... Եվ, ահա, անընդհատ ստեղծագործող ու իրար հետևից գրքեր տպագրող հեղինակի համառությունը ճեղքեց այս պատկերը ևս. 2013-ին նա ընդունվեց ՌԴ-ի, երկու տարի անց՝ Հայաստանի գրողների միության շարքերը: Իհարկե, հետևողականության օրինակների պակաս ընթերցողը չունի, բայց որտեղի՞ց էր գալիս գրողի այսչափ զիտակցված համառությունը... Ահա հարց, որը կամա թե ակամա սկսեց զբաղեցնել հեղինակ-

կին, ինչը և տարիներ անց հանգեցրեց մի նոր, կարելի է ասել, անսխաղեպ գրքի ծննդին, որը և ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

Մինչ այս գրքին անցնելը, սակայն, նկատենք գրողի ստեղծագործական պրպատումների ուղին, որը նրան բերեց ռուսական այս նոր հանգրվանին: Ակնհայտ է, իհարկե, հարազատ ժողովրդի պատմության ու դրա մեջ իր սեփական արմատների որոնման հետաքրքրությունը, ինչը դրսևորվեց «Իզդիթ» վեպի թարգմանությամբ: Ասեմ, որ հորական կողմից Գոհարի ծնողները Խոյից եկած իզդիրեցիներ են...

Գոհարի ստեղծագործության մեջ սեփական ժողովրդի պատմությունն ու պատմական անհատները անընդմեջ խաչաձևվում են, ինչի վառ օրինակն են նրա Մանուկ Բեյը, Վեհափառը, ինչպես նաև Բյուզանդիայից Ռուսական արքունիք հարս եկած հայուհի Աննան, Լազարյանն ըի գերդաստանի պատմությունը... Եվ ի՞նչ է որոնում հեղինակը, ի՞նչ խորհուրդ է տեսնում մեր պատմության, պատմական առիթները դեմքերի այս շղթայի մեջ... Առաջինը, անշուշտ, ուսանելի փորձն է և, ապա, գենով փոխանցվող այնպիսի հատկանիշներ ու իմաստություն, ինչի շնորհիվ պատմության քառուղիներում մեր մեռնող, բայց փյունկիյի պես հարություն առնող ժողովուրդը կա ու իր խոսքն է ասում աշխարհին:

Ինչ վերաբերում է ներկայացվող այս նոր գրքին, ապա խոստովանեմ, որ նրա երևան գալու գաղափարն ինձ ոգևորեց, և ինքս ցանկություն հայտնեցի նախաբանը գրել: Անկեղծաբանում, որ տվածս խոստումը՝ պայպերիցս ժառանգած պարտավորությունն անպայման իրականություն դարձնելը, ինձ հեշտ չտրվեց... Պայթեց պատերազմը, և ինչպես յուրաքանչյուր հայի, այդպես էլ ինձ համար այլ բանի վրա կենտրոնանալն ու այս ստեղծագործության մասին նախկին ոգևորությամբ մտքերս շարադրելը հետզհետե դարձան էլ ավելի դժվար... Եվ դժվար՝ մի քանի առումով: Կարծես՝ իրերի տրամաբանության բերու-

մով, մի դաժան փորձաքննության էր դրվում հեղինակի այս նոր ստեղծագործության ողջ կոնցեպցիան՝ մեր ժողովրդի գոյատևման, տոկունության ու արարման շտրիք ոչ մի պարագայում չկորցնելու գաղտնիքը...

Ահա նման խորհուրդ է պարունակում Գոհար Ռշտունու՝ Լույսամբ պրպտող ու գիտական ջիղ դրսևորող հեղինակի, այս նոր գիրքը, որին, թեև ամբողջության մեջ բոլոր հրեթացս նորացվող մանրամասներով, կրկին խոստովանեմ, մինչև վերջ ծանոթ չեմ, բայց որի ծնունդը միակշանակ ողջունում եմ և այն էլ՝ մի քանի ասպեկտով: Նախ ի՛նչ է արել այստեղ հեղինակը. լայն ընթերցողին է ներկայացրել մարդկային ղեզերումների և գոյապայքարի պատմություն՝ խարսխված իրական անձանց ու իրադարձությունների վրա, ինչին հեղինակը տեղեկացվել է իր ծնողներից: Երկրորդ՝ զուգահեռաբար ներկայացրել է հայ ժողովրդի պատմական նախարարական տոհմերը մեկի՝ Ռշտունյաց տան առաքելությունը՝ ի ղեմս այդ տոհմի մեծագործ անհատների, և այդ ամենին զուսարել այդ մասին տարբեր պատմիչների ու պետական-քաղաքական գործիչների երբևէ արտահայտված ամենատարբեր տեսակետներ:

Երրորդ՝ իր հյուսած էկզիստենցիալ պատմությունը գոտեպնդել է նույն տոհմի՝ համար ու դժվարությունների հանդեպ չընկրկող այլ ներկայացուցիչների պատմություններով, ինչն, անշուշտ, լրացուցիչ լիցք ու լավատեսություն է հաղորդել գրքին: Եվ, վերջապես, Գոհար Ռշտունի հեղինակն արել է մի բան, ինչը հայ իրականության մեջ, կարծում եմ, անպայման կունենա ցանկալի շարունակություն. նա ստեղծել է հայ ազգային մի սագա՝ պատմական տոհմի ու նրա վառ անհատների անցած ճանապարհի մասին, ինչին, համոզված եմ, կհետևեն գրվելիք այլ նմանատիպ գրքեր, թեկուզ և այլ հեղինակների ձեռքով, պատմական տոհմերի և նրանց նշանավոր անհատականությունների անցած ուղիների մասին՝ Կամսարականների,

Պահլավունիների, Գևունիների, Բզնունիների, Բագրատունիների, Արծրունիների, Ամատունիների ընտանիքներից ...

Թե ինչ պատմություններ է պարունակում այս գիրքը, դա արդեն ընթերցողի բացահայտման, հիացքի, վայելքի առարկա է և, ինչու չէ, նաև քննադատության տիրույթում է, բայց որ այս գրքով հեղինակը մեր գրական իրականություն է բերում համապատումի նոր մշակույթ, առավել քան ակնհայտ է:

Այն ամենը, ինչ պատմվում է այս գրքում, արդեն իսկ բացահայտման, հիացմունքի, հաճույքի իրական պատմական տեղեկատվություն սովորելուց, ընդհանուր ընթերցողի համար ոչ միշտ է և ոչ բոլորովին հայտնի, դուրին և բնական: Քննադատությունը նույնպես հնարավոր է, բայց առավել քան ակնհայտ է, որ այս գրքով հեղինակը պատմական և գեղարվեստական մշակույթի նոր համապատասխանություն է բերում մեր գրական իրականություն:

Տիգրան Ռշտունի  
«Գրաշխարհ» թերթի գլխավոր խմբագիր, «Հայոց  
իշխանների միության» ղեկավար առաջնորդ

## ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱՍԱԲԱՆԸ

Հայաստանը չունի պատմության սկիզբ.  
այն այստեղ միշտ է եղել (Անդրեյ Բիրով)

Ամեն ընտանիք իր պատմությունն ունի... Այս գիրքը պատմում է հայտնի նախարարական տասն ազգանունը կրող մի հայ մարդու ընտանիքի ճակատագրի մասին, ում ազգանվանակիցն է եղել իշխանաց իշխան, նշանավոր զորավար և սպարապետ Թեոդորոս Ռշտունին, այն սակավաթիվ ղեկավար այրերից մեկը, ում հաջողվել է միավորել հայերին: *«Եվ գուցե հայ ազգի ճակատագրին այլ կերպ ընթանար, եթե Թեոդորոս Ռշտունու նման քաղաքական մտածողներ շատ լինեին հայ կառավարող շրջանների մեջ»*: Լեռ

Սա գրուցապատում է երբեմնի մեծ, բայց իր գոյության ընթացքում քանիցս բաժան-բաժան եղած ու հզորագույն տերությունների միջև բաժանված երկրի բախտի մասին՝ ներհյուսված պապիս նախատիպը հանդիսացող Մեսրոպ Ռշտունու ընտանիքի պատմությամբ: Ճանապարհները, որով անցան իմ նախնիները հայրուրամյակներ ի վեր, հայ ժողովրդի բախտի ճամփաներն են:

Գրքում կերպարները երեքն են՝ ընտանիքի գլխավորը՝ Մեսրոպ Ռշտունին՝ իր գերդաստանով, պետությունը՝ երեք ղեկավար, ինքը՝ հեղինակը, որը խնամքով և թախնդրորեն վերստեղծում է Հայաստանի պատմության մեջ մասնակից պետությունների պատմությունը, ճակատագրական դերը հսկայական ժամանակաշրջանում Ռշտունիքից այս հայ ընտանիքի համար՝ ներգրավված իր մնացորդներով և նոր անդամներով:

Օգտագործելով հայ մատենագիրների և պատմաբանների աղբյուրները՝ որպես հեղինակ, ես մանրադիտում եմ հայերի և կայսրական պետությունների յուրաքանչյուր քայլը (դրանցից մի քանիսը՝ Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն, օսմանյան Թուրքիա, ցարական Ռուսաստան, Առաջին Հան-

րապետություն, Սովետական Միություն մեր պատմության հեղինակներն ու ստեղծողներն են...

Ես միշտ ուզում էի գրել գաղթի մասին: Ի վերջո, մեծացել եմ հայախոս ընտանիքում, որը շատ բան էր տեսել և գաղթ, և Առաջին Հանրապետություն, և կուլեկտիվացում, և կուլակաթափում, պատերազմ, և 49 թիվը գիտեին «առաջին ձեռքից»... Մեքենոս գաղթական էին. հորս կողմից Բզդիյր (Սուրմալու) քաղաքից:

Հայրական կողմից փրկվածներն ապրում էին նախ Ղուրղուտլիում (այժմ Արմավիր, իսկ մինչ այդ՝ Հոկտեմբերյան): Մորս կողմից՝ Ալաշկերտից դեպի Էրիվան: Էրիվանից նրանք տեղափոխվեցին Կոտայք, ուր վարժապետ պապս ցուղերում զպրոցներ էր հիմնում և կառուցում: Տանը նրանք հազվադեպ էին խոսում այն օրերի մասին, հայրս ու տատս կամ չէին ցանկանում հիշել վատ օրերը, կամ հոգ էին տանում երեխաների մասին, այնուամենայնիվ, ես փոքր էի և ամեն ինչ այնքան էլ լավ չէի հասկանում: Ես չէի հասկանում, թե ինչպես և ինչու նրանք հայտնվեցին փախտականների և փրկվողների վիճակում, ինչու, ի պատասխան, իրենք թուրքերին չսպանեցին: Գովի, և վերջ»: Երբ մեծացա, հարցրի:

Իհարկե, նրանք խուսափում էին պատասխանից, չգիտեին ինչի հետ համեմատեն. այն ժամանակ ստալինյան և կոմերիտական դաստիարակության պտուղներն էին: Խորհրդային իշխանության անկումից հետո մեր պատմաբանները նոր համարձակվեցին ու սկսեցին գրել և բացատրել: Իսկ մենք մեծացանք մրակ համոզմունքով, որ Ռուսաստանը փրկեց մեզ:

Այդ պատճառով «Մանուկ բեյը» որոշեցի գրել, որ ասեմ՝ կա մի քանի Ռուսաստան: Մեկը թագավորական, ցարական Ռուսաստանն էր. նա մի ձեռքով խլեց գրեթե անտեր տարածքները արևելքում, մյուս հողերը ստացավ Թուրքիայի, Պարսկաստանի հետ Հայաստանի տարածքում վարած պատերազմներից հետո՝ անընդհատ նրանց հետ կիսելով մեր հողը՝ մեր

լեռնաշխարհը: Մյուս կողմից՝ նա հրահրում էր քրիստոնյաներին՝ կենդանի միջանցքով պաշտպանել իր սահմանները մահ-մեղականների միջև, և մենք իսպառ կուշտ էինք այդ մահմեղականներից: Երանք դարերով կուլ էին տալիս մեր երեխաներին, մշակույթը, պատմական հիշողությունը՝ տեղը առաջարկելով սեփական կայարության սովորույթները: Երբորդը կոմունիստական Ռուսաստանն էր, որը դարձավ ԽՍՀՄ, որը ազգերի համար մտահոգության քոլի տակ նրանց իրականում տարավ ձուլման, մերձեցման՝ այս կտրվածքով ոչ մի կերպ չտարբերվելով օսմանյան Թուրքիայից որը վարում էր ատելի քաղաքականություն *ինչը թուրքը չարեց սրով, ոռւսը եկավ արեց գրով: Գեղի ձեռից ազատվեցինք, արքի թաթն ընկանք:*

Իմ տեսակետը և դիրքորոշումը հայ ժողովրդի ճակատագրում այս բոլոր պետությունների դերը պարզելու հարցում ձևավորվել են տասնամյակների ընթացքում և արտացոլում են միայն անձնական մտածելակերպ հիմնվելով, իհարկե, ոչ միայն անձնական դիտարկումների վրա, այլ նաև տարբեր երկրների պատմաբան-հետազոտողների աշխատությունների տեղեկատվությունների, փաստաթղթերի և արխիվային նյութերի ու տարեգրությունների: Հայտնի մարդկանց գրեթե բոլոր երկխոսությունները վերցված են նրանց աշխատանքներից և հոդվածներից:

Իհարկե, ինձ հետաքրքրում են անցյալի իրադարձությունների օբյեկտիվ վերլուծությունն ու ընկալումը, ճանապարհորդությունը դեպի դարերի խորքը, վերստեղծելով անցյալը վերապրել մեկ այլ դարաշրջանից հուզվելու զարմանալի զգացողության անհրաժեշտությունը անցողիկ, նուրբ սարգոստայնի պես...

Երևակայությունը դժվար է վերահսկել ... Ի՞նչ կլինի, էթե մտածեմ, որ ես՝ հեղինակս այս ազգանվան կրողս, նույնպես հնագույն ընտանիքի հետնորդ եմ:

Ոչ որ չի կարող հստակ բացատրել, թե ինչու են մարդիկ գիրք գրում, այն էլ՝ անցյալ դարերի մասին: Շատերը գրում են, քանի որ ստիպված են իմանալ, սովորել: Դրանից հետո անմիջապես տեղեկացնում մարդկանց այն մասին, թե ինչ են կարողացել ընկալել, ինչու է կատարվել, ինչպես է կատարվել, ինչու չի կատարվել: Շատերը չգիտեն կատարվածի մասին, քանի որ ծնվել են բոլորովին վերջերս:

Իհարկե, գրողները գիտեն, որ լավ ընթերցողը սիրում է խիտ գիրք: Ուստի նրանք երկար ու հոգեհեղուցի կերպով բացատրում են իրենց մտքերը, հերոսների մտքերը, նախկին մտքերը, այն մտքերը, որոնք իրենց գլխում եկան ավելի ուշ՝ որոշ ժամանակ անց... Եվ դարերի մեջ մեր բաժինը շատ է. մենք շատ ենք ենք, հնագույն... Լինել թե չլինելու հարցը վախեցնող կանոնավորությամբ պատասխան է պահանջում:

Բայց ինչպե՞ս և ինչպիսի՞նք լինել՝ ոչ որ չգիտի: Ինչ-որ մեկն ինքն է գտնում ճանապարհը, ինչ-որ մեկի համար գծում են մյուսները: Բայց դա դեռ քիչ է:

Մա իմ անձնական ընկողմում է պատմության մեջ: Ես սկսում եմ ապրել այս դարաշրջանում խորանալով տեղանքի և տարածաշրջանի պատմության մեջ և հե՛նց հերոսների հետ: Եվ, այդպիսով, գոյություն ունեմ երկու անգամ՝ նրանց և իմ ապրած ժամանակի՝ ամփոփելով նրանց ու իմ փորձը ...

Եվ ես, որ ամբողջ կյանքս ապրել եմ անընդհատ աճող գիտելիքներով և ըմբռնումներով, որոշեցի գրել հոգուս մեջ հավաքվածի մասին: Ին՝չ է պատահել, և ինչու, ըստ իմ ընկալման՝ խորը և մակերեսային ընթացքների, զարմանքով և առանց վրեժխնդրության: Վրեժ լուծելու համար շատ ուշ է, պատմության անիվն անխնայ պտտվում է մարդկանց սխալների և հաջողությունների վրայով, հույսի տեղ չկա: Ամեն ինչ վաղուց է վերածվել ճակատագրի... Ասում են, որ պատմությունը պարտաձև է զարգանում: Բայց ինձ թվում է, թե հայերի պատմությունը զարգանում է շրջանագծի մեջ. առկայծում են միայն

## ԱԼԱՇԿԵՐՏԻ ՀՈՎԻՏ՝ ԾԱՂԿԱԾ ԱՆԴԱՍՏԱՆ

Եվ հարյուր անգամ տներ փոխեցին...  
Երկրե երկիր ընկան անգույք ճամփաներով,  
Ռոնոնց ու լացը ողջ երկիրը ծածկեցին  
Աշխարհին ուղղված անհույս անեծքներով...

Ընդամենը մի քանի հարյուր տարի առաջ Ծաղկանց և Մինակի լեռնաշղթաների միջև տարածվում էր հայրենի, հեթիաթային մի երկիր, որն արբեցնում էր իր մարգագետինների ծաղկանց բույրով, հերկած հանդերով ու ծաղկած այգիներով ու ողողվում մեծն Մրածնեռն օձագալար հոսքով, որ փայլկլտում ու հեռու հեռվում միախառնվում էր Եփրատի ջրերին: Ալաշկերտի չքնաղ դաշտավայրը քարացած ալիքների պես երիզում են անցյալի լուռ վկաները՝ Հայկական Բարձրավանդակի լեռնաշղթաները, իսկ այնտեղ՝ դաշտավայրի վերջում՝ հորիզոնի ծայրին հիմա էլ նշմարվում է Մուկավետ լեռան սպիտակափառ գագաթը:

Ամեն ինչ տեղում է... Լեռները... Հավերժ են դրանք, անփոփոխ, և միայն արթնացած հրաբուխն է ի վիճակի մահացու շիկամոխրով ծածկել իր լանջերին սեպված գյուղերն ու քաղաքները: Նրանք կանգուն են ինչպես և էին: Ոչ թե մարդը, կամ նույնիսկ նի ողջ ժողովուրդ, որը կարող է տեղահանվել, բնատվել, կամ մեկ այլ՝ ևս ժողովուրդ կոչվող մի զանգված, ասպատակել, սպանել ու կոտորել ուրիշների և թափառել այդ ուրիշների քաղաքներում ու հովիտներում՝ իր հետևից թողնելով բացում պոծված բնակավայրեր...

13-րդ դարի սկզբին սելջուկներն արդեն սեփական մաշկի վրա զգացին մոտեղական զանգվածային արշավանքը: Հենց այստեղ՝ Սեբաստիայից և Էրզնկայից (Միլասս և Երզնկա) ոչ

կերպարները: Գոնե մեկ անգամ դաս քաղելու, այդպիսի ճակատագիրը հետ շրջելու համար, կարծես, ուժն ամբողջովին չի չորանում, բայց Փյունիկ թոչունը վերածնվում է մոխրից...

Ես գրուցում եմ ընթերցողիս հետ՝ տանելով պատմությունը դեպի դարերի խորքը և վերադառնում այսօրվա խճճված առօրյան: Կանգնում եմ՝ այնքան անպատասխան հարցեր կան և բազմիցս կրկնվող սխալներ: Բայց երջանիկ եմ. գրուցակիցս հաճախ լավատեղյակ է, լավ տիրապետող մեզ բաժին ընկած կամայական պատմության խառնաշփոթին:

Մի քանի խոսք հայերեն օրինակի մասին: Ռուսերենը լույս է տեսել Մոսկվայում, հետո Երևանում: Թարգմանությունն սկզբում ուզեցի հանձնարարել ռուսերենից-հայերեն ուղղության մասնագետի՝ Տիգրան Ռշտունուն, ևս մի քանի էջ թարգմանեց (զենտեղված են գրքում), բայց հոգուս մեջ ես արդեն պատրաստ էի ինքս թարգմանել, և որոշ փոփոխություններ մտցնելու կարիքն էլ հագեցրի:

Բուշնիկյան իշխանությունների մասին Լեո Կամսարից ավելի լավ չեմ ասի:

«Բուշնիկներն ասում են՝ եթե մենք չլինեինք, ներկա Հայաստանը չէր լինի, թուրքերը սրի կքաշեին հայությանը:

Իսկ ես ասում եմ՝ եթե դուք չլինեիք, ցարական Ռուսաստանը Կարսն ու Մուրավյուն չէր տա թուրքին, ռուս բանակը չէր քայքայվի, ու ճակատը բաց թողած՝ չլին գնա իրենց տները:

Հետո: Որպեսզի հային չկոտորեր, թուրքը պահանջում էր հայերից թրքանալ: Ռուսիստան չթրքացան այդ պատճառով կոտորեց: Դուք էլ, ճիշտ թուրքի նման, պահանջեցիք, որ հայությանը բուշնիկ դառնա, և որովհետև չդարձավ, թուրքի նման կոտորեցիք:

Նշանակում է հայը որպես հայ երկու դեպքում էլ չպիտի ապրեր: Կա՛մ թուրք, կա՛մ բուշնիկ»:

Լեո Կամսար, 1965թ., անտիպ



հեռու՝ ճաղատ սարի (Քոստե-դադ) մտակայքում գտնվող կիր-  
ճում, հանդիպեցին երկու բանակները: Ողջ օրը տնած մար-  
տում մոնղոլները «բոլորին փախցրին, դաժանորեն կոտորեցին  
զինվորներին, ապա սկսեցին թալանել ընկածներին»: Մեջուկ-  
յան բանակն այլևս գոյություն չուներ: Դաշտերը լքվեցին, և սով  
պատեց երկրին: Փայտատականների բազմությունն շտապեց  
ղեկի սուլթանության արևմտյան սահմանները: Եվ ընդամենը  
երկու տարվա ընթացքում՝ մինչև 1335 թվականը, ողջ Անատո-  
լիան արագորեն ու բավականին հաջող կերպով նվաճվեց:

Այդ ամենի մեջ, թերևս, դեր խաղաց այն հանգամանքը,  
որ մոնղոլներին հաջողվեց չինացիներից ստանալ Եվրոպային  
դեռ անհայտ վատողի տեխնոլոգիան: Նրանք արագորեն գրա-  
վեցին քաղաքներն ու ամրոցները՝ օգտագործելով չինական  
պաշարողական զենքեր և վատողով ու այլ այրվող նյութերով  
լցված արձիճե պարկուճներ: Եվ, չնայած այդ ամենին, մոնղոլ-  
թաթարների հիմնական ուժը դարձյալ հեծելազորն ու հայտնի  
նետաձիգներն էին:

Բայց ո՞վ է հիշում նրանց՝ դարերի մշուշի մեջ կորած ու  
փոշիացած մոնղոլներին, բացի նրանից, թե ինչպիսին էին  
նրանք՝ ահավոր տգեղ, կոպիտ ու անկիրթ: Փոխվեցին բամֆ-  
ները ու դրանց հետ այլ անկիրթ քոչվորներ եկան...

Իսկ լեռները կանգուն են... Ալաշկերտցիների համար,  
դեռ վաղնջական ժամանակներից, Մուկավետը սրբազան լեռ է  
համարվել: Շատ լեզենդներ են ստվել ու երգվել մեր խախիներ-  
րի այս չքնաղ երկրամասի մասին: Իսկ Հայպարի (Հայկական  
պար) լեռնաշղթայի այս գագաթի՝ Մուկավետի և Ալադաղի  
մասին սիրո լեզենդ է հյուսվել: Մուկավետը հիանալի մի հայ  
հովիվ էր, իսկ Ալան թուրդ գեղեցկուհի: Մի անգամ նրանք լե-  
ռան մոտ հանդիպեցին իրար ու սիրահարվեցին: Մուկավետը  
Չանկիլ գյուղի քահանայի որդին էր, իսկ Ալան Մանդուր գյու-  
ղի շնյախ դուստրը: Նրանց ծնողներն, իհարկե, դեմ էին նման  
միությանը:

...Եվ Ջարեհ-բեկը վառում է հանգած իր նարգիլեն.

– Քուրդ կինը պետք է փեսացու փևտրի հայերի՞ մեջ:

Հայկական Համբարձման տոնի գիշերը սիրահարները  
փախան և թաքնվեցին հեռավոր մի վայրում: Այդ մասին տեղե-  
կանալով՝ ծնողներն անհիճեցին անհնազանդ զավակներին, և ն-  
րանք վերածվեցին սարերի: Հովիվը լեռնանում է լեռնաշղթայի  
հենց կենտրոնում՝ Ալաշկերտի ու Բասենի նահանգների սահ-  
մանին, իսկ աղջիկը լեռ է դառնում Վանանդ և Բասեն նահանգ-  
ների միջև: Երկուսի դեմքերին էլ արցունքները սառչում ու վե-  
րածվում են ձյան...

Ամեն տարի՝ Համբարձման տոնի օրը, հայ և քուրդ երի-  
տասարդներն ուխտագնացություն էին կատարում Ալադաղ  
լեռ, մոտեր վառում և հայկական ու քրդական սիրերգեր երգում:

Իսկ տարվա մնացած ժամանակահատվածում, տարվա  
մնացած օրերին հայերը ջանում էին գործ չունենալ քրդերի  
հետ...

Ալաշկերտի հովիտ, Ալաշկերտ... Արարատյան (ուրար-  
տական) երկրի սեպագիր արձանագրություններում այն հիշա-  
տակվում է որպես Անաշտ կամ Ալաշա (հետագայում հայտնի  
է դառնում որպես Վաղարշակերտ, ապա Ալաշկերտ): Արևմտ-  
յան Հայաստանում ամբողջությամբ ջնջված հազարավոր հայ-  
կական անունների ու անվանումների պես Ալաշկերտի ա-  
նունն էլ «թուրքացվեց»՝ Էլեշկերտ: Ալաշկերտը, սակայն, ունե-  
ցել է նաև փառահեղ օրեր: 371թ այստեղ է տեղի ունեցել Ջիրա-  
վի ճակատամարտը: Հայոց բանակը, Պապ թագավորի և Սյա-  
րապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, ջախջախել է  
պարսկական բանակը:

Սփռված քրդական և հազվագյուտ թյուրքական գյուղերի  
արանքում է գտնվում Ղարաքիլիսը՝ «Մն եկեղեցի» կոչվող մեծ  
գյուղը: Եկեղեցին եկեղեցի է, նույնիսկ գյավուր հայերի համար  
անունը թյուրքական է, ինչպես Ղուբ բլուրն ամեն ինչ՝ թե՛ լե-  
զուն, թե՛ իշխանությունը: Հիմա Ղարաքիլիսը կոչվում է Ագրի,  
բայց թուրքերը նույն կերպ անվանում են նաև մեր Մասիսները:  
Պարզապես սար: Ագրի-դաղ:

Հայերը Ղարաբիլիսում ապրել են անհիշելի ժամանակներից:

«Ղարաբիլիս – 2000 տուն, 1500-ը թուրքի, 500-ը հայի: Մինչդեռ, բնակիչների առումով, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր տանը միջին հաշվով 10 մարդ է ապրում, մեկ երրորդը հայեր են, երկու երրորդը թուրքեր»:

Մի՛ հավատացեք այս թվերին: Մարդահամարը ճշգրիտ էր, բայց հայերի մասին տվյալները նվազեցված, և, չգիտես ինչու, կանայք թաքնվում էին: Իսկ թուրքեր էին հաշվառողները, թե քրդեր՝ ո՛վ էր նրանց տարբերում: Զինված վիճակում նրանք միանման էին:

Ընդհանրապես, հայ ընտանիքն ավելի մեծ էր, քան թուրքականը: Ճիշտ է՝ առևտուրն ու արհեստները հայերի ձեռքում էին, բայց, մինևայն է, թուրքերն ավելի հարուստ էին:


Բնականաբար, ավելի հարուստ էին, քանի որ տիրացել էին լավագույն հողերին և հարստանում էին: Հողը մշակում էին մնացած անհավատ գյավուրները, որոնք ապրում էին քարքարոտ լեռնալանջերում: Մամվել Մելիքսեթյանը մեջբերում է անում Ա. Շահբազյանի «Քրդական-հայոց պատմության» գրքից (1911) Բոխթանի քրդերի լեզենդը այն մասին, թե ինչպես է տեղի ունեցել հայերի և քրդերի բաժանումը. «Հայերն ու քրդերը եղբայրներ էին, միասին էին ապրում և հավասար էին և հիմնական գործիքները գուլթանն ու թուրն էին: Այնպես պատանեց, որ նրանք ուզեցին կիսել իրենց գործիքները, հայերն ընտրեցին գուլթանը, իսկ քրդերը՝ թուրը, և այժմ բոլորը քաղում են իրենց նախնարած արդյունքները»:

Ալաշկերտի աղմկոտ շուկան առևտուր էր անում մինչև ուշ գիշեր. միսը և արնից շողողացող սպիտակ պանիրը բերում էին հարևան քրդական գյուղերից, իսկ հայկական գյուղերից բերում էին ամեն տեսակի հատիկեղեն, հացահատիկային ալյուր, տարբեր գույնի սափորներ՝ պանրի, դավուրմայի և թթու դրված բանջարեղենի համար: Շուկայի խորքում փայլում

էին հայ արհեստավորների հովանոցները. կոշկակարներն էին, ոսկերիչներն ու արծաթագործները, դարպասներին ավելի մոտ՝ թիթեղագործները, թամբագործները, դարբիններն ու բրուտագործները: Հայերն այստեղ վաղուց էին զբաղվում արհեստներով ու առևտրով. վաճառում էին արտասահմանյան երկրներից բերված գործվածքներ ու համեմունքներ. սայլերն ու սայլակներն ամրոցային կարգով շարված էին շուկայի շուրջը. ձիերը խրիսնջում էին, հուշարարները գոռում էին, թե ում ինչ ապրանք է պետք, և որտեղ է իր փնտրածը:

Յուկելչի-բեռնակիրներն իրենց ճարպիկ շարժումով մարդկանց ուղղորդում էին դեպի ապրանքները: Քաղաքային շուկայում հիատնից ավելի տաղավարներ կային, որոնց մեծ մասը պատկանում էին հայերին: Բոլոր նորություններն ու ասեկոսեներն իմացվում էին այստեղ: Քաղաքը հայերն էին հիմնել: Ալաշկերտում հիմնականում ապրում էին Բլեյան, Սորանսոց, Փեթակ-խոտ թաղամասերում:

Դարեր է տեսել Ալաշկերտը... Պարզվում է, որ այն գոյություն է ունեցել Արարատյան թագավորության ժամանակներից ի վեր: Մա Հին Բագրևանդի մի մասն է: Բայց հայկական աղբյուրները, չգիտես ինչու, գրում են, որ քաղաքը մ.թ.ա. II դարում հիմնադրել է Վաղարշ I թագավորը և անվանել Վաղարշակերտ: Քաղաքի հիմնադրման համար թագավորն ընտրել է անձայր հովիտը: Դե որտեղից իմանար, որ շատ դարեր անց իր երկրում հայտնվելու են քոչվորներ, ու անհրաժեշտ էր բնակություն հաստատել անմատչելի լեռներում, որպեսզի նրանք չհասնեին այնտեղ: Բարբեր հովիտն ընտրեցին քոչվոր ցեղերն ու անընդհատ թալանեցին աշխատասեր հողագործներին: Բնիկներն, այնուամենայնիվ, գոյատևեցին, քանի որ յուրաքանչյուր արշավանքից հետո բարձրանում էին ժայռոտ լանջերը և միջլեռնային խոռոչները, որոնք ծածկված էին չոր տափաստաններով, երբեմն ալպյան մարգագետիններով: Ավելի բարձր լեռնալանջերում Հայկական լեռնաշխարհի չոր անտառ-



ներն էին՝ սոճու, գիհու և կաղնու երբեմնի խիտ անտառները: Ո՞վ գիտի, թե երբ և ինչու են դրանք անհետացել...

18-րդ դարի կեսերին այս ծաղկուն հովտում կար ավելի քան 360 հայկական գյուղ: Իսկ սահա նույն դարի վերջին, Խնուսի և Մանազկերտի բեկերի միջև Ալաշկերտի համար ավերիչ վեճից հետո հայկական գյուղերի մեծ մասը ոչնչացվեց: Պասկենիչի և Տեր-Ղուկասովի արշավանքներն էլ ազդեցին ալաշկերտցիների վրա. հազարավոր հայեր, օգնության ձեռք մեկնելով ռուսական բանակին, հեռուեցին նրան՝ փախչելով ջարդերից, իսկ մնացած 80 գյուղերն ապրում էին վրեժխնդրության վախով՝ թուրքական տիրապետությունից ազատագրվելու իրենց հույսերի համար:

«Թայմս» թերթի թղթակից Նորմանի հաղորդագրությունից. Էրզրում, 24 օգոստոսի 1877 թվական: Բրիտանացի լրագրող Նորմանն այդ իրադարձությունների մասին գեկուցեց. «Հայերի իրավիճակը երկրում, որով անցել է Բամայիլ-փաշայի բանակը, ծայրաստիճան աղետալի է: Ալաշկերտի դաշտի բոլոր 122 գյուղերը, բացառությամբ իննի, ամբողջությամբ ավերվել են: Մի քանի քրիստոնյաներ, ովքեր Տեր-Ղուկասովի նահանգի ժամանակ չօգտվեցին Ռուսաստանի հովանավորչությունից, բարբարոսաբար սպանվեցին, մի շարք գյուղեր ամբողջությամբ այրվեցին: Մուշի շրջանում որոշ գյուղեր ավերվեցին, իսկ շատ բնակիչներ կոտորվեցին: Նույն ճակատագրին արժանացան Բայազետ քաղաքը և հարակից գյուղերը: Այս բնակավայրերի մեծ մասում տղամարդիկ, կանայք և երեխաները սպանվում էին ամենադաժան կերպով...»:

Կիւմ Բակչի. «Ալաշկերտի դաշտավայրն ամենաբերրիներից մեկն էր: Պուշկինն էլ դրա վրա ուշադրություն դարձրեց իր «Ճանապարհորդություն դեպի Արզրում» աշխատությունում. նա անցել էր փարթսամ արտերի և հասկառատ դաշտերի կողմը: Հայերը հյուրընկալ էին, իրեն հաց ու պանրով էին կերակրել: Եվ չնայած այս բոլոր հողերն այժմ ընդգրկված են թուրքական վիլայեթում, Պուշկինը գիտեր ու ճիշտ էր անվանում

դրանք՝ Հայաստան: Ալաշկերտի դաշտավայրը միշտ եղել է հայերով բնակեցվածներից մեկը: Չնայած սուլթանական բեկերի հոգնեցուցիչ պատերազմներին և թուրք քոչվորների անընդհատ արշավանքներին ու թալաններին (համեղ պատատ, բերրի, ընտիր յուրացված հող՝ այգիներ և վարելահողեր)՝ 18-րդ դարում կար ավելի քան 360 հայկական գյուղ: Բայց դրանց թիվն անընդհատ նվազում էր. տեղի ունեցան զանգվածային վերաբնակեցումներ դեպի Արևելյան՝ ռուսական Հայաստան: Ա.Ս. Պուշկինի ճանապարհորդության ժամանակ, 19-րդ դարի սկզբին, հարթավայրում մնաց ավելի քան 80 հայկական գյուղ: Բայց հատկապես, 1829 թվին, սկսվեց Ալաշկերտի հազարավոր բնակիչների վերջնական, զանգվածային վերաբնակեցումը. հայերը վախենում էին վրեժխնդրություններից՝ ռուսական բանակին օգնելու համար: Եվ այդ վախն արդարացված էր. թուրքերն անխնա հաշվեհարդար տեսան հայ բնակչության հետ, շատ գյուղեր գլխովին ոչնչացվեցին:

Շատերն արդեն դադարում էին երկար խորհրդակցել իրենց կոտորված ճակատագրերի մասին և ընտրում էին կյանքը: Հարյուրավոր ընտանիքներ իրենց ունեցած-չունեցածով հեռուում էին ռուսական բանակին՝ հաստատվելով Սևանա լճի շրջակայքում, շատերն էլ՝ Ապարանում: Բայց նրանք, ովքեր չհեռացան և ողջ մնացին, ստիպված էին փոխել իրենց տները: Այդպես պատահեց և 1855, և 1878 թվականներին... Իսկ սահա 1890-ականներին թուրքական իշխանությունները որոշեցին հայերին ամբողջությամբ և ընդմիշտ փտարել Ռուսաստանի կայսրության հետ սահմանակից Ալաշկերտից և բաց թողեցին «Համդիեի» ջոկատներ: Եվ այսպես, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին միայն 22 հայկական գյուղ մնաց հայկական այդ գավառում:

Անա և հասակը Առաջին համաշխարհային պատերազմին, երբ Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, որն, այնուամենայնիվ, ստիպված քայլ էր հուսալով արագորեն խորանալ երկրի խորքը (ինչու չէ՝ ռուսի սասած՝ սաստա-

նան սատանան ինչի հետ աեստ որ չի կատակում, և, բացի այդ, ցանկալի նեղուցներին հասնելու խնդիրը կարող էր վերջապես լուծվել): Մի հարցնող լինի, ինչու՞ նա այդքան բանակ նետեց պատերազմի ասպարեզ: Կորցնելով իր միապետությունը՝ նա ընկնովեց բոլշևիզմի խորխորատը... Ո՞վ կարող էր այդ ժամանակ նախագուշակել: Գերմանիան Ավստրիային հրահրեց հարձակվել Սերբիայի վրա: Այդ հանգամանքը Ռուսաստանին՝ Սերբիայի դաշնակցին, ստիպեց, գորահավաք հայտարարել՝ չապասելով հարցի խաղաղ լուծմանը: Հետո Գերմանիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային և գրավեց Բելգիան: Այս ամենը ստիպեց պատերազմի մեջ մտնել Բրիտանիային, որն իրեն համարում էր Բեդիայի չեզոքության երաշխավորն ու Ֆրանսիայի դաշնակիցը, ինչպես միշտ, առկա էր նաև նեղուցների հարցը: Ահա շահերի բախման ինչպիսի բարդ կառուցվածք ստացվեց:

Բոլորը ոտքի կանգնեցին միմյանց համար, ու սկսվեց այս հիմար և անիմաստ պատերազմը, որն ի վերջո աղետալի դարձավ շատ ժողովուրդների համար: Ժողովուրդներ, որ անգամ գաղափար չունեին այդ թոժուրոժի պատճառ արքայազների մասին: Դե, իսկ այս ամենին Ռուսաստանի մասնակցությունը, որտեղ ապրում էին Ռուսաստանին անկերպապահորեն վստահող նույնադավան քրիստոնյաներ, էլ ավելի զայրացրեց Թուրքիային: Հայերի համար, սակայն, ոչ ոք ոտքի չէլավ. ճիշտ է, կարեկցանքը կար, բայց, ինչպես միշտ, Ռուսաստանին հակառակ, նրանք հայերի պատճառով չէին վիճում իրար հետ, էլ չեմ ասում ախորժակների մասին... Թուրքիան ընդհանրապես «ջի-հար» (տուրք պատերազմ) հայտարարեց Անտանտի երկրներին և հոկտեմբերի 30-ին, որպես Կենտրոնական տերությունների դաշինքի մաս, պաշտոնապես իր մասնակցությունը հաստատեց Առաջին համաշխարհային պատերազմում... Նոյեմբերին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Մի քանի օր անց դրան հաջորդեցին Անգլիան և Ֆրանսիան:

Իհարկե, Ռուսաստանը կրվում էր Թուրքիայի հետ՝ լուծելով իր սահմանների հուսալի լինելու խնդիրները, վա՛ս տարբերակ է՝ առանձնանալ այդ նողկալի հարևանից՝ սահմանաժեղ բնակավայրերը բնակեցնելով ռազմաշունչ կազակներով, որոնք ունակ էին իրենց տեր կանգնելու գործում: Բայց ո՞վ գիտի, թե ում մտքում ինչ կար: Ռուսական զորքերը մեկ գրավեցին Ալաշկերտը, մեկ նահանջեցին: Եվ հենց նահանջում էին, թուրքերն ու քրդերը սկսում էին հայկական գյուղերում կենդանի մնացած բնակիչների ոչնչացումը: Հենց ռուսները նորից հարձակվեցին, թուրքերը փախան ու դադարեցին կոտորել: Բայց պատերազմը թալանի ազատություն է: շատ անգամ պատերազմներն սկսում են թալանի համար, և կազակները հենց իրենք էլ սկսեցին թալանել ու խլել այն ամենը, ինչ մնացել էր թուրքերի և քրդերի արշավներից հետո: Ճիշտ է, ճիշտ է: Կազակները նույնպես դիտում էին այս տարածքները, ինչպես նաև բուն պատերազմը, որպես պատերազմի և թալանի դաշտ: Իհարկե, նրանց ներկայությունը զայրում էր զազաններին: Իսկ կազակներին զսպում էին ավելի անգինվ սպաները և ղեկավարությունը. ի վերջո՝ «քրիստոնյաներ են»:

Արևելյան Հայաստանի հայերն սկսեցին կամավորական ջոկատներ ստեղծել: Փաստեղ Անդրանիկ փառչայի երեք ջոկատներից մեկն առաջ շարժվեց Ալաշկերտի ուղղությամբ: Ռուսական հրամանատարությունը հավանություն տվեց և նույնիսկ օգնեց հանդերձանքի հարցում: Ինչպես միշտ՝ նշում էր պատերազմող կամավորների թաջությունը, բայց, կրկնվեմ, ցարական կառավարությունն ականախորեն մտադիր էր ջարդերից դատարկված տարածքները բնակեցնել կազակներով և դրա համար չէր կրվում, որ մեջտեղն իր օգուտը չունենա: Իրականում պետության գործողությունները շատ հաճախ ուղղորդված են գեներալների անարդյունավետությանը:

Եվ ինչպե՞ս չի՞շել, եթե եղել է, եթե այդպիսի մտադրություններ կային: Հայտնի է, որ 1915թ ապրիլին Կովկասյան ճակատի հրամանատար, գեներալ Յուդեյնիչը Առաջին համաշ-

խարհային Համաշխարհային պատերազմի խոշորագույններից մեկի՝ Էրզրումի գործողության և ապա Տրապիզոնի գործողության հաղթողը, այդեն դիմեց Կովկասի նահանգապետ Վոռնեցով-Դաշկովին՝ առաջարկելով ուղարկել Ալաշկերտի հովիտ ռուս ցյուղացիների, որոնք պետք է հողեր և արտադրարար պատրաստելին Ռուսաստանի բնակչության կողմից դրա հետագա բնակության համար: Նրա հրամանով Յուդենիչն արգելեց տեղի բնակիչներին՝ հայերին, ոչ միայն ցյուղատնտեսական աշխատանքներ իրականացնել Ալաշկերտ, Դիադին և Բայազետի շրջաններում, այլև ընդհանրապես վերադառնալ իրենց տները:

Ավետիք Բասիակյանը 19-րդ դարի վերջին գրում է. «Բանտերը հորդում էին բանտարկյալներով, որոնք համակրում էին արևմտահայերի ազատագրական պայքարին: Աղայանն ու Շիրվանզադեն ձերբակալվել են: Իսկ Թուրքիայում հայ ժողովուրդը խեղդվում էր այդան մեջ: Ցարական կառավարությունը հայերի նկատմամբ որոշակի թշնամական դիրքորոշում ընդունեց Հայկական հարցում: Ստամբուլում կայսրական դեսպան Նելիդովը խրախուսում էր սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերը: Մեզ հայտնի էր արտգործնախարար Լոբանով-Ռոստովկևու «Հայաստանն առանց հայերի» տեսնելու բարբարոսական ցանկությունը»:

Ռուսաստանը հավանություն տվեց կամավորական ջոկատների ստեղծմանը: Նա չէր կարող հույսը դնել արևմտահայ բնակչությունից նման ջոկատների ստեղծման վրա: Եվ ոչ միայն այն պատճառով, որ նրանք թուրք հպատակներ էին, Թուրքիայի քաղաքացիներ, այլ նաև այն պատճառով, որ Թուրքիան իր հետատեսն ու ստոր քաղաքականությամբ նախապես կանխեց իրադարձությունների նման ընթացքը և հայերին զրկեց դիմադրելու հնարավորությունից: Նախ բոլոր արական սեռի հայերը գորակույզվեցին թուրքական բանակ, ապա թուրքերն սկսեցին զինաթափել և ոչնչացնել նրանց: Թուրքերը նույնև արեցին հույների և ասորիների հետ: Սյսպիսով, եթե են

գրում են հայերի մասին, դուք պետք է խմանաք, որ նույն բանը արվել է նաև հույների և ասորիների հետ: Ազատվում էին բյուզանդական մնացորդները...

Հայերին առաջնագծի տարածքներից տեղափոխում էին թիկունք. նրանք որպես բանվորական ուժ էին օգտագործվում հատուկ կազմավորված աշխատավորական ջոկատներում: Ձինաթափված տղամարդկանց վստահվում էր ամենադժվար աշխատանքը՝ ճանապարհներ, կամուրջներ և ամրություններ կառուցել, բեռներ տեղափոխել: Ընդհանրապես, Օսմանյան կայսրությունում, վաղեմի ավանդույթի համաձայն, ռազմական ամրությունները կախված էին քրիստոնյաների պարանոցին: Նրանք փորում էին, քարեր քարշ տալիս և հաստ պատեր կանգնեցնում: Այնուհետև հոգևատանց, ուժասպառությունից և ակրնդատ թերանուցումից հյուծված հայ զինվորներին իրենց տեղակայման վայրից զինվորների կամ ոստիկանության ուղեկցությամբ դուրս էին բերում 50 կամ 100 հոգանոց խմբերով և ոչնչացնում:

Բնականաբար, Ռուսաստանը բարենպաստ արձագանքեց Արևելյան Հայաստանի բնակչության օգնության առաջարկին, որը ցույց տվեց ռազմական գործողությունների մասնակցելու պատրաստակամություն և ցանկություն: Հատուկ իրամասով համաներում հայտարարվեց հայ քաղաքական և հասարակական գործիչների ու ազգային-ազատագրական շարժման հայտնի ներկայացուցիչների համար, ովքեր անմիջապես միացան համապետական ձեռնարկին: Իսկ հայկական ստորաբաժանումների ռազմական գործողությունները մեծ նշանակություն ունեին. այդ ստորաբաժանումների դերը դժվար թե գերազնահատվի, հատկապես, հաշվի առնելով աշխարհազրական դիրքը ու լեզուների տիրապետելը: Իհարկե, ավանդաբար, Ռուսաստանի իշխանությունները չէին խնայում Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը ինքնավարություն տրամադրելու անորոշ և ոչ պարտավորեցնող խոստումները: Հայկական ազգային կուսակցությունները, հասարակական կազ-

մակերպությունները և առաջադեմ ողջ մտավորականությունը, հավատալով կայսրական հավաստիացումներին և չունենալով այլընտրանք, սկսեցին ակտիվ գործողություններ ձեռնարկել:

Համաշխարհային պատերազմի սկզբին Ռուսական կայսրությունում ապրում էր ավելի քան երկու միլիոն հայ, և ըստ որոշ աղբյուրների՝ 250 հազար հայ երիտասարդներ գորակազույցվել էին ցարական բանակ: Իսկ Անդրանիկը, թափանցելով ժամանակի մեջ, ընկալում է, որ կամավորական շարժումը կարող է ավելի շատ վնաս պատճառել, քան օգուտ բերել Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Ինչի՞ համար են ցարը և նրա տեղի կառավարիչը դա ձեռնարկել կոպկասում: Այս հարցը նրան հանգիստ չէր տալիս: Ի վերջո, նա գիտեր ցարական կայսրության համը «հողերով աճելու», և նրա սերը վերաբնակեցման ու տարաբնակեցման նկատմամբ... Մի քանի հազար հայ կամավորների առկայությունը 800 հազարանոց ռուսական բանակում (սա Միշլանսկու հնչեցրած թիվն էր) այդ ժամանակ եղանակ չէր ստեղծում: Բայց հենց այս փաստը կարող էր թուրքերին պատրվակ տալ նոր կոտորածի և հայերի ջարդի համար: Այս անգամ արևմտահայերը հայտնվեցին երկրի գործողությունների պատանդների դերում, որոնց հետ Թուրքիան կրկին սկսեց պատերազմել...

## ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԵՏԵՎԻՑ

Երկար էր ճանապարհը  
Ու մենք դժոխք անցանք,  
Բայց ոչ մի փրկություն  
Աստուծոց մենք չունեցանք:

Բրակի տակ, ծառերի մեջ թաքնված է մի գեղեցիկ տուն՝ քարից պատրաստված հացատնով, բա էլ ինչի՞ց: Սա Մեսրոպյի ավագ եղբոր՝ Գրիգորի ծուխն է: Գրիգորը քահանա է, ընտանիքը հարգում է նրա խոսքը, նույնիսկ եթե նա չի խոսում Աստծո ն հավատքի մասին: Գրիգորը շուտ էր գորշացել, իսկ մորուքով բաղկանկն ձեր էր թվում: Նա երկար ժամանակ չէր ուզում լրել Արճեշը, բայց ստիպված էր: Իսկ մինչ այդ նա չէր ցանկանում լրել Վանը իր գրնգուն եկեղեցիներով: Բայց, չգիտես ինչու, Գրիգորը որոշեց հոգալ Տիգրանակերտի հուտի մասին և վաղուց էր պատրաստվում գնալ այնտեղ: Գրիգորի որդին Ալաշկերտի շուկայում երկու խանութ ուներ, ինչեր ասես չէր վաճառում այդ խանութներում: Պոլսից գործվածքներ, համեմունքներ և նույնիսկ գրքեր էին բերում նրան:

Եղբայրներից կրտսերը Մեսրոպ է՝ ուժեղ, կարճահասակ, արտաքինով գյուղացի, շրջանի ամենագրագետ ու հարգված անձնավորությունը: Հանգիստ, տանը լուս Մեսրոպը կերպարանափոխվում էր հայերի ծխական դպրոցում, որտեղ դասավանդում էր: Դրանցից երկուսն Ալաշկերտում էին: Վերջերս այնտեղ քրդերի համար էլ էին դպրոց կառուցել, բայց այն գրեթե դատարկ էր: Քրդերը չէին ձգտում ուսման, սակայն ինչպիսի՞ ձիավորներ ու հափշտակիչներ էին: Ինքը՝ Մեսրոպը, վերջերս տեղափոխվեց Ալաշկերտ (մինչ այդ նա ապրում էր Ղաթաթլիխում՝ շուկայից ոչ հեռու):

Մեսրոպի պապն ու նախապապը վարժապետներ էին, ուսուցիչներ: Նրանք դասավանդում էին ծխական դպրոցներ-

րում, երեխաներին սովորեցնում էին «մաշտոցագիր»՝ գրագիտություն: Բայց Մեսրոպը հասկապես սիրում էր երեխաներին պատմել հայոց արքաների և նախարարների, հայոց պատմության, իրենց հաղթանակների ու դառը պարտությունների մասին, իսկ վերջիններս, ավա դ, ավելի էին, քան անհրաժեշտ էր ... Եվ անպայման երեխաներից մեկը կհարցներ.

– Ինչո՞ւ, վարժապետ: Բայց ինչու, Աստվածը չի՞ սիրում հայերին:

Վարժապետը գիտեր այս հարցի պատասխանը, բայց երեխաները չէին հասկանա: Թող մի փոքր մեծանան, կպատմի, թե ինչպես էին բոլորը վիճում և կոլում ու խոռովում միմյանցից հետո, և միշտ դավաճաններ կային, որոնք պատրաստ էին կաշառքի և պատուի համար վաճառել թե՛ իրենց հավատը, թե՛ Աստծուն: Դե, իհարկե, և դաժան ճակատագիր էր բաժին ընկել հայերին ...

Մեսրոպը շատ հավուճիվ ունի. ընդարձակ անասնագու մի մեջ կովեր, ոչխարներ, երեք ձի, երկու ջորի: Թռչնատնցն էլ է տուն պահում, կերակրում, և ոչ միայն նրանց ընտանիքը, այլ նաև բեգի վիժվածքներին:

Միջնեկ եղբայրը՝ Մարտիկը, այս անիծյալ պատերազմի մեկնարկից երեք տարի առաջ գնաց Ռուսաստան՝ Թիֆլիս: Աս բոլորին կանչում էր իր մոտ, բայց ոչ մեկի զլուխը չմտավ նրա խորհուրդը: Իրեն ի՞նչ կա, սազանդար է կանչում են՝ նվազում է: Իսկ Մեսրոպը աշակերտներ ունի, դպրոցն ու մ վրա թողին: Մարտիկը գալիս էր, հարազատներին տեսնում, որոշ ապրանքներ առաքում, փողերը հավաքում, ու՝ «հայդա»: Պատում էր, որ Թիֆլիսը մի հարուստ, մի հեքիաթային քաղաք է. այնտեղ ամեն ինչն է լավ. թուրք-մուրք չկա, թաթար՝ շատ քիչ, քրդերն այնքան խելոք են, իսկի չեն երևում... Շատ հայեր կան, բոլորը հարուստ են, և նրանց ղեկավարը ոչ թե սուլթանն է, այլ ռուս կայսրը, որը նստած է ռուսների մայրաքաղաքում: Մայ-

րաքաղաքը հեռու է՝ հյուսիսում, մի անգամ գնաց. լավ է՝ չսանց:

Մարերից արդեն ճյան հոտ էր գալիս: Վերջին ձիերին տարան թուրդ շները՝ թողնելով մեկ զամբիկ: Գյուղի վերջում սպորոզ երեցից գորահավաքեցին երկու ջորի նս: Գրիգորը որդու հետ հեռավոր գյուղում էր. օգնում էին սանիկի համար նոր տուն կառուցել, հեռն էլ տերտերի գործ՝ մկրտել, թաղել: Բակում վախից համբացած հարսը ցույց տվեց զինված քրդերին դատարկ փարախը, որն իրենց շատ զայրացրեց, կեղտոտ հայհոյանքներով և սրերը թափահարելով, վազեցին հավերի հետևից՝ մի քանիսին բռնեցին: Չենց քրդերն անհետացան, վախեցած Անիկն անմիջապես վազեց տուն:

Տակը, վախից կուչ եկած երեխաներին ծնկներին սեղմած, արցունքոտ աչքերով նստած էին սկեսուրը և սկեսրայրը: «Մերոնց տարան», – հեկեկաց սկեսուրը՝ զրկելով հարսին և սկսեց լուտ լաց լինել: Նրա եղբայրներից երկուսին տարել էին բանակ: Իսկ ամուսինը՝ կոնատ Մեսրոպը, դուրս եկավ բակ, որպեսզի չլսի կանանց ողբը: Մոտ տասը տարի առաջ բեկի թիկնապահը կտրեց նրա ձեռքը՝ արդարանալով, թե սխալվել է: Բայց բանակից ազատվեց:

Քուրդը կերակրվում էր հայկական ցուղերից, հայ սպանելը կամ խեղումը նրանց ձեռնտու չէր, բայց երբ տեսնում էին անպաշտպան հայ, նրանք չէին կարողանում զսպել իրենց գազանային անհագուրթունքը:

Մեսրոպն այլևս չտեսավ եղբայրներին՝ ո՛չ ավագ հարազատներին, ո՛չ զարմիկներին, ո՛չ էլ իր սիրելի գրքասեր եղբորորդուն: Մի՞ թե միայն իր հարազատներին: Բոլոր տղամարդկանց, ովքեր աչքի ընկան, հավաքեցին ու տարան:

Ավաշկերտի գյուղերում ասկյարները մոբիլիզացրել էին բոլոր տղամարդկանց: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ 1891, 1892 և 1893 թվականներին ծնված տղամարդիկ գորակադրվել էին օսմանյան բանակ:

Որդիների տարիքը դեռ չէր հասել, դեռ ձեռ չէին տվել ... Ավագը բարձրահասակ ու զվարթ Վահանը, համարյա չափահաս էր թվում, բայց կաղալու պատճառով նա սայթաքեց համիդիին թաթերից, դեռ մի բան էլ ծաղրեց. «Աքլորին ու հավերին բակից տարան, տղաներին թողեցին»:

Կրտսեր որդիները դուրս պրծան...

Չորերը վաղուց ծածկված էին աշևան կարմիր և դեղին գույներով: Չունտու գագթներից ձմեռն իջնում էր եռվիտ:

Հարազատները տագնապով հավաքվել էին Մեսրոպենց բակում: Մայրիկի հացատունը տաք էր, և թարմ հացի հոտ էր գալիս, իսկ եղբայրները Վահանն ու Ղազարը, իրենց երեխաների հետ նստած, լուռ նայում էին քուրսիի դիմացի ծխով մրտաած պատին:

– Երկու ատրճանակ ունեմ. անցյալ տարի փոխանակել էի Քյազիմի հետ: Պետք է գնամ ռուսների մոտ: Էլ ուրիշ ո՞վ կա, որ վրան հոյս դնենք: Քանի այստեղ էլ չեն սկսել... և լռեցին:

– Դպրոցը կվերանա, էլ ի՞նչ դպրոց:

– Երեխաներին տնից կսովորեցնենք:

Մայրը հանգիստ մտավ հացատուն և լուռ սկսեց պատրաստել տեղաշորը:

– Պետք է հեռանանք, որքան շուտ, այնքան լավ: Մինչ ռուսները մոտ են: Ծուկայում ասացին, որ երեկ շատերն սկսել են հավաքվել:

– Իսկ մենք կպայքարենք, և ռուսները մեզ չեն լքի, – կրքոտ ասաց կրտսեր եղբայրը:

– Պատրաստվում եք կովել, – ժպտաց մայրը հայացքը գցելով իր կարմրահեր փոքրին, որին բոլը ավելի փոքր էր ցույց տալիս:

Տղան արդեն ավարտել էր ուսումը Ալաշկերտի հայկական դպրոցում և հենց այնտեղ էլ դասավանդում էր:

Գող ու լկտի քրդերը թափառում էին հայկական գյուղերի շուրջը: Օրինակ՝ մեծ պահիքի առաջին գիշերվա ժամանակ

քրդերը լցվում էին հայ գյուղացիների տները՝ վայելելու նրանց պատրաստած ուտեստները:

Քրդերն ուտում էին, հայերն աշխատում էին քրտիների մեջ կորած: Պետք է ասել, որ քրդերն էլ հյուրընկալ են, բայց համ էլ արևախում: Երբ պահը հարմար է, նրանցից ոչ մեկին չպետք է խոճալ: Քրդերը համարվում էին մահմեդականներ, բայց նրանց երբեք չէին տեսել թուրքերի նման աղոթելիս. թուրքը կփոխ աղոթագորգը ու ճակատը կտա գետնին: Խաղաղ հարևանություն էլ էին անում, ջրի-միրաքի կոթվ էլ տալիս և միմյանց հետ, և՛ թուրքի հետ՝ լեզուն իրենց պահած: Բայց հենց որ բուրդը կամ թուրքը երեկվա խաղաղ հարևանը, գեթ վերցրեց, անհնար էր նրան ճանաչել: Նա դահիճ էր դառնում, մսագործ: Ո՞ր գաղափարն էր տիրում նրան այդպիսի ժամանակ, ի՞նչ բնագր: Քուրդը վար ու ցանք չգիտի անել, նույնիսկ պատրաստի այլուրից հաց չի թխի, սոված շնագայլի պես թափառում է հայկական ու հունական գյուղերի միջով, բռնի ուժով հաց է վերցնում գյուղացիներից: Նույնիսկ կիսաքոչվոր քրդի համար հարմար է մոտակայքում ունենալ գրեթե անվճար օգուտների այդպիսի աղբյուր:

Հայերն ու հույները, տեսնելով իրենց հարազատների և ընկերների ավերածություններն ու դիակները, լցվել են վրեժի զգացումով, փորձել են վճարել նույն մետաղադրամով: Բայց նրանք երբեք այդքան արդյունավետ հաջողության չէին հասել. հույներն ու հայերը շատ ավելի քիչ էին, խիղճն ավելին էր, քան անհրաժեշտ էր, և ոչ որ ընդհանրապես հրազեն չուներ ... Իրավունքը նրանց կողմը չէր, բայց երբ բախումներ լիեղում էին, վրեժը մթազնում էր աչքերը, իրար չէին խնայում:

Հայերը քիչ էին, մնացին մի բուռ: Ժամանակն էլ ավելի քիչ էր... Ռոշոնը շուտվակից ընկած էր խոշտանգված ուղեղի մեջ. պետք չէր սպասել, որ օսմանները դառնան պատերազմող երկիր, իսկ քանի որ ռուսները հայտարարել էին, որ կպաշտպանեն հայերին, թուրքը ոչ մեկին չէր խնայի: Ասացին, որ



կապշուպանեն, բայց ինչպե՞ս: Կարո՞ղ է երգվեցին: Նրանք միայն գիտեն, թե ինչպես տեղափոխեն հայերին. դա է նրանց պաշտպանությունը: Նրանք իրենց բանակը քայրջ են տալիս դեպի ռուսական անվերջանալի անծայր անապատներ, որտեղ, ասում են, ցրտից ոչինչ չի աճում... Գայլի երախն այդքան սարսափելի չէ, ինչքան դրանց պատիժը. մի գիշերվա ընթացքում փորձանքը սփռվեց իրենց գյուղի վրա, բոլոր հայկական գյուղերի վրա... Գիշերը Գրիգորի որդին վազելով եկավ և հայտնեց, որ իրենց ընտանիքն, այնուամենայնիվ, որոշել է մեկնել Տիգրանակերտ: Մարտիկը շրջում էր գյուղերը, ապրանքների համար փողն էր հավաքում. մի կերպ ես էլ դուրս սողաց: Ռուսներն արդեն մտան հովիտ:

Կահ-կարասիքն արդեն դարսված էր միակ սայլի մեջ, սպասում էին Ղազարին: Երեկոյան Ղազարը հասավ, երկու սայլ բերեց, եղբայրներին մի-մի ոսկու քսակ տվեց, մայրը դրանք կարեց լայնագոտիների մեջ: Իրեն վերցրեց մի քիչ ավելի շատ, ասաց ճանապարհը երկար կլինի, կազակներին բաժին պետք կգա: Մայրն ու կինը նստարանից ձայն տվեցին.

– Ոսկի տեսնեն, կ'երկայցան: Կազակները քարոզից կամ թուրքից լավը չեն:

– Լո՛ի ր.,- թուրքի անուն լսելով՝ Ղազարը կատաղեց: – Ավելի լավ է գոտին խլեն, քան գլուխը առանց խոսքի կտրեն:

Ի՞նչ ասես. դատը և ծանր ճակատագիր է... Տեղից տեղ տուն են կատուցում, ու արդեն այնտեղից էլ են քշում, տնից տեղից, հողից... Եվ այդպես անընդհատ՝ ռուսները միայն թալաւում են, չեն մորթում, թուրքերը և՛ թալաւում են, և՛ մորթում... Մեր սեփական հողին տեր չենք, գլավուր ենք: Սրանից դատը էլ ի՞նչ կարող է լինել: Էլի ռուսն է մնում. ի վերջո քրիստոնյա են:

Բայց ինչպե՞ս գնալ, եթե բաշխուզուկները շրջում են ամեն քայլափոխին:

Ղազարը լսել էր՝ հայերի ինչ-որ ջոկատ կա, ճանապարհին տեսել էր, որոշեց գտնել: Ասացին, որ հայ կամավորներն

են, ռուսական բանակի հետ տեղափոխվել են Ալաշկերտի դաշտավայր՝ Կաղզվանից դեպի Բիթլիս: Պետք է մոտ մեկ ռուսական բանակին, տեսնեն՝ ինչ կստացվի:

Մայրը՝ շաղվ փաթաթված, մինդարը գցեց թախտին, գրկեց իր կրտսեր եղբորորդուն, ինչ-որ բան մեղմ երգեց, որպեսզի երեխան կարողանա քնել, իսկ ինքը սարսափելի մտքերից աչք չէր կարողանում կացնել:

Հավերին ի՞նչ անենք: Գտնե՞րին մորթենք, կո՞վն ում թողնենք, գոնե ամեն օր կաթ ունեինք:

Ղազարը հայտնվեց առավոտյան: Կազակների պոստերում նրան խորհուրդ տվեցին վերադառնալ. ասացին միևնույն է, իրենք բոլոր թուրքերին կվնդեն: Ղազարն անհավատորեն նայեց հարթաճակատ երիտասարդին և հարցրեց.

– Ճի՞ շտ է, որ ռուսական բանակում հայեր կան:

– Բասուրմանից բացի, ամեն ինչ այնտեղ կա, և գեներալները նույնպես հայեր են: Քրիստոնյա են: – Այ այնտեղ են կանգնած, – ասաց կազակը, մատնանշելով հորիզոնը:

Գնալուց պետք չէ տարակուսել կամ եղած-չեղածը թողնել հրեշներին: Հավերին արդեն կերան, իսկ գառնուկներն անցան դառուրմայի կաթսաների մեջ: Տղաները գնացին շուկա՝ մնացորդները վաճառելու և նորություններն իմանալու: Կծկված քրիստոնյաները հավաքվել էին շուկայի հետևում: Հույները, հայերը, ասորիև, շշեջում էին իրար մեջ՝ հագիվ թաքցնելով վախը, գայլույթն ու ցատումը: Ներսում ետում էր անգորությունից, բայց դեռ հրաշքի հույս ունեին:

Մի քանի օր ու գիշեր անցկացրին ռուսներին սպասելով, և հանկարծ կեսօրին թուրքերն ու քրդերը մարախների պես անցան Ալաշկերտի գյուղերով: Իրացան ռուսական բանակի մոտեցման մասին և շտապեցին կատարել իրենց կեղտոտ աշխատանքը: Մտան բակեր, այգիներ, մորթեցին և դանակահարեցին յուրաքանչյուրին, ով ընկնում էր ձեռքի տակ, մի քանի բղավող երեխաների թնատակին գցելով, վերցնելով անասուն-

ներ և արժեքավոր իրեր, ձիերի վրա էին թոնում՝ շտապելով դեպի հաջորդ տուն:

Հստակ աշնանային օրվա կեսին գիշերն իջավ Ալաշկերտի հովտի վրա...

Մարտիկի տունը ծայրամասում էր՝ բլրի տակ: Կամ նրանք շտապելուց չէին նկատել, կամ այդ կենդանիներն արյունակուշտ էին արդեն... Կանայք հավերհին փորաթափ էին անում, իսկ երեխաները հացատանը՝ մինդարների կույտի մեջ տաքանում: Ի՛նչ Աստված փրկեց նրանց...

Առավոտյան վախենում էին բացել աչքերը: Օրն անցավ սարսափելի սպաստումով, վախենում էին դուրս գալ ճանապարհ: Երբայրները զգուշորեն գնացին հարևանների մոտ: Դռները լայն բաց էին, շուրջը՝ արյուն ու դիակ... Նրանք սարսափած դուրս վազեցին Նազարեթի տնից, բայց նույն սարսափը տիրեց մեկ այլ տանը...

Երբ Ալաշկերտ եկավ ռուսական բանակի մոտենալու լուրը, չորս անչափահաս երեխաների հայր քահանան դարձավ կատարված վայրագությունների առաջին գոհը: Գրիգորը ճանապարհ էր ընկած. հասա՛վ արդյոք Տիգրանակերտ: Եվ ի՛նչ է այնտեղ ավելի լա՛վ է, – տխուր մտածում էր Մեսրոպը՝ մեխանիկորեն քաղիանելով մանուշակագույն ուռնակի շարքերը...

– Թուրքերը վրա հասան, ծեծեցին ծեր մարդուն, թե ինչպես էին խոշտանգում՝ աչքերս չտեսնեին: Գլուխը կտրեցին. երևե՛կ աչքերս հանելին այդ բուպեին՝ չտեսնեի ոնց գլուխը կտրեցին, հագցրին ձողի վրա և սկսեցին փողոցով մեկ քարշ տալ, – իսկզպար աչքերով մի կին ողբում էր ու լաց լինում:

– Կա՛յ, վա՛յ: Սև օր եկավ բուրդիս գլխին: Իմոնց բուրդին մորթեցին, – ծնկներին խփելով ոռնում էր նա:

– Մեր, էթե այսօր էլ ռուսը չգա, գևանք՝ ուր կարողանանք, փորձեմ գտնել մերոնց ջոկատը, – Ղազարը նայեց մոր արցունքով լի աչքերին: Հարսները, երեխաներին գրկած, սպասում էին, թե տղամարդիկ ինչ կորոշեն: Եվ կու՛չ եկած հացա-

տան անկյունում՝ երեխաները կամ այնքան էլ լավ չէին հասկանում, թե ինչ է կատարվում, կամ թարցնում էին իրենց վախը՝ իմանալով, որ դա միշտ մեք է համարվում:

Երկու օր դողողոջուն ձեռքերով մեծահասակ կանայք քաշքշում էին դիակները, բուրբը, ու՛քեր կարող էին, նույնիսկ երեխաները փոսեր էին փորում թաղման համար: Արյունը սառչում էր երակներում, աչքերը չէին դիմանում տեսածին: Մի կերպ թաղեցին հարևաններին և երկու-երեք հարազատներին անտեր, անտերտեր...

Արշալույսին նրանք դեռ չէին հասցրել դարպասները բացել, երբ փոշուտ ճանապարհին նորից լավեց ձիերի խրխնջոցը, փառք թեք, Ամենագո բ, ռուսները մտան Ալաշկերտ, կազակները եկա՛ն:

Մայրը վեր թռավ թախտից, խաչակներց.

– Ափսոս, մա՛կ չմնաց:

Մի ռուսավոր կազակ, ձին թողնելով ցանկապատի հետևում, ցատկոտելով բակ մտավ.

– Եկե՛ք, ժողովո՛ւրդ, ով կա, ուտելու բան չունեք, բե՛ր, խոզայկա՛:

Հարևն էլ արթնացավ, Ղազարը դուրս եկավ դռնից .

– Բարի գալուստ, նե՛րս եկեք:

– Ժամանակ չկա, երկար է ճանապարհ, բերե՛ք, բերե՛ք ինչ ունեք:

Արագ մտավ թոչնառոց, հայացքով չափեց, դուրս եկավ և մտավ տուն: Հնսունիքը շփոթված հետևեց նրան:

Կանայք զգուշորեն ծալեցին լավաշը, բոքոնները, երեկոյան եփած հավը դրեցին: Երկրորդ կազակը մտավ և ճակոթեց կրտսեր հարսին.

– Լավ աղջիկ է:

Կարսիկը փախավ օթախ, կազակը գնաց նրա հետևից: Մայրը ճչաց.

– Ղազաա՛ր:

Տեսնելով Ղազարի աղավաղված դեմքը՝ կազակը ներդուրյուն խնդրեց.

– Կարծեցի՞ օրիորդ է:

Ղազարը ճոճվեց և մի հարվածով տապալեց կազակին: Նա չէր կարողանում հասկանալ այս ռուսին՝ ինչպե՞ս է համարձակվում ձեռք տալ ուրիշների կանանց:

– Մա թո կինը չէ, եղա՞վ:

– Բայց նա աղջնակ է:

Ղազարի կրտսեր քույրը՝ Ջարիկը, շտապեց եղբոր մոտ վախենալով, որ նա կկոկի կազակի հետ:

– Մենք շուտ ենք ամուսնանում, որպեսզի քույրդը աղջկան չցողանա, – մի կերպ հասկացրեց նա:

Միամիտ կազակը չէր հասկանում, թե ինչու են այդ բնիկներն այդքան գրգռված: Կինը կին է, թեկուզ և աղջիկ: Բասուրման չեն, կարծես քրիստոնյա են, բայց և այնպես մոայլ ու անհասկանալի, վայրենի սովորություններով, բոլորը նույնն են թվում:

Մեղավոր հայացքով նայեց, վեր կացավ, սեղմեց ձեռքերը, կապույտ աչքերից ծորում էր անխոսովությունը:

Եղբայրները, հազիվ գազելով իրենց գայրույթը, դուրս եկան օթախից: Բոլորի հետ չես կարող վեճի ու կովի մեջ մտնել...

Շայրը երբեմն խոսում էր ռուսների մասին, տանը նրանք դեռ հիշում էին Պասկևիչի ժամանակները. ռուսի պատկերը միշտ խառնվում էր լավ փրկիչների, հերոսների հետ...

Լարվածությամբ պատճառով մինչև ուշ գիշեր չէին կարողանում քնել: Վարսիկը Ջարիկին գրկած լաց էր լինում վերմակի տակ, Մարիամը չգիտեր, թե ինչպես հանգստացնի նրան...

Առավոտյան նորից թափառում էին շուկայով մեկ՝ նոր լուրեր իմանալու համար: Իսկ նոր լուրերից նրանց մազերը բիզ-բիզ էին կանգնում: Գրեթե ոչ մի տուն չմնաց առանց սպանվածների, առանց այլաևտակելու: Օտդկուն քաղաքը կարծես շրջված կիներ պտուսահողմից:

Դիակները ցրված էին ամենուր, իսկ փրկվածները վազում էին փողոցներով՝ մի հարազատից մյուսը, նրանց ռոնգն ու ողոր վեր էր ելնում ամայի, ավերված տների տանիքներով... Երկու-երեք տներում տղամարդիկ գեներ էին հայտնաբերել, պաշտպանվելով կրակել են մի քանի թուրքի վրա, որոնց դիակները նույնպես ընկած էին սուբերի տակ: Բայց ուժերն անհավասար էին: Թուրքերը նույնիսկ փորձել են այրել տունը, բայց գիշերվանից արդեն հորդ անձրև էր գալիս... Երկու հազարանոց թուրքական բանակը, նահանջելով Ալաշկերտի հովտով, կողոպտեց և ավերեց հովտի ողջ քրիստոնեական տները: Բոլոր ցուղերում միայն աղաղակներ ու անեծք էր լսվում, և լացը երկինք էր բարձրանում:

Ղազարն ու Վահանը ընկճված քայլում էին կիսամեղ Ղաբարիխայի փողոցներով: Նրանք, ովքեր փախուստի դիմեցին, փակեցին իրենց տները և դուրս չէին գալիս, թվում էր, թե ոչ մի հոգի չի մնացել շուրջը, նույնիսկ երդիկի ծուխ չէր երևում: Վերջին տների մոտ նրանք տեսան մի կապկպած անտեր ձի: Բակում մարդիկ կային՝ ոտքերը կապված, գլուխները՝ առանձին վեր ընկած, տունը դատարկ. ըստ ամենայնի՝ նրանց բոլորին քարշ էին տվել բակ:

Շուկայում բացվել էր ընդամենը մի քանի կրպակ: Մարդիկ հավաքվել էին փոքր խմբերով և հազիվ լսելի գրուցելով՝ ուրողում էին ինչ անել: Ռուսները հույս տվեցին: Բայց հնարակների հիշողության մեջ ռուսի նահանջ կար, հետո ժողովուրդը հետևեց բանակին:

Կազակները քայլում էին շարքերի արանքում՝ գործուկա նայում շուրջը:

Ղազարը և Վահանը որոշումն արդեն կայացրել էին. մոտեցան հարևաններին.

– Մենք նրանցից գեներ պետք է խնդրենք: Կազակներն ասում են, որ բանակում հայեր կան, գնանք գտնենք:

– Ավելի լավ է ցերեկը գնանք նայելու, թե չէ կարող են բաշխու՞մք սեղանի մոտ:

Անցավ մի քանի օր. տարօրինակ օրեր էին: Կազակներն ամեն օր այցելում էին տները, որտեղ, չգիտես ինչպես, ողջ մարդ էր մնացել, պատվում էին բակով մեկ և տանում իրենց ու՛զածը: Վահանը նկատեց, որ նրանցից երկուսը կամ երեքը, նույն ընկերներով միասին էին գալիս:

Հայերը շվարած հետևում էին նրանց, աղմկում, բայց չէին համարձակվում ծեծել, գնդ էլ չունեին: Վերջապես տղամարդիկ (գրեթե դեռահասներ) որոշեցին հաջորդ առավոտ գնալ կազակների վերադասի մոտ:

Ռուսների ճամբարը հեռվից երևում էր. գնացին ոտքով: Երկար վիճեցին, պահակները կանգնեցրին, փորձեցին բռնել, և հանկարծ Վահանը հայերեն խոսակցություն լսեց:

Մի քանի հոգի մոտեցան և հարցրին, թե ինչու են եկել:

– Ռուսական բանակն արդեն այստեղ է, ձեզ ոչինչ չի սպառնում, – ասաց քաղաքացիական հագուստով բարձրահասակ այնտեղ հայը:

Նրա բարի աչքերը մի փոքր հանգստացրին Վահանին, բայց նա շարունակեց.

– Ղարաբաղի մասին եմ: Կեսից ավել մարդ չի մնացել գյուղում երկու-երեք օրվա ընթացքում թուրքերը և քրդերը քարը քարի վրա չթողեցին: Հիմա էլ կազակներն են մտնում են տները, ինչ մնացել է, դա էլ են տանում:

– Երեկ կազակները 600 ոչխարից ավել հավաքեցին տարան, վաճառեցին, եկան նույն օրը նորից տարան ուրիշներին վաճառեցին և առավոտից երկու մի քանի անգամ տարան և նորից վաճառեցին», – միջամտեց Հարությունը՝ Ղազարի հասակակիցը:

Բնակիչները շրջապատեցին այնտեղ ծերունուն և սկսեցին իրար խոսք կտրելով բողբոջել:

– Ռուսներն ամեն ինչ տանում են և ոչ մի բանի համար չեն վճարում: Ահագին այլուր, այժար (չոր թրիք) և խոտ տաքան: «Հաշվեք՝ 2000 սայլ. . . Մի՞ թե այդպես կարելի է, – համարյա լաց էր լինում կաղ Նշանը՝ գյուղի ամենաբարեկեցիկ մարդը, ով իր որդիների հետ այրաղաց էր պահում: – «Ռուսներն արդեն երկու անգամ գրավել են մեր երկիրը ու թողել գնացել: Նորից են հեռանալու»:

– Բայց Նաչլուի գյուղացիներն այսօր առավոտյան շնորհակալություն հայտնեցին ռուսներին. ասում են, որ երեկ, եթե կազակները 20-30 րոպե ուշանային, քրդերն ամբողջովին կկտորեին Նաչլուն, – ասաց բարձրահասակ ծերունին:

– Դուք պետք է տեսնեիք, թե ինչ վիճակով են այնտեղից բերել երկու սպանված այաջկերտցիների: Երկի այլանդակված քրդերը չմոռացան պղծել նրանց, և ամենազովելի ձևով: Մեկի բերանը լի էր արյունով և ինչ-որ բանով, – ասաց տխուր աչքերով մի այլ այնտեղ ծերուկ, նույնպես քաղաքացիական հագուստով:

– Սպասե՛ք, լսե՛ք, առաջին օրը մեր կազակները արյունու փողոցներում հավաքեցին տասնյոթ ծեր տղամարդկանց, մոտ քսան կին և քսան-քսանիինց երեխաների դիակներ, – ոգևորված այցելուների խմբին մոտեցավ կազակների հրամանատարը, – մենք հավաքեցինք նրանց և ի՛նչ վիճակում:

– Աստված իմ, – դիմեց նա այն բարձրահասակ այնտեղ տղամարդուն, – այլանդակված, պղծված: Գլուխները, ոտքերն ու ձեռքերը կտրած: Այստեղ կանանց կրծքերն են, այնտեղ մարմինները, երեխաների փոքրիկ ձեռքերը՝ կտրուած: Հավանաբար՝ նրանց մայրերից պոկելու համար: Օ՜ր մարդկանց աչքերը հանել են: Եվ դուք պետք է տեսնեիք, թե ինչպես էին լաց լինում մեր կազակները՝ արցունքները թնեղով սրբելով: Մարդիկ, որոնք պատերազմ էին տեսել, որոնք կարծրացել էին արյան ու կրակի մեջ, երեխաների նման մեղմացել էին, դրան չէին

դիմանում, – դողդոջուն ձայնով պատմում էր միջահասակ զինվորը:

– Մրանք մի քանի առանձին դեպքեր են, մենք տեղում կկարգավորենք, հասկացե՛ք, անասնակերը քիչ է, ուստի վերցնում են, – արդեն ավելի հանգիստ ավելացրեց ռուս զինվորականը՝ դիմելով ակեհեր հայերին:

Ինչպե՞ս են հայտնվել այդ ծեր քաղաքացիականներն այնտեղ: Հավանաբար՝ նույնպես կամավորներ են: Բայց այդքան տարեց և առանց զենքի...

– Ե՛վ Խաչյուն, և՛ Խիաբեկը գիշերը տեղափոխվել են Ալաշկերտ: Բոլոր նրանք, ովքեր ողջ են մնացել, հավաքվել են այստեղ:

– Տվե՛ք մեզ զենք, մենք էլ ենք ուզում կռվել, – բացականչեց Ղազարը:

– Արի մեզ հետ գնանք, մենք վաղը գնում ենք Ալաշկերտ: Մենք կզենենք ձեզ միանալ ջոկատին, – վստահեցնում էին ծերերը:

Ալաշկերտում տագնապ էր տիրում, մի կողմից՝ ռուսները խաղաղ կյանքի հույս էին տալիս, մյուս կողմից՝ ով իմանա: Նրանք միշտ ջախջախել են թուրքերին, բայց գիտեն նաև նահանջել, թու-թու, սատանան չլի:

Ալաշկերտում եղբայրները մնացին հարազատների մոտ՝ սպասելով այն բարձրահասակ ծերունուն, որին բոլորը Հովհաննես էին ասում: Նրանք շվարեցին, երբ իմացան սարսափելի լուրը.

– Չեն ուզում մեզ զենք տալ, իսկ մենք ուզում ենք կռվել նրանց հետ: Պատուխաս են մեր գլխին այս անաստված թուրքերը: Հիմա էլ առավոտյան կազակները ներս մտան: Ամբողջ տունը, գոմը խուզարկեցին, բռնագրավեցին ինչ ունեինք՝ երեք ստորճանակ, սնդուկներից հանեցին ամբողջ ոսկե և արծաթյա զարդերը: Հրամանատարը եկավ, սկսեց ատրճանակով սպառնալ նրանց, բայց ոչինչ չկարողացավ վերադարձնել:

– Այդպիսի պաշտպան կլինի՞: Անե՞ծք են մեր գլխին, ինչի՞ համար, – հանկարծ աղերսալի բացականչեց Ղազարի հեռավոր ազգականը:

Եվս մի քանի հոգի մոտեցան: Տեղի բնակիչներից մեկը ցավով պատմեց այն մասին, թե ինչպես է թուրդ ավազակախումբը ոչնչացրել հայի տնկած գեղեցիկ պարտեզը:

– Ինչո՞ւ եք կոտորում: Գոնե ծառերին խղճացեք, – աղաչեց տերը:

– Մենք ոչ մի պարտեզ չունենք, թող դուք էլ չունենաք, – լկտիորեն պատասխանեց թուրդը:

Վա՛յ, նույնիսկ ծառերը աճում էին միայն հայկական գյուղերում:

Նրանք հատում էին ինչպես մարդկանց, այնպես էլ այգիները...

Մի այցելուի գրառումներից. «Մոտակա քրդական բնակավայրերի շրջակայքում մշակված հող չկա: Հերկ ու ցանքը մնում են հայ գյուղացիներին»:

Գլուխն իջեցրած, աչքերը թաքցնելով՝ այնտեղ նստած էր Հաջին՝ շրջակայքում հայտնի ու հարգված թուրքը. հեեց նրա տասն էին մնում այդ ալեհեր հայերը: Նա տխուր լսում էր ու գլխով անում: Քրդերի հարձակման ժամանակ Հաջին տասնմեկ հայ ընտանիք էր թաքցրել իր տանը և փրկել մահից: Թե ինչպես կարողացավ այդքանին տեղավորել, անհասկանալի էր, բայց, այնուամենայնիվ, դա ստացվեց, և այս փաստն արձանագրեց բարձրահասակ ալեհեր ծերունին՝ Հովհաննես Թումանյանը, ով Շիրվանգադեհի հետ միասին հասել էր առաջնագիծ՝ կամավորների հետ հանդիպելու:

Տղամարդիկ մտալ ծամում էին թրջած հացը:

Վերջապես նրանց կանչեցին:

– Մենք ավազին կվերցնենք, մեծացել է, – հանգիստ հրամայեց կազակների պետը՝ հերթական անգամ հայացք գցելով

կայաուտայա բարձրահասակ Ղազարին. գուցե նման էր իր որդուն:

Ղազարին մտազեր տվեցին, և նա նույնպես մտեցավ գրանցված տղաների խմբին:

Բայց նրանց միանգամից չհաջողվեց կուրել:

«Սկզբում Ալաշկերտի առաջնագծում ապրող հայերին տվեցին 500 հատ Բերդանի հրացան, այնուհետև այդ զենքերից մի քանիսն առգրավվեցին՝ պատճառաբանելով, որ զենքն իբր օգտագործվել է կորոպուտի համար: Իսկ Բայազետ և Դիառլին թաղամասերում զենքի ընդհանուր թիվը հասնում էր 70 000-ի: Այնուամենայնիվ, Իզդիբում հայերի նկատմամբ վարվող քաղաքականությունը շատ ավելի բարյացակամ էր, քան, ասենք, Ղարաքիլիսում»:

Ի միջի այլոց, այստեղ, անկասկած, կարևոր դեր ունեցավ զեներալներ Օզանովսկու և Աբացիևի մոտեցումների տարբերությունը: Վերջինս քողարկված հեզնանքով ու ամբարտապանությամբ խոսեց հայ կամավորների մասին, մեղադրեց տեղի հայ բնակչությանը միայն ավագակությամբ զբաղվելու մեջ: Հանդիպմանը ներկա էր նաև գլխավոր շտաբի գեներալ Լեբեդինսկին, ով ամեն ինչում համաձայն էր Աբացիևի հետ և պարզապես կրկնում էր նրա բոլոր խոսքերը: Թումանյանը գրեթե բառացիորեն մեջբերում է այն ամենը, ինչ հանդիպման ժամանակ ասաց ռուսական բանակի գեներալը, որը լցված էր հայերի հանդեպ զայրույթով ևատելությամբ. «Հայերը զբաղված են կողոպուտներով և թալանել են քրդերի ու թուրքերի բոլոր տները»:

Հանձնաժողովն արդեն համոզվել էր, որ Ղարաքիլիսում հայերի մեծ մասը զինաթափվել է: Աբացիևը նաև զրպարտել էր հայ ապստամբներին՝ պնդելով, որ նրանք «նույնպես թալանով են զբաղվել»: Երբ հանձնաժողովի անդամները բերում են քրդերի կողոպուտի ակնհայտ օրինակներ, Աբացիևն առարկում է. «Նրանք ասում են, որ հայերը կողոպտեցին դժբախտ քրդերի ամբողջ ունեցվածքը և գողացան բոլոր ձիերը»: Նա չի էլ փոր-

ձում թաքցնել իր առելությունը հայ ապստամբների նկատմամբ՝ կամավորների ակնհայտ հաջողությունների և մարտերում նրանց անձնուրաց խիզախության ու հերոսության բազմաթիվ օրինակներն անտեսելով: Հայ ապստամբները բազմիցս հայկական և քրդական գյուղերից սնունդ էին ստանում ռուսական բանակի համար, իսկ գեներալը դա ներկայացնում էր որպես թալան և չէր թաքցնում պատերազմի դաշտում հայ ապստամբներին չտեսնելու իր ցանկությունը:

Տպավորությունն այնպիսին էր, որ մահմեդական Աբացիևը ամենևին չէր ձգտում պայքարել մուսուլման թուրքերի բանակի դեմ: Բանաստեղծը գրանցել է նաև Աբացիևի հետևյալ զրպարտիչ հայտարարությունը հայ կամավորների վերաբերյալ. «Հետևելով մեզ, նրանք իրենց կարիքների համար սկսեցին խոտ, սնունդ և այլ բաներ վերցնել թուրքական ու քրդական գյուղերից, երբ դա շատ վնաս է մեր հեղինակությանը... Տպավորություն է ստեղծվում, որ այս ամենն արվում է մեր միջոցով: Այդ պատճառով ես նրանց առաջարկեցի. «Եթե ուզում եք, մեզանից առաջ գնացեք, իսկ թաքնվել մեր թիկունքում և այդպիսի բաներով զբաղվել մենք թույլ չենք տա, որ դա արվի»: Եվ նույնիսկ նրանց ասաց. «Եթե դուք պետք է նույն ոգով շարունակեք, ապա ավելի լավ է, որ ընդհանրապես գոյություն չունենաք»:

Գիշերը երեխաների համար քնատեղերը պատրաստեցին և սկսեցին խորհրդակցել: Հորաքայրը ամուսնու և երեխաների հետ որոշեց գնալ հարավ՝ Վան կարծելով, թե այնտեղ պիտի որ ավելի հոսալի լինի. ռուսների բանակն այնտեղ կանգնած է: Մուսակա Մորց գյուղից ամուսնու հարազատները կհասցնեն Վան: Բայց դեռ չգիտեին, թե առջևում ինչ սահմոր անհայտություն է նրանց սպասվում:

Եվ այսպես անընդհատ... Մենք միշտ ունենք երկու ճառագարի. մեկը՝ դեպի անդունդ, մյուսը՝ դեպի անորոշություն...

Առավոտյան Մեարուպի քույրն իր երեխաների և երկու-երեք հարևանների ու հարազատների հետ, ովքեր նույնպես ո-

ըռզել էին մեկնել, ճամփա բռնեց Վանի ուղղությամբ՝ դեպի Արճեշ: Ճանապարհին ձգված էր փախստականների քարավանների շարանը. բոլորն ասում էին, որ Վանում հանգիստ է, ջարդ չկա: Նրանց նախնիներն այնտեղից էին Ռշտունիքից, բնիկ Արճեշից, այնտեղ ապրում էին անհիշելի ժամանակներից (1880թ հայ բնակչության թիվը գնահատվում էր 26,900 մարդ, ավելի քան 90%): Աստիճանաբար մեծամասնությունը հեռացավ դրոնելու ավելի լավ վարելահողեր, և ցրվեց բերրի հովտի տարբեր մասերում:

Հայերենում Արճեշին (Էրզժեշ) անվանում են Ականց: 18-րդ դարի վերջից Վանա լճում ջրի մակարդակի բարձրացման պատճառով Արճեշն աստիճանաբար ընկղմվեց ջրի տակ, և 50 տարի առաջ այն տեղափոխվեց նոր տեղ՝ դեպի հյուսիս և զգալիորեն ավելի բարձր տեղ: Իսկ հին քարաքան ամբողջովին այնպես էր ընկղմվել ջրի տակ, որ շենքերը չէին երևում:

Ժամանակին պապը պատմում էր, որ Արծրունիների տոհմի իշխանները Ռշտունիքին տիրելուց հետո Ռշտունիքի հողերը դարձրին Վասպուրական, շատ նախարարներ, ազնվականներ, հասարակ մարդիկ ցրվեցին հայկական տարածքներով մեկ: Շատերն ստիպված եղան լքել Ռշտունիքը և օրինված Վան ծովից տեղափոխվել Ալաշկերտի հովիտ կամ Տրապիզոն (նույնպես ծովի ափ էր, բայց անձայր ծովի)... Այդպես ամենուրեք՝ և եվրոպական երկրներում, և՛ նույնիսկ Ամերիկայում, այդ ազգանունն այնտեղ կրողներ կան:

Իսկ Ռշտունիքի գանձերը հայկական լեռնաշխարհի Վանա ծովի փիրուզե մարգարիտը և կրզիններում գտնվող գեղեցիկ պալատները, հնագույն ժամանակներից պարսիկներն ու բյուզանդացիները պատառոտում և պոկոտում էին երկու կողմից: Վասպուրականը գիտեր և՛ հաղթանակներ, և՛ բարգավաճում, գիտեր նաև դառը պարտություններ...

Երկու կայսրությունների՝ պարսկական և բյուզանդական, պատերազմները թուլացրին նրախորը: Նախարարների

կոիվները երբեք չէին հանդարտվում, և արաբները շրջապատում էին այս իշխանությունը՝ և հրաշալի Վանա ծովը: Արծրունիները, Ռշտունիները, Բագրատունիներն արքատացան, շա տ արքատացան... Բայց քաղաքները նորից վերակենդանացան: Նրանք վերադարձան հայրենի վայրեր, ցանեցին ու հերկեցին...

Ոչ որ չգիտի, թե ինչպիսի ցեղից ես, եթե չունես իշխանություն կամ, վատագույն դեպքում, գոնե մի պաշտոն: Վերջին հայտնի Ռշտունին, ով ինչ-որ պաշտոն ուներ, Վարդ Պատրիկյն էր՝ մեծ Թեոդորոսի որդին: Նա մահացավ, ով գլխի, թե որտեղ և երբ... Փառավոր իշխանական ընտանիքն անհետացավ մասիստոլի մեջ, իսկ Ռշտունիքից նրա ոչ պակաս ազնիվ ճյուղերի բեկորները ցրվեցին հովիտներում, բարձրլեռնային կալվածքներում և օտարերկրյա քաղաքներում: Մրով ու կրակով այրեցին հիշողությունը, մնաց միայն ազգանունը՝ կապված երբևէ ծաղկող երկրի՝ անեզր Վանա ծովի հետ, որը շաղ է տալիս իր փիրուզե ալիքները ձյունե սպիտակ գագաթների միջև: Նույնիսկ մականունները մնացին, բայց ո՛չ ծովը, ո՛չ էլ այս երկիրը չկան:

Մարդիկ միշտ ուրիշների համար մականուններ են ընտրում, դե իբեց հո չեն անվանակոչի: Մականունն օգտագործում են նույնիսկ մի ընտանիքում, հարևանների և մեկ այլ վիլայեթի նորեկներին են շնորհում... Իսկ եթե դուք ապրում եք Առնաշխարհի ամենագեղեցիկ ու ծաղկուն քաղաքներից մեկում... Այնպես որ, եթե «վանեցին» արդեն հարուստ, քաղաքակիրթ քաղաքի բնակչի, նախանձախնոյի և չափավոր ժլատի նշանն էր (այլապես ինչպե՞ս հարստանալ), ապա իրենք վանեցիները, որոնք եկել էին Ռշտունյաց երկրից և հարավային լեռնային այլ շրջաններից, կոչվում էին «վոշիկ»: Այդ վայրերի բնակիչները կրում էին «վոշիկ» կոչվող կոշիկներ (կանեփի պինդ թելից պատրաստված կոշիկներ, սաքերում շատ հարմարավետ):

1876 թվականի դեկտեմբերին օսմանյան իշխանությունները Վանի մեջ այրեցին հայերին պատկանող շատ շենքեր, զանգվածային ձերբակալություններ կատարեցին և կազմակերպեցին հայ բնակչության կոտորած: Հայ բնակչությունը գրավոր դիմել էր Ռուսաստանին՝ օգնություն խնդրելով: Կրկին փախստականները ցրվեցին փոշոտ ճանապարհներով, այժմ՝ Վանից և այլ ափամերձ հայկական քաղաքներից ու գյուղերից: Բայց մի բան մնաց և փոխանցվեց Ռշտունու փառավոր ու քաջարի ցեղից. ձգտումը դեպի արդարություն, գիտելիքներ, սովորելու ծարավ... Ընտանեկան ազգակցական սերունդներն էլ պոսի միջոցով փոխանցեցին ոչ միայն մեծ սպարապետի՝ Քեոի Թորոսի հիշատակը՝ ճանաչելով հերոսի հատկությունները, այլև դրանք բարձրացրին ազգային արժեքների մակարդակին: Դուք չեք կարող լինել ծույլ, անհեթեթ, վախկոտ և անհետատես, դիվանագիտության մեջ պետք է լինել յուելացի և ճկուն:

Մեսրոպի ցեղում ուսում սիրելը, ուսուցանելը փոխանցվել էր ժառանգաբար: Հայրը, պապը, նախապապը ուսուցիչ էին: Բսկ ընտանիքում կար բանավոր ավանդույթ. նրանց նախահայր-նախնիները քահանաներ էին, համարյա կաթողիկոս: Անկախ նրանից, սա ճիշտ է, թե սիրտը ջերմացնող լեզուը, Ռշտունի տղամարդիկ կրթված մարդիկ էին, նրանք սիրում էին գիտելիքներ փոխանցել:

Եվ մի օր մի երիտասարդ, ինչպես և իր բոլոր հարազատները՝ կարմրահեր ու կապտաչյա, մի անշուք ջորի նստած հասավ Ղարաքիլիսա: Գեաց եկեղեցի՝ քահանային տեսնելու, հարցրեց, թե ծխական դպրոցում ուսուցիչ կա, և ավելացրեց, որ եկել է երեխաներին գիր-գրականություն սովորեցնելու, պատմություն դասավանդելու: Դեռ նրա նախնիների ուսուցիչներն էրջջեղում ու Վանում էին դաս տալիս...

Փոքր դպրոցը հազիվ տեղավորում էր 20-25 երեխա՝ հիմնականում տղաներ: Երեխաների աչքերը փայլ

ատակում էին, երբ պատմություններ էին լսում, թե ինչպես Դավիթը ջարդեց զավթիչներին: Երեխաները պաշտում էին սուրբ Մաշտոցին և յուրաքանչյուր տառը սիրով գրում հաստ շագանակագույն թրթի վրա ... Մի քանի ամաչկոտ աղջիկներ կուչ էին եկել հեռավոր անկյունում, չնայած՝ նրանք բոլորից լավ էին սովորում: Նրանցից մեկը կապույտ աչքերով մի գեղեցկուհի աղջնակ էր՝ երկար սև հյուսերով, օր ու գիշեր նրա պատկերը հետապնդում էր վարժապետի երևակայությունը, քուն ու դադար չէր տալիս:

Շուրջը անհանգիստ էր: Կամ քրոջերը հարձակվում էին միամիտ ճանապարհորդի վրա, կամ առևանգում պատանդին և սկսում սակարկություններ անել: Բսկ Թուրքիայում գտնվող մի գեղեցիկ հայ աղջիկ իսկական վտանգ էր իր ընտանիքի համար: Երբեմն ընտանիքում նույնիսկ թաքցնում էին աղջիկներին, տղայի շորեր հագցնում, որպեսզի գող ու որսորդ ավագակ քրոջերի ձեռքը չընկնեն: Ընդհանրապես, թուրքերն ու քրոջերը զարմանալի փափագ ունեին քրիստոնյա աղջիկների հանդեպ: Անհավատ, արհամարհված, երկրորդ կարգի մարդիկ էին քրիստոնյաները, բայց նրանք ուզում էին ամուսնանալ հենց քրիստոնյա գեղեցիկ աղջիկների հետ:

Մարիամը շուտ էր կորցրել ծնողներին: Նրանք անհետ կորել էին դեպի Ալաշկերտի շուկա տանող ճանապարհին, պապն էր մեծացրել նրան:

Մեսրոպը ամաչելով խնդրեց մորը գնալ աղջկան ուզելու . . . Մայրիկ, թող նա մեզ հետ ապրի, ես չեմ ուզում, որ ուրիշ մեկը լինի իմ կինը: Խելացի, համեստ և ինչպիսի գեղեցկուհի : Քեզ լավ հարս կդառնա:

Հայրն ու մայրը սանիկին ուղարկեցին որպես ուզվոր, երկար ժամանակ սանիկը թաքցնում էր իր այցի նպատակը, իսկ Աբրահամ պապը ձևացնում էր, թե չի հասկանում՝ ինչու են Ալաշկերտից եկել իր մտտ: Մանիկն էլ պատվում էր պապիկի շուրջը չհամարձակվելով զրոյց սկսել:



Մարիամի պապը հայտնի էր որպես բարեկեցիկ և գրագետ մարդ: Ղարաքիլիսայի շուկայում եւ մի փոքրիկ խանութ ուներ, որտեղ վաճառում էր սպասք, թելեր, ասեղներ: Տոն օրերին էլ ապրանք էր տանում Ալաշկերտ: Իմանալով, որ եկել են ուզելու ուսուցչի համար, եւ հավանաբար ուրախացավ, քանի որ 12 տարեկան աղջիկը համարվում էր «տանը մնացած», «դախացած»: Բայց իր «պատաված օրիորդի» համար պապը մի այնպիսի գին դրեց (քառասուն ոսկի), որ սանիկը սկզբում պշած եայեց վրան, իսկ հետո գոռաց.

– Աբրահամ հայրիկ, այդ ո՞վ է այդքան ոսկի ուզում աղջկա համար: Շատ-շատ երկու-երեք ոսկով են ստուսանում:

– Դե երկու-երեք ոսկիով էլ գնացեք աղջիկ ուզեք: Թռռնուռիս գեղեցկուհի է, անեղ-դուռ, հետև էլ՝ գրագետ, գովասանագրով երկու դասարան է ավարտել: Իսկ ձեր ժանգոտ կյանք վարժապետին տեսել եմ, ասում են՝ լավ և լուրջ ուսուցիչ է, ոսկու համար էլ մի անհանգստանա, Վան-Ռշտունիքում արքատ մարդ չի լինում, քառասուն չէ, տո հարյուր քառասուն կճարի:

Այո, դեռ երկար ժամանակ Վանի ոսկին չէր վերջանում: Բայց այն տեղափոխվել էր ուրիշների մոտ: Գրեթե բոլոր վանքերը հետագայում փորել-քանդորտել են քրդերը, մինչև հիմա դեռ փնտրում են Վանի ոսկին ու Վանի գանձերը...

Մարիամը թաքուն հայացքը գցեց կարմրահեր փեսացուի վրա և արցունքներով հագավ իր պատկը: Ակսեց ապրել ուսուցչի տանը, օգնել սկեսրոջը մեծ տնային տնտեսություն վարելու մեջ, և Մեսրոպի հետ նրանք երկար ժամանակ քույր-եղբոր պես էին: Մեսրոպը հավում էր՝ նայելով գեղեցիկ Մարիամին, շուկայից երբեմն բերում էր թեթև գլխաշոր կամ արծաթե վզնոց, շփոթված նվիրում: Մարիամը մանկան պես ուրախանում էր: Նույնիսկ նուրբ կտորի պարկի մեջ մի բուռ չամիչը նրան ուրախացնում էր: Մարիամը ծովի պես անհուն կապույտ աչքերը հաճախ ամրոթից իջեցնում էր, բայց դրանք փայլում էին երախտագիտությունից և երջանկությունից:

Նրանք վաղուց էին ծրագրել տեղափոխվել Ալաշկերտ, քանի որ այնտեղի դպրոցը՝ կառուցված հարակից ցուղերի մեծահարուստ ծխականների կողմից, ավելի ընդարձակ էր: Այդ դեպքում մնացածն էլ կհավաքվեին իրար գլխի, բայց Մարիամի պապը ոչ մի կերպ չէր ուզում թողնել Ղարաքիլիսան: Հասնում էր.

– Ալաշկերտում սովելի շատ սոված քրդեր են շրջում քաղաքի ծայրամասերում: Իսկ Ղարաքիլիսայում բոլորը հայեր են, ծայրահեղ դեպքում պատասխան հարված կտան:

Բայց այս անգամ անհիշյալ համիդիները գրեթե բոլոր տղամարդկանց տարան, գրեթե ոչ որի ձեռքին գեք չթողեցին, իսկ հետո թորքերի մեջ լուր տարածվեց, թե իրենց երբվայ թշնամին՝ ոուր, շտապում է այս պատերազմում օգնել Թուրքիայի քրիստոնյաներին: Իսկ նրանք պարտավոր են կովել հանուն Օսմանյան կայսրության, սուլթանի թշնամու՝ ոուսների դև:

Սուլթանի համար բոլոր այլ դավանանք ունեցողները, անկեղծ ասած, թշնամիներ են: Մուսուլմանները շատ արագ են հավաքվում այլադավանների դեմ, միայն՝ ձայն տուր: Իսկ կանանց և երեխաների հետ միշտ ժամանակ կուսենան հաշիվ մարքելու, միայն՝ թող ոուսները ոսները քաշեն ու դուրս գան այստեղից, մի՞թե պատրաստվել են ամբողջ ձմեռ մնալ: Չէ որ կրանց ուտելու բան չեն թողել:

Քրդերը, չգտնելով Մարիամի պապի խանութում թաքնված գանձերը, խանութը քարոքանդ արեցին, գրքերը այրեցին քոչվորների ինչի՞ն է պետք գիրքը: Իսկ ձերուսուն ու կնոջը ձողի վրա քաշեցին և քաշ տվեցին ձիու հետևից... Հարևանները նստակյաց քրդերը, շտապեցին օգնության, մի երկու քոչվորի մորթելով՝ կրանց մի կերպ ետ շարտեցին...

Փորձանքը եկավ հայի տուն, նորից եկավ... Ջեք լինեք, վերջին փամփուշտը կծախսեիր ինքդ թո վրա, որպեսզի թշնամին չուրախանար ու չարձեր դիակդ...

Մի քանի օր անց Ղազարը մի հատ էլ մատուցել հայթա-  
թեց, կրտսեր եղբայրը մնաց տանն ու կանանց հսկելու, իսկ  
կրտսեր սլացան դեպի իրենց վաշտ:

Կամավորներին հրացաններ բաժանեցին, բայց հետո  
ինչ-որ պատճառներով կրանց ձեռքից առան: Կամավորներն  
անմիջապես նկատեցին Ռուսաստանի իշխանությունների սա-  
ռը վերաբերմունքը, բայց չգիտին, թե դա ինչով էր բացատր-  
վում: Միամիտ ու պարզամիտ՝ երանք անփորձ էին ռազմական  
գիտության մեջ: Ձուգորդված ռուսական դիվանագիտության  
խճճված նրբություններով, քրիստոնյա համակրոն ռուսական  
ուժի հանդեպ հավատից կուրացած կամավորները չէին հաս-  
կանում, թե ինչու են ժամանակ կորցնում, մինչ քրդերը վայրա-  
գություն վրձում էին բոլոր գյուղերում՝ ավերելով դրանք:

Ահա թե ինչ ենք կարդում Թումանյանի վավերագրական  
գրառումներում այս ուղևորությունների, մասնավորապես  
Ղարաբիլիսայի մասին.

*«Ռուս զենեղայների կանխակալ վերաբերմունքի պատ-  
ճառների պարզաբանման, հստակեցման անհրաժեշտությունը  
ստիպեց Հայ ազգային բյուրոյի և կարողիկոսի ղեկավարությա-  
նը բյուրոյի նախագահ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի ընտրությ-  
ամբ հայ ակնավոր հողեղանակների և մտավորականների  
խումբ ստեղծել և ուղարկել ռազմաճակատ: Խմբի կազմում էին  
Մ. Տեր-Մովսիսյանը, Հ. Թումանյանը, Շիրվանզադեն, Խորեն Ե-  
պիսկոպոս Մուրադբեկյանը (հետագայում՝ կարողիկոս), Ներ-  
սիսյան գիմնագիտի տեսուչ Հովսեփ Խուսունցը, Մմբատ Խա-  
չատրյանը (հետագայում՝ Երևանի քաղաքապետ), քանանա  
Նիկողայոս Բավոյանը (տեր Նիկոյ):»*

Այս ճանապարհորդության համար Սամսոն Հարությունե-  
յանը Թումանյանին տրամադրեց իր վերաբերում:

Խումբը Թիֆլիսից մեկնեց նոյեմբերի 15-ին, վերադար-  
ձավ մեկ ամիս անց: Ենթադրվում էր, որ Իգդիրով և Կարսով  
պետք է քշեին Բայազետի շրջան, Ալաշկերտի հովիտ, Բասեն,

Դելիբաբա, Խորասան, Զիվին, Մարիդամիշ, Ալեքսանդրապոլ:  
Ուղևորության նպատակն էր այցելել այն վայրերը, որտեղ  
կովել էին հայ կամավորները, անձամբ համոզվելու, թե իրա-  
կանում ինչ է կատարվում ճակատում: Այս ուղևորության ըն-  
թացքում էր, որ Թումանյանը, հանդիպելով և զրուցելով ռուս ո-  
րոշ սպաների և զենեղայների հետ, առաջին անգամ տեղեկա-  
ցավ հայերի նկատմամբ Ռուսաստանի բարձրաստիճան գիե-  
վորականների անարդար, կանխակալ վերաբերմունքի աղա-  
ղակող փաստերի մասին:

Առաջին զրույցը տեղի է ունենում զենեղալ-լեյտենանտ  
Վլադիմիր Լյախովի ներկայությամբ, որի մասին Թումանյանն  
իր օրագրերում գրել է. *«Լյախովը այն Լյախովն է, որը հայտնի է  
Թեհրանից: Նա հայատալաց է ու չի թարցնում դա»:* Առաջին ան-  
գամն էր, որ Թումանյանը օգտագործում էր «հայատալաց» սահ-  
մանումը ռուս զենեղայի նկատմամբ, իսկ հետագա տարիներ-  
ինն նա ստիպված էր այն հաճախ կրկնել նկարագրելով ռու-  
սական բանակի այլ բարձրաստիճան զինվորականներին:  
Ձրույցի ողջ ընթացքում Լյախովը լուրս էր դնում ամբարտա-  
վան արտահայտությունը:

Երևելյան Թումանյանն այցելեց հայ կամավորներին,  
հանդիպեց հարյուր հայ ապատամբների, որոնք պետք է միա-  
նային առաջնագծում կովող մարտիկների ջոկատներին:  
Նրանց մեջ կային փորձառու ռազմիկներ, ովքեր մասնակցել  
էին ռուս-ճապոնական պատերազմին, և «անբեր, անմորուք ու-  
սանողներ», արհեստավորներ ու բանվորներ: Նրանց թվում էր  
ժամանակին հայտնի ռուս օպերային երգիչ Վուզինը՝ Լենինը  
Մոխիտովի եղբայրը, ով պատվիրակության անդամներին բա-  
ցատրեց, որ եկել է պայքարելու փոքրիկ և բազմաչափար հայ  
ժողովրդի ազատության համար: Թումանյանը և հանձնաժողո-  
վի մյուս անդամները ականատես եղան տեղացի հայի ձերբա-  
կալությանը, ով, օգտագործելով ինքնապաշտպանության հա-  
մար ստացած զենքը, պատրաստվում էր Իգդիրից ձուլ տեղա-

փոխել Բայազետ՝ վաճառքի: Կատաղած հրամանատարն սպառնաց գեկուցել գեներալին այդ մասին, որպեսզի «ամբողջ հայրությունը զինաթափվի»: Հայերով ու քրդերով բնակեցված Զիրո գյուղում խուսիս այցելեց հայկական եկեղեցի, որը երեք անգամ կողոպուտվել էր, և որի մեջ մնացել էր միայն Աստվածամոր պատկերը՝ փորրիկ Հիսուսը գրկին: Այստեղ Թումանյանը տեղեկանում է, որ ռուսները նույնպես մասնակցել են եկեղեցու թալանին՝ բոլորովին անտեսելով հայկական սրբավայրերը:

Բանաստեղծին պատմում են Ղարաքիլիսայում մի դեպքի մասին, երբ ռուս զինվորները, հայկական տներից մեկում խուզարկության ժամանակ հայտնաբերելով Կաթողիկ եկեղեցու կողմից պահպանված հաղորդակցության երկու արձաթե աման, խլել և հետագայում փոխանակել են չորս հացի հետ:

«Եկեղեցու կաթողիկ սպասավորը սարսափելի հուսահատված էր ու վշտացած այս ամանների կորստից և անվերջ ողբում ու գանգատվում էր:

Հանձնաժողովի անդամներն այս ամանները գնել են 12 ռուբլով և վերադարձրել կաթողիկ եկեղեցի: Արդահանի գլխավոր նահանգապետըն արդարացնելով ռուս զինորների արարքը, Թումանյանին բացատրեց, որ ռուսական բանակը բավարար չափով ապահովված չէր սնունդով և նույնիսկ ռազմական պաշարներով:

Խազի գյուղի բնակիչները դժգոհ էին ռուսների վերաբերմունքից և ասում էին. «Մենք ճանապարհի խաչմերուկին մտա ենք՝ բոլորի ոտքերի տակ: Ռուսները մի բան թալանեցին, ինչ որ բան պահանջեցին, ուզածները տվեցին: Էլ ուրիշ ոչինչ չունենք: Նրանք անընդհատ բան են պահանջում, բայց մենք նույնիսկ նրանց լեզուն չգիտենք, որ հասկանանք, և մեզ ձեռում են»:

Զիրո գյուղում նաև պատմեցին առնանգված Գուգալ անունով 18-ամյա հայ աղջկա մասին, որին ռուս զինվորները վերադարձրել են ճնողներին:

Թումանյանը գրում է. «Ռուս կազակները կողոպտեցին և ավերեցին 250 խանութ: Հինս մնացել է 50-ը. այնտեղ գորբն է մնում: Այս տարածքում հուսահատ «բնակչությունն այնքան էր հակադրվում ռուսներին, որ համեմատում էին թուրքերի հետ»:

Բանակի գեներալը հայերի հանդեպ զայրույթով և ատելությամբ էր լցված. «Հայերը զբաղված են կողոպտուներով և թալանել են քրդերի ու թուրքերի բոլոր տները ...

Կողոպուտի համար մենք ստիպում ենք քրդերին և թուրքերին գերակահարել, բայց հայերից դեռևս ոչ ոք չի պատժվել, ձեռքը չի բարձրանում մահապատժի ենթարկելու հրաման տալու համար, բացի դրանից, մենք հրաման ունենք՝ հայերին գեներալու և նրանց մասին հատուկ հոգ տանելու»: Բայց մահապատժի Արազի ընդհանուր ստույգ էր՝ պնդելով, որ ռուսները միայն քրդերին և թուրքերին են զինաթափ անում: «Իսկ հայերին, – ասաց նա, – մենք գեներ ենք տալիս, և նրանց զինաթափելու ոչ մի դեպք չի եղել»:

Թումանյան. «Հանձնաժողովն արդեն համոզվել է, որ Ղարաքիլիսայում հայերի մեծ մասը զինաթափվել է»:

Քվ կազակները. . . Կազակների մասին լրիվ անտեղյակ էինք. . . Սովետական դպրոցում մեզ սովորեցնում էին. «Ամեն ինչում մեղավոր էին ցարը, ցարական բանակը, ցարական գեներալները», իսկ «կարմիրները» հաղթեցին սպիտակ զվարդիային:

Հետաքրքիր է, որ, մինևույն ժամանակ, 1915 թ. Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում հայ կամավորական խմբերից մեկին միացավ նա մեկ ապագա մեծ հայ բանաստեղծ (Շղիշե Զարենցը՝ ծնունդով՝ Կարսից) և հասավ մինչև Վանի շրջակայք:

– Վանը Թուրքիայում է:  
– Ո՛չ, թուրքերն են Վանում:  
(Հրանտ Մաթևոսյան)

Վանեցիները հուսակտուր վիճակում դիմեցին օգնության: Արամ Մանուկյանը ռուսական հրամանատարությանը տեղեկացրեց, որ Վանը պաշարված է, իսկ մոտ 100 հայկական զորքեր մտրվել են: Գեներալը հրամայեց անհապաղ հարվածել Վանի ուղղությամբ: Արամ Մանուկյանի ղեկավարությամբ քաղաքը դիմացավ մեկ ամիս, մինչև ռուսական զորամասերի ժամանումը: Առաջին բանը, որ ապշեցրեց ռուս մարտիկներին, հայկական կոտորածի սարսափելի տեսարաններն էին:

1915թ մայիսին Վան մտան հայկական կամավորական կազմավորումներն (Արարատյան զունդ) ու Ռուսաստանի Կովկասյան բանակի զորամասերը: Նույն օրը Մանուկյանը հեռագրեց ցարին:

Թուրքական Հայաստանի մայրաքաղաք Վանի քաղաքապետ Արամ վաշայի հեռագիրը. «Ձերդ մեծության ծննդյան օրը... մենք՝ Հայաստանի ներկայացուցիչներս, խնդրում ենք մեզ ընդունել ձեր հովանավորության ներքո: Եվ թող ինքնավար Հայաստանը ապրի մեծ Ռուսական կայսրությունում...»:

Բոլորովին անսպասելի մի հրաման եկավ:

– Նահանջո՞ւմ եք, նահանջո՞ւմ, շտաբի հրամանն է, – խոպոտ ձայներով գոռում էին կազակները ձիերին ետ քաշելով:

Ռուսական բանակի նահանջի լուրը ցնցեց հայ կամավորներին ... Ստանալով ծանուցում թուրքական բանակի գերագույն ուժերի հարձակման մասին՝ հրամանատար Անդրանիկն անմիջապես դիմեց Կովկասյան ճակատի շտաբի պետ, գեներալ Նիկոլայ Յուդենիչին մի ճեպագրով, որում նա հավաստիացրեց գեներալին, թե ինքը կամավորների հետ է և տեղական բնակչությունը կարող է պաշտպանել Վանը, միայն խնդրում է նրան տրամադրել անհրաժեշտ հրաձիգ, գնեք, զինամթերք և լեռնային հրետանի:

Յուդենիչը տվեց իր համաձայնությունը, բայց նրա պատասխան հեռագիրը, ըստ գեներալ Տրոխիսի օգնական կապիտան Արշակ Շահաթունու տեղեկությունների, նեկզորեն թաքնված էր նրա անմիջական վերադասի կողմից: Այս մասին Շահաթունուց իմանալով՝ զայրացած Անդրանիկն Արճեշում գտավ Չորրորդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ Տրոխիսին, ամբողջ բարկությունն ու վրդովմունքը թափեց նրա զվյախն: Բայց դա նրան կարծես թե բավարար չթվաց, և նա Տրոխիսի երեսին հասցրեց իսկական սպայի ապտակ անվանելով նրան դավաճան միաժամանակ ասելով, որ *«այս նահանջը կատարյալ կեղծիք է... այստեղ խարդավանք ու դավաճանություն կա... դավաճանին պետք է փնտրել ձեր մեջ»:*

Եվ դա նույնպես լիովին անհասկանալի էր ու անբացատրելի: Հուլիսի 28-ին Վանից հեռացան ռուսական զորքերը: *«Ռուսական զորքերը, որոնք հինգ օր առաջ լքեցին Վանը, հուլիսի 28-ին, չգիտես ինչու, սկսեցին արագորեն հետ շարժվել և օգոստոսի 3-ին հասան քաղաք ու երբ կրկին գրավեցին Վանը, քաղաքը գործնակաճում ավերվեց, այրվեց, ավերակների վերածվեց, ու ոչ մի բնակիչ չմնաց»:*

Մինչդեռ ավելի քան մեկ ամիս առաջ փախած Վանի բնակչությունն, այնուամենայնիվ, արդեն հասել էր Իզդիբ, Երևան, Էջմիածին: Իրականում, ռուսական բանակի անբացատրելի և անմտիվ նահանջի պատճառով, ոչնչացավ Արևմտյան Հայաստանի ամենակարևոր, բարենեցիկ քաղաքներից մեկը: Նրա բնակչությունը, ինչպես Վասպուրականի ողջ շրջանի բնակչությունը, կորցրեց իր տները, տարիների ընթացքում ձեռք բերված ունեցվածքը, կորցրեց հայրենիքը: «Ռուսական բանակի այս խորհրդավոր նահանջի իրական նպատակը վաղուց արդեն դիտարկվել է ինչպես հայ, այնպես էլ ռուս, նաև օտարերկրյա ռազմական պատմաբանների և քաղաքական գործիչների կողմից: Նահանջն ինքնին ստացավ իր պատմա-

կան և քաղաքական գնահատականը: Մա սաղրանք էր, և այն անվանեցին «կեղծ նահանգ»:

Ղազարն ու Վահանը որոշեցին ոչ մի տեղ չգնալ: Ավելի լավ է մարդ կործանվի իր տանը պաշտպանելով այն, քան թողիկ այնտեղ մնացած կանանց պղծելու համար:

Բայց նահանջելով բանակը չխուսափեց արյունալի մարտերից. կամավորները կատաղի էին կռվում, թուրքերը կորուստներով փախուստի դիմեցին: Հայերը ցանկացան հետապնդել և ոչնչացնել նրանց, բայց ռուս հրամանատարները չթողեցին. «Հրաման չկա: Հրամանը Մարիդամիշ գնալն է: Այնտեղ կտեսնենք: Եթե ուզում եք, ձեր ժողովրդին ձեզ հետ տարեք»: Իհարկե, զինվորականներն ավելի լավ գիտեն իրենց գործը, բայց դու արի ու տես, որ ռուսներն իրենք չէին ուզում կռվել, հայերին էլ թույլ չէին տալիս:

Հանելուկ, հետագայում ամեն անգամ կրկնվող առեղծված...

Հարյուր անգամ եղբայրները փոշմանեցին, որ չեն գնացել Ռշտունիք: Վանում գործ ու դպրոց կար: Իսկ ռուսները երկար ժամանակ կանգնած էին այնտեղ: Բոլորը միասին կլինեին...

Ձմռան երկու ամիսը թո՛ւր վայրկյանի պես...

Բայց բոլոր գյուղացիներն արդեն լքել էին իրենց տունտեղը՝ հագիվ տեսանելի ճանապարհներով գարնանային ցեխը հուկեցելով: Սայլերը միաձայն ճռռում էին կանանց լացի ու երիտասարդների նվևեցի հետ... Տղամարդիկ մտայլ, չտեսնող հայացքով ուղեկցում էին այդ անշտապ քարավանին կազակների հետ միասին պաշտպանելով իրենց ժողովրդին զագագած շների հարձակումներից...

Եվ այսպես սկսվեց նրանց ճանապարհը դեպի Արևելյան Հայաստան: Փախստականների սայլերը ձգվել էին մեկ շարքով, փնտրված, գլխահակ տղամարդիկ ճանապարհով հագիվ քարշ էին գալիս, կանայք հանգստացնում էին իրենց նորածիններին...

Շուտ չհասան սահմանին՝ կանգ առնելով, սպասելով... և անհույս կրկին դեպի Արաքս... Հասան Բգդիք, որն արդեն լեռնալեզուն էր փախստականներով: Այնտեղից նրանք անցան Արագը, որի այն ափը նույնպես Ռուսաստան էր, շարժվեցին դեպի գետափնյա հայկական գյուղեր: Այստեղ եղբայրները բաժանվեցին: Մեսրոպը մնաց Հայաստանում, իսկ Մարտիկը, ով խառնութուններ Ալաշկերտում և երկար ժամանակ քաղաքային կյանք էր վարում, որոշեց շարունակել ճանապարհը դեպի մեծ քաղաք՝ Թիֆլիս: Երիվանը նրան թվաց աղքատ, կեղտոտ քաղաք...

1915թ փետրվարի սկզբին միայն Երիվան նահանգի հետ սահմանակից Բգդիք քաղաքի շրջանում կուտակվել էր 30-ից 40 հազար հայ փախստական: Նրանք հիմնականում կանայք ու երեխաներ էին: Եվ փախստականներն անընդհատ գալիս ու գալիս էին: Ընդհանուր թիվը կազմում էր մոտավորապես 80 հազար: Շուտով նրանց միացան նաև Հյուսիսային Պարսկաստանից փախստականները, որտեղ թուրքերն ու քրդերը հայերի և առորիների ջարդ կազմակերպեցին...

Իսկ ուր էին հայ զինվորները:

Երբ Թուրքիան հարձակվեց ռուսաՀայաստանի վրա, զարական կառավարությունը, վախենալով որ հայերի կողմից Կովկասի հաջող պաշտպանությունը կարող է խթանել հայ ժողովրդի ազգայնական նկրտումները, 150 հազար հայ զինվոր ուղարկեց Լեհաստանի ու Գալիսիայի ճակատ, իսկ ռուսական զորքը տեղափոխեց Կովկաս՝ հայ բնակչությանը պաշտպանելու համար:

Եվրոպական մարտերից հետո այս 150 հազար հայ զինվորներից միայն մի քանիսն են ողջ մնացել և կարողացել մինչև պատերազմի ավարտը վերադառնալ Կովկաս:

Այդպես էլ հնուց եկել է. ռուսները քրիստոնյաներին սատարում էին, բայց լուծելով իրենց խնդիրները՝ հայերի օգնությամբ, նրանք այս անգամ էլ որոշ հարց լուծում էին հողերի

վերաբաշխման ոլորտում՝ անփոփոխ մատուցելով նույն նվերը մուսուլմանների աստելությունը բորբոքելով հայերի հանդեպ:

Չնայած մահմեդականներն առանց այն էլ ստում և արհամարհում էին բոլոր այլադավ ազգերին, բայց նրանք հիանալի գիտեին, թե ում հողն են խլել և կատաղած շների նման դարեր շարունակ այդ կենդանիների վախը փոխանցեցին սերունդներին՝ առանց նույնիսկ բացատրելու: Վախետում էին և հաշվի նստում միայն Ռուսաստանի հետ միջոտ նրանից ծեծված և բազմիցս պարտություն կրած: Առաջին աշխարհամարտից հետո Ռուսաստանն անավոր անհաջողակ էր ...

Օ, իսկ որքան անհաջողակ էին հայերը ռուսների հեղափոխության պատճառով:

Դավաճան դուրս եկան բոլորը: Երիտթուրքերը և ռուսաց ցարը, ռուսական և սեփական բոլշևիկները: Վերջիններն ակում էին իրենց սիրած ու ծանոթ գործը՝ կոլարարություն, իրար կրծոտել և... երկերեսանի Արևմուտքը:

## ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ, ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐ

Երկու քարի արանքում,  
Գերտերության փեշի տակ,  
Շատ բան փոխել փորձեցին,  
Կրկին պարտված դուրս եկանք:

Իսկ հետո... շեռտ ճանապարհները տանում էին դեպի Երիվան: Փոքրիկ մի քաղաք, որ պետք է տեղավորեր բոլորին, որոնք ծամանել էին ամեն կողմից...

Նրանք, ովքեր չէին կարող տեղ ճարել, դանդաղ առավակներով հոսում էին այլ քաղաքներ: Ոմանք դեպի Թիֆլիս, ոմանք նույնիսկ Ռուսաստան: Նրանցից շատերը ճանապարհ լեկան դեպի Սևան, Ապարան, ուր դեռ նախորդ ռուս-թուրքական պատերազմից հետո 70 տարուց ավելի ապրում էին Ալաշկերտից տեղափոխված վերաբնակիչները...

Եղբայրներն ընտրեցին Կոտայքը: Երիվանից ոչ այնքան հեռու գյուղերից մեկում նրանք ունեին հայրենակից (հետավոր հարազատներ էին, տեղը գտվում էին): Կես տարի ընտելանում էին: Աշխատանք գտան, իրենց կրոսեր եղբորը և գարսիկներին ուղարկեցին Թիֆլիս՝ սովորելու (Ասատուրը երագում էր հետագա ուսում ստանալ): Երբեմն կանանց երեխաների հետ թողնելով տանը, նրանք իջնում էին քաղաք: Պարզվեց, որ Երիվանը մի փոքր ավելի մեծ է, քան Ալաշկերտը. նույն փոշուտ փողոցները, համայնա նույն ֆայտոնները, այստեղի լեռն ավելի բարձր է, քան Քյոսաղաղը, նույնիսկ մեկի փոխարեն երկուսն են: Շատ մոտիկ են երևում: Բայց այս սարերն և Քյոսաղաղի պես այժմ թուրքական են...

Քաղաքն անհանգիստ էր՝ լցված շատ մարդկանցով, լաթեր հագած, տրեխներով, մի կերպ հագուստով ծածկված... «Նանթարի» շուկայում փախտական տաճկահայերն ամբողջ Արևմտյան Հայաստանից հավաքվում էին և փնտրում հարազատներին, փոխանակվում լուրերով:

17 թվի ձմռան օրերից մեկում կարևոր և անսպասելի մի լուր տարածվեց՝ գահընկեց արվեց հայոց միակ պաշտպանը՝ ռուսական ցարը: Թե՛ հին բնակիչները, թե՛ նորեկները տարակուսած, միմյանց միմյանց էին փոխանցում այդ սարսափելի լուրը՝ իրար աչքերում փորձելով գուշակել, թե ինչ կբերի իրենց այս ահավոր և աննախադեպ իրադարձությունը. «տապալեցին ռուսական ցարին», ով կարծես հավերժ էր և հայերի՝ համար:

Իրենց մտազերներով հայտնվեցին դաշնակցականները, խոսեցին, հանգստացրին մարդկանց և միաժամանակ կոչ արեցին եղբայրաբար պաշտպանել եղբայրներին բոլորովին անձևանք քաղաքները:

Ռուսները սովորաբար հաջողությամբ ջարդել էին թուրքերին՝ վերցնելով Բայրուսը, Մուշը, Բիթլիսը, Երզնկան և Լույսիսկ Տրապիզոնը: Բայց շատ անժամանակ «տապալվեց ցարը», չէ որ դրա հետևանքով ռուսների ռազմական ջանքերը թուլացան... Երբ Պետրոգրադը անցավ բոլշևիկների իշխանության տակ, 1917թ. դեկտեմբերին նրանք հաշտության մի իսպառուսակ պայմանագիր կնքեցին թուրքերի հետ: Բայց թուրքերը խաղաղության պայմանագիր կնքում են ոչ թե նրա համար, որ ռադիկները քաշեն, այլ նրա համար, որ ուժեր կուսակեն և նորից պատերազմ սկսեն:

Իրենց մայրաքաղաքներում ռուսները (համարյա բոլորը) վերածվեցին բոլշևիկների, իսկ նրանք, ովքեր չդարձան կամ չհասցրին ծովով Եվրոպա փախչել, գնդակահարվեցին: Եվ որպեսզի բանակն իրենցով անեն, այս բոլշևիկները հայտարարեցին հողային դեկրետ հրամանագրի, այսինքն հայտարարեցին, որ հող են բաժանում: Գազակները ցար ու ցրիվ փախուստի դիմեցին իրենց տները: Նրանք հոգնել էին կովեղուց. ու՛մ համար, ինչի՛ համար... Իսկ հողն ամենից շատ է կազակին պետք:

Ցարի գործը բաժանվեց Կարմիր և Սպիտակ բանակների. սկսեցին կռվել միմյանց հետ՝ հանգիստ թողնելով հայերին դեմ

առ դեմ վրա հասած թուրքերի հետ: Ու կրկին հայերը մնացին մեկ-մեկնակ իրենց հավերժ թշնամու առջև:

Երկու ամիս չանցած երեք օսմանյան կորպուս, անտեսելով խաղաղության պայմանագիրն ու ճշգրիտ հաշվարկելով, որ ռուս բոլշևիկները խիստ զբաղված են իրենց հեղափոխությունով, անցան հարձակման: Հանդիպելով միայն քառասային դիմադրության (մասնավորապես հայերի կողմից)՝ թուրքերը մեկուկես ամսում հասան Ռուսաստանի հետ մինչպատերազմյան սահմանին, անցան հարձակման և ապրիլի վերջին հեշտությամբ գրավեցին Երզնկան, Արդահանը և Էրզրումը, ապա Մարիդամիշը, Կարսը, Բաթումը, իսկ գարնանը նաև Ալեքսանդրապոլը: Հնդհանրապես, ամեն ինչ լրիվ էտ յվեցին:

Ռուսներն չէին ուզում կռվել... Իսկ Թուրքիան պատերազմում էր Ռուսաստանի հետ: Որտե՞ղ Բարե իողի վրա...

Ալեքսանդրապոլի գրավումից հետո թուրքերն արդեն իրենց գործերի մի մասն ուղարկել էին ռուսական Ղարաբիլիսու, իսկ մյուս մասն սկսեց շարժվել նպաստակ ունենալով ճեղքել դեպի Էրիվան և Արարատյան դաշտավայր՝ Մարդարապատ տանող ուղղությամբ:

Եվ Մետաքայ, և որդիները լավ չէին հասկանում, թե իրենց շուրջն ինչ է կատարվում: Դարձյալ դիմացը թուրքեր էին, իսկ թիկունքում՝ կանայք և երեխաները: Քույրն ու նրա հարազատներն արդեն վերադարձել էին իրենց Վան-Արձեշ ձախողված ուղևորությունից: Այն, ինչ ասում էին, ոչ քի գլխում չէր տեղավորվում: Բայց Վանի բոլոր փախստականները խոսում էին այն երկրի գետի մոտ գտնվող Գայլի հովտի՝ Բան-Դիանիի մասին, որը թափվում է Վանս լիճ: Թուրքերը գետը լցրին: Եվ մահացածներին, և ողբերին: Թվում էր, թե գետը կանց է առնելու այնքան շատ դիակներ էին նետված այնտեղ: Փախստականների հոժ բազմություն էր կուտակվել կամրջի մոտ:

Շատ մայրեր գետն էին նետվում իրենց երեխաների հետ, որ չընկնեին թուրքի ու քրդի ձեռքը: Ճանապարհները գերլցված

էին: Մերկ, ոտաբոբիկ, լաթե զգեստներ հագած մայրերը, երեխաներին զրկած, լոտ քայլում էին անհույս և անմիտ... Փախստականներին ո՛չ վերջ կար, ո՛չ դադար...

Հուլիսի 31-ին Վասպուրականի լեռներում ձյուն նստեց: Աստված իմ, քանի՛ երեխա ցրտից մահացավ: Հարյուրավոր երեխաների մահից փրկեցին կազակները. ամեն մեկը մի-մի երեխա տարավ և տաքացրեց վերարկովի տակ՝ շրջանցելով վերաբնակեցման համար պատասխանատու գեներալ Աբացիևի հրամանը, որը խատորեն հրամայել էր ոչ մի օգնություն չտրամադրել վերաբնակիչներին: Բայց, չգիտես ինչու, գեներալ Տրոխսիևի ստորաբաժանման կազակները լրիվ տարբերվում էին փախստականների հանդեպ իրենց մարդասիրությամբ և սրտացավ վերաբերմունքով:

Տարբեր ոտաներ էին ծառայում ցարական գեներալների հրամանատարության ներքո: Եվ գեներալներն էլ բոլորը տարբեր էին...

Վան դժվար էր հասնել: Չէին կարողանում ճեղքել անցուկ: Խայերը երկար ժամանակ պահում էին Վանի պաշտպանությունը: Գրեթե ամբողջ զարուհը մոլեզնում էր Վանի գյուղերի ջարդերը: Բնակիչներից ոմանք փախչում էին Ալաշկերտ, Էրզրում, ոմանք էլ Վան էին զգկում: Այստեղ ոտաները շատ ջաշկցեցին. անմիջապես մի ամբողջ կորպուս ուղարկեցին, և մայիսին թուրքերը վերացրին պաշարումը ու նահանջեցին: Բայց այդ ժամանակ թագավորը դեռ չէր հրաժարվել, և Վանի հերոսը նրան հեռագրեց. *«Թուրքերը պարտվեցին: Հիմա մեզ վերցրու քո հովանավորության տակ»:*

Քանի որ ոտաները վրացիներին ժամանակին ընդունել էին, թուրքերը դադարեցին դիպչել նրանց, չնայած հայացքները չէին կտրում մահմեդական Բաթումից...

Այս, եթե հնարավոր լիներ հաղթանարել պատմության այս անգութ ստորադասական եղանակը՝ ամեն ինչում անողոր և դաժան:

1918-ի ապրիլին թուրքական բանակը, օգտվելով ռուսական բանակի հեռանալուց, գրավեց Արևմտյան Հայաստանը: Վանի շրջանից հայկական ստորաբաժանումներն ստիպված էին հեռ քաշվել Իրանի տարածք: Այնտամենայնիվ, Մարդարապատի ճակատամարտի արդյունքում հայերին հաջողվեց կասեցնել թուրքական հարձակումը, և 1918-ի մայիսին պատմական Հայաստանի հյուսիսարևելյան ծայրամասում հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Վասպուրականի ամբողջ հայությունը (մոտ 150,000 մարդ), ինչպես նաև ասորական (20,000) և եզդիական (25,000) բնակչությունը (որոնք այստեղ էին մինչև 1918 թվականը) հայկական գործառնաբերի հետ հեռուացան նահանգից: Սկզբում փախստականները բնակություն հաստատեցին Երիվանի մերձակայքում գտնվող փախստականների ճամբարներում, ինչից հետո նրանք ցրվեցին ամբողջ Կովկասում, մի մասը մեկնեց արտերկիր:

Վիլսոնի հանձնաժողովի որոշման մեջ նշվում էր, որ հայ ժողովրդի կրած տառապանքները հանգեցրին նրան, որ հայերը չեն հավատում, թե օսմանյան կայսրությունում իրենց իրավունքները կհարգվեն: Վուդրո Վիլսոն որոշեց, որ այն տարածքը, որն սկսեց կոչվել «Վիլսոնյան Հայաստան», պետք է փոխանցվի հայերին համաձայն Մերի պայմանագրի: Այս պայմանագիրը դե յուրե ստորագրվեց դաշնակիցների կողմից օկուպացված Մտամբուլում գտնվող Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից:

Ըստ մի շարք ժամանակակից քաղաքական գործիչների և իրավաբանների՝ «Վիլսոնյան Հայաստանը», որն ընդգրկում է Վասպուրականի տարածքը Վան քաղաքի հետ, ոչ միայն ունի իրավական ուժ, այլև հայ-թուրքական սահմանը սահմանող միակ իրավական փաստաթուղթն է:

Ղազարն ու Վահանն ընդունվեցին գեներալ Միլիկովի կամավորական ջոկատ, իսկ Բզդիքից, Ալաշկերտից, Էրզրումից և Բայազետից կամավորները մտան հայկական ոչ մեծա-



բանակ բանակի ջոկատները: Կորպուսների ղեկավարներն էին Դրոն, Դանիել Բեկ-Փիրումովը... Նրանք հավաքվեցին Մարդարապատում (եղբայրների համար դա մի փոքր օտար գյուղ էր՝ առաջին անգամ տեսած) ... Թուրքերն արդեն գրավել էին ամբողջ Արևմտյան Հայաստանը, այժմ ձգտում էին գավթել Արևելյան Հայաստանը:

Ցասումն ու գայրույթը միացրին տարբեր տեղերից փախած, տարբեր բարբառներով, բայց նույն լեզուն, մեկ Աստծու հավատքն ունեցող այդ մարդկանց: Բոլոր հայկական մարտերից, որոնց մասին նրանք գիտեին կամ լսել էին, միայն այս մեկը հանգեցրեց անկախության, միայն այս հաղթանակից հետո Հայաստանը դարեր անց կրկին վերականգնեց պետությունը: Դա շատ մեծ ճակատամարտ էր աշխարհի կողմից մտահցված մի փոքր կտոր հողի վրա...

Էրիվանի երկնքում որոտում էին մայիսյան ամպրոպները: Երեկվա մարտերի հերոսները դուրս եկան տուֆից շարած մի գեղեցիկ շենքի պատշգամբ և էլույթներ ունեցան, որոնք հպարտություն և հույս էին ներշնչում ժողովրդին:

«Միգուցե մենք իսկապես կուժեղանանք և կքշենք քրդերին ու թուրքերին մեր հողերից», - մտածում էին եղբայրները՝ դառնությամբ հիշելով ավերված տները, կրակներն ու դիակները, դիակներով լցված էրզրի գետերը՝ կարմրած հայկական արյան ծովից...

Հարվածներ, ճակատագրի հարվածներ...

1915 թվականի գարուն, Վանի ճակատամարտ: Քաղաքի հայ բնակչությունը, չնայած դիմադրությանը, վտարվեց և ոչնչացվեց թուրքական իշխանությունների կողմից: Քաղաքը գրեթե ամբողջովին ավերվել էր: Հայ կամավորները կարողացան պահել մինչև Կովկասյան բանակի ժամանումը: Քաղաքը գրավեցին ռուսական զորքերը:

Հարվածներ, ճակատագրի հարվածներ...

1916 - Համաձայն Մայքս-Պիկոյի համաձայնագրի՝ Վանի ամբողջ վիլայեթը պետք է պատկաներ Ռուսաստանին:

1920 - Սերի պայմանագրի համաձայն՝ այն պետք է անցնե՛ր Հայաստանի Հանրապետության իշխանությանը:

1923 - Բայց այն անցավ թուրքական տիրապետության տակ՝ Լոզանի պայմանագրի համաձայն:

Էրիվանում եղբայրներին ուղարկեցին մի տուն, որտեղ օգնում էին փախուսականներին տեղից տեղ ուղարկել: քաղաքում մնալու այլևս հնարավորություն չկար: Էրիվանը ծայրից ծայր լցված էր փախստականներով: Բայց Մեսրոպներ իրենք ուզեցին գնալ գյուղ, քաղաքի հյուսիսից քիչ հեռու՝ 2 ժամվա հեռավորության վրա՝ շատ ավելի վաղ ժամանած հարազատներն արդեն հաստատվել էին այնտեղ:

Ղազարն ու Վահանը, վերքերից դեռևս չսպաքինված, գայրացած, ճղճղված հագուստով, մի կերպ հասան Ալաբլու, ուր արդեն սպասում էին ծնողները, Ասատուրն ու Մարիամը թոռների հետ և հարազատների մնացած մասը՝ հառաչանքներով ու արցունքներով, Աղքատ հարևանները կիսվեցին տարանկողնով, աման-չաման ու որոշ հագուստ բերեցին:

Ատավոտյան թոնիրը վառեցին, հաճարի փլավից մի տոտիպ ծուխ տարածվեց՝ տնական խնոցու կարագի բույրով: Կարճ հարցեր, կարճ պատասխաններ:

Եվ ինչի՞ մասին երկար խոսեին: Տայիս էին հարազատների անունները, ի պատասխան կամ աչքերն էին թըջվում, կամ ուտերը թոթվում: Շատերը մահացան, մնացածն անհետացան... Եվ, միևնույն է, շնորհակալ էին Աստծուն:

Մեսրոպը խնոցու սառը թանից մի բաժակ խմեց ու սրբեց շրթունքները:

- Ռուսներին էլ պետք է շնորհակալ լինենք: Ռուսը մեզ ապաստան տվեց, իսկ մեր Աստվածը երես թեքեց մեզանից... Այո, ռուսը փրկեց մեզ... Բայց ամեն ինչ այնտեղ մնաց, այն շներին: Մենք մերը չկարողացանք ետ խլել: Եթե ուզում ես

իմանալ, դա սկսվեց նախնիներից: Մենք միշտ քիչ ենք եղել: Ու ինչքան կայինք, բոլորը կոպուս և դավաճանում էին միմյանց: Վասակներ շատ ունենք, շա տ... Մեր ամբողջ կյանքում մենք պայքարել ենք, կռվել, ու վերջում մեզ միայն այս մի հողակտորը հասավ, – հանկարծ ուրբաձայն բացականչեց Մեսրոպը և տխուր նայեց տնեցիներին:

– Հայրի կ', այո', մենք շատ չէինք, և մենք անընդհատ իրար մեջ ու դրսի հետ կռվում էինք, մեկ սրա, մեկ նրա հետ միանում, բայց ինչ անեինք: Մենք մի հավատք ունենք, իսկ բոլորը ցանկանում էին մեզ հագցնել իրենց հավատքը: Բայց մենք հաղթանակներ էլ ունեցանք, չէ':

– Հիմա ո՞վ կարող է խոսել հավատքի մասին, դա արդեն հավատք չէ...

Բայց ոչ ոք կասկածներից այն կողմ չզուսաց: Ռուսների ինչի՞ն է պետք այս պատերազմը: Թուրքերին է պետք, դա հասկանալի է: Իսկ ռուսի ինչի՞ն է պետք: Բոլոր հայերին պատանդ-ամանաթ դարձրին: Իսկ դաժան թուրքերը լրիվ զագան դուրս եկան: «Մենք ձեր պաշտպաններն ենք, մենք ձեր կողմից ենք...», – դժգոհությամբ ինչեղևում էին եղբայրները: Դե, գիտե՞լիս միայն թուրքերին, բրդերին ու ռուսներին... Իսկ գերմանացուն չգիտե՞լիս: Չգիտե՞լիս ավստրիացիներին, ֆրանսիացուն, անգլիացուն... Մինչդեռ պատերազմը նրանց գործն էր...

Գնացին ծանոթանան տեղանքին: Դիմացը ոչ բարձր մի լեռ՝ թեթև ձյունափոշով ծածկված, իսկ ներքևի լանջին երևում էին մեկ ուրիշ գյուղի տանիքներ:

– Գյամրեզն է, Ասիկն այնտեղ է հարս գնացել, փեսան լավ տղա է: Շուրջը տեղ շատ կա: Եթե հավանեք, գյուղի եզրին լավ հողակտոր կա, ես ձեզ ցույց կտամ: Եկեք արագ կատուցենք, մեր փեսան և եղբայրը բոլոր արհեստների վարպետ են, պատերը կտեղադրեն, տանիքն էլ հետը:

Իրոք, տունը սաքրեցին մեկ-մեկուկես ամսում, մնում էր միայն տեղադրել պատուհաններն ու դռները: Հաստակը փայ-

տով ծածկեցին միայն սեկյակում. օթախը պետք է պատշաճ լինի հյուրերի համար:

Երկու-երեք երկաթե մահճակալ, որոնց վրա դարսված են բարձերն ու վերնակ-դոշակները: Աշխանն ավելի կշատացնեն, ոչխար կխուզեն, նոր բուրդ կվանան, կչփխեն, գեղեցիկ տաք ծածկոցներ կկարեն: Տան հարստությունը բրդյա անկողիններն են: Եվ հավված կարագը՝ սառը սափորների մեջ լցրած հալյալ յուղը...

Դժվարը նկուղն էր՝ ձմռան պաշարի համար: Քարոտ գետիկը չէր լինում փորել, բայց մի կերպ վերջացրին, մի լավ սվաղեցին:

Լավ տանիք էին պատրաստել: Ղարաքիլիսայում տների տանիքներն հիմնականում հողով էին ծածկում: Հարթ և խոտածածկ: Այ, Ալաշկերտում լավ տներ կային՝ տանիքը մի փոքր թեքությամբ, այդպես էլ կատուցվեց: Գունն առանձին, հավանեցն՝ առանձին, ինչպես պատկառելի մարդկանց մոտ է լինում: Չարդախի տակ խնոցին կկախեն: «Ոչխարներ է պետք պահել, միայն կովը քիչ է», – մտածում էր Մեսրոպը՝ քայլելով երևիսաների ձեռքերով մաքրված քարքարոտ տարածքի երկայնքով, – ինչուս Մովսեսն ստամ է, որ գյուղում փորել, տնկել ցանկացողները շատ կլինեն: Նա նույնիսկ ինքն էլ կօգնի:

Իսկ Մեսրոպն իր երևակայության մեջ արդեն տեսնում էր սեփական դաշտը, տունը, բակը՝ քույրը բեզից գերծ: Այստեղտ նա և իր որդիները կաշխատեն միայն իրենց համար: Ճիշտ է, աղբատությունը դեռ չէր նահանջել, նրանք խնայում էին ամեն ինչ... Գրեթե բոլորը, ում նա ճանաչում էր, անտանելի աղքատ, չքավոր էին: Մեսրոպը դա չէր կարողանում բացատրել: Ինչու մն էր բանը: Երկար տարիներ հետո նա կհայտնվի Սյրիբում, և կբացահայտվի, որ ամբողջ Ռուսաստանում այդպիսի աղքատություն է, նրանք սովոր են և չեն կարող ազատվել այս աղբատությունից... Բոլորը պետք է հավասա-

բապետ աղքատ լինեն: Հարուստներին էլ պարզապես ասում են:

Սկսվեց հերկելը, այստեղից-այնտեղից սերմ ճարեցին, ցանքն սկսվեց... Գումեշները հերթով տալիս էին մեկ օրով: Հին պապական ձևով էին վարում, բայց ասացին, որ արդեն բերելու են ինչ-որ «ինվենտար», և կարելի է ավելի հեշտ ու արագ վարուցան անել:

Գաղթականների կյանքը կամաց-կամաց կարգավորվում էր: Վահանն ու Ղազարը մի փոքրիկ դպրոց էին կազմակերպել մոտակա երեք գյուղերի համար: Հազվագյուտ հանգստյան ժամերին երեխաներին սովորեցնում էին կարդալ և գրել, նրանց համար պատմական գրքեր էին կարդում:

Ամեն օր Մեսրոպը ևորություններ էր բերում կամ ռազմական, կամ ցուղի կյանքից: Քաղաքից ամերիկյան օգնության մասին լուրեր էին հասնում և թուրքերը սսկվել էին նրանց դեմ: Բայց ասում էին, թե ռուսներն այլևս չեն ցանկանում կռվել թուրքերի հետ. նրանք եղբայրանալու են:

Շեչ լավ չի, ևույնիսկ շատ վատ է. թուրքի հետ բարեկամությունը լավ բանի չի բերի, իսկ հայի համար անպայման չարիք կստացվի...

Ինչպես երկու գարուն, ինչպես երկու ձմեռ՝ երկու տարին անցավ... Եվ գրմի... Երկու տարի չանցած՝ իշխանությունը ևորից փոխվեց... Բոլոր դաշակցականներին, ովքեր փրկեցին և պահպանեցին այս վերջին ցարսոցրիվ և փշրված հողի կտորը, գրեցին, սկսեցին որսալ, ձերբակալել և ևույնիսկ մեղակահարել: Շերտները սկսեցին հեռանալ և լքել իրենց հայրենիքը, որի համար նրանք այդքան արյուն թափեցին: Շեշտ է պատկերացնել, թե ինչ էր կատարվում նրանց հոգում:

Կայսրությունը հնազանդություն և զգուշություն է պահանջում, Ռշտունիները սովոր էին օտար-անձանոթի ներկայությամբ չզրուցել կամ քննադատել: Բայց նոր կառավարության ոչ մի արածն իրենց դուր չէկավ, բացի խոստումներից...

Ալեկի ճիշտ՝ անդուր էին այն մարդիկ, ովքեր տալիս էին այդ խոստումները:

Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Միմոն Վրացյանը, իր «Հայաստանը բուշնիկյան մուրճի և թուրքական գնդակի միջև» գրքում գրել է.

«Հայաստանի անկախության անկման պատճառները ոչ թե ներքին էին, այլ արտաքին: Հայաստանի Հանրապետությունն ընկավ թուրքերի և բուշնիկների համատեղ հարվածների տակ:

Եվ առաջին հերթին՝ բուշնիկների, որովհետև եթե չլիներ ևնորիդային Ռուսաստանի ֆինանսական աջակցությունը (5 միլիոն ոսկե ռուբլի և զենքի տարեր փոխանցվել էին «թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին»), քեմալական թուրքիան չէր համարձակվի այդ պայմաններում հարձակվել Հայաստանի վրա»...

Շատ տարիներ անց բոլորին պարզ դարձավ, որ Վրացյանը ճիշտ էր: Այսօր արդեն բոլորը գիտեն, թե ինչպես է Քեմալը պայմանավորվել Լենինի հետ. դա փաստագրված է... Խուսափում եմ նմանություն գտնել այսօրվա արցախյան պատերազմի հետ կապված որոշ դրվագներում: Բայց ակնհայտ է և կրկնվող: Իսկ պետության գլխին կանգնեցին ոչ թե կրթություն ունեցողներ, ովքեր սովորել էին հայտնի համալսարաններում, այլ անկիրթ աղքատները: Երբ իշխանությունը միայն հարուստներին է, դա վատ է, երբ աղքատներինը՝ ևույնպես վատ է, ևույնիսկ՝ ավելի վատ: Եթե աղքատը միտք, խելք ունենար, բա կմտա՞ր աղքատ: Դե, հարուստների խիղճն ասալին հերթին է մաշվում, չնայած նրանք խիղճ ունեն որ:

Այնուամենայնիվ, թվում էր, թե հայկական հողում խաղաղ կյանք սկսվեց: Ռադադ, բայց շատ անհանգիստ: «Կեպկեքով» անհասկանալի մարդիկ եկան. քաշքշում, շտապեցնում, թեաղոում էին երբ և ինչ ցանել... Շատ էին սիրում ժողովուրդն անել, հանդիպումներ անցկացնել: Ստուգում էին

գումրը, վարուցանը (օրը վերնետրամ պետք է նշանակեն), կազմում պատվերներ՝ որքան և ինչ են հանձնելու պետությանը: Ում դուրը գալիս էր, ում դուրը չէր գալիս, շատ անգամ հայհոյելով, անբնդիատ միմյանցից բողոքելով... Նրանք բոլորին սովորեցրին մատնել:

Այս ամբողջ աղմուկից Մետրոպոլիս ու իր որդիները հոգնում էին, թեև թքած ունեին: Տեղի հայերից ոչ ոք չէր հասկանում, թե ամենակարևորն այն է, որ թուրք այլևս չկա: Ոչ թուրքեր, ոչ քրդեր: Նրանք ոչ շրջապատում կային, ոչ էլ մոտերքում: Եվ պատերազմ չկար: Միայն Հատիս կոչվող այս սարն է, որն օրեցօր ավելի հարազատ է դառնում. ամեն օր աչքի առաջ հաճելի է տեսնել, ուրախանալ, չնայած՝ Բոսսադարը չի... Շուտով էլ թոռներ կունենան...

Պալլի կուտակված և կապոցների մեջ կարված ոսկե մետաղադրամները շատ օգտակար եղան: Կով, ոչխար գնեցին, մի քանի տարվա ընթացքում երկու ամուր տուն կառուցեցին, կրտսեր եղբոր Ասատուրի համար էլ՝ երրորդը... Տեղացիներն այստեղ ցանում էին միայն կարտոֆիլ և ցորեն, և շուրջը ոչ մի ծառ չկար: Ասում էին ցուրտ է, մրգի տեղ չի: Գուցե դա էր պատճառը, որ ալաբրուցիներն այդքան աղքատ էին: Այդ, նրանք ոչխար էին պահում սեփական սննդի և վաճառքի համար: Եվ շատ բուրդ ունեին փափուկ եերքնակների համար: Ցածր, մրոտ տներում բնում էին հատակին, տաքանում էին չորացրած աթարով: Երկու մեծ քարե տները և՛ հիպսոմուսը, և՛ հարգանք, և՛ նախանձ էին առաջացնում: Ա՛խ այս անխուսափելի, անսպառ նախանձը ուրիշի լավի, երջանկության նկատմամբ...

Երջանկությունը թաքնված է հանգիստ ու խաղաղ տանը: Ցարական բանակն իր թագի փուռումից անմիջապես առաջ կարողացավ նրանց ապահովել գոնե խաղաղ ապաստարանով. մի թե դա երջանկություն չէ: Եղբայրները ցանկանում էին գարնանը մի փոքրիկ մատուռ կցել գյուղի եզրին, բայց

տեղացիներն ասացին, որ նոր իշխանությունը քահանաներին չի սիրում, մինևայն է, թույլ չեն տա, հարևան գյուղում դեռ հնուց մատուռ կար, Աստծուն փառք, չքանդեցին:

Թոռները մեկը մյուսի հետևից լույս աշխարհ էին գալիս, նրանց չէին հասցնում զաղտնի մկրտել: Աստված եղբայրներին մեկը մյուսի տեսից տղաներ ուղարկեց՝ բոլորը կապույտ աչքերով էին, պայծառ, ուժեղ:

Կյանքը լավանում էր: Երկու որդիներին էլ հաջողվեց երկու անգամ գնալ Թիֆլիս՝ այցելելու իրենց հորեղբորը՝ Մարտիկին, որի մոտ ապրում և արդեն ճեմարանն ավարտում էր Ասատուրը: Նույնիսկ ասացին, որ այնտեղ պատմության ուսուցիչ չկա. Վահանը մեկ տարի աշխատեց ճեմարանում՝ փակվելուց անմիջապես առաջ: Նոր կառավարությունն օրենքից դուրս հայտարարեց եկեղեցին: Տերտերներին ցրեցին, իսկ Թիֆլիսի ճեմարանը փակեցին:

Թիֆլիս կատարած իրենց առաջին այցելության ժամանակ անսպասելիորեն տեղի ունեցավ մի լավ, պայծառ հանդիպում: Եղբայրները հանդիպեցին տարիքավոր ծերունուն՝ Հովհաննեսին, ով Ալաշկերտ էր եկել ռուսական կազակների մոտ և գրուցել նրանց հետ: Ի վերջո պարզվեց, որ դա ոչ այլ որ է, քան հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Նա նաև ճանաչեց նրանց, կանչեց իր տուն, եղբայրները երկար պատմեցին իրենց փորձությունների մասին:

Հովհաննեսը խոսեց Վանի հերոսական պաշտպանության մասին, ուր Ալաշկերտի գյուղերից փախստականների բազմությունը հասել էր փրկության հույսով: Նա խորհուրդ տվեց գրել Ռշտունիքի, Վանի, Վասպուրականի մասին. հայերը պետք է իմանան իրենց պատմությունը: Եվս խորհուրդ տվեց կարդալ բոլոր պատմական վեպերը, մի քանի գիրք նվիրեց Րաֆֆու, Օերենցի, Մուրացանի գրածներին... Մեծ իմաստունի բոլոր խոսքերը խոր տպավորվեցին նրանց հոգում խորքում: Եղբայրները պատմում էին իրենց հարազատներին,

ընտանիքների ճակատագրի մասին, և թե ինչ տառապանքներով հայրիկի թույրն ամուսնու և նրա բարեկամների հետ կարողացավ Վանից վերադառնալ Հայաստան՝ ռուսական բանակի օգնությամբ... Նրանք տրտնջում էին, որ ռուսները հեռացան այնտեղից: Նրանք հոգնել էին՝ չգիտեին՝ ինչու են կռվում: Մի բուռ կամավորների մեծակ թողեցին հազարավոր դաժան ու վայրենի հորդանքի հետ... Բսկ Թումանյանը հարցեր էր տալիս և ուշադիր լսում:

Քաղաքում՝ Վասպուրականի կենտրոնում, ամբողջ վիլայեթից կենտրոնացված էր շուրջ 70 հազար հայ փախստական:

Միևնույն ժամանակ, կանոնավոր թուրքական զորքերը շրջափակեցին քաղաքի հայկական թաղամասերը՝ վճռակալորեն մտադրվելով ոչնչացնել ինչպես հայ քաղաքաբնակներին, այնպես էլ փախտականներին: Բայց վանեցիներն ստեղծեցին ինքնապաշտպանական ստորաբաժանումներ՝ պաշտպանելու հայրենի քաղաքը: Ռազմական գործողությունները սկսվել են ապրիլի 7-ին, Վանը գրավելու թուրքերի փորձերն անհաջող են եղել: Մայիսի 3-ին թուրքական զորքերը հանեցին շրջապատումը և նահանջեցին: Երկու օր անց առաջադեմ հայկական ջոկատ մտավ քաղաք, իսկ մայիսի 6-7-ը, թուրքերի նահանջից հետո ռուսական զորքերը և հայկական այլ ջոկատներ:

Վանի պաշտպանությունը գրեթե 200 հազար հայերի թույլ տվեց հատել ռուս-թուրքական սահմանը և փրկվել: Հայ վերաբնակիչների անվերջանալի քարավանները շարժվում էին Վան - Ավանց - Սև Գետ - Գեղուլ - Ջանիկ - Պանզ - Բերկրի - Գյալրեշամե - Տափարիզ լեռնանցքով - Քարաբենդ - Կիզիլ-Դիզե - Կարաբուլախ - Չինգիլ լեռնանցքով, կիրճով - Իզդիր:

Թումանյանը տխուր լսում էր նրանց, բայց վերջում հանգստացրեց.

– Ռուսները բոլորը տարբեր են, ռուսացված այլազգիներ շատ կան, հիմնականում նրանք լավ վերաբերմունք ունեն մեր

նկատմամբ: Իշխանությունը չպետք է շփոթել մարդկանց, ժողովրդի հետ: Ցարն ուներ այլ նպատակներ, նվաճման ուղիներ. նա բոլոր հողերը մաքրելու էր իր կազակների համար, նա պետք է վճարեր իր զինվորներին (բոլոր կառավարիչները դա անում են): Վճարում են իրենց պաշտպաններին, որպես կանոն, հողաբաժին տալով: Բսկ բոլշևիկներին նոր հողեր պետք չեն, նրանք այդքան մեծ տարածքներ և գավառներ տվեցին գրեթե զուր, նրանք կփոխեն իշխանությունը տեղակայելու, կտեսնեք, բոլորին կփոխեն:

– Բայց նրանք հայերին չեն մորթելու, բացի, թերևս, ամենա ապստամբներից, – ժպտաց բանաստեղծը հիշելով իր բանտարկության տարիները, – դուք լուսավորություն եք սերմանում, շարունակեք, հայերը կարող են հաղթել, տեր կանգնել իրենց, միայն երբ բոլորը գրագետ լինեն:

Ինչպե՞ս կարող էր մեծ բանաստեղծն իմանալ, թե 15 տարի հետո ինչ կկատարվի իր որդիների հետ այս Ռուսաստանում...

Թումանյանը նրանց նվիրեց իր և Աղայանի գրքերից:

– Բսկ դուք գրի առեք ձեր բոլոր պատմությունները, մի օր մեկն ու մեկին օգտակար կլինեն:

Երիտասարդները հազիվ էին թաքցնում իրենց զգացմունքները:

Ելբայրներն ու հարսներն անգիր սովորել են այս գրքերը:

Հարսները սիրով էին իրենց ամուսինների հետ տան բոլոր գործերը վերցնելով իրենց վրա, մեկը մյուսի հետևից երեխաներ լույս աշխարհ բերելով: Երեխաների դաստիարակությունը և տնային տնտեսությամբ գրագիտությունը կտոջ գործն էր: Կյանքը լավանում էր. անհետացավ հավերժական վախն ունեցվածքի, իրենց ու սիրելիների կյանքի համար... Ունեին անասուններ, մորթում, վաճառում էին... Երեխաներն իջնում էին քաղաք ուսումը շարունակելու... Մի թե կարող էին նրանք

նույնիսկ երազել բարձրագույն կրթության մասին այնտեղ՝ քրդերի մեջ, թուրքի աչքի առաջ:

Երեկոները Մեսրոպը նավթի լամպը տանում էր օթառ, նստում ցածր սեղանի մոտ և գրում, նայում Թումանյանի տված գրքերը, մի քանիսն էլ ինքը գնել էր Թիֆլիսում և Էրիվանում, Պոլսից ինչ-որ բան բերեցին: Դեռ արտագաղթից առաջ նա օրական գրեթե մեկ դպրոցական տետր էր գրում-չնջում: Երբեմն այն կարդում էր որդիների համար, ավելի հաճախ թաքցնում էր՝ ասելով, որ ինքն անընդհատ շտկում է. սրանք դեռ թերի էին, վերջնական գրառումներ չէին: Զգում էր, որ երեխաներն այնքան էլ չեն հավատում, թե ինչպես են դարձր շարունակ պահպանել ազգանունը տոհմի պատմության տեսքով: Չնայած ինքը՝ Մեսրոպը, հասկանում էր, որ գրում է թե՛ իր տոհմի, թե՛ գերդաստանի, թե՛ իր ժողովրդի պատմությունը մեկ այլ Հայաստանում, որը մնաց այն շնչրին: Պատմություն, որը չէր կարող լիարժեք և հստակ իմանալ: Բայց նա ինտուիտիվ կռահեց անծայր ծովի մասին իր պապի, հորեղբայրների հիշողությունների կտորներից: Նա կամաց-կամաց վերականգնեց Ռշտունիների ուղին՝ Վանա լճի ափից, որը նրանք անվանում էին ծով:

Այնուհետև գալիս էր այլ հայտնի և փառահեղ ընտանիքների Արծրունիների ու Բագրատունիների, Գևուկների և Բզլունիների, Մամիկոնյանների պատմությունը: Նրանցից ով ուր էր դեռ պետք էր պարզել: Մեսրոպը կարդում, վերընթերցում էր՝ տեսնելով հարագատ և հոգուն մոտ անուններ, Տարոն, Բզլունիք, Ռշտունիք... Չնայած տեսնում և գիտակցում էր, որ իր ծանոթներից ոչ մեկին դա չի հետաքրքրում: Ասօրյա հոգսերը, վատ լուրերն առավոտյան և աղքատությունը վիատեցնում են մարդկանց, կորչում էր հետաքրքրությունն իրենց պատմության և գրքերի հանդեպ... Երկիրը նոր էր երկիր դառնում, նոր-նոր սկսում էր արմատախիլ անել անգրագիտությունը գյուղում...

## ԻՇԽԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆ

Արևելքի փոշուտ ճանապարհն է՝  
Տանում էք ով գիտի թե ուր,  
Դածան է պատմությունը ձեր -  
Հորդան, հորդան՝ ամեն ուր:

Թագ և պալատ այրելով,  
Դարեր, դարեր մաշելով,  
Դրախտի անկյուն լինելով,  
Չես արթնանում դարերով...

Այն տարիներին, երբ Բյուզանդիան իր թագի խաղն ու վաճառքն էր կապել ռուսների հետ՝ համառորեն պնդելով հեթանոս ռուս իշխանի մկրտության անհրաժեշտությունը, Արծրունիների իշխանական ընտանիքը վաղուց էր թագավորում Աղթամար կղզում: Ութերորդ դարից ինչ-որ տեղ Ռշտունիքն էլ անցավ նրանց:

Իսկ կղզում Գագիկ Արծրունի թագավորի համար, Վասպուրականի թագավորության ծաղկման շրջանում, ճարտարապետ Մանուելը կառուցեց մեծ եկեղեցի (որը կանգուն է մինչ օրս): Թագավորական պալատն «ուներ կամարակապ խորշեր, առատորեն զարդարված արտաքին պատեր. այդ ամենը ոչ հաշվել կլիներ, ոչ էլ հայացքով ընդգրկել:

Հայոց արքայական և նախարարական տոհմերի ժառանգները միշտ ձգտել են վերականգնել մեր կորցրած պետականությունը անհավասար պատերազմներում: Հայերը ոչ մի կերպ չէին կարող համակերպվել այդպիսի կորստի հետ: Եվ Արծրունու հետնորդները դրան հասան Վասպուրականում: 15-րդ դարում Սմբատ Արծրունիի դառնում է Հայաստանի թագավոր, իսկ Աղթամարը կոչվում է թագավորական գահ: Աղ-

թամարի կաթողիկոսները, որոնցից առաջինը գահակալեց 1113 թվականին, իրենց անվանում էին արքայական, Գագիկ թագավորի թոռներ ու հետևորդներ:

Իսկ շատ ավելի վաղ՝ 4-րդ դարից սկսած, կղզում Ռշտունիների տոհմի ամրոցն էր: VII դարում այս ամրոցը դարձավ հայերի պայքարի կենտրոնը արաբ նվաճողների դեմ: Մինչ այդ նրանք գրավել էին Բյուզանդիայի հետ պատերազմից ուժասպառ Պարսկաստանը: Արաբները ոչ միայն նվաճեցին Պարսկաստանը, այլ սկսվեց գրադաշտական դավանանքի աստիճանական անհետացումը, որով պարսիկները բավականին անհաջող կերպով փորձում էին փոխել հայերի բրիտանոնական հավատաբը:

Մարգարե Մուհամմեդը, որը մահացավ երեք տարի անց, նամակ ուղարկեց Խոսրով Երկրորդին. «Շնորհի՛ր իսլամը, և դու փրկված ես»: Գրեթե բոլորը պնդում են, որ Խոսրովը զայրացած վիճակում ոչնչացրել է այդ նամակը: Եվ որ իմանալով այս մասին՝ Մարգարեն բարբառել է. «Ալլաիը կպատիժի Խոսրովի թագավորությունը, ինչպես Խոսրովը պատեց իմ նամակը»: Այդ դարերում ճակատագրական մարտեր էին մղվում այստեղ... Հայաստանը, ինչպես միշտ, ընկավ երկու քարի արանքը. Բյուզանդիան իր մեջ էր քաշում ծաղկուն քաղաքներով բերրի շրջանները, իսկ արաբներն, ի դեպ, իրենց ճանապարհին ավերեցին հենց քաղաքները: Նախարարները կոփում էին իրար մեջ, և, իհարկե, յուրաքանչյուրն ուներ իր սեփական գույքային շահերը՝ չհաշված իշխանության անեղբ ցանկությունը, և այդ մասնատումը ցանկացած արտաքին թշնամու հնարավորություն էր տալիս ստրկացնել նրանց: Շնորհություն կար: Ոմանք ընտրում էին արաբների գործությունը՝ հավատալով նրանց խոստումներին, ոմանք էլ սովորական Բյուզանդիային փոքր-ինչ փոխելով իրենց հավատը: Իսկ մեկ ուրիշը հիմարաբար ընդունեց մագղեիզմը և դարձավ գրեթե պարսիկ:

Շնորհաբար առմամբ, ըստ պատմաբանների գնահատականների, մինչև 500 թվականը Հայաստանի տարածքում կար 34 պետություն, որոնց ղեկավարում էին 20 տոհմերը:

Տեղական նախարարների այս տոհմերից ոմանք հայտարարում էին, որ ունեն կեղոտիկ ծագում: Օրինակ՝ Բագրատու-կյներն առում էին, որ իրենք սերել են Դավթից և Սողոմոնից Իսրայելի թագավորներից, Մամիկոնյանները տարածել էին ազգակցական կապը Չինաստանի կայսրերի հետ, իսկ Արծրունիները պնդում էին, թե արյունակցական կապ ունեն Ասորեստանի հին թագավորների հետ: Ռշտունիները ոչնչով չէին պարծենում, բայց հավատում էին, որ տոհմը եկել է Ռուբարտուի ժամանակներից (Վանի թագավորություն):

Քուրդ գիտնականների աղբյուրներում կասկածելի ուսումնասիրություններ կան Քուրդիստանի առաջացման մասին, որտեղ «քրդական Ռոշկի ցեղը նույնպես սերում է Ռիշթունիների տոհմից, որը պակաս հզոր չէր, քան ինքը՝ Վաղարշակը»: Ի դեպ, նույն քուրդ պատմաբանները նույնպես մինչև հիմա փորձում են յուրացնել Մամիկոնյանների ծագումը:

Դեռ պարսիկ շահնշահ Ճակելերտի օրոք V դարի կեսին բախումները հասել էին իրենց գագաթնակետին, երբ Եզդիզդերյուր հրապարակեց մի հրաման, որով ամբողջ ժողովուրդը պետք է մագղեիզմն ընդուներ որպես կրոն: Պարսիկներն ամեն քաղաք ու գյուղ ուղարկեցին փորձառու գրադաշտական քարոզիչներին՝ գործի ուղեկցությամբ: «Եթե դուք կամավոր ընդունեք մեր օրենքը, դուք կատանաք մեր թագավորից նվերներ և պատիվ: Բայց եթե դա ինքնակամ չէք ընդունի, մենք հրաման ունենք բոլոր գյուղերում և բոլոր անկյուններում կրակապաշտական տաճարներ կառուցելու, այնտեղ Վահրամի կրակը վառելու և նշանակելու օրենքի ուսուցիչներ՝ մոզեր և մոբիդներ ավերող երկրում: Եվ եթե ինչ-որ մեկը վրդովված լինի սրա դեմ, սպա նա ենթակա է մահվան, իսկ կինն ու երեխաները՝ արսու-

րի»: Այդ ժամանակ նահատակված քրիստոնյաների թվում էին սուրբ Աստու Գեուհին և սուրբ Մանածիր Ռշտունին:

Ի դեպ, քրիստոնյաների կողմից թաղված Յագղիգերը III-ի թագավորության և անկման պատմությունը և դրանով հանդերձ՝ արաբների ճնշման տակ գտնվող Սասանյանների կայսրության վախճանը աշխարհի պես հին են և շատ ուսուցողական... Բայց այս ժամանակահատվածի նկատմամբ ուշադրությունն այժմ մեզ համար հետաքրքիր է միայն որպես նաբների հոգրության ամրապնդման գործոն...

Ռշտունիների տան առաջին հուսալի ներկայացուցիչը Մանուչեր (Մանաչիխր, Մանաչիր) Ռշտունին է, ով եղել է հայոց արքա Տրդատ III-ի (մոտ 330թ.) չորս գորավարներից մեկը, Ջորի ներայրը, որը ղեկավարել է 335-350 թվականներին: Երկու եղբայրներն էլ իշխան Կաչե Արծրունու հետ միասին ապստամբեցին Հայաստանի արքա Տիրանի դեմ: Ապա Գարեգին Ռշտունին, որը ղեկավարել է 4-րդ դարի վերջին: Ռշտունիների տոհմը կոչվում էր նաև տուն Մանաչեգի (Մանաչիր) նախնու անունով: Ռշտունու տունը հիշատակվում է Ջորանամակում և Գահնամակում: Ըստ Ջորանամակի, անհրաժեշտության դեպքում, նա ստիպված էր մարտի դաշտ հասնել 1000 ձիավոր (տևս չավելվածը):

Մովսես Խորենացին այլ կերպ էր համարում. «*Բնջ վերաբերում է Ռշտունու և Գոթթնեցու տոհմերին, իմ գտած տվյալների համաձայն՝ նրանք իսկապես ճյուղավորվեցին Միասկյան ցեղից. Հայկիդ Միասկի*»:

Խորենացին գրում է. «... Տիգրանը տկարացավ, Ռշտունիների նախնուն՝ Բարգասյրանին, նշանակեց հայկական և պարսկական զորքերի հրամանատար և հենձեազորով ուղարկեց հռոմեական զորքերի դեմ իբր խաղաղ նպատակներով, բայց իրականում Անտիգոնոսին օգնելու համար:

Եվ նա (Բարգասյրանը) Գեուհիների տոհմից գլխավոր հայրը թագավոր Գնեղին ուղարկում է Երուսաղեմ՝ հրահանգե-

լով հասնել խաղաղության և համաձայնության Միրիայի ու Պաղեստինի բնակչության հետ: Միրիայի թագավորի որդին դուրս է գալիս Գնեղին ընդառաջ, իսկ ինքը ինչ որ կապերի մեջ էր Անտիգոնոսի հետ: Գայով Ռշտունիների տոհմի տիրակալ հայ և պարսից գորավար Բարգասյրանի մոտ՝ նա խոստանում է նրան 500 գեղեցիկ կին և հազար տաղանդ ոսկի, եթե օգնի իրենց գահընկեց անել Հիրկանոսին և Անտիգոնոսին թագավոր դարձնել: Հիրկանաքը նրան թույլ չտվեց Երուսաղեմ մտնել ամբողջ զորքով, այլ միայն հինգ հարյուր ձիավորներով և երդում պահանջեց Բարգասյրանից:

Բարգասյրան Ռշտունին Հիրկանոսին երդվում է Արեգակի, Լուսնի ու իրենց բոլոր երկնային ու երկրային աստվածությունների կողմից, որ ինքը ոչ որի և ոչնչի չի դիպչի: Բայց խորամանկորեն պատվով ընդունելով նրանց՝ նա հանկարծ հետանում է և հրամայում անհանգել մնացած զինվորներին և հանձնել Անտիգոնոսին: Նա հրամայում է Հերովդեսին՝ Երուսաղեմում գերի վերցրնել բնակիչներին, Անտիգոնոսին թագավոր է դարձնում, և Հիրկանոսին գերեվարված հրեաների հետ տանում Տիգրանի մոտ...»: Հրեաների և Հիրկանոսի գերևարման դրվագները Ֆլավիոսը մի փոքր այլ կերպ է նկարագրում, բայց սա էլ է վիճահարույց տարբեր պատմաբանների շրջանում:

Մեր տոհմերի ամենահայտնի տոհմաբան Կիրիլ Թումանովիցը (ԱՄՆ) գրում է. «*Ռշտունի իշխաններն ինքնիշխան էին Վանա լճի հարավային ափին գտնվող նույն անունով կանտոնում՝ Ռոտան մայրաքաղաքով, կրգու բերդով՝ Աղթամար և Տոսպով (Վան), ինչպես նաև լճից այն կողմ գտնվող Բզնունիկ իշխանությամբ: Ավանդաբար Ռշտունին վերագրվում է իսայկիդների աստվածային ծագմանը, որի տոհմական հայրանունը կապված է Վանի թագավորական անվան հետ (Ռոս), և որի պետությունը գրավում էր հին Վանի կայսրության միջուկը,*



որը, ըստ ամենայնի, ուներ թագավորական ուրարտական ծագում:

Ապականիչ Մանաչիբը, տեսնելով Աստոծ մարդուն՝ Հակոբ եպիսկոպոսին, անտեսեց նրան, ծիծաղեց և ծաղրեց:

Բայց հայոց այս խելահեղ թագավորության ընթացքում ոչ միայն թշնամիները դավաճանել են իրենց թշնամիներին, այլև ընկերները՝ ընկերներին, բարեկամները՝ բարեկամներին, դավաճանել են միմյանց և իրար հանդէպ հազար տեսակ դավեր կոտթել: Քանզի Տերը շփոթություն սերմանեց նրանց մեջ անմարտի ոգի, և նրանք, լինելով մոլորված, սկսեցին իրենց անասովածության մեջ ավերել և ոչնչացնել միմյանց:

Բայց, ըստ երևույթին, «չար և անպատիվ մարդիկ» դեռ այն ժամանակներում այդքան էլ հավճաղեպ չէին. «...Բոկ բոլորին գերագանցեց մի չար մարդ: Նա դարձավ Մատանայի գործիքը, որը բռնապետ թագավորին տրամադրում էր հատկապես նախարար տոհմերի դեմ, մասնավորապես՝ մի ներքինի, որը կրում էր մեծ Մարդպետի կոչումը՝ դաժան, չարամիտ չարիք, որի անունը Այր էր: Նա իր խարդավանքներով դրոզեց թագավորին առանց որևէ մեղքի սպանել բազմաթիվ նախարարների և փշրեց մեծ թագավորության հիմքերը: Մասնավորապես, նա իր գրպարտությանը հասցրեց սրին հանձնվելուն և երկու հին տոհմերի՝ Ռշտունիների և Արծրունիների ոչնչացմանը, որոնք առանց մեղքի և հանցանքի կոտորվել էին (չէին բազառվել նույնիսկ իզական սեռի ներկայացուցիչները):

Հետագայում՝ 445 թ.-ին, տարեգրություններում հայտնաբերվում է Արտակ Ռշտունին: Տոհմը դեկավարում էր իր ավանդաբար ժառանգված Ռշտունիքը, ինչպես նաև Բզունիքը, որն ստացել էր Արշակունի թագավորներից Բզունիների տոհմի ոչնչացումից հետո: Արտակ Ռշտունու մասին մենք կարդում ենք Եղիշեի և Փարպեցու մոտ. Արտակ Ռշտունին 450-ական թվականներին Հազկերտ (Յագդիգիդր) II- ի հրամանով Տիգրոս էր կանչված նախարարներից:

Պարսիկները նախարարներից կրկին պահանջում են հրաժարվել քրիստոնեությունից: Որպիսի թակարդից խուսափեն, վերադառնան հայրենիք և այնտեղ կազմակերպեն ընդդիմություն, նախարարները ձևականորեն հրաժարվում են: Հազկերտը Վասակ Մյունու որդիներին և բղէշյա Աշուշին պատանդ է վերցնում, նախարարներին տուն է ուղարկում իր գորքի հետ հանձնարարելով մեկ տարում բոլոր եկեղեցիները դարձնել կրակապաշտների կրատուն: Նախարարները վերադարձան հայրենիք մտադրված կազմակերպել անրաժեշտ դիմադրություն: Իսկ Արտակ Ռշտունին, ի տարբերություն Վարդան Մամիկոնյանի, անցավ Վասակ Մյունու կողմը:

Համաձայն Հռոմեական կայսրության երր կառուցվածքի Կոնստանդին VII-ն իր երկիրը բաժանել էր առանձին ստրատեգիական միավորների՝ ֆեմերի: Այդ ժամանակներում Արմենիա ֆեմում նշանակված էին իշխան Մժեժ Գնունին, իսկ հետո՝ Դավիդ Մահարունին: Սակայն Դավիդ Մահարունին իր «ոռյակապ» կառավարումից հետո մերժվել էր սեփական գորավարների կողմից, ինչից հետո յոթերորդ դարի կեսերին իշխանության եկավ մի ուրիշ գորավար՝ Թեոդորոս Ռշտունին, ով իր իշխանության ներքո միավորեց Մարզպանական և Բյուզանդական Հայաստանի մեծ մասը: Ազգային հերոս և տաղանդավոր գորավար Թեոդորոս Ռշտունին շատ մեծ դեր խաղաց հայոց պայքարում:

Պատանեկությունը Թեոդորոսն անց էր կացրել Խուրով II շահի արքունիքում, ապա սկսեց իշխանավորել Ռշտունիքի մարզում, Վանա լճի հարավային մասում, Պարսկական Հայաստանի սահմաններում: Միաժամանակ, Ներսես III Տաեցի կաթողիկոսի միջնորդությամբ (ի դեպ, քաղկեդոն), կայսր Կոնստանդ II-ը նրան նշանակեց Արմենիա ֆեմի գորբերի գլխավոր հրամանատար: Հայտնի է, որ Ներսես III իշխանը (Շինող) Մեծ Հայքի կաթողիկոս է դարձել Թեոդոր Ռշտունու աջակցությամբ:

«Եվ այսպես, մեր ազնվականներն իրար միջև եղած անհամաձայնությունների պատճառով կործանեցին Հայաստանը: Միայն Թեոդորոս Ռշտունիին էր, Ռշտունիիի մարզի իշխանը, ով ստավձածասեր և մեծ վնաս հասցրեց թշնամուն: Նա ամրացրեց Աղթամար կղզին և այնտեղից կարողանում էր պաշտպանել շատ ուրիշ մարզեր...», – կարդում ենք Սեբեոսի մատյանում: Սեբեոսը հանդիսանում է VII դարի մասին տեղեկությունների հիմնական աղբյուրը. գրել է բյուզանդական կայսր Իրակլիի և նրա ժամանակաշրջանի մասին, (590-660 թ.):

Ի դեպ, Սեբեոսի աշխատությունը պարունակում է շատ իրական փաստադրոշմեր: Նրանց մեջ հաստիկ հետաքրքրություն է ներկայացնում կայսր Մորիկի նամակը ուղղված պարսիկ շահ Խոսրովի, որում նա առաջարկում է վերաբնակեցնել հայերին Պարսկաստանի և Բյուզանդայի խորքերում և դրանով ապահովել իրենց սահմանների անվտանգությունը:

Ավերորդ չէր լինի հիշել, որ նման գաղափարներ գոյություն ունեին նաև ցարական ռուս գեներալների գլխում 1914 թվի պատերազմից հետո: Իրենց դատելով՝ սահմանամերձ գոտում ավելի օգուտակար կլիներ այդ հողերը բնակեցնել ոչ թե հայերով, այլ ռուս կազակներով:

«Կարծում եմ՝ ծայրահեղորեն ցանկալի է մերձսահմանային տեղանքը բնակեցնել ռուսական էլեմենտով, և համարում եմ, որ դա իրականացնելու լավ միջոցներ կան՝ համապատասխանեցնելով ռուսական շահերին: Չգիտես ինչու, հայերն իրենց փախստականների հետ դա ուզում են բռնագրավել: Այդ միտումները համարում եմ անընդունելի, որովհետև պատերազմից հետո դժվար կլինի վերադարձնել կամ ապացուցել, որ իլյաձ հողերը նրանց չեն պատկանում: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ստեղծված իրավիճակը ձեզ օրինակ: Բսկ ապագայում, եթե նշված հուլիսները կմտնեն Ռուսական կայսրության սահմանների մեջ, պետք է բնակեցնել

դրանք Կուբանի և Դոնի կազակներով, ստեղծել սահմանամերձ կազակություն»:

Այսպես, մի կողմից ցարական գեներալները հայերին շարժում էին պատերազմական կրակի մեջ՝ գայթակղելով հայրենիքը հետ վերադարձնելու գաղափարով, մյուս կողմից մտադրված էին այդ հայրենիքը միացնել Ռուսաստանի և բնակեցնել կազակներով:

Իսկ թագավորական արքունիքում (վերադառնանք մի այլ դար, չնայած՝ իրականում ժամանակները չեն փոխվում, և ամեն ինչ կատարվում է մեր աչքի առաջ) պայքար էր գնում հռոմեացիների ու պարսիկների կողմնակից խմբավորումների միջև, որի ընթացքում շատ գոհեր եղան թագավորի մտերիմներից: Ինչպես միշտ, խռովությունն ընկել էր նաև նախարարների մեջ... Նույնիսկ Մամիկոնյանների տոհմը, որ Բյուզանդական կայսրերին հայտնի էր իր նվիրվածությամբ, ճեղքվել էր երկու մասի. մի մասը կանգնեց սպարապետ Վասակ Մամիկոնյանի կողմը, իսկ նրա եղբայրը՝ Վահանը, դարձավ դավաճան՝ պարսիկ թագավորի գործակալ: Ի միջի այլոց, արաբների 654 թվականի հարձակումը Վասակ Մամիկոնյանին ստիպեց ընդունել արաբների գլխավորությունը: Պարսիկներին ծառայելու գնացին նաև այլ նախարարներ: Ի վերջո, կանխատեսելով պարտությունը և պատերազմի անբարենպաստ հետևանքները՝ նախարարները բացելիքաց անցան պարսիկների կողմը:

Այդպիսի դեպքերում հայերն ասում են՝ նժարը ծանր կողմն է քաշում: Ինչ դժվար է ջոկել ծանր ու թեթևը... Ըստ Ղազար Փարպեցու՝ նախարարներն արդեն ընդունել էին իրենց որոշումը՝ կարճ ու պարզ. «... այլևս մեզ պետք չի հայ թագավոր. թող ժամանակ առ ժամանակ հանդես գա որևէ պարսյաց իշխան և մեզ դեկավարի»: Առանձին սխալ արարքը կարելի է անվանել դավաճանություն: Բայց դարերի շարքում չի երևում ստիպված քա յլ էր դա, թե՛ համախմբային հիմարություն: Բայց երկուսն էլ ի հայտ են բերում ազգային շահերին դավաճանելը:

Մտում է ենթադրել, որ այն ժամանակ կրոնը էական կարևորություն ունեցող արժեք էր. փոխեցիր և ազատ ես: Եվս մեկ դավաճանություն, ևս մեկ քայլ դեպի տարածքի և անկախության կորստի ուղի... Թագավորը գրկվեց թագից, Մահակ Պարթևը կաթողիկոսությունից: Արմենիան դարձավ Պարսկաստանի մարզպանություններից մեկը, իսկ տիրակալ նշանակվեց պարսիկ մեծատոհմիկներից ինչ-որ մեկը:

Իսկ ի՞նչ է լինում այդքան դավաճանություններից հետո: Այժմ լյտի պարսիկներն սկսեցին ասիմիլացիայի ենթարկել հայերին և առաջ տանել իրենց հին պահանջը հրաժարվել քրիստոնեությունից: Հավատք փոխելուն ոչ ոք համաձայն չէր, և այդ ժամանակ օտարերկրյա զավթիչների դեմ դուրս եկան և՛ ազնվականությունը, և՛ գյուղացիությունը: Ապստամբության ղեկավարումն ստանձնեց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, իսկ մարզպետ Վասակ Մյունին սկսեց կազմակերպել ժողովրդական ընդվզումը: Մակայն շուտով մարզպան Վասակ Մյունին, անհիմն համարելով հսկայական պարսկական բանակի դեմ պայքարը, փոխեց իր դիրքորոշումը, քանի որ բյուզանդական կայսրը և նրա հետ Հայաստանի բյուզանդական մասի նախարարները (այսինքն՝ Արմենոյան Հայաստանը) հրաժարվեցին օգնել ապստամբներին: Վասակը հեռացավ ապստամբների շարքերից և բռնելով դավաճանության ճանապարհը՝ մի քանի այլ նախարարների հետ անցավ պարսիկների կողմը: Դա մեր պատմության ամենագարշելի ու ցավալի էջերից է, բայց, դժբախտաբար, միակը չէ: . . .

Պատերազմը երկար շրջունակվեց և ավարտվեց միայն 6-րդ դարի վերջին: Տեղի ունեցավ Հայաստանի երկրորդ բաժանումը, երկրի մեծ մասը մտավ Բյուզանդիայի կազմի մեջ:

Կախվածությունը Բյուզանդիայից արտահայտվում էր նրանով, որ հայ նախարարները պարտավոր էին պաշտպանել կայսրության սահմանները պարսկական հարձակումներից որպես «անվտանգության բարձ» արտաքին թշնամիներից: Հա-

վանաբար՝ ճակատագրի կնիք: Վերացվում էր հայ նախարարների սեփական զորքեր ունենալու իրավունքը, այսուհետ միայն բյուզանդական զորքին, և փաստորեն չեղյալ հայտարարվեց անկախությունը: Նման վերակազմակերպման արդյունքում 536 թվականին Արմենոյան Հայաստանը վերածվեց կայսրության նահանգներից մեկի: Բայց այդ պահին արդեն հայտնվեց նոր ահարկու ուժ... . . .

7-րդ դարի 30-ականներին առաջացավ արաբական խալիֆայությունը: Նոր թշնամի և՛ հայերի, և՛ Բյուզանդիայի, և՛ պարսիկների համար... 630-640 թվականներին արաբները ջախջախիչ հարվածներ հասցրին պարսիկներին և գրավեցին Պարսկաստանը: Պարսկասեր նախարարների բոլոր հաշվարկները ճակատագրական եղան: Ինչպես ասում են՝ նրանք սխալ էին հաշվարկել ուժ վրա խաղաղությունը կատարել... Եվ 640-ի աշնանը խալիֆայության զորքերն առաջին անգամ ներխուժեցին Հայաստան: Սպարապետ Թեոդորոս Ռշտունին իր երկու հազարանոց հեծելազորով մարտնչեց ճակատամարտում և կարողացավ արաբներին դուրս մղել Երևանի բերդի ու Նախիջևանի մոտակայքից: Ապա ևս անցավ հարձակման, հայկական բանակի հետ արագ անցավ Միջագետքի հյուսիս, որտեղ տարավ մի քանի տպավորիչ հաղթանակ: Այսպիսով, Թեոդորոս Ռշտունին հողմնացրիվ արեց արաբների անպարտելիության առասպելը:

Այնուամենայնիվ, հայ իշխանը լավ էր հասկանում ուժերի հարաբերակցությունը: Հայաստանը միայնակ էր արաբական խալիֆայության դեմ: 650 թվականին արաբները երրորդ անգամ հարձակվեցին Հայաստանի վրա, կրկին հասան երկրի կենսական կենտրոն Արարատյան դաշտ, և հետագան բազմաթիվ գերիներով ու ռազմավարով: Հայաստանում տեղակայված բյուզանդական զորքերի հրամանատար Պրոկոպիոսը վախկոտորեն մերժեց սպարապետ Թեոդորոս Ռշտունու առա-

ջարկը՝ խալիֆայությանը համատեղ ուժերով հակադրվելու մասին:

647 թվականին կայսր Կոնստանցը վճռականորեն փորձեց վերադարձնել Հայաստանը և միացնել Բյուզանդիային: Այնուամենայնիվ, հայ իշխանները կա մ գզում էին, կա մ էլ տեղյակ էին հզոր Բյուզանդիայի անկախություն, նրա բյուրոկրատիայի մեծամտության մասին, և հաշվի էին առնում նաև նրա հետ ունեցած կրոնական տարբերությունները: Բյուզանդացիներն արհամարհանքով էին վերաբերվում շրջակա ժողովուրդներին՝ նրանց համարելով բարբարոսներ: Մինևույն ժամանակ, այն դեպքում, եթե նրանք ընդունեին արևելյան մոդելի քրիստոնեությունը, սովորեին հունական լեզուն և օրենքը, համապատասխանեին հռոմեական օրենքներին, ապա նրանք պատրաստ էին ընդունել և նույնիսկ հավասարեցնել իրենց: Դրան համաձայնող օտարերկրացիները դադարում էին բարբարոս լինելուց և դառնում էին Բյուզանդիայի լիարժեք բնակիչներ:

Արաբական առաջին երեք արշավանքներից հետո, չստանալով հույներից պահանջված օգնությունը և համոզվելով, որ Հայաստանը չի կարող հույս դնել Բյուզանդիայի աջակցության վրա, Թեոդորոս Ռշտունին որոշեց ամբողջովին պոկվել կայսրությունից՝ Հայաստանի բյուզանդական և պարսկական մասերն իր իշխանության տակ միավորելու հույսով: Նա մինչ արաբական արշավանքի սպանալիքը ստիպված էր հաշտություն կնքել և նույնիսկ ռազմական դաշինք կնքեց նրանց հետ՝ գոնե մի որոշ ժամանակ ունենալով դաշնակից: Հայ նախարարներն իշխան Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ դիմեցին զավթիչներին՝ արաբական պրոտեկտորատն ընդունելու բարենպաստ պայմաններով բանակցելու հույսով: Եվ պայմանագիր կնքեցին արաբների հետ Հայաստանի համար բարենպաստ պայմանների վերաբերյալ: Ի դեպ, հակառակ հայ կաթողիկոս Ներսես Տաեցու կարծիքին (նա դժվար պահին անհրաժեշտ համարեց դաշնություն կնքել համարյա

նույն հավատքի քաղկեդոն Բյուզանդիայի հետ), Սպարապետը հնարավոր համարեց օգտվել կայսրության և խալիֆայության մրցակցությունից և դաշինք կնքել հզոր ու անընդհատ ընդլայնվող արաբական խալիֆայության հետ:

653 թվականին Թեոդորոս Ռշտունու ապագա խալիֆ Մուավիայի հետ կնքած պայմանագրով Հայաստանը ճանաչվեց որպես ինքնավար հարկատու պետություն: Մինևույն ժամանակ, այս պայմանագիրը կնքեցին իբրեիական արհատկրատ Ստեֆանը և Կովկասյան Ալբանիայի տիրակալ Յուանշեբը: Այսուհետև երեք կովկասյան պետությունները կազմեցին Արաբական խալիֆայության մեկ նահանգ-մարզպետություն, որը կոչվում էր «Արմինիա», և Դվինը դարձավ արաբ կուսակալների նստավայրը:

Ահա այսպիսին է «պարոն-տիկին» Պատմությունը՝ ով պարուրածն է բարձրանում, ով էլ՝ օղակով շրջում...

Դարեր են անցել, և մինչ օրս պատմաբանները վիճում ու քննարկում են, թե արդյո՞ք Թեոդորոս Ռշտունու այս քայլը հայերի համար շահեկան էր, արդյո՞ք նրա ընտրությունը ճիշտ էր: Բայց կամ դու փորձում ես ընկեր լինել թշնամու հետ, կամ կրվում ես. ընտրությունը բազմաշատ չէ: Եվ հետո, կարելի է մտածել, որ Բյուզանդիան մայր էր մեր նախարարների համար: Նույն հարկային ճնշումը, քաղկեդոնական հավատքը ընդունելու պահանջը, նույն կայսրական դաժանությունը. այստեղ՝ բարբարոսներ, այնտեղ՝ այլադավ... Բնականաբար, Կոնստանդնուպոլսում այս պայմանագիրն ընկալվեց որպես ուղղակի դավաճանություն: Բսկ դեպի Հայաստան պատժիչ արշավը Կոնստանդնուպոլսի անձամբ դեկավարեց:

Մի խոսքով, այս ժամանակահատվածն ունի հետևյալ տեսքը. արաբների գիշատիչ արշավանքների ժամանակ Հայաստանում (640, 642-643, 650 թվականներին) շատ ծաղկուն շրջաններ ավերվեցին, իսկ բնակչությունն առևանգվեց: Արաբները մոտեցան Հայաստանի մայրաքաղաք Դվինին. ուժերն

անհավասար էին: Հերոսական պաշտպանությունից հետո բնակիչները պարտվեցին: Արաբական զորքերը ներխուժեցին քաղաք, սպանեցին բնակիչներին, գրավեցին հսկայական ավար: Դվինը շատ հարուստ քաղաք էր: Չնայած սպարավետի օգնության խնդրանքին՝ բյուզանդական ջանակը չէր էլ մտածում պաշտպանել Դվին մայրաքաղաքը իհարկե, թուլացած հայերը շատ ավելի շահավետ էին, քան ուժեղ հայերը: Մինևն այն է, հայկական հեծելազորը սպարապետ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ մի շարք պարտությունների մատնեց արաբներին՝ շատ անգամ փրկելով գերիներին ու թալանված ավարը խլելով կողոպտիչներին:

Թեոդորոս Ռշտունու հաղթանակները, բնականաբար, մեծ նախանձ առաջացրին որոշ նախարարների մեջ, մյուսները չէին ընդունում նրա անկախ դիրքը՝ կապված բյուզանդացիների դավաճանության հետ... Այսպիսով՝ Հայաստանի նախարարները բաժանվեցին երկու թշնամական ճամբարի: Ներսես III Շինող կաթողիկոսի գլխավորած հայկական նախարարների մասն առաջնորդվում էր Բյուզանդիայի ենթակայությամբ, իսկ մյուսը՝ հույս ուներ ձեռք բերել Հայաստանի անկախությունը: Արաբների նկատմամբ տարած հաղթանակներից հետո, ժողովրդի հերոս Թեոդորոս Ռշտունին կանգնեց նախադարձների մեկ այլ մասի գլխին: Ավելին, նա կանգ չարած լույսին այն փաստի առաջ, որ ստիպված եղավ դուրս գալ ինչպես Բյուզանդիայի, այնպես էլ արաբների դեմ: Իհարկե, առանց հավատարիմ նախարարների աջակցության նա չէր կարողանա դա անել: Իսկ Կոնստանդին II կայսրը, օգտվելով Ներսես III կաթողիկոսի բարեհաճությունից և հույսը դնելով Հայաստանում տեղակայված բյուզանդական զորքերի վրա, կրկին փորձեց իր քաղկեդոնականությունը պարտադրել Հայաստանի հոգևորականությանն ու ազնվականությանը:

Հայաստանի եպիսկոպոսներն ու իշխանները հավաքվել էին Դվինում: Չնայած բոլորի համար պարզ էր, որ հարցն այն

չէ, թե ում հավատքն է ավելի լավ և ավելի ճիշտ, այլ այն՝ թե հևարավոր կլինի, որ բյուզանդիան եկեղեցու օգնությամբ հաստատի իր իշխանությունն իրենց երկրում: Ինչպես միշտ, բոլորը նույնպես անձնական դրդապատճառներ ունեին. նախարարները վախենում էին, որ կուղարկվեն ծառայության՝ երկրից, տնից հեռու, ինչպես դա եղավ Հուստինիանոսի օրոք՝ հեռավոր դանության երկրներ կամ Աֆրիկա Բյուզանդիայի շահերը պաշտպանելու համար, որոնք հայ նախարարների համար խորթ էին. հայն՝ ուր, Աֆրիկան՝ ուր: Թեոդորոս Ռշտունի կարողացավ համոզել հավաքվածներին, որ չնայած հարաբերությունները փչացնելու կարիք չկա, բայց նաև անհար է ճակատագիրը կապել մի կայսրության հետ, որը ձգտում է խլել հավատքը: Նրանք միաձայն մերժեցին կայսրի ուղերձը՝ կտրականապես հրաժարվելով միաձուլվել համընդհանուր եկեղեցու հետ: Կայսրն ինքը շատ մտահոգված էր արաբների հետ պայքարում և չէր կարող պնդել նման դիրքորոշումը:

Այնպես որ, ընտրելով Բյուզանդիան, Արևմտյան Հայաստանի ազնվականությունը դավաճանեց Թեոդորոս Ռշտունուն: Քանի որ Թեոդորոսն իրեն Կոնստանդնուպոլսի վասալ չէր համարում, նա չներկայացավ Բյուզանդիայի կայսրին: Իր շուրջը հավաքելով Արևելյան Հայաստանի, Քարթլիի, Ալբանիայի և Սյունիքի ազնվականության մեծ մասին, նա կատարեց մի շլված քայլ՝ բոլորի անունից դիմել արաբների օգնությանը: Այդ պահին արաբներին հաջողվել էր գրավել գրեթե ամբողջ Հարավարևմտյան Ասիան: Դիմադրությունն արաբներին, որոնք, կարծես, վաղ թե ուշ իրենց գերիշխանությունը կհաստատեն Հայաստանում, անհույս էր թվում: Թեոդորոս Ռշտունին խելամուտ համարեց դաշինք կնքել արաբների հետ, որոնք, իրենց հերթին, իրենց նկատմամբ տարած հաղթանակներից հետո ստիպված էին հաշվի նստել Հայաստանի հետ՝ որպես իրական ուժի:

Եվ, ահա, 652 թվականին Ռշտունին թանկարժեք նվերներով ճամփա բռնեց դեպի Սիրիա՝ նահանգապետ Մուսլիխային, ով ապագա խալիֆն էր և որը մեծ պատվով ընդունեց Թեոդորոսին... Հստ Մերետսի, Բամայիլի տիրակալն ասել է. «Մա կլինի ձեր ու իմ միջև կնքված խաղաղության պայմանագիրը, քանի տարով ուզում եք...»: Ինչպես տեսնում ենք, խելացի հրամանատարը գիտեր և կռվել, և թանակցել:

Հարկերը, որոնք գանձվել են «երեք տարի անց» Հայաստանի և, հավանաբար, նաև Քարթլիի ու Ալբանիայի բնակչությանից, գրանցված են Սամուել Անեցու տարեգրության մեջ (XII դ.). Խալիֆը խլեց «չորս դրամ, յուրաքանչյուր ծխից երեք մողիս (այսօրերին. 29.376 կգ) հատիկ, մեկ ձիապարկ, մեկ բրդյա պարան և մեկ ձեռնոց. Քահանաներից, ազատներից և ձիավորներից (մամիկլեներից) հարկեր չեն վերցվել»: Թե ինչ կաներ Մուսլիխան մեկ ձեռնոցի հետ ձախ կամ աջ, հայտնի չէ: Բայց հարկերը տանելի էին:

Արաբների հետ այդ հաշտության պայմանագիրը կնքելուց հետո բյուզանդական զորքերն ստիպված էին լքել Հայաստանը: Հետև նրանք ուժ հավաքեցին և սկսեցին նոր պատերազմը արաբների դեմ: Ինչպես և որտեղ: Անշուշտ, այն տարածքում, որտեղ ապրում էին հայերը: Կայսրությունների միջև պատերազմներն առավել հաճախ տեղի էին ունենում Հայաստանի տարածքում, որից հետո վերջինս մասնատվում էր հաղթողի և պարտվողի միջև: 652թ աշնանը կայսր Կոստանդին II-ը 100 հազարանոց զորքի զլխավորությամբ ժամանեց Հայաստան և մնաց Մեծ Հայքի կենտրոնում՝ Կարինում (Էրզրում): Հայաստանի արևմտյան և հյուսիսային շրջանների բոլոր այն նախարարները, ովքեր դժգոհ էին արաբների հետ մերձեցման քաղաքականությունից, եկան կայսրի մոտ՝ իրենց հնազանդությունը հայտնելու:

Կարինում կայսրը և նախարարները հայտարարեցին, թե Թեոդորոս Ռշտունին տապալված է և նույնիսկ նոր պաշտոն-

յալի ուղարկեցին՝ 40 հոգու ուղեկցությամբ, որպեսզի Թեոդորոսն իր լիազորությունները փոխանցի նրան: Սակայն Թեոդորոս Ռշտունին շարունակում էր իրեն չհամարել կայսրի վասալ և ոչ միայն հրաժարվեց հնազանդվել, այլև հրամայեց բռնել Եկաններին. նրանցից մի քանիսին բանտարկել տվեց Բալեշի (Բլիթիա) միջնաբերդում, իսկ մյուսներին ուղարկեց Վանա լճի կղզիներ համարելով արտո: Բայ ինքը իր փեսա Համագասպ Մամիկոնյանի հետ ամրապնդվեց հայրենի կալվածքում՝ Աղթամար կղզում:

Ինչպե՞ս է անհրաժեշտ լինել անկախ պետություն: Առաջին հերթին՝ որպեսզի ավելի ուժեղ հարևան պետության կայսրը չուղարկի մի եղբոր բանակը մյուս եղբոր՝ իր վասալի դեմ, որը համաձայն չէ արքայի ընտրության հետ: Հակայական գործով կայսրը հասավ Դվին մայրաքաղաք, մնաց հայրապետական պալատում, Մուշեղ Մամիկոնյանին նշանակեց Հայաստանի սպարապետ և երեք հազար բանակով ուղարկեց Վասպուրական ընդդեմ Թեոդորոս Ռշտունու: Այլ ջոկատներ ուղարկվեցին Քարթլի, Ալբանիա և Մյունիք՝ տեղական կառավարիչներին ստիպելու խզել դաշինքը Թեոդորոսի հետ: Այնուամենայնիվ, դաշնակիցները հավատարիմ մնացին Թեոդորոսին և նախարարներին տված իրենց խոսքին, այնպես որ բյուզանդական զորքերը թալանեցին այս երկրներում՝ ինչքան կարողացան, և վերադարձան կայսրի մոտ: Կոնստանդինը ձմեռն անցկացրեց Դվինում, որտեղ կարողացավ հասնել եկեղեցական միության ունիյա համաձայնությանը: Ներսես III կաթողիկոսն ստիպված ներթափվեց, և Դվինում, ատամները սեղմած, կամա թե ակամա, պատարագը կատարեցին քաղկեդոնական ծեսի համաձայն...

Արաբները, որպես օգնություն, յոթիսուներեք հազարանոց բանակ ուղարկեցին Թեոդորոսին, որոնք նա տեղադրեց Ալիուլիտում և Բզունիքում: Թեոդորոս Ռշտունին բյուզանդական զորքերը փտարեց իրենց հողերից, անցավ Պոնտական լեռնաշղթան,

գրավեց Տրապիզոնը, և այնտեղից ավար ու շատ գերիներ վերցրեց: Ազատվելով բյուզանդացիներից՝ Թեոդորոս Ռշտունին մեծ նվերներով մեկնեց Դամասկոս՝ Մուսավիայի մոտ: Փայլուն հաղթանակի համար նա նշանակվեց ամբողջ Անդրկովկասի և Հայաստանի կառավարիչ: Մուսավիան նրան նվիրեց Հայաստանի պետական դրոշմ: Հստ պատմաբան Սեբեոսի՝ Մուսավիան Թեոդորոս Ռշտունուն հանձնեց *«Հայաստանը, Իվերիան (Քարթլի), Ալբանիան և Մյունիքը կառավարելու, Կովկասին ու Չորայի դարպասներին (Ղերբեստ) վերանսկելու իրավունքը»*:

Իսկ Հայաստանն իր նախարարներով, փաստորեն, բաժանվեց երկու վասալ մասերի. բյուզանդական մաս՝ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, և արաբական՝ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ:

Բայց իսմայիլիներ... Մի քիչ առաջ ընկնեմ... Նրանք պայմանագիր հարգել չուենն. *«Նրանք այնպիսինք չեն, որ հավատարիմ մնան որևէ պայմանավորվածության: Մեկ այլ խալիֆ՝ Ալին, տարիներ անց իշխանության գալով չճանաչեց 652 թ պայմանագիրը, բանակ ուղարկեց Հայաստան, գրավեց ամբողջ երկիրը: Հայաստանի մայրաքաղաք Դվինի բնակիչները ենթարկվեցին արաբներին և կնքեցին խաղաղության մի նոր պայմանագիր, որի տեքստը պահպանեց արաբ պատմաբան Բելազոսին. «Աստծո անունով... այս նամակը տրվեց ... Դեբիլ (Դվին քաղաքի արաբական անունը Դեբիլ է) քաղաքի քրիստոնյաներին, նրա մոզերին ու հրեաներին, և՛ ներկաներին, և՛ բացականերին, առ այն, որ նա երաշխավորում էմ ձեր անձի ու ունեցվածքի, ձեր եկեղեցիների ու սոսձարների և ձեր քաղաքի պարսպի անվտանգությունը: Դուք սպասե՛ք էք, և մենք կպարտավորվենք կատարել ձեզ հետ կնքված պայմանագիրը, քանի դեռ դուք ինքներդ կկատարեք այն և ամենահուսալի երաշխիքը կդարձնեք ջիզաստ և խաբթ, որն Աստծո երաշխիքն է»*: Գրավելով երկիրը, արաբները նախարարներին ենթարկեցին իրենց իշխանությանը և *«պատանդ վերցրին երկրի գլխավոր ազնվա-*

*կաններին ու նրանց շատ կանանց, որդիներին ու դուստրերին՝ ընդհանուր 1797 մարդ»*: Նրանց թվում էր նաև Թեոդորոս Ռշտունին...

Թեոդորոսը, հիարկել, իր պաշտոնը բյուզանդական բանակում կորցրեց, բայց մոտ վեց տարի արաբական ռազմական ջոկատի օգնությամբ մնաց Արևելյան Հայաստանում: Դե, իսմայիլականներն էլ ինչպես և սպասվում էր, աստիճանաբար սկսեցին իրենց ցանկությունը ցուցադրել՝ տարածել սեփական հավատքը: Դրանից հետո նախարարների մեծ մասը դարձավ դեպի քաղկեդոնականները՝ չցանկանալով ապագայում իսլամ ընդունել: Ավելի լավ էր Քրիստոսի էության մեջ փոքր-ինչ անհամապատասխանություն լիներ, թեկուզ անհասկանալի, քան այդ ասելի թլպատուրը... Հնարավոր է, որ Թեոդորոսը վնաս պրծո՞՞ց՝ ստիպված կանչելով արաբ 7000-անոց հեծելազորը, ինչից օգտվեցին արաբները: Ի վերջո, միշտ այդպես է լինում, երբ օտարերկրյա պետությանը ռազմական օգնության ես կանչում և նրա գործը բերում ու պահում քթիդ տակ: Արաբները գիշատիչ արշավանք կատարեցին դեպի Կարին (Ֆեոդոսիոպոլիս), իսկ հետագայում՝ ամբողջ Հայաստանի տարածքով դեպի Դվին: Թեոդորոսին այլևս ոչ մի ճանապարհ չմնաց, և նա արաբների հետ կամավոր հեռացավ Սիրիա ու շուտով մահացավ Դամասկոսում: Նրա մահից հետո արևելյան նահանգների հայ ազնվականությունը հրաժարվեց իսլամի ֆայության հետ դաշինքից և անցավ Բյուզանդական կայսրության կողմը: Թեոդորոս Ռշտունու աճյունը հասցվեց հայրենիք և թաղվեց իր նախնիների գերեզմանոցում:

Իսկ Ներսես կաթողիկոսը, որին ձգում էին քաղկեդոնական հույները (նա այնտեղ էր սովորել), դեմ դուրս եկավ «արաբական կուսակցությանը» և, վախենալով Թեոդորոսի վիեժխնդրությունից, փակվեց Տայքում՝ իր Իշխան գյուղում: Սակայն Թեոդորոսի մահից հետո նույն Ներսեսը հասկացավ Հայաստանի անկախության ու կրոնի արժեքը և շրջվեց հույսե-

րից: Ներսեսի մահից հետո նախարարների միջև պատակուման պատճառով հունահայերը ջախջախեցին արաբներին, իսկ արաբներն իրենց գցեցին Հայաստան արյան մեջ խեղդելու նպատակով: Սահակ Ձորպիտրցի կաթողիկոսը մի զարմանալի, ազնվականությամբ լի ետևակ է գրում՝ այնքան խելամուտ ու իմաստալից, որ խալիֆը չէր կարող չզնահատել նրա իմաստությունը:

Նա խնդրում էր գահին բերել Գրիգոր Մամիկոնյանին՝ կատարելով հոգևոր առաջնորդի վերջին պատգամը: Եվ արաբները Գրիգորին պատվով ուղարկում են Հայաստան որպես մարզպետ: Հաջորդ կաթողիկոսները շարունակեցին Թեոդորոս Ռշտունու գիծը՝ պահպանելով հավասարակշռությունը երկու ուժեղ տերությունների միջև:

Թեոդորոսի վտարվելուց հետո տոհմի կարևորությունը գնալով պակասեց, դարձան ազդեցիկ Արծրունիների վասալ, իսկ Բզնունիքի ժառանգական հողերը փոխանցվեցին Մամիկոնյան իշխաններին: Վարդ Պատրիկ Ռշտունին ցելոյ վերջին ուշագրավ ներկայացուցիչն է, որ հիշատակվել է 705 թվականին:

Նախարար Ռշտունու տոհմի գինանշանի պատկերը չի պահպանվել: Իսկ պատմական գրառումներում նրա խորհրդանիշն ստացել է մակերեսային նկարագրություն: Բայց քանի որ ազնվական ընտանիքը գինանշանի իրավունք ունի, 2014-ին իշխաններ Ռուդոլֆ Արդությանն ու Վրեժ Աթաբեկյանը նախաձեռնեցին այն վերստեղծելու նախագիծ և Հեկրիկ Պարսամյանի ներդրման շնորհիվ ձեռք բերեցին դրանց գրաֆիկական դիզայնը: Մովսես Խորենացու և այլ պատմաբանների պատմական գրառումներում Ռշտունիների տոհմը նշվում է որպես իշխանական տուն կամ տոհմ: Հայ ազնվականության իշխանական տոհմերի նույր ու հասարակ պատկերը պատրաստված էին արծաթից կամ ոսկուց՝ առանց խաչի:

Պաշտպանական աշտարակի կարմիր ֆոնի վրա ցուլը մարմնավորում է Ռշտունիների տոհմի հնագույն ծագումն ու ինքնանուսական հավատալիքները: Աշտարակը խորհրդանշում է Ռշտունիների տոհմի դոյակներն ու ամրոցները, որոնք պատմականորեն տեղակայված են Ռշտունիք նահանգում, հիմնականում Ռստան քաղաքում և Աղթամար կղզում՝ Վանա լճից հարավ: Մրածայր ոսկե խայր՝ ոսկե շրջանակով մուգ կապույտ ֆոնի վրա, դրոշմվում էր դեռ Մասսանյանների իշխանության տակ գտնվող մարզպանական Հայաստանի դրոշի վրա, որի ընթացքում Ռշտունիների տոհմը հասել էր իր իշխանական դիրքի բարձունքներին, երբ իշխան Թեոդորոս Ռշտունին արժանացել էր Մարզպանի և Հայաստանի իշխանի տիտղոսներին:

Ռշտունիաց տոհմի պատմության մանրամասները, որոնք շատ գեղարվեստորեն պատկերում են իշխանի կերպարը, նկարագրում է Սերբոս եպիսկոպոսը՝ գրելով Թեոդորոս Ռշտունու և նրա ժամանակների մասին.

*«Երկրի ավերումը մեծ էր: Մի կողմից՝ արաբները, մյուս կողմից՝ բյուզանդացիները, իսկ երրորդ կողմից՝ միսյանց դեմ կողոպ իսկ իշխանները թալանում ու ավերում էին երկիրը: Յուրտ, ձյունոտ ձմեռ էր: Արաբները, չչինականալով այս ցրտահարություններին, նահանջում են դեպի Սիրիա: Եվ Հայաստանի իշխանները բյուզանդացիների ու արաբների կողմից, Համագասպը, Մուշեղը և բոլոր մյուսները միասին հավաքվեցին ու հաշտություն կերեցին միմյանց հետ, որպեսզի թուրք այլևս չբարձրացնեն, և նրանց մեջ արյուն չթափվի: Նրանք ձևեղային ժամանակն անցկացրին խաղաղության մեջ, որպեսզի շինականները (գյուղացիները) մի քիչ շուտ ասենն»:*

Ահա թե ինչպես էին հայ իշխանները խնամում իրենց գյուղացիներին: «Քանի որ Ռշտունիքի տիրակալը ծանր հիվանդությամբ գնաց Աղթամար կղզի և այլևս ուժ չունեի դուրս գալու այնտեղից կամ ինչ-որ բան ձեռնարկելու, իշխանները



բաժանեցին երկիրը ըստ ձիավորների թվի և մարսավորներ նշանակեցին ոսկով ու արծաթով:

Բայց աղետները վերջ և չափ չունեին: «Այդ ժամանակ սարսափելի աղետ սկսվեց, – շարունակում է պատմաբանը, – մարդիկ նման են հիվանդների, երբ ցավերն ուժեղանում և լեզուները թմրում են: Նրանք փախչելու տեղ չունեին մարսավորներից, նրանք գթություն չունեին ներքին արաբներից (հայ իշխաններից), նրանք նմանվեցին փախչելու հնարավորություն չունեցող ծովն ընկած մարդկանց:

– Վա յ ռամիկին, ո՛վ պետք է փրկեր նրան:

Լսելով այս մասին, Ռշտունիքի տիրակալն արաբներից զորք խնդրեց, որպեսզի ջախջախեն և ցրեն իշխանների հավարտը այս հայերին ու սրով ոչնչացնեն իբրևիացիներին: Դա Թեոդորոս Ռշտունին էր իր ժամանակի ամենաակնառու, համարձակ ու իմաստուն իշխանը, Վարագտիրոց ա սպետ Մմբատ Բագրատունու որդու կրթության տարիների ընկերը, ում հետ նա մեծացավ և դատախարակվեց Պարսկաստանի թագավոր Խոսրովի արքունիքում:

Վարագտիրոցի որդը նա արդեն ազդեցիկ անձնավորություն էր ամբողջ երկրով մեկ: Արաբների՝ Հայաստան մտնելուց անմիջապես առաջ հայերը վտարեցին իրենց հրամանատար Դավիթ Սահառունուն, և «բոլոր ազատները չկարողացան միավորվել, – գրում է Մբեռսը, – և կործանվեց մեր հայկական երկիրը: Միայն Ռշտունիքի աստվածասեր և քաջ իշխան Թեոդորոսը իր երկրի զորքը կազմակերպեց և իր մեծ իմաստության շնորհիվ պահպանում էր երկիրը: Օրուգիշեր անընդհատ պահակ լինելով՝ մեծ վնաս էր պատճառում թշնամիներին: Բարելավելով Ախթամար կղզին՝ նա բնակեցրեց այնտեղ բնակիչներին և փրկեց շատ ջրբաններ»:

Այս նախապատրաստության արդյունքն այն էր, որ եթե արաբները ձեռնամուխ լինեին հույների կողմից անպաշտպան Հայաստանի վրա հարձակվելուն և թալանին, միայն Թեոդորո-

սը կկարողանար կանխել թշնամու ներխուժումը: Ուստի բյուզանդական կայսրը նրան նշանակում է որպես Հայաստանի գորավար, բարձրացնում պատրիկի աստիճանի: Եվ Թեոդորոսը դառնում է հայոց երկրի տիրակալ:

Հետագայում, չնայած տեղական հույների ամեն տեսակ խոչընդոտներին, նա շարունակում է մնալ Հայաստանի միակ տիրակալը և արաբներին բազմակի պարտություններ հասցնելով՝ ազատում շատ գերիների և հետ վերադարձնում ավարը:

Թեոդորոսը տեսնում է, որ Կոնստանդնուպոլսում շարունակվում են անկարգությունները, որ հույները մեր երկիրը թողնում են անպաշտպան և հետապնդում հայերին ու Հայկական կեղեցուն, և որ Մասսանյան պետությունն ընկնում է արաբների անընդհատ աճող հզոր իշխանության տակ: Այդ պահին, երբ արաբները կրկին հարձակվում են Հայաստանի վրա, նա միավորում է բոլոր հայ իշխաններին և 652 թվականին շատ թարեևպաստ պայմաններով խաղաղության պայմանագիր կիրում իսաիֆ Մուավիայի հետ: Այս համաձայնագրով Հայաստանը պահպանում է անկախությունը, և նախարարներ ձեռք են բերում մեծ արտոնություններ:

Եկեք մեջբերենք այս համաձայնագիրը. «Քամայիլների տերը նրանց ասաց. «Մա կլինի իմ և ձեր միջև խաղաղության համաձայնագիր. քանի տարով ուզում եք: Երեք տարի տուրք չեմ վերցնի, և այս ժամանակահատվածից հետո կվճարեք այնքան, որքան ցանկանում եք, այս մասին ես երդվում եմ ձեզ: Ձեր երկրում պահեք 15,000 հեծելազոր: Թող նրանց հացը բերեն ձեր երկրից, և ես դա կհաշվեմ որպես տուրք: Ես ձեր հեծելազորը չեմ կանչի Միդիա, քայց այլ տեղեր, որտեղ էլ որ պահանջեմ, նրանք պետք է պատրաստ լինեն երթին: Ես ձեր ամրոցներին նիրներ չեմ ուղարկի, ո՛չ արաբական բանակ, ո՛չ մի ձիավոր: Ըլ մի թշնամի Հայաստան չի մտնի: Եթե հռոմեացիները հարձակվեն ձեզ վրա, ապա ես ձեր զորքը կուղարկեմ ձեզ օգնութ-

յան, ինչպես ցանկանում էք: Երդվում եմ ամենագոր Աստծով, որ չեմ խաբի ձեզ:

Հույները զայրացան: Կոնստանդին կայսրը հարյուր հազարանոց զորքով շարժվեց՝ պատժելու Թեոդորոսին և հայ իշխաններին: Վերջիններս հեռագանդվեցին նրան: Մուշեղ Մամիկոնյանը նշանակվեց հրամանատար՝ «հեծելագործի իշխան»: Ներսես կաթողիկոսը և Եպիսկոպոսները, ինչպես վերը նշեցինք, ստիպված էին ճանաչել քաղկեդոնական ժողովը: Այնուամենայնիվ, Թեոդորոսը և նրա փեսաները շարունակում են հավատարիմ մնալ որոշմանը: Նա և իր փեսան Համագասպ Մամիկոնյանը, ամրացվեցին կղզում, իսկ նրա մյուս փեսան Գրիգորը, հոր Թեոդորոս Կաղևուռու հետ, Արփա ամրոցում: Կայսրը ոչինչ չէր կարող անել: Նա միայն բորբոքեց կրոնական վեճը, անեծքներով հայտյեց Թեոդորոս Ռշտունուն և վերադարձավ իր երկիր: 653 թվին Թեոդորոսը արաբների օգնությամբ հույներին վտարեց երկրից, իսկ հետո, մեկնելով Դամասկոս Մուսլիայի մոտ, նշանակվեց Հայաստանի, Վրաստանի, Ադվանքի և Կովկասի լեռնաշղթայի բոլոր հողերի կառավարիչ:

Ժողովրդի այս բարեկամն ու պաշտպանը, համարձակ և իմաստուն մարդը, բնականաբար մեծ ժողովրդականություն էր վայելում: Նրա մասին հիշողությունը պահպանվել է այն լեզուններում, որոնք թափանցել են «Մասնա ծոեր» ժողովրդական էպոս և մնում է մինչ օրս Քեռի Թորոսի կամ Թնաթորոսի կերպարում:

Դավիթ Առյուծը ուներ մեկ քեռի,

Ամպրոպի հսկա, և կոչվում էր Թորոս:

Հսկան իմացավ Մասունի ճակատամարտի մասին:

Նա բարդին դրեց իր ուսին և տարավ այն,

Հեռավոր բլուրներից նա աղաղակում է թշնամիներին.

– Դուք մեկից ավելի գլուխ ունե ք:

Դուք ինչպիսի՞ մարդիկ եք: Կամ ո՞վ է նա, որ

Մասունցի Դավթին չգիտի:

Քեզ անհա յոս է, որ նրա ձին թևավոր է:

Նա կհայտնվի իր հետ և կսկսի պարել:

Հեռացիր, մի դիպչիր Մասունին,

Ես եկել եմ Մայրանը մարբելու ձեզանից:

Միջնադարում Մամիկոնյանների ընտանիքը մի շարք հողատարածքներ էր ձեռք բերել հյուսիսային Հայաստանում, մասնավորապես Այրարատում գտնվող Ուրցազևտի հովիտը և Գուգարքը (Լոռի, Դսեղ): Դսեղում իշխող իշխան Թուման Մամիկոնյանից եկավ Թումանյանների ընտանիքը: Այս տոհմի մի ճյուղը ծառայության անցավ վրացական դատարանում և համրավ ձեռք բերեց որպես Թումանիշվիլի: Հայտնի հայ գրող Հովհաննես Թումանյանը և պատմաբան Կիրիլ Թումանովը նույն ընտանիքից են:

Ու հենց Կիրիլ Թումանովի և ամենից շատ ուսումնասիրել Ռշտունիների տոհմի պատմությունը: Մերենցի մոտ կարդում ենք. «Գարնանային գեղեցիկ օրերին Ռշտունիքի ոստանը երկու հարսանիք էր նշում՝ փեսա Գրիգոր Մամիկոնյանը՝ Ռշտունու դստեր հետ, և Վարդ Պատրիկ Ռշտունին՝ Մյուկյաց աղջկա հետ: Թվում է, թե Վասպուրականն ու ամբողջ Հայաստանը երջանիկ օրվա լուսաբաց տեսան, քանի որ հայ նախարարների միջև միասնություն էր տիրում, և հավատում էին, որ չկա թշնամի, որը կհամարձակվի ոտնահարել հայոց հայրենիքը»:

Հստ Կիրիլ Թումանովի և ամուսնացել է Թեոդորոս Ռևստունու դստեր հետ, որը նրան երեք երեխա է պարգևել. «Մուշեղ Մամիկոնյան IV, ասպարապետ, հետագա հայ Մամիկոնյանների նախահայր Արտավազեսը, հավանաբար, Մամիկոնյան բյուզանդական ճյուղի նախահայրն էր, որից ստացաքցավ Մակեդոնիայի տոհմը»: Այլ տեղ չի հաստատվում, ընդհակառակը, շատ աղյուսներում Մակեդոնական տոհմի կիսնաղիքը ձխապան էր:

Մեկ այլ հեղինակի մոտ կարդում ենք.

*«Թեոդոր Ռշտունին ուներ առնվազն հինգ երեխա.*

*Վարդաս Ռշտունին,*

*Վարդանես Ռշտունին,*

*Որդին (անունն անհայտ է), որը պատանդ է եղել արաբների մոտ (Մուսավիա), ենթադրաբար մինչ 753 թվականը,*

*Դուստրը (անունն անհայտ է), ամուսնացած է եղել Համազասպ IV- ի հետ.*

*Մյուս դուստրը (անունն անհայտ է), ամուսնացած է եղել Գրիգոր Վանունու հետ».*

Իսկ կեղծ Շապուհն ավելացնում է. *«Այս լեգենդներից առաջինը պատմում է Թեոդորոս Ռշտունու և նրա որդու Վարդ Պատրիկի մասին: Վերջինս ապրել է 80 տարի: Նրա որդին՝ Մուշեղը, ասում է առասպելը. «Իր հորը չէր հիշեցնում: Եվ վեճեր առաջացան Հայաստանում, որովհետև նրանք չէին ուզում Մանայի տոհմի (Մանայիխրա Ռշտունի) իշխանությունը և բաժանեցին հայկական երկիրը Բագրատունու և Արծրունու միջև ու վերջինս հայկական երկիրը. Բագրատունիների տոհմը հյուսիսային կողմը և Վասպուրականի կողմը Արծրունիների տոհմը»: Շատ հախարարներ ոչնչացվեցին, հասուկապես Ռշտունի և Արծրունի տոհմերից: Նրանք սպանեցին Մեհենդակ Ռշտունու որդուն՝ Տաճատին: 656 թվականին Թեոդորոս Ռշտունին այլև չկար: Որդին՝ Վարդը, Հունաստանի կայսրից, որը մեծապես բարձրացրեց Վարդ Ռշտունուն, հույն խնամունքից առավել Հայրապետի կոչում ստացավ:*

Վարդը Ռշտունիների տոհմից վերջինն էր, որ հիշատակվում է, նա որոշ ժամանակ հայկական հեծելազորի առաջնորդ էր: Շատ հայ գրողների վկայությամբ «խալիֆաների արքունիքում հայ պատանդների թիվը կազմում էր ավելի քան 1700 մարդ՝ երկու սեռերից, բոլորը ազնվական ծագմամբ»: «Եվ դրանից հետո պատերազմ սկսվեց պարսկական երկրի ու հռոմեական երկրի միջև: Վարդ Պատրիկը ղեկավարում ուղարկեց Պարս-

կաստանի թագավորին, դաշինքի մեջ մտավ նրա հետ, և նրանք հավատարմության երդում տվեցին միմյանց: Հետո պարսից արքա Ռուֆիզի որդին՝ Սահակը, մեծ զորք հավաքեց, հասավ հռոմեացիների երկիր և ավերեց Թեոդոպոլիսը, այսինքն՝ Գարին քաղաքը, Դերջանը, հասավ Գաղութ և ճամբարեց գետի ափին: Եվ Վարդ Պատրիկը մի մարդ ուղարկեց Ռուֆիզի որդի Սահակի մոտ՝ ասելով. *«Այստեղ «պարսիկ և խամախներ» նույնազգված են, փաստորեն արաբներն են»:*

*«Ես կցնամ և կերբեմ հռոմեացիների թագավորին, նրանց կճամբարեմ գետի ափին և կիրամայեմ կամուրջ կառուցել, բոլոր զինվորականներին կտեղափոխեմ այս ափ և կխնդրեմ պահակ կանգնել կամրջի վրայով անցմանը: Երբ նրանք անցնեն գետի ափը, դուք ձև արեք, իբր փախչում եք. նրանք փտանորեն կհետեն ձեզ, դուք դարանակալ կկանգնեք ու կհարձակվեք նրանց վրա, այդ ժամանակ ես կձգեմ կամրջի պարանները, և դուք արդեն հանգիստ կխփեք նրանց»:* Վարդ Պատրիկը գնաց հռոմեացիների արքայի մոտ և ասաց. *«Գամուրջ կառուցիր Գայր գետի ջրերի վրա և զինվորներին առաջնորդիր դեպի այն կողմը, և թող քո ժողովրդի ընտրյալները պահակ կանգնեն, որպեսզի եթե պարսիկները ջախջախեն նրանց և փախուստի մատենեն, նրանք կամուրջը պատրաստ կգտնեն և գետի այս ափ անցած կլինեն»:* Եվ Կոնստանդին ցարն արեց ամեն ինչ, ինչպես ասաց նրան Վարդ Պատրիկը, ու երեք խավար (30,000) մարդ տեղափոխեց գետի մյուս կողմը: Վարդ Պատրիկին էլ ասաց. *«Ռոք պահպանեք կամրջի պարանները»:* Այդ ընթացքում պարսից զորքերը փախչում են նրանց արջին և շատ տեղերում դարանակալում, այնտեղից հարձակվում հռոմեական զորքերի վրա և ջախջախում:

Նրանք սկսեցին փախչել, որպեսզի անցնեն կամուրջը: Բայց Վարդը, որը պահպանում էր կամուրջը, բաշեց, կտրեց պարանները և կամուրջն ընկավ, իսկ ինքն անցավ պարսիկների մոտ: Հռոմեացի զորքերից շատերը գոհվեցին այդ օրը, իսկ

պարսկական գորքերը մեծ հաղթանակով վերադարձան, և նրանց հետ՝ Վարդ Պատրիկը: Նա վերադարձավ Վասպուրական երկիր և մտավ Ռշտունի ծովի մոտ գտնվող իր պալատը, որը կոչվում է Մահարեք»: Լեզեղ է դա, թե իրականություն, բայց դավաճանության մեղքի գիտակցումը տանջում էր Վարդ Պատրիկին: Նա գնաց եպիսկոպոսի մոտ, պատմեց իր տանջանքների մասին, եպիսկոպոսն ուղարկեց ճգնափոխի մոտ, «... և Վարդ Պատրիկին ասում է ճգնափոխ Միմենը՝ Դուք ունեք շատ գանձեր, կառուցեք այնքան եկեղեցի, որքան ցանկանում եք, որպեսզի դրանք ծառայեն ձեր մեղքերի ներման համար, և այդ ծամանակ կազատվեք ձեր թափած՝ անմեղ մարդկանց այդ անչափեյի այրյան քանակից»: Պատրիկը պատասխանում է. «Ես շատ եկեղեցիներ կկառուցեմ»: Հաշվեց բերդերն ու ցուղերը, և ստացվեց հազար բնակեցված վայր, և նա սկիզբ դրեց եկեղեցիների հիմնադրմանը: Հետո նա գանձերը բաժանեց աղքատներին և քանի դեռ կենդանի էր, իր հազուադեպ տակ միևս արմուկները հասնող մի փոքր բուրձ էր հագնում և մինչև մահը ոչ ոք չգիտեր այդ մասին»:

Բայ ահա թե ինչ է գրում այն շրջանի մասին առաջնային աղբյուրներից մեկը՝ գրող Ղևոնդ վարդապետը. «Ռշտունիների տոհմի Թեոդորոսը, իմանալով կատարվածի մասին, զգուշացրեց հրամանատար Պրոկոպիոսին, որ Իսմայիլի գիշատիչ բանակը, որ սորի է կանգնել, գալիս է մեր դեմ: Բայց նա այդամարհեց հայ իշխանի խոսքերը և գայրացած նետեց նրան ձեռքում եղած գավազանը... Թեոդորոսը դուրս եկավ և, հեռանալով նրանից, իսկույն հրամայեց իրեն ենթակա զորքերին. «Չինվմք և գնացեք Իսմայիլի դեմ»: Նրանք հեռացան հույն դեկավարից և գնացին Գառնիի շրջան: Երեք տարի նրանք չէին հարձակվել Հայաստանի վրա, բայց կրկին պատրաստվում էին ուժեղ բանակով հարձակվել:

Կոստանդինի թագավորության երկրորդ տարում Հուսաստանի կայսրը իշխան Թեոդորոսից տեղեկացավ, որ օտա-

րերկրացիները գալիս են մեր երկիր: Հետո բանակ հավաքելով՝ ևս ցանկացավ գրավել անցքերը կիրճերում, բայց չկարողացավ կտրել նրանց ճանապարհները, որովհետև թշնամիները թևավոր օձերի արագությամբ, քամու սրընթացությամբ գերազանցում էին նրան: Եվ թողնելով հայկական գորքերը, նետովեցին դեպի Դվին մայրաքաղաքը: Քանի որ մարդիկ, որոնք ունակ էին գնեք կրել, լքել էին քաղաքը և բոլորը գնացել էին իշխան Թեոդորոսի մոտ, այնտեղ գտան միայն կանանց, երեխաներին և հասարակ մարդկանց, որոնք ունակ չէին պատերազմելու: Օգտվելով դրանից, նրանք հարձակվեցին քաղաքի վրա, անմիջապես տիրացան բերդին, այնտեղ գտնվող տղամարդկանց մորթեցին, իսկ նրանց կանանց և երեխաներին, 30.000 գերի վերցրին: Բայց ո՞վ կարող է պատշաճ կերպով նկարագրել աղետի սարսափը: Վտանգն անխուսափելի էր բոլոր կողմերից: Մուրք եկեղեցիները, որոնց մեջ հեթանոսներն արժանի չէին մուտք գործել, ոչնչացվեցին և պղծվեցին ամբարիշտների ոտքերի տակ:

Մարկավագների հետ միասին քահանաներն սպանվեցին չար և անօրեն թշնամիների սրով: Ազնվական կանանցից շատերը, դաստիարակված երանության մեջ, խոշտանգվեցին. հարվածելով, թքելով նրանց տարան հրապարակ: Այնտեղ նրանք բարձրացրին իրենց լացն ու հառաչանքը՝ անիծելով անսպասելի ճակատագիրը: Ռավմագերիների բազմությունը, բռնված իրենց որդիների և դուստրերի հետ, արտասվելով ու հեկեկանքով լաց էր լինում և չգիտեին, թե ում սգան ավելի շատ նրա նց, ովքեր ընկել էին ամբարիշտի սրից, թե՛ կենդանի դուստրերին ու որդիներին, որոնք դատապարտված էին հավատաբոխի լինելու՝ Քրիստոսից օտարացվելու և աստվածային հարմարավետությունից զրկվելու: Շատերը սգում էին մահացածներին, որ հավաքված էին հսկայական կույտերի մեջ և արյան մեջ լողում էին, բայց ի վիճակի չէին նրանց վերցնել ու թաղել:

Բայց ամենատես Աստվածը վրիժառու ուղարկեց կատարված վայրագությունների համար: Իշխան Թեոդորոսը, թևավորների արագությամբ, ինչպես արագաթռիչ արծիվ, 600 զինված ձիավորներով անապատելիորեն հարձակվեց զիշատիչների վրա: Մոտ 3000 մարդ սպանելով՝ նա ազատեց շրջաններով գերիներին: Թշնամիների մնացած մասը փախուստի դիմեց: Գերիներին վերադարձնելով և թշնամու ավարն ու ունեցվածքը հավաքելով՝ իշխանն ուրախությամբ վերադարձավ փառաբանելով Աստծուն, որ վրեժ լուծեց նրանց թշնամիներից:

Նրանցից հետո թագավորում է Մուավիան: «Նուաիֆն սկսեց բանակ հավաքել Հայաստանում: Կոստանդին կայսրն իշխանությունից զրկեց Թեոդորոս իշխանին՝ Պրոկոպիոսի դեմ իր խորամանկության համար: Նրա փոխարեն նշանակեց Բագրատունի տոհմից Սմբատին և ուղարկեց իր հրամանատարի հետ միասին: Նա նախկինում առաջնորդ Թեոդորոս Ռշտունուն գրեց: «Ռուրս եկեք մեզ հետ պատերազմելու ձեր հրամանատարության տակ գտնվող զորքերի դեմ»:

Բայց նա չուզեց: Կայսրը սպառնաց. «Եթե դու մեզ հետ չմեկնես զիշատիչների դեմ պատերազմելու, ապա վերադարձից հետո մենք քո ընտանիքը կվտարենք մեր ժողովրդից և ցեղից»: Այս լուրջ սպառնալիքներից վախեցած Թեոդորոսն իր որդուն՝ Վարդին, ուղարկեց Սմբատ իշխանին ուղեկցելու հրաման տալով դավաճանություն գործադրել հույն ընկերների դեմ և միավորվել թշնամիների հետ: Վարդ Ռշտունին զնաց հույն հրամանատարի մոտ և խնդրեց իրեն նշանակել պոստոկամուրջների մուտքի պահապան: Մեծ շարաթ օրն էր: Կովի ընթացքում, երբ երկու կողմից էլ հարվածում էին, արաբական բանակը նորից սկսեց հաղթել, և հունական բանակը փախուստի դիմեց:

«Տեսնելով Իսմայիլի հաղթանակը՝ Թեոդորի որդին անցավ գետի մյուս ափը և կտրեց կամրջի պարանները, որպեսզի փախչողները չկարողանան փրկվել: Իսմայիլցիները շրջապա-

տեցին հունական բանակը, շատերին խեղդեցին գետում, մնացածը փրկվեցին՝ փախչելով հույների երկիր: Իսմայելցիների տիրակալը նամակ գրեց Հայաստանին. «Եթե ինձ չսպասարկեք և հարկեր չվճարեք, բոլորիդ թրի եմ դատապարտելու»: Ապա Ներսես քահանայապետ, եկեղեցաշինարար Սուրբ Գրիգորը, իշխաններն ու ազնվականները պայմանավորվեցին տուրք տալ իսմայելցիների բռնակալությանը, որոնք նրանցից պատանդներ էին պահանջում: Մեր երկու նախարարներին՝ Գրիգորին՝ Մամիկոնյան տնից և Բագրատունիների տոհմից Սմբատին, պատանդ վերցրին արաբների տիրակալ Մուավիայի մոտ, որը 500 ոսկեդրամ նվիրատվություն պարտադրեց Հայաստանին: Հայերն ստիպված էին տարևական վճարել այս հարկաբեքի տուրքը և առանց վախի մնալ իրենց տներում:

Իր տիրակալության երկրորդ տարում Մուավիան կանչում է թագավորական արքունիքի պատանդ հանդիսացող Գրիգորին և Սմբատին: Գրիգորին տալիս է Հայաստանի իշխանի տիտղոս և նրանց մեծ պատվով ուղարկում Հայաստան: Նրա թագավորության օրերին խաղաղ էր:

Ղվին քաղաքի հրամանատար Սմբատը համաձայնել էր տուրք տալ արաբներին՝ չունենալով դիմակայելու ուժ մուսուլմանական բանակին խալիֆ Օմարի հրամանատարությամբ»:

Արաբական իշխանության ճանաչումը Հայաստանի կողմից ծայրաստիճան գրգռեց բյուզանդացիներին: Կայսրը, այնուամենայնիվ, փորձեց իր քաղկեդոնական հավատքը պարտադրել Հայաստանին: Նա չկարողացավ հասնել իր նպատակին, բայց մուսուլմանների հարկերը չափազանց ծանր համարող բյուզանդացիները Համազասպ Մամիկոնյանի օգնությամբ, այնուամենայնիվ, վերականգնեցին իրենց անկախությունը Անդրկովկասում: Խալիֆը հրամայեց սպանել 1775 հայ պատանդների և քիչ էր մնում դուրս գար հայ ապստամբների դեմ, երբ ինքը սպանվեց 656 թվականին:

Հայաստանը մնաց արաբների տիրապետության տակ մոտ 200 տարի՝ պաշտոնապես 645 թվականից ի վեր: Հայ քրիստոնյաները վայելում էին քաղաքական ինքնավարություն և կրոնական հարաբերական ազատություն, բայց, այնուամենայնիվ, համարվում էին երկրորդ կարգի քաղաքացիներ: Այս ժամանակ Հայ եկեղեցին ավելի մեծ ճանաչում ուներ, քան Բյուզանդիայի և Մասանյանների տիրապետության տակ գտնվելու ժամանակ: Հայաստանի եմիրները և գավառների վալիև, որոնք երբեմն հայկական ծագում ունեին, նշանակվում էին խալիֆի կողմից: Օրինակ՝ առաջին նահանգապետը Թեոդորոս Ռշտունին էր: 15000 հոգանոց բանակի հրամանատարը միշտ հայ է եղել՝ Մամիկոնյան, Բագրատունի և Արծրունի տոհմներից: Նա պարտավոր էր երկիրը պաշտպանել գավթիչներից և օգնել խալիֆին իր ռազմական արշավներում: Օրինակ՝ հայերը խալիֆներին օգնում էին հետ մղել խազարների արշավանքները:

Հայաստանում արաբները ճնշեցին շատ ընդվզումներ: Նրանք տարածում էին իսլամը, ավելացրին հարկը (ջիզյա) հայ ժողովրդի համար: Արաբների դեմ ընդվզումները տեղական բնույթ էին կրում և նախարարների անմիաբանության պատճառով երբեք համահայկական չէին: Ապստամբությունները ճնշելու համար արաբները վարպետորեն կոիվներ էին հրահրում հայկական նախարարների միջև: Մամիկոնյան, Ռշտունի, Կամսարական և Գևունի տոհմերը հետզհետե թուլացան, իսկ Բագրատունին և Արծրունին ուժեղացան:

Շատ երկար դարեր հայ ազնվականության ետափորությունն ու անմիաբանությունը հանգեցրին նրան, որ պարզապես աշխատում էին ոչնչացնել նախարարներին և գլխատել ժողովրդին, որը նրանց ճանաչում էր որպես առաջնորդներ:

Այսպես, օրինակ, 705 թվականին արաբ կուսակալ Մուհամմեդ իբն-Մարվան որոշեց ոչնչացնել հայ ազնվականությանը: Նա մի քանի հարյուր հայ ազնվականի այրեց իրենց ընտանիքների հետ: Այս հիեշավոր վայրագությունը շատ իշխաններ

րի ստիպեց փախչել Վրաստան և Բյուզանդիա, որտեղ նրանց հաճախ սպասում էր գործունեության ավելի լայն դաշտ: Նախիջևանի սպանող հայ ժողովրդի առաջին քայլերից մեկն էր դեպի գողգոթա: Օսմանները 1915-ին նույնպես նախ ոչնչացրին հայկական էլիտան, ապա անցան մնացածներին: Ֆրանսիական զիտությունների ակադեմիայից մի այնպիսի զեկույց կար, *«որ բավական է միանգամից ոչնչացնել ազգի սերունդից մոտ հազար մարդու, և դա կարող է բացարձակապես անտողելի վնաս հասցնել ամբողջ մշակույթին, այս ազգի գոյությանը»*: Վ. Պաստուխով

Այժմ հաշվեք, թե քանի հարյուրամյակների ընթացքում են մեր ազգի ամենալավերին ոչնչացնում...

Օրագիրն արդեն կազմված էր ամբողջ ժողովրդի ոչնչացման կամ վտարման համար: Երիտթուրքերն ավարտեցին ծրագիրը նաև նման ծրագրի արդուևքում (իհարկե, և այլ կարևոր գործոնների): Բայց գլխավորն այն է, որ թշնամին նախ ոչնչացնում էր էլիտային այս կամ այն կերպով, օրինակ՝ կաշառելով: Մնացածները դառնում էին սովորական բանտարկյալներ և տարուկներ:

Կանանդայում Մմբառը իր բանակով պարտվեց հենց Մուհամմեդին: «Իմանալով Մմբատի հակադրվելու մասին, խալիֆը հրամայեց ոչնչացնել Հայաստանի խոշոր ֆեոդալներին: Մուհամմեդը վերադարձավ Դիլին և Նախիջևանում գտնվող իր գործավար Կասիմին հրամայեց հեծյալների հետ միասին հրավիրել Հայաստանի նախարարներին՝ աշխատավարձ տեսնելու ցուցակում ավելացնելու պատրվակով: Չենթայրելով խորամանկ ծուղակը, նախարարները խարվելով գնացին և գերեվարվեցին, ու նրանց բաժանեցին երկու մասի: Կես մասին հրամայվեց հավաքվել Նախիջևանի եկեղեցում, իսկ մյուսներին՝ մոտակա Տեմիլ ցուղի եկեղեցում: Միայն նշանավոր իշխաններին դուրս բերեցին, իսկ մնացածներին իրկիզեցին:

Իշխանները տանջվում էին անտանելի խոշտանգումներից. նրանցից պահանջում էին ոսկի և արծաթ՝ խոտանալով կենդանի թողնել: Այնուամենայնիվ, երբ նախարարները գրկվեցին իրենց բոլոր գանձերից, արաբները նրանց սպանեցին: «Այսպես կործանվեցին, – գրում է պատմաբանը, – Աշոտի որդի Սմբատը՝ Բագրատունիների տոհմից, Գրիգորն ու Կոբյունը՝ Արծրունի տոհմից, Կարազ-Շապուհը և նրա եղբայրը՝ Անատունիների տոհմից, և շատ ուրիշները ինքնիշխան իշխանների տոհմերից: Այս ոճրագործությունները, որոնց գոհերը մի քանի հարյուր ազնվականներ էին, հիշատակվում են ոչ միայն հայ, այլ նաև արաբ, բյուզանդացի և սիրիացի պատմաբանների կողմից: Այս ողբերգական իրադարձությունները հուսահատության հասցրին Սմբատ Բագրատունուն ու նրա համախոհներին, նրանք լքեցին Տայքը և հեռացան Հայաստանից»:

Այդպես էլ կռվում էին: Որոշ ժողովուրդների պատմությունը նրանց նվաճումների պատմությունն է, մինչդեռ հայ ժողովրդի պատմությունն անվերջ պատերազմներն են՝ հանուն անկախության, ճնշումների դեմ, իսկ պարտություններից հետո ժամանակավոր խնայություն... Եվ նոր պատերազմի երազանք՝ «այս անգամ կտասցվի» համոզմամբ:

Եվ շատ նախարարներ իրենց ընտանիքների ու աջակիցների հետ միասին ստիպված էին պատստան գտնել բյուզանդական երկրներում: Այդպիսի գանգվածային արտագաղթն ունեցավ շատ լուրջ հետևանքներ ոչ միայն այն պատճառով, որ մարդիկ կորցրին իրենց դեկավարներին ու պաշտպաններին, այլ նաև այն, որ լքված հողերն անմիջապես բնակեցվում էին մահմեդական փտարակիներով: Ահա այսպես մեր հողերում հայտնվեցին մի շարք արաբական Էմիրություններ, և դա խոչընդոտ հանդիսացավ օտար լծից ազատվելուց հետո երկրի միավորմանը:

*«Բյւզանական իշխանության տարիներին խալիֆայության այլ մասերից եկած արաբները հաստատվում էին Հայաստանում»:*

*տանում: 9-րդ դարում ստեղծվեց արաբական էմիրների դաս, որը քիչ թե շատ համարժեք էր հայկական նախարարներին»:*

Այո, ինչպես միշտ, իշխողն իր հետ բերում է նույնադավին: 11-րդ դարում, երբ Մենեքերիմ Արծրունի թագավորը Կասպուրականի թագավորությունը միացրեց Բյուզանդիային, Ռշտունի իշխաններն արքայական տան և այլ իշխանական ընտանիքների հետ ցրվեցին Ռշտունիքից, Վանից: Ոմանք տեղափոխվեցին Փոքր և IV Հայաստան, ոմանք՝ Պոլիս, ոմանք՝ Կապադոկիա, և, ընդհանրապես, ցրվեցին աշխարհով մեկ: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ Ռշտունի ազգանվան շատ տարբերակներ կան ( Ռշտունի, Ռեշտունի, Ռախտունի, Ռախտոնի և Ռաշտունի):

Ռշտունիքի պատմության մեջ նման գաղթեր բազմիցս են եղել: Բայց արդյո՞ք սա միայն մեկ հայկական շրջանի և մեկ նախարարական տոհմի պատմությունն է: Ո՞չ իհարկե...

Ռշտունիք, Վանա ծով... Հանգիստ, ջրեղ, շրջանակված ձևառատ լեռներով, որոնք պաշտպանում են աներևակայելի փիրուզագույն ջրի մակերևույթի անդորրը: Հայոց լեռնաշխարհի երեք մարգարիտները հայերը կոչում էին ծով. Մուսնա լիճը՝ Գեղարքունիկյաց ծով, Վանա լիճը՝ Ռշտունիյաց ծով, Ուրմիա լիճը՝ Կասպուտան ծով:

Ատրիիները հին ժամանակներում Վանա լիճն անվանում էին «Նաիրի երկրի ծով»: Շատ հին հեղինակներ օգտագործել են «Տոսպոլիս» անվանումը, որը վերաբերում է Արարատի (Վան) թագավորության մայրաքաղաքի (Ուրարտու) Տուշպա անվանը: Հայ միջնադարյան որոշ պատմաբաններ (Փավստոս Բյուզանդ, Մովսես Խորենացի) օգտագործում էին «Բզունի ծով» և «Ռշտունի ծով» անունները՝ կապված լճի տարածքում գտնվող հայերի իշխող Բզունի և Ռշտունի ընտանիքների անունների հետ: Վանա լճից ոչ հեռու կան Նազիկ (հյուսիս-արևմուտքում), Էրչեկ (արևելքում, ծովի մակարդակից 1890 մ բարձրության վրա) և Արին (հյուսիսում) լճերը:

Նախկինում Աղթամար կղզին շատ ավելի մեծ էր, բայց անցած դարերի ընթացքում չափը պակասել է կապված Վանա լճի մակարդակի բարձրացման հետ: Կղզին բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Այնտեղ կան կիկլոպյան ամրոցի պատի հետքեր (երկու-երեք շարքով), որոնք նախարարական, բնակավայրի մի մասն էին կազմում: Ըստ Մովսես Խորենացու կղզում IV դ. հայկական Ռշտունի նախարարական տոհմի ամրոցն էր: Հին ժամանակներում Աղթամար կղզին ծառայում էր որպես Ռշտունիքի գլխավոր հզոր պատվար: Մովսե ու բարձր ժայռոտ ափերն այն պաշտպանում էին թշնամու արշավանքներից: Կղզու առաջին ամրությունները կանգնեցրել է Ռշտունիների տոհմի նախնիներից մեկը՝ Ռաշամ Բարգապրաս Ռշտունին, ով ապրել է Տիգրան Մեծի օրոք: Այնտեղ նա բնակեցրել է Պաղեստինից գերվարված հրեաներին: VII դարի կեսերին արաբական խալիֆայության ղեմն պայքարում, Աղթամարն ու ամրոցը Ռշտունիների հենակետերն էին:

Թեոդորոս Ռշտունիի բարձր էր գնահատում Աղթամարը, որպես պաշտպանական հզոր դիրք, և մեկ անգամ չէ, որ թաքնվում էր այնտեղ թշնամիների հետապնդումից:

X դարում հայ արքա Գագիկ Արծրունու հրամանով հայ ճարտարապետ Մանվելն սկսեց կառուցել շինարարությունը: Եվ նույնիսկ ավելի վաղ, Աղթամար կղզում հիմնադրվեց թագավորական նստավայր ունեցող նոր քաղաք, որը չի հասել մեր ժամանակները:

Ըստ Անանուն պատմաբանի.

*«13-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարի կեսերը Վան--  
Վասպուրականում ստեղծվել և նկարագրողվել է 1500 ձեռագիր գիրք, զործում էր մանրանկարչության Վասպուրականի դպրոցը: Գագիկ Արծրունու հիմնադրած քաղաքը կարելի էր տեսնել դեռ XVI դարում»:*

1510-ականներին այնտեղ այցելած մի վենետիկցի վաճառական գրել է.

*«Կղզու ամրոցը տարածքն զբաղեցնում է մի փոքրիկ քաղաք, որի արտաքին պարագծը 2 մղոն է: Այն կոչվում է Արմենիկ, այստեղ շատ եկեղեցիներ կան: Բազմաթիվ բնակիչներ բացառապես քրիստոնյա են, չկա ոչ մի մուսուլման»:*

Այդ, կղզում մի ամբողջ քաղաք կար, և մարդիկ այնտեղ ապրել էին հին ժամանակներից: Իսկ լճի շրջակայքում հարավ-արևելքից գտնվում էր Ռշտունիքի մարզը՝ Ոստան մայրաքաղաքով:

Ոստանում, որն այժմ ավելի շատ հայտնի է «Գյուվաշ» թուրքական անունով, գտնվում էր Ռշտունիների տոհմի հնագույն ազնվական ընտանիքներից մեկի արքայական նստավայրը, որի պատմությունը սկիզբ է առնում Ռուսս տոհմի (դինաստիայի) Արարատյան թագավորությունից: Ռուսս անունը, որը ժամանակի ընթացքում արտասանության փոփոխությամբ դարձավ Ռուշա, այնուհետև Ռուշա-Թուն (Ռուշայի տուն), ապա Ռշտունի, հայերեն նշանակում է տուն: Ամենայն հավանականությամբ, Ոստան ամրոցի կառուցման ամսաթիվն անհայտ է:

2700-3000 տարի առաջ Արարատյան Բիայնիլի (Ուրարտու) քաղաքում կառուցված հնագույն ամրոցից գոյատևել է ընդամենը մի քանի պատվար, բայց դրանք դեռ վկայում են այն մասին, թե որքան հմուտ էին Ռշտունիների տան վարպետները: Ոստան ամրոցը տեղակայված էր Վանա լճի ափին բարձրացող ժայռի վրա և պաշտպանում էր ավիամերձ տարածքը, ինչպես նաև հնագույն ճանապարհը, որը Տոսպականը (Վան քաղաք) կապում էր Նարեկի, Թաթվանի, Փաջեշ - Բիթլիսի և Մոկքի վանքերի հետ: Ոստան ամրոցն այնքան բարձր էր կառուցված, որ այնտեղից Վանի ամրոցը շատ հստակ էրևում էր:

Այսպիսով՝ հին Ոստան բերդը վերահսկում էր մայրաքաղաք Վանի արևմտյան դարպասները, և, իհարկե, կարևոր կապ կար Վանի հնագույն բերդերի ու Ոստան բերդի միջև: Եթե թշնամին մտնեևում էր արևմուտքից (Վանա լճի հարավային ափ), ամրոցում կրակ էին վառում, ինչով նախազգուշական



ազդանշան էին տալիս Վանի պաշտպաններին: Այսօր պահպանվել են միայն բերդի որոշ պատերի ավերակները: Եթե ամբողջի պարիսպները գոյություն ունենային 3000 տարի, պարզ կլիներ, թե որքան մեծ ու ուժեղ էր Ռուսանի ամրոցը:

Ցավոք, ինչպես հաճախ է պատահում մեր իրականության մեջ, հայկական բերդերը մնում են աննկատ, լավագույն դեպքում հետազոտություններ են կատարվում միայն եկեղեցիների վերաբերյալ: Ռուսանի ամրոցը մոռացության ահավոր տխուր ճակատագիր ունեցավ. այն ամբողջովին անտեսվում է նույնիսկ հայերի կողմից:

Ռշտունիքի մարզի Ռստան վանքում Եղիշեի գերեզմանն էր, ով ոգեշունչ կերպով գովերգեց Ավարայրի դաշտում ընկած հայ հերոսների նահատակությունը: Ի դեպ, Վարդան Մամիկոնյանին սատարող նախարարների ազնվական ընտանիքների թվում նաև Ռշտունու ընտանիքն էր: Նարեկավանքում Վասն լճից ոչ հեռու, Գրիգոր Նարեկացու գերեզմանն էր, որի գիրքը սուրբ է յուրաքանչյուր հայի համար: Նարեկավանքը գտնվում էր Ռշտունիքում՝ Վանա լճի հարավում: Այն կառուցվել է կաթողիկոս Անանիա Մոկացու օրոք, որը փոխարինեց Եղիշե Ռշտունուն (Մտեփանու Երկրորդ Ռշտունուց հետո):

Անձևաց գավառի վանքում էր գտնվում Տրդատ Մեծի գերեզմանը, այն հզոր թագավորի, «որը քրիստոնեական հավատով լուսավորեց Հայաստանը»: Վանի մտակայքում գտնվող Վարազա վանքում է Արծրունիների տոհմից Վասպուրականի վերջին թագավոր Սենեբերիմ Արծրունու գերեզմանը: Մուշի մոտ գտնվող Կուպ վանքում՝ Գրիգոր Լուսավորչի թոռան օրինված Դանիելի գերեզմանն է: Բասենի կամ Ասան-կաղե վանքում Գրիգոր Մագիստրոսի գերեզմանն է, իսկ Իշխանագոմ գյուղի եկեղեցում՝ Թեոդորոս Ռշտունու որդու՝ Վարդ Պատրիկի գերեզմանը: Երկար ժամանակ Ռշտունիները մնացին կղզում, իսկ լճի շրջակայքում լրիվ հայկական գյուղեր էին: Դրա վկայությունն է առաքելական եկեղեցու քահանաների ու

եպիսկոպոսների ցուցակը (պարտադիր չէ նախարարական ընտանիքից) .

Մանաչիր Ռշտունի (մահ. V դ.) – նահատակ, իշխան:

Եղիշե Ա Ռշտունի (մահ. X դ.) – Ամենայն հայոց գերագույն պատրիարք և կաթողիկոս (X դար):

Մտեփանու Երկրորդ Ռշտունի (X դ.) – Ամենայն հայոց կաթողիկոս և պատրիարք:

Թեոդորոս I Ռշտունի (X դար) – Ամենայն հայոց գերագույն պատրիարք և կաթողիկոս:

Ռշտունի Հակոբ (Օվսանացի) – (XV դ.) Նահատակ, ուբունապետ:

Ռշտունի Կիրակոս (Կիրակոս Բանասեր) (15-րդ դար) – աստվածաբան, «Արճեշցի Թովմա Մեծոփեցու կյանքի» հեղինակ:

Վանեցիները կարգալ շատ էին սիրում: Վանը շատ հայտնի մարդկանց նվիրեց հայերին, ինչպիսիք են՝ Թովմա Արծրունին, Խոսրով Անձևացին, Գրիգոր Նարեկացին, Գրիգորիս Ախթամարցին, Թովմա Մեցոպացին, Նահապետ Քուչակը: Մեր ժամանակների նշանակալի դեմքերից մեկը մեծ հայրենասեր Խրիմյան Հայրիկն էր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այստեղ տեղին է հիշել թաթար-մոնղոլների կանոնները: Նվաճումից հետո դաժան և հրեշավոր թաթարները բացահայտ չեն հետապնդել քրիստոնեությունը, պաշտոնապես նույնիսկ վերցրել են իրենց պաշտպանության տակ: «Մոնղոլների կրոնական հանդուրժողականությունը հիմնականում պայմանավորված էր նրանց հեթանոս լինելու փաստով, և, որպես այդպիսին, հետևաբար, նրանք պետք է հավասարապես ճշմարիտ համարեին բոլոր կրոնները՝ հավասարապես կապելով մարդկանց Աստծո հետ»: Օրինակ՝ Բաթուն իրականում ճանաչեց ուսական հավատը, սակայն առանց «առիչի» տալու: Հոգևորականությունը ենթակա չէր մարդաանմարի, այսինքն տուրք չէր տալիս: Այնպես որ, հայկական քրիստոնեությունը իր ու-

նեցվածքի հետ կապված ոչ մի խնդիր չի ունեցել: Շատ հայ նախարարներ թաքցնելու և փրկելու միջոց գտան իրենց ունեցվածքն ու ամբարները վերագրանցելով եկեղեցականների վրա: Իհարկե, մեթոդը միայնացից ընդունվեց, բավականին մեծ ունեցվածք փոխանցվեց նաև Ռշտունիքի կաթողիկոսին (միգուցե և սկսվեց երանցից)...

Ռշտունիների իշխանական ընտանիքների ժառանգներն իրենց պետական կալվածքները եկեղեցուն փոխանցել են VIII դարում: Իհարկե, Արծրունիքում նրանք իշխում էին որպես քահանաներ, իսկ Նարեկավանքում մինչև 1915 թվականը գլխավոր հայրերը Ռշտունիներն էին: Գրողներից մեկը Ռշտունի տներից հոգևորականների մասին ասում էր՝ «ծառայում էին հեթանոսական ոգու ամրությանը...»: Բայց նվաճված ժողովուրդների նկատմամբ արաբների քաղաքականությունը նեեզ էր և ամենաարդյունավետը: Նրանք, առանց բացառության, պարզապես բնացնեցին բոլոր իշխաններին ու ղեկավարներին: Նոր խալիֆա ալ-Վալիդը իր թագավորության առաջին տարում հայտարարեց, որ նախարարները «խոչընդոտ կլինեն և վտանգավոր գայթակղություն մեր տիրապետության համար»:

Ոչնչացվեցին շատ նախարարներ, հատկապես Ռշտունիների և Արծրունիների ընտանիքները: Այն ժամանակներում, երբ պատերազմների թատերաբեմն ավելի քան 1500 տարի Հայաստանն էր, այնքան չթուլացրին երկիրը, որքան արաբական տիրապետության առաջին դարերը: Օրինակ՝ իրենց առաջին արշավանքի ժամանակ նրանք գերեվաբեցին շուրջ 35000 մարդու (Սերեոս եպիսկոպոսի պատմությունը):

Հասարակ մարդիկ տառապանքի տեր էին, նախարարները՝ իշխանության կամ մահապատժի:

Նույն եպիսկոպոսը պնդում է, որ ոչ միայն արաբներն են ոչնչացրել հայերին, այլ իրենք էլ էին մասնակցում սեփական ժողովրդի ոչնչացման գործին: Օրինակ՝ Տիրանի օրոք ապստամբ նախարարների դեմ արքայական տերության պայքարում

րում առաջ եկավ Հայր Մարդպետ անունով մի հայտնի քաղաքական գործիչ, որը ղեկավարում էր պետության կենտրոնացման գործընթացը այնպես, ինչպես ինքն էր պատկերացնում: Նրա նախաձեռնությամբ Արծրունի և Ռշտունի նախարարական ընտանիքները դաժանորեն պատժվեցին: Թերևս դա հենց այն պատճառով էր, որ չկայած իր Հայր անվանը, նա ներքինի էր:

«Այս պահին հայտնաբերվեց երկու նորածին, որոնք փրկվել էին մահից, և նրանց դաստիարակները թաքցրել էին: Նրանց տարան թագավորի մոտ: Վերջինս հրամայեց մոթթել նրանց, քանի որ միայն նրանք էին կենդանի մնացել այս տոհմերի սերունդներին: Այս մասին պատահաբար իմացան Մամիկոնյանների տոհմից Արտավազդն ու Վասակը՝ հայկական գործի հրամանատարները: Նրանք շտապեցին նորածինների մոտ և զոկելով նորածիններին՝ դուրս եկան թուրք քաշած պատրաստ մեռնելու այդ մանուկների համար:

Քանզի, չնայած նրանք դաստիարակներն էին Արշակի՝ արքայի որդու, բայց զզվեցին կատարվածից, թողեցին իրենց աշակերտ Արշակին և լքեցին արքայական արքունիքը: Թողնելով իրենց ունեցվածքը նրանք գնացին իրենց երկիր՝ Տայքի ամրոցները, և երկար տարիներ մնացին այնտեղ: Նրանք դաստիարակեցին այդ երկու նորածիններին՝ Շավասպին ու Տաճատին, իրենց դուստրերին ամուսնացրին նրանց հետ, և այս սերունդները կրկին բազմացան (Տաճատի որդին՝ Գարեգին Ռշտունին, վկայված է 370-380 թվականների միջև):

Եվ այսպես, «անընդհատ ռազմական վեճեր էին տեղի ունենում Բյուզանդիայի ու սարակինոսների (արաբների) միջև»: Բյուզանդական միջամտությունն անհույսորեն հակահարված հարուցեց սարակինոսներին, իսկ հայ իշխանները տատանվում էին նրանց միջև՝ վազելով մի կողմից մյուսը: Անվերջ կոիվները խոչընդոտ էին հանդիսանում ազգային համախմբակը: Իհարկե, մեծ մասամբ տեղի էր ունենում քաղաքական պայ-

քար իշխանության համար՝ ծածկված կամ թեժացված կրոնական մղումներով:

Իշխան Թեոդորոս Ռշտունին, որը Հայաստանում կառավարիչ էր, և՛ արարների, և՛ բյուզանդացիների ներկայացուցիչ, գահընկեց արվեց 655 թվականին: Սա նշանավորեց Ռշտունիների ակնամարտ իշխանական ընտանիքի իշխանության ավարտը: Այնուամենայնիվ, հետավոր երկրներում, պարտություններից ու հետապնդումներից հետո, տոհմի բեկորները մնացին («Դեռ կան տոհմի անդամներ» - Գրյուսե):

«Թեոդորոսը վատ վախճան ունեցավ. արտրվեց Սիրիա, այնտեղ էլ մահացավ: Երբ նրա որդի Վարդ Պատրիկը հասավ իր հայր Թեոդորոսի մոտ, ևս արդեն ցավից թուլացած էր: Վերջինս բացեց այքերն ու ասաց. «Օրհնյալ լինի իմ որդին՝ Վարդը, որ ժամանակին հասավ իմ մահվան օրվանից առաջ»: Իսկ Վարդ Պատրիկը հորը պատմեց բոլոր այն պատիվների մասին, որոնք իրեն ցուցաբերեց հռոմեացիների արքա Կոնստանդինը:

Եվ ասաց Թեոդորոսը. «*Լսի՛ր, որդի իմ Վարդ, ես գնում եմ ճանապարհորդություն, որից այլևս չեմ վերադառնալու, չանտեսես այն, ինչ կասեմ քեզ: Քանի որ պարսիկները մեր հարևաններն են, հռոմեացիներից սրված հարկը տվեք պարսից տանը, ենթարկվեք նրանց, և հայկական երկիրը լավ կլինի:*» Սա ասելուն պես նրա ինչից մարեց, և մահացավ: Վարդը Թեոդորոս Ռշտունու որդին՝ այս իշխանական ընտանիքի վերջին սերունդը, կրում էր Պատրիկի տիտղոսը, որը նրան շնորհել էր Բյուզանդիայի կայսրը: Թեոդորոսի մահից հետո (658թ.) նա որոշ ժամանակ հայերի սպարապետ էր (գերագույն գլխավոր հրամանատարը):

«Արաբ իշխանի վայրագություններից վրոգված՝ Մմբատ Բագրատունիի 702-ի վերջին, Դամասկոսից վերադառնալուն պես, իր որդի Աշտոին, իորեղբոր որդի Մմբատին, Վարդին Թեոդորոս Ռշտունու որդուն, և այլ ազնվականների կանչեց խորհրդի: Նախարարների խորհրդում Մմբատը և իշխանները

խորհրդակցեցին խալիֆայության ճնշումից փրկության ուղիներ փնտրելու մասին, բայց չգտնելով որևէ խելամիտ ելք՝ որոշեցին գնալ հռոմեացիների երկիր»:

«Շեռո հայերի ընդամենը 2000 ձիավոր բանակը հանդիպեց արաբների 8000-անոց բանակի հետ, որոնք, չնայած բանակցությունների կոչերին, հետապնդեցին նրանց և անցնելով սառած Արաքս գետը՝ գրեթե բոլորը խեղդվեցին»: Հստ մատենագրի՝ «Ճարթողները, ովքեր տիրացել էին հարուստ ավարին, արաբական զեղեցիկ ձիեր և կեր ուղարկեցին հռոմեական կայսրին: Կայսրը շնորհակալություն հայտնեց Մմբատ Բագրատունուն և նրան շնորհեց կուրտպալատի կոչում, իսկ ՎարդՌշտունուն՝ հայրապետի»:

Էլ ավելի մեծ տեղահանություն էր նախատեսում իրակախացել Մավրիկիոսը (Մավրիկիոս, Մորիկ), ով, ըստ տարածված լուրերի, իր հայկական ծագմանը, կարծում էր, որ հայերը, գտնվելով իրենց հայրենիքում, ծայրաստիճան անհանգիստ են: Նա խույնիսկ Իրանի Շահնշահի հետ համագործակցության ծրագիր էր կազմել բոլոր ազնվական հայերին սեփական շրջապատով իրենց հարագատ վայրերից տեղափոխելու համար:

Հստ պատմաբան Սեբեոսի՝ այս Մավրիկիոս-Մավրիկիոս-Մորիկը, իբր հայ, բայց դառնալով բյուզանդացի (այսինքն՝ հույն, ահա ինչի է բերում այլազգ դառնալը), գրել է պարսից շահնշահին, որ «հայերը անենազանդ և խարդախ ժողովուրդ են: Նրանք ապրում են մեր միջև և անկարգությունների աննկարգելի աղբյուր են: Ես պատրաստվում եմ հավաքել բոլոր իմոնց և ուղարկել Թրակիա, իսկ դուք ձերոնց ուղարկեք դեպի արևելք: Եթե նրանք այնտեղ մահանան, մեր թշնամիները կմտնեն, եթե՝ ընդհակառակը, նրանք ինչ-որ մեկին սպանեն, ապա դա կնշանակի, որ կսպանեն թշնամիներին, և մեք կապրենք խաղաղ: Բայց եթե նրանք մնան իրենց երկրում, մեզ համար խաղաղություն չի լինի»:

Իսկ հայերը հիմար չէին հույներից, պարզապես ցանկա-  
նում էին անկախ լինել նրանցից...

Հետաքրքիր է սակայն, որ այս տարիները շարունակում  
էին մնալ հայկական մշակույթի փայլուն վերելքի ժամանա-  
կաշրջան հատկապես ճարտարապետության մեջ. Էջմիածնի  
Հռիփսիմե եկեղեցին, ապա՝ հոյակապ Ջվարթեռոց տաճարը:  
Հայաստանի VII դարը դարձավ ակնանավոր ամթանատիկոս,  
աստղագետ և աշխարհագրագետ Անանիա Շիրակացու եռան-  
դուն գիտական գործունեության վկան, որին իսկապես կարելի  
է անվանել վաղ միջնադարյան Հայաստանի Նյուտոն:

Այժմ Հայաստանի գլխավոր իշխանները Մամիկոնյան-  
ներն էին, որոնց աստղը, սակայն, նույնպես անկում ապրեց, և  
Արծրունիները, որոնք հետագայում դարձան Վասպուրականի  
թագավորներ Վանա լճի շրջակայքում: Եվ այժմ ամենից վեր  
համարվում էր Բագրատունիների տոհմը, որը հետագայում  
սկսեց անմիջապես թագավորել ինչպես Անիում, այնպես էլ  
Վիրքում, որը գրեթե հազար տարի հանդիսանում էր կովկաս-  
յան քաղաքականության շարժիչ ուժը:

Հայ ազնվականության ինքնուրույն ոգին քանի անգամ  
հանգեցրեց այն բանին, որ արաբ կուսակալները նախընտրե-  
ցին ոչնչացնել նրան: Ինչպես, Օրինակ, 705 թ. -ին արաբ նա-  
հապապետ Մուհամմեդը ոչնչացրեց հայ ազնվականությանը:  
Լա մի քանի հարյուր հայ ազնվականների իրենց ընտանիքնե-  
րի հետ միասին խաբեությամբ կանչեց իր մոտ՝ Նախիջևան,  
կողպեց եկեղեցիներում, խոշտանգեց այնտեղ, ապա խաչեց  
կամ այրեց:

1915 թվականից Աղթամարը լքված է և մոռացված: Հիշտ  
է, Սուրբ Խաչ եկեղեցին չեն վերածել մզկիթի և չեն ոչնչացրել,  
բայց լիտվին վթարային է: Այն պարզապես խարխուլ էր և դան-  
դաղ քանդվում էր. միայն վերջերս վերականգնեցին այն էլ ա-  
ռանց խաչի:

Մուշեղ Մամիկոնյանի տիրապետության տակ գտնվող  
Տայքի, Այրարատի, Մեծ և Փոքր Հայքի շրջանները մնացին  
Բյուզանդիայի հովանավորության ներքո, իսկ արևելյան  
շրջանները, որտեղ իշխանությունը պահպանում էր Թեոդորոս  
Ռշտունին, արաբների հովանավորության տակ: Հայաստանի  
ևս մեկ բաժանում... Քանի սը... Այս բաժանումները էլի կլի-  
նեն: XX դարում Թուրքիան և բուլղիկները ամբողջությամբ բա-  
ժանելու են իրենց միջև մտցնելով Խորհրդային Ռուսաստան...

Մեսրոպն իր թոռների համար կարդում էր այս բոլորը  
գրի առած: Մասունցի Դավթի կիսատ լեզենդներ, Քեռի Թորոսի՝  
մասին, որին վերագրվում են Թեոդորոս Ռշտունու գործերը  
համարելով, որ ազգանվան փառքը պետք է պահպանել երե-  
խաների մեջ, Թումանյանի ոտանավորները, Աղայանի հե-  
թիաթները՝ հասնելով իր ժողովրդի՝ տաճկահայերի համար  
գրեթե անհետացած մշակույթի ակունքներին: Ճակատագրի  
հեզանքով հենց այստեղ Կոտայքում, որտեղ նրանք այժմ ապ-  
րում և հող էին մշակում, մարզպան և իշխան Թեոդորոս Ռշ-  
տունին Թովմայի գրպարտության հետևանքով ավելի քան հա-  
զար տարի առաջ ձերբակալվեց և տեղափոխվեց Կոստանդնու-  
պոլիս: Փառք Աստծո, Բյուզանդիայի կայսրը լսեց կողմերին,  
ևույնիսկ ներողություն խնդրեց իշխանից և ազատեց նրան, իսկ  
Թովմային քշեց:

Չմոռան երկար երեկոներին շրջապատի բոլոր երեխանե-  
րը հավաքվում էին տաք հացատանը: Մարիամը չոր աթարի  
կտորներն էր նետում թոռերի մեջ, խմոր հունցում, իսկ Մեսրո-  
պը նրանց համար վանկարկում էր հայ ժողովրդի, Մեծ և Փոքր  
Հայաստանների պատմությունը: Երեխաները և թոռները՝ Ռշ-  
տունի ազգանունը կրողները, այրվող աչքերով լսում էին, թե  
ինչ տառապանքներ էին բաժին ընկել իրենց ազգի նախարար-  
ներին, հասարակ բնակիչներին ու շարքային զինվորներին...  
Հատկապես այն տեղերը, որտեղ հերոսը փայլուն հրամանա-  
տար Թեոդորոս Ռշտունին էր: Երեխաներն անգիր գիտեին

Բաֆֆու «Մամվեր» և «Կայծեր» վեպերը: Եվ ոչ միայն սրանք: Բոլոր գրքերը, որոնք թումանյանը նվիրել էր Մեսրոպին, երևիսաները փոխանցում էին միմյանց և անգիր գիտեին:

«Թագավորը պայքարում էր իր անհնազանդ նախարարների դեմ, իսկ Տիրանի օրոք առաջ եկավ մի ստոր առաջնորդ Հայր Մարդպետը, որը որոշեց «ամեղացնել» պետությունը: Նրա նախաձեռնությամբ էր, որ Արծրունի և Ռշտունի նախարարների ընտանիքները խստորեն պատժվեցին»:

Երեխաներն ուրախանում էին, որ գոնե մեկը մնաց Ռշտունիներից...

Թեոդորոս Ռշտունին արարների հետ բարենպաստ պայմանագիր կնքեց երկիրը կործանումից փրկելու համար, այն պայմանով, որ երեք տարի գերծ կլինե՞ր հարկերից, քաղաքներում ու բերդերում արարական կայագրեր չեն լինի: Չնայած այն հանգամանքին, որ այս համաձայնագիրը հաճախ էր խախտվում, այնուամենայնիվ, Հայաստանը 20 տարի շարունակ որոշակի դադար ստացավ. վերականգնվեցին խաղաղությունն ու երկրի ներքին անկախությունը: Արարները լավ հասկանում էին, թե որքան ժովար է Կովկասի լեռնային շրջաններում պահպանել իրենց իշխանությունը, ուստի երկիրը թողեցին Թեոդորոս Ռշտունուն: Բայց ոչ ընդմիջ: 698 թվականին արար հրամանատար Մուսամաղ իբն Մեր-վանը գրավեց ամբողջ երկիրը:

Հայաստանի ամենակարևոր քաղաքներում և ամրոցներում՝ Դվին, Արճեշ, Կարին, Տիգրանակերտ և այլն, խալիֆայությունը տեղավորեց խոշոր կայագրեր, իսկ Դվինի շրջակայքում՝ Գողթնում, Վանա լճից հյուսիս, հյուսիս-արևելք և արևմուտք գտնվող շրջաններում և այլ տեղանքներում բնակություն էին հաստատում քոչվոր ցեղերը, որոնք աստիճանաբար տիրում էին երկրի հարթավայրերին հաղթողի իրավունքով, բնիկ բնակչությանը ստիպելով քոչել քարոտ լեռները:

Դարձյալ բնակիչներն սկսեցին ցրվել աշխարհով մեկ՝ բարձրանալով լեռան սուղ լանջերը՝ հեռու լինելով բերքատու հովիտներից, որտեղ սկսեցին բնակվել օտարերկրացիներն ու քոչվորները: Այս վայրերում հայերն ապրել են հինավուրց ժամանակներից, իսկ այժմ բնակչության գերակշիռ մասը քրդեր են: Հայերն այստեղ ապրել են մինչև 1915-1918թթ.: Իլիում (թուրքական նահանգ) ապրող հայերը կամ սպանվեցին, կամ վտարվեցին... Դրանից հետո քաղաքը դարձավ տարբեր նահանգների մաս, և 16-րդ դարում այն ընդմիջտ «ընկավ Օսմանյան կայսրության կազմի մեջ»: Առայժմ ընդմիջտ...

Մրցելով Բյուզանդիայի հետ խալիֆայությունը փորձում է որոշ արտոնություններ տրամադրել հայ ազնվականությանը և հոգևորականությանը: Արդյունքում նրկում հզորանում են Բագրատունիների, Արծրունիների և Մելիկների իշխանական տոհմերը, որոնք ավելի ու ավելի մեծ շրջաններ են ներարկում իրենց իշխանությանը: Տիրակալի բարյացակամությունը հզոր գորշոն է...

Սուրբ տեղն էլ դատարկ չի մնում: Ռշտունիքն անցնում է Արծրունիներին: Իսկ բնակիչները աստիճանաբար տարածվում են դեպի նոր վայրեր: Նրանց նախնիները նախ շրջվեցին Վանից, ապա հաստատվեցին Արճեշում: 19-րդ դարի սկզբին Արճեշն սկսեց խորտակվել, լճի մակարդակը աստիճանաբար բարձրանում էր: Ռշտունիներից մեկը բնակվեց ավելի բարձր հիմնեցին՝ Նոր Արճեշը, մյուսը՝ շարժվեց դեպի արևմուտք: Այս Ռշտունիները հասան մինչև Նաբաթիլիսա... Քահանա դարձած Մեսրոպի եղբայրը նոր քաղաքում նոր հոտ էր փնտրում: Գնաց տուն-տեղից ավելի հեռու. դեպի «Ալաշկերտ կամ Տիգրանակերտ»: Մյուս եղբայրը նույնպես ընտրեց քաղաքը՝ իր մանր առևտրի համար, չնայած պարզվեց, որ նրանից միայն երաժիշտ ստացվեց: Եվ ինքը՝ Մեսրոպը, եղբայրներին ավելի մոտ գտնվող տեղ էր փնտրում, ու ինչպես միշտ, վարժապետի...

## ՀՈՐՀԱՆՈՒՏ

Մեջքիդ դանակ է խրված՝  
Անդունդ տանող ճանապարհի,  
Հույս ու հավատք է սրված,  
Պետք էր լոկ գնեք ու գրահ... .

Ոսկե ձեռքեր ունեին Մեսրոպի որդիները և գեղեցիկ ձայն, որը պապերից էր գալիս ու փոխանցվել էր աղմկոտ թոռներին: Շատ հոգ ու աշխատանք կար: Եւ հաճախ վարձում էր աղքատ գյուղացիներին, որոնք մշակում էին նրա հողը ու անասունը պահում: Բոլորին նետել էին նոր հողագործության վայր եզներ, ձիեր, ջորիներ, որդիներ, թոռներ: Հարսներն ու կիներ իրենց հին տեղում էին թոնրի շուրջը. հաց էին թխում, մեծ ընտանիքի համար ճաշ պատրաստում, լվանում և չփխում էին բուրլը, փափկացնում ներքենակներն ու ծածկոցները: Կթել, խնոցի հարել, քաղիանել՝ գյուղի կնոջ գործն անվերջ է:

Անիխելի ժամանակներից կանանց ուսերին էր տան հոգան ու գործը՝ առանց օգնականների: Ճիշտն ասած, կանայք հենց դրա համար էլ ստեղծվել են: Մեկ էլ երեխա բերելու համար, ազգը շատացնելու: Մեսրոպը գիտեր, որ տան մեջ ամեն ինչ Մարիամի ուներին է: Ամբողջ օրը կանայք բակից վազում էին տուն, հացատուն... Մարիամը մնում էր նույն գեղեցկուհին, երբ նրան տեսավ առաջին անգամ: Քչախոս էր, ամաչկոտ ծպտում էր՝ տեսնելով ամուսնու հայացքն իր վրա: Ճաշի ժամանակ քննարկում էին եղանակը, բերքը, տնկիները... Կովը շուտով հորթ էր ծնելու, սերսերը վատն էին, տեսնես անձրև կգա... .

Երբ դիմում էին նրան, ամաչելով ասում էր. «Ինքը գիտի, նրան է պետք հարցնել»: Ավանդական հայկական ընտանիքներում ամուսնու մասին ասում են՝ նա, ինքը: Մեսրոպն սկսեց գննել գործիքները, «ցյուլտեխնիկան»: Որդիները դասավան-

դում էին տեղական երկու դպրոցներում: Սկզբում իրենց տան առաջին հարկում դասասենյակի համար մեծ սենյակ հարմարեցրին, հետո ժողովուրդապիտոնից հրաման ստացան՝ նրանց ժամանակավորապես ազատել դասավանդումից և Կոտայքի յուրաքանչյուր գյուղում տարրական դասարաններ կազմակերպել:

Այնպես որ, առանց օգնողների նրանք չէին կարողանալ պետության հարկերը փակել: Այո, ճիշտ էր մեծ բանաստեղծը՝ մարդիկ բոլորը տարբեր են: Բայց որտեղի՞ց այսքան ճոճղան գյուղացի: Դարձել էին քաղաքացի, ցանել կամ հեղկել արդեն չփտեին, բայց գիտեին՝ ինչպես հրամայել: Բայց չէ՝ որ մինչ այդ նրանք գյուղացի էին...

Փետրվարյան ցրտաշունչ օրեր էին: Մեսրոպը մտավ ամբարը, որ անասուններին մի խորձ խոտ ցցի և հանկարծ հրետանային կրակի խեղդված արձագանքներ լսեց: Չետո իմացան, որ Քանաքեռից ռուսները գնդակոծում են քաղաքը՝ հետևելով ումբակոծելով ամերիկյան որբանոցը: Գյուղացիները վախենում էին իջնել քաղաք կամ ապստամբություն էր սկսվել, կամ նոր պատերազմ, նույն սատանան է... Վայեցած բնակիչներն ասում էին, որ նահանջող հեծյալներն իրենց զայրույթը թափեցին տեղի բնակիչների վրա, հազարավոր գյուղացիներ սպանվեցին...

Գիշերը տան դարպասը թակեցին: Տեցցիք վախով վազեցին դեպի դուռը, երեխաներն սկսեցին լաց լինել: Բայց ներս մտավ միայն մեկ մարդ: Մեսրոպը նավթի լամպը վառեց և Չ՝ մեջ՝ նրա ղիմաց կանգնած էր Դարաքիլիսայի հին հարևան Ջոբակի որդին, ով, ըստ իր տեղեկությունների, մնում էր հարազատների հետ Ղամարլուում: Հիշեց անունը Միսակ էր: Եւ Մարդարապատում կռվել էր Դազարիի հետ: Եղբայրներին նույնիսկ հաջողվեց նրանցից տնկիներ վերցնել և տնկել պարտեզի շուրջը:

– Վարժապետ, ոչ որի չպատմես իմ մասին, ես մի քիչ մնամ, մինչև տեսնեմ՝ ինչ դուրս կգա, – շնչալով աղաչեց Միսակը, – գոռով ինձ ու եղբորս տանում են իրանց կարմիր բանակ: Մպանում են իրար, – շարունակեց, գրեթե լաց լինելով: – Ղամարթում բոլոր կարասները դիակներով են լցված: Հենց մեջներն էլ թաքնվեցի, ոնց որ, փախչելուց ոտքս կոտրեցի: Իսկ մերոնք երկու շաբաթ ևս ինչ էրիվանում են: Դրանք եկան, մայր բշեցին հետները, ցորենը լրիվ տարան:

– Բա Մերումն ու թ ա: Նե րս արի, Զարիկն անկողին կուս, օթախում կքնես: Մնա այնտեղ, ներս մտնող չկա հացատնից բացի, մենակ դրանք չգան... կարմիրները, ամեն տեղ քիթը կմտցնեն, – փնթփնթաց Մետրուպը զայրացած ոռուների պատակովածությունից և բազմերեսանությունից, – երեկ կազակ էին, հետո սպիտակ, հետո կարմիր, սենեակաղորության համար բոլորին գնդակահարում են... Չգիտես՝ ուր է գնում աշխարհը, մեկ դաշնակները, մեկ սրանք... Մտածում ես՝ մենակ թե թուրքը չլինի: Բայց դու մի տես, թե ինչպես են սրանք գեղակահարում: Ռսի փամփուշտը յաթաղանից պակաս չի:

– Է՛հ, Միսակ, մենք նույն վիճակի ենք: Անընդհատ սպասում ենք ու ասում՝ տեսնես, ի՞նչ կլինի, միայն թե մեզ ձեռք չտան: Ձեր տունն ամբողջությամբ կթալանվի... – ավստասնքով ավելացրեց Մետրուպը: Լավ և գեղեցիկ այգի, գեղեցիկ ընդարձակ տուն էին դրել Զորակն ու տղաները: Զորակներ լավ պարտեզ ունեին ինչպես Ղարաքիլիսայում, այնպես էլ Ալաշկերտում: Մի քանի խանութ ուներ, դատարկ ձեռով չէր ճանապարհ ընկել... Քչերը փող ունեին, շատերը մուրացկան դարձան, մինչև հասան Բզդիթ:

Մետրուպը մի պահ սառեց՝ տառապելով հուսահատության ճնշող զգացումից: Գիտեր, որ վաղ թե ուշ իրեն էլ են կաշեւում, բայց չգիտեր ինչպես պաշտպանվեր:

Դժվար է պայքարել քեզ փրկողի դեմ, մանավանդ քեզնից հարյուր անգամ ուժեղ: Թե այն գահընկեց ցարը, թե այս նորը

ճաղատը, որ թագավորի փոխարեն է: Բայց Մետրուպն ու որդիները երբեք բարձրաձայն չէին մտածում՝ անկեղծ լինելուց խուսափում էին: Հնազանդությունը նրանց մեջ արդեն ներմուծված էր դարերի ընթացքում: Նախ՝ այտորին ու պարսիկները զուլախները կտրեցին, հետո՝ հռոմեացիները, հետո՝ արաբները: Երանց փոխարինեց չար Լենկ Թեմուրը, որը փոխարինեց ոչ պակաս արյունաբերու մոնղոլներին... Հետո սելջուկները եկան օդուզների հետ միասին:

Սրանք եկան ու մնացին հավիտյան: Եվ մի քանի դարանց ընդմիջտ վտարեցին իրենց տներից: Արդյոք հայի համար ոչ մի ճանապարհ չկա, բացի դեպի անդունդը: Այստեղ մենք սպրում ենք անդունդի եզրին, սպասե՛ք, տեսնե՛ք՝ ինչ դուրս կգա: Անորոշություն... . . . Ոչ մի շահած ճակատամարտ հայերին լիակատար հաղթանակ չբերեց: Մի քանի տարի անց ամեն ինչ սկսվում է նորից, – դառնորեն թե՛ խորհում, թե՛ բարձրաձայն կիսվում էր Մետրուպը մանկության իր լավ ընկեր Զորակի որդու հետ...

Մտո մեկ շաբաթ Միսակը մնաց: Շատ ավստաց, որ չի կարող օգտակար լինել՝ սոսիպված էր հարևանների աչքից հեռու մնալ. ո՛վ գիտի... Մպասեց մինչև կրակոցներն ավարտվեցին և կաղալով իջավ քաղաք, այնտեղից՝ Ղամարլու եղբայր Մերումին փնտրելու... Եվ, փառք Աստծո, նա ողջ տեղ հասավ:

Միամիտ ու ամաչկոտ Միսակը նույնիսկ պատկերացնել չէր կարող, որ մեկ շաբաթ առաջ այստեղ թաքնված էր մեկ այլ երիտասարդ տղա Տարունից՝ Ղազարի նախկին սան, Երիցի գյուղապետ Ասատուրեցի Կիրակոսի որդի Հայկուն:

Շատ էին այդպիսի տաքարյուն, ազնիվ ու հավատարիմ տղաները, որոնք պատրաստ էին գոհվել հանուն հայրենիքի: Ոչինչ նրանց չի վախեցրել՝ ո՛չ վամպուշտ, ո՛չ սուր, ո՛չ էլ յաթաղան:

Հայկուն դեռ Ղարաքիլիսայում ուսանելու ընթացքում խիստ առանձնանում էր իր կարողություններով. շատ էր սի-

րում լսել հայերի կամ հարևան ժողովուրդների պատմության մասին: Բսկ պատմության դասագրքերից ծխական դպրոցում կային միայն Առաքել Դալիթեցու և Բաֆֆու պատառոտած գրքերը, որոնք Մեսրոպը Վանից էր բերել հետը: Մեկն էլ, որ թուամալյանն էր նվիրել Թիֆլիսում: Մնացածը նա պատմում էր անցիր՝ հիշելով իր կարդացածը:

Հայկն ապրում էր մոր ու կրտսեր քրոջ հետ Երիցում՝ Ղաբաքիլխայից ոչ հեռու: Երբեմն տղան մնում էր նրանց տանը: Մայրը մենակ երկու երեխա էր մեծացնում՝ հայրը շատ շուտ մահացավ, նույնիսկ, ինչպես հիշում էր, նրան սպանեցին: Հետո բուրդ տեղափոխվեցին Ղաբաքիլխա, թե չէ տղան ստիպված էր 15 կիլոմետր ճանապարհ քայլել՝ դպրոց հասնելու համար: Նա շատ խելացի ու լուրջ երեխա էր, հարգանք էր առաջացնում մեծերի մոտ, ջրջապատում զարմանում էին, թե որքան հասուն է նա 10-12 տարեկան հասակում: Եվ այնքան շատ էր կարողում, որ չէին հասցնում գիրք ձեռք բերել նրա համար: Պատերազմն սկսվելուն պես դեռահասը մորը համոզեց տեղափոխվել Երիվան՝ սովորելու, ուսումը շարունակելու և համարյա մանկուց անդամակցում էր դաշնակցական կուսակցությանը: Նրանց հետ գնաց նաև նրա մորաքույրը, և ո՛չ Մեսրոպը, ո՛չ Ղազարը, ո՛չ էլ Վահանն ու Ասատուրը ոչինչ չլսեցին նրանց մասին:

Ու հանկարծ Երիվանի հրապարակում եղբայրները տեսնում են երիտասարդ Հայկին: Կողքին մատուցել կախած՝ նա լուրջ հայացքով շրջում էր հրապարակում, մտռնում և հավաքվածներին և ոգևորված հորդորում թուրքերի դեմ պատերազմել ու տեր կանգնել իրենց հայրենիքին: Մինչ այդ Ղազարը գրանցվել էր Մովսես Միլիկովի ջոկատում: Ալաշկերտից մի քանի ուսանող մոտեցան, հետաքրքրությամբ լսեցին տասնյոթ տարեկան տղային, որը ոգևորված բացատրում էր իրեն անմիջապես ջրջապատողներին, թե *«ժամն արդեն եկել է՝ Թուրքիան քանդվում է, թե այլևս նման պահ չի հանդիպի»*:

Պարզվեց, որ նա ոչ միայն սովորում է Երիվանի գիմնազիայում, այլև երկար ժամանակ է արդեն թերթ է հրատարակում և նույնիսկ կազմակերպել է գիտության սիրահարների միություն:

Հայկը շատ ուրախացավ, երբ տեսավ Ղազարին: Հարցրեց իր վարժապետին՝ ինչպես է նոր տեղը, ինչ դպրոցներ կան, ինչպես են տղաները: Նա խոստացավ այցելել, մանրամասն հարցրեց տան տեղը: Առաջմ ստիպված է շրջել մի քանի այլ շրջաններում՝ շատ գործ կա:

Այդպես էլ կոխում էին տարբեր տեղերում. եղբայրները՝ Սարդարապատում: Հետո հաստատվել էին սարի գլուխ Ալաքլունում, քանի տարի է անցել այն օրից... երկու-երեք տարի: Մեսրոպն այլևս ժամանակը չէր կարողանում բռնել. այն սկսել էր թռչել...

Տագնապալի լուրերը տարածվում ու չէին հերքվում: Ասացին, որ թուրքերը ռուսների հետ կրկին եղբայրացել են: Իբր ցարը վատն էր, հիմա կառավարությունն այլ է, հիմա ռուսն ու Թուրքիան ընկերացել են, ու դու էլ կարող ես ընկեր լինել թուրքի հետ: Թուրքերը խոստանում էին նույն հեղափոխությունն իրենց տանը: Մեսրոպն ու տղաները, նստած թթենու տակ, մոայլ հայացքով նայում էին Հատիսի կողմը... Ոչ մի լավ բան նրանք չէին սպասում նման եղբայրությունից. ինչպես հայտնի է, թշնամուղ հետ ընկերությունից անխուսափելիորեն հայտնվում է երկրորդ թշնամին... Ու մ դեմ կարող էին նրանք ընկերներ լինել: Իհարկե, հայերի դեմ: Եվ այդպես էլ եղավ:

«Հունիսի 8-ին Ռուսաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն որոշում կայացրեց օգնություն տրամադրել Թուրքիայի կառավարությանը գեներով և ոսկով: 1920-ի օգոստոսին Խալիլ փաշայի միջոցով Ռուսաստանը Թուրքիային փոխանցեց 100 հազար օսմանյան լիրա՝ ոսկու ձուլակտորներով: Նույն տարվա սեպտեմբերին, արդեն Յուսուֆ Քեմալ-բեյի միջոցով, մեկ միլիոն ռուբլի՝ ոսկով: Ձենքի և զինամթերքի առաջին բեռ-



նափոխարդունը Տրապիզոն հասցվեց 1920 թ. սեպտեմբերի 23-ին: Մեկ ամսվա ընթացքում թուրքական բանակին ստացավ 3387 հրացան, 3623 տուփ փամփուշտ, շուրջ 3000 սվին»: Այդ գնեցումը էլ խլեցին մեր երկիրը...

Երկու եղբայրներին նկատեցին Քանաքեռում, իսկ Ասատուրը նույնիսկ նշանակվեց Էլարի դպրոցի տնօրեն: Շուտափոքից տեղափոխվել էին ավելի մոտ, նրանցից յուրաքանչյուրին հատկացվել էր փոքր տնամերձ, բայց որոշեցին մի տեղում մեծ հողամաս վերցնել: Ժայռոտ հողը չէր զիջում, բայց երբ երկար ժամանակ նույն բանին ես ձգտում ու գործն անում, վերջապես հասնում ես նպատակիդ: Հաղթահարեցին:

Էլարի դպրոցը մեծ ու առանձին դասարաններով էր: Երեխաները նաև մտակազ գյուղերից էին գալիս: Դասագրքերը չէին բավարարում, ուստի նրանք ստիպված էին դասը տալ այնպես, որ երեխաներն անվիջապես պատասխանեն՝ ամբաստնողելով նյութը: Գյուղի դպրոցում լսարանի դռները չեն փակվում: Աշակերտները գալիս ու գալիս են, իսկ թե ե՞րբ տեղ կհասնեն, դա արդեն եղանակից է կախված և Աստված գիտի, թե էլ ինչից...

Քանաքեռում նույնպես դպրոց էր կառուցվել, կար նաև ուսուցչի ազատ հաստիք: Մինչ տուն կառուցելն ապրում էին հարգազատների հետ: Վահանն էլ սկսեց կառուցել գյուղի ծայրամասում գտնվող սարավանքին քաղաքին շատ մոտ, և գրականություն ու լեզու դասավանդել վերջերս բացված ոչ շատ հեռու Ագրարային համալսարանում: Դե, սկզբում շատ վատ էին ապրում՝ հագիվ ծայրը ծայրին հասցնելով: Թոռները շատ անզամ ոտաբոբիկ էին վազում ձյան մեջ, կոշիկները հեթոթվ հագնում դպրոց գնալիս... Հետո վիճակը լավացավ, նույնիսկ մտածեցին մի փոքրիկ տուն գնել քաղաքի ծայրամասում: Երեխաները բոլորը լավ էին սովորում, իրար հետևից ընդունվեցին համալսարան: Մի անգամ Մարիամը խնդրեց գնալ քաղաք, ձայնավոր թոռնիկները ընդունվել էին երաժշտական դպրոց և շարժաթ օրը նրանք հրապարակի մեծ դահլիճում համերգ էին

տալու: Մեսրոպը նույնիսկ հիացած էր. Մարիամը երբեք ոչինչ չէր խնդրել, չէր պահանջել. անարմուկ և շրթունքներին մի թեթև ժպիտով նա տանում էր գյուղացի կնոջ իր բախտը: Մեսրոպը երբեմն սիրում էր հայացքն աննկատ նետել կնոջ վրա, երբ նա ամռանը լվանում էր և ճարպկորեն մտրակում ոչխարի բուրդը՝ հսկայական թվով ներքենակների համար: Ձմռանը չորթան էր պատրաստում, գիշերը դառնալն տապալում, մինչ հարսները կարագ էին հարում կամ աշխատում դաշտում: Գյուղացիների գործը չէր ավարտվում նույնիսկ ձմռանը, հատկապես կանանց համար:

1935 թվականն էր... Այս երկրում տաճկահայերի վերաբնակեցման քանտեղորդ տարին: Բայց ապաստան տված այս երկիրը նաև իրենց երկիրն էր, լրիվ իրենցը ու արդեն սիրված. ինչո՞ւ չսիրել, երբ քո սեփականն է համարվում: Բնությունը նման է երկինքը, լեռները, բույսերը նույնն են... Չէ՞ որ շատ վաղուց մի երկիր էր...

Երկիրը բնությունն է, լեզուն, սովորույթներն ու զբաղմունքը: Հրաշքով փրկված՝ նրանք երբեմն չգիտեին ինչ անեին՝ երախտապարտ լինեին իրենց ճակատագրի ն, թե՛ մեղադրեին: Նրանք շատ բան կորցրին, բայց համարյա վերականգնվում էին: Վանի ոսկին գտիներում շատ վերջացավ, ոսկիով առևտուր անելն էլ արդեն հանցագործություն էր համարվում, բայց, փառք Աստծո, նրանք արդեն ոտքի կանգնեցին, տունն ավարտեցին: Չէին հիշում, թե սա որերորդ տունն էր: Նրանք սրտով կաշտում էին իրենց բոլոր տներին և արցունքներով հրաժեշտ տալիս մշակված հողակտորներին ու կորցրած տարիներին:

Ոչ բոլոր փախտականները կարողացան իրենց հետ ոսկիներ բերել: Մեծ մասը համարյա բոբիկ հասավ Ռուսաստան: Մեսրոպենք պարզապես բախտավոր էին: Ոսկի ոչ բոլորն ունեին, նույնիսկ վանեցիների շրջանում, չնայած անունները վանեցի էր, որոնց համբավը տարածվել էր ամբողջ հայոց աշխարհում: Շատ վաղուց Վանը կորցրեց իր հարուստներին, նրանց



հետ միասին՝ իր կարողությունը: Փողն զգայուն ապրանք է՝ այն անմիջապես զգում է ժամանակի ոգին: Իհարկե, երբ սեփականատերը գիտի ինչպես վարվել դրանց հետ: Տարօրինակ է, բայց Մեսրոպի եղբայրներից միջևեղը, որ քահանա էր, ժամանակին գուշակեց այս «ժամանակի ոգին» և իր խաչի վրա կախված վտանգը: Քասեերորդ դարի սկզբին քահանաների նկատմամբ այնպիսի հալածանք սկսվեց Մովսեսական Ռուսաստանում, որ գրեթե բոլորը ոչնչացվեցին. եթե նա հասներ Հայաստան, հետքն էլ չէր մնա: Միայն լուսմ էին, թե ինչպես այս կամ այն տերտերին քշեցին Սիբիր կամ նույնիսկ տեղում խեղդեցին: Դաշնակցականներից անմիջապես հետո գործի անցան վերացնելու տերտերներին...

Փարք Աստծո, տնավորվեցին իրար մոտ, և երեխաները կամաց-կամաց ավարտում էին ուսումը, բոլորը ցանկանում էին բարձրագույն կրթություն ստանալ, կրթությունը դարձրելով համարվում է հայերի կարևորագույն գործերից մեկը: Հիմա, երբ Երևանում բացեցին սեփական համալսարանը, բոլոր դպրոցականները ձգտում էին բարձրագույն կրթություն ստանալ: Ի դեպ, ուսանողների մեծ մասը շատ լավ էր սովորում: Եվ այս հիանալի ուսումը մի քանի տարի անց արդյունք տվեց՝ Հայաստանում աճեցին շատ բարձր դասի և որակի մասնագետներ: Իհարկե, պետք էր շնորհակալ լինել: Մի թե կարող էին նրանք ակնկալել, որ երեխաները կկրթվեին այնտեղ թուրքիայում: Բայց երեխաները նույնիսկ չէին հիշում, որ իրենց ծնողներն այստեղ չեն ծնվել: Ոչ ոք չէր կարդացել կամ չգիտեր Վանի, Վասպուրականի, Ռշտունիքի մասին: Կարծես հիշողությունը պատվեց կորած հողի հետ միասին: Ոչ մի տեղ չի գրվել այդ մասին, չի պատմվել, չի գրվել պատմության դասագրքերում... Ի՞նչ պատմություն, ԽՍՀՄ-ի՝ պատմություն: Մի քիչ Ուրարտու, մի քիչ պեղումների մասին և Հոկտեմբերյան հեղաշրջման ու արդեն ընդհանուր պատմություն... . . .

Մի անգամ, երբ Մեսրոպը շուկայում հանդիպեց Մուրմալուից գաղթած բնակիչներից մեկին, ևս բողոքեց, որ իր հարսն արգելում է երեխաների ներկայությամբ խոսել Բզդիքի մասին, հակառակ դեպքում բախում լուրեր են տարածվելու, որ իր հետ ապրում է մտուզերիստ-դաշնակցական պայքը: «Մտուզերիստ-դաշնակցական», որը գաղափար չունեի դաշնակների մասին, բացի նրանից, որ լսել էր որպես ժողովրդի թշնամի, գրեթե ատամ չունեի: Նա կանգնած էր շուկայում՝ Կարմիր բանակի արևից ու անձրևից խամրած զգեստով, քամին խառնում էր նրա մի քանի մոխրագույն մազերը... Բայց Բզդիքի մասին ևս փորձում էր մոռանալ, որպեսզի չթունավորի իր սիրտը: Բայց թող ինչ-որ մեկն ասի, որ կարող է մոռանալ մանկությունը, երիտասարդությունը, պղծված այգիներն ու վանքերը...

– Ի՞նչ է, միայն Բզդիքը: Նրանք երկար պղծեցին մեր հողը, քրդերը սար ու չուլից իջան, չգիտեին ինչ է տուներ, ինչ է հացը, այգին... Մեր տներում են ապրում, մեր հողն աղտոտում, – մտայն բողոքեց ծերունին՝ փորձելով զզվանքից չթթել:

Բայց Հայքի տարբեր շրջաններից այստեղ հավաքված փախստականների բոլոր երեխաները ԱՅՍ Հայաստանը համարում էին իրենց հայրենիքը, նրանցից ոչ մեկին առանձնապես չի հետաքրքրում, թե որտեղից են եկել իրենց պապերն ու նախապապերը: Պարզվեց, որ այս երկրում ամեն ինչ արգելված է՝ նույնիսկ կոտորածի, սպանողի մասին շշուկ անգամ չպետք է տարածվել՝ հնարավոր էր հանցավոր ազգայնականության պիտակ ձեռք բերել:

Մեսրոպը նորից սկսեց մի նոր հաստ տետր լրացնել: Կրկին գրանցեց ամեն ինչ՝ ուշադիր ստուգելով տարիներն ու ամսաթվերը: Մասնում տեղի ունեցած սպանողի և Դեր-Չորի «մեծ կոտորածի» մասին, որն իրեն հայտնի դարձավ որպես ցեղասպանություն, և որի մասին իմացավ արդեն Սիբիրում: Դեր-Չորի մասին սարսափելի մանրամասներ պատմեցին Բեյրութի

աքտրոյակները: Նրանցից մեկը ֆրանսերենի ուսուցիչ էր, մյուսը՝ երաժիշտ-դաշնակահարը, անտառահասող էր այստեղ: Բարեբախտաբար, վերջինս հենց առաջին օրերին ընկավ աղոցված ծառի տակ (զուցե և ծառը նրա վրա ընկավ): Բարեբախտաբար, քանի որ նա չէր դիմանա ամենօրյա նորմերը կատարելուն և առանց ձեռնոցի կվնասեր իր դաշնակահարի մասնեւորը: Եվ ահա, օրեր շարունակ նա պատկում էր մեջքի վրա, մի կերպ դիմանում աստիկ ցավերին, ինչ-որ բան գտում, օրորվելով ու ընկնելով մի կերպ մենակ, առանց օգնության դուրս գալիս բակ: «Ֆրանսիացին» իր գլխից չհանեց սև բերետը... Պատմում էր ու պատմում... Նա պատմեց, թե ինքն ինչ կոմունիստ է եղել, ինչպես են Դիմադրության ջոկատում պայքարել «բռնելի» դեմ: Նրա անունը Վահե էր: Իսկ Սասունցի Միհրանը Նառիմում պատմեց Սասունի մասին: Բարձրահասակ, ահավոր նիհար: Նա անտառում հայտնաբերված արմատներից անընդ-հատ արտասովոր կերպարներ էր փորագրում, դնում դպրոցի դասարաններում:

Մեսրոպը նորից սկսեց գրի առնել իր Ռշտունիքի պատմությունը փորձելով հազարամյակների խորության միջով դեպքերի համատեքստում տեսնել, թե ինչ է պատահել իրենց հետ, և ով է մեղավոր... Մենք կարող է մասնակից չլինենք ոչ մի պատահածի կամ գործողության նույնիսկ լրիվ չիմանալով բոլոր խնդիրների մասին, բայց առաջին հերթին մեղավոր ենք փնտրում: Լանջի տակ նոր գրադարան էին բացել, երբեմն նա իջնում էր, տարբեր գրքեր խնդրում, շատ նոր բան փորփրեց ու գտավ. գանձ էր այդ գրադարանը: Դեռ դաշնակցական կառավարությունից Նիկոլ Աղբալյանը կարողացավ այստեղ տեղափոխել Թիֆլիսի քաղաքապետ Արզումանյանի-Դոլգորուկիի գրադարանը: Իսկ տապալված կառավարությունը, նրա խնդրանքով, բազմաթիվ գրքեր և դասագրքեր գնեց արտերկրում ու առաքեց մայրաքաղաք: Այժմ դա Հայաստանի ազգային գրադարանն է, այն հիմնադրել է Ստեփան Կանայանը: Այդ

դաշնակցական ազգանվան պատճառով նրան ազատեցին աշխատանքից: Դրո Կանայանի ազգուսուկը շատ տուժեց նրա սխարաններից... .

Գիտելիքներն ամբողջությամբ գրավում էին տարեց, աշխատասեր հողագործին և ուսուցչին: Շատ անգամ, երբ գրադարանը փակվում էր, տուն էր բարձրանում ուրբով... Տղաները խոսներ ունեցան, սերունդն արգասաբեր էր, հին հիշողության համաձայն՝ աստատորեն լույս աշխարհի էին բերում: Ընդամենը 10 տարի առաջ Հայաստանում ժողովրդագրական իրավիճակն աղետալի էր՝ 1000 մարդու հաշվով ծնվեց 8,7 մարդ, մահացավ՝ 204,2 -ը:

Բայց երկրում լավ առողջապահության նախարար հայտնվեց, եկավ Ռուսաստանից: Բոլոր աշխատող կանայք վերահսկվում էին: Նա ամբողջովին վերացրեց մալարիան (ի միջի այլոց, հայրս նրա կրտսեր կուլեգան էր այդ գործ ում)... 26 թռուներ, հաշվեք, համարյա մի ամբողջ տարածաշրջանի բնակչություն: Եվ բոլորը լավ էին սովորում: Ինչպես կարելի էր չհարգել նման իշխանությանը: Հնարավոր էր այդպիսի հրաշքի հույս ունենալ այն քուրդ գազանների, բեգերի և նրանց շների մեջ:

Բայց այդ վառն է, որ կարող է հավերժ տեսնել, լավը միշտ վերջ ունի: Կրակոցը թնդաց և անսպասելիորեն: Մեփական անկողնում գտան մահացած, արյան մեջ թաթախված, ժողովրդի սիրելի Աղասի Խանջյանին՝ բարի ու ազնիվ անձնավորություն, հայրենակից, ծագումով Վանից, ժամանակին օրինված հին հայկական քաղաքից... Նա նույնպես ծնվել էր ուսուցչի ընտանիքում: Շշուկով խոսում էին, որ սպանել են, նույնիսկ վաստեում էին հուղարկավորության գնալ: Կրկին ձերբակալություններ եղան. բանտարկվեցին ու աքտրոյեցին Սիբիր: Երկիրն այնքան հսկայական է իր այդ հեռավոր Սիբիրով, որ նույնիսկ սարսափում ես նայել քարտեզին... Ասում էին, որ նամակ գրել

չեն թույլատրում, ո՛չ գրողի, ո՛չ գիտնականի, ո՛չ դերասանի, ո՛չ էլ հասարակ մարդկանց չէին խնայում:

Քայց իսկական ահեղ հունձն սկսվեց երկու տարի անց: Տարան Վահանին: Սուզը կրկին պատեց Մեսրոպի ընտանիքը: Տե՛ր, ինչի՞ տարան: Գրականության համեստ ուսուցիչն ի՛նչ էր արել պետությանը: Սկսեցին որոնել՝ ում ինչ ասած կլինի, ում հետ ինչ խոսացած: Քայց Վահանին անսպասելիորեն ազատեցին, տասը օր անց նա վերադարձավ տուն՝ ծեծված, առանց առջևի ատամների, սակայն կենդանի: Այնտեղ փորձում էին պարզել, թե ինչ է սպասում նույնպես բանտարկված երիտասարդ պատմաբան Վահան Ռշտունուն, միգուցե նա այդ բանտարկյալի եղբայրն է կամ ազգականը, քանի որ նույնպես Ռշտունին է: Եվ Վահանը մի ամբողջ շաբաթ հանգիստ ու համբերատար բացատրում ու բացատրում էր նրանց, որ ըստ իր տեղեկությունների՝ այդ պատմաբանը լրիվ ուրիշ տեղի ծնունդ է, ծնվել ու մեծացել է կամ Վանում, կամ Էջմիածնում՝ նայած, թե քանի տարեկան է, կամ էլ ռուսական բանակից հետո էր է հասել Էջմիածին: Նույնիսկ չգիտի, թե ով է: Քայց լսել է, որ նման ազգանունով մի դասախոս կա և նրանք Հայաստան են ժամանել շատ ավելի ուշ, քան իրենց ընտանիքը, որը երբեք չի այրվել Վանում: Տարօրինակ է, որ մյուսը նույնպես Վահան Ռշտունի էր: Եվ նա նույնպես կարճ ժամանակ նստեց, ու աներևակայելի էր, բայց մեկուկես ամիս անց ազատ արձակվեց: Փա որ թեզ, ի մ Տե՛ր, որ նրանք Ղազարին չվերցրին, թե չէ Ղազարը պարզապես քննիչին ի պատասխան մի քանի հարված կհասցներ ու միանգամից կանհետանար:

Վահանը մի կերպ խելքի եկավ: Կու՛շ գալով ու մոթոթալով, կողերը կոտրված, ատամները փշրված՝ մեկ ամսից ավելի նա հագիվ էր քայլում: Քայց դա հրաշք էր՝ ոչ ոք չէր հավատում, որ այնտեղից հնարավոր է դուրս գալ: Ոչինչ չէր փրկում, ոչ պատվով շքանշանները, ոչ վաստակը, ոչ տարիքը, ոչ իմպանդությունը... Առջիկներին համարյա վրեղեցին ինստիտուտից:

Ավագն աշխույժ լեզվով պատասխան հարված տվեց ու մնաց, իսկ սուսիկ-փուսիկ կրտսերը վտարվեց դեռ անցած տարվանից: Ինքը Ղազարը, ժամանակ չունեի, բայց Վահանի համար գտավ հեռավոր մի ազգականի, որ թերթում խմբագիր էր: Ամիսներով հերթ էր, օգնեց փոխել ազգանունները, իրենց մոտական պապի ազգանունով նրանց դարձան Կիրակոսյաններ: Հե՛րթն իրեն չհասավ, խմբագիրը բանտարկվեց թերթում՝ «հակասովետական քարոզչության համար»: Գլխավոր խմբագիրը կուպիտ սխալ էր թույլ տվել, տոն օրով առաջին էջի վրա առաջևորդի փոխարեն տեղադրել էր ինչ-որ մեկի դիմանկարը: Այնպես որ, ինքը մնաց Ռշտունի, բայց երեխաներինը հասցրեց փոխել: Դեռ առաջին ձեռքակալության ժամանակ կարողացան ազգանունները փոխել իրենց պապի անունով, Ռշտունիների մի մտաբ դարձան Սաֆարյաններ:

Ասատուրը համառեց հենց սկզբից.

– Չե՛մ անի, դե արի հասկացի, թե ով են նախնիներդ, որտեղից ես գալիս, այն էլ այդպիսի հիմար ազգանունով՝ Կիրակոսյան... Լավ է, որ Կիկոսյան չէ:

Ասատուրը սովոր էր իր ազգանվանը: Նրան հաճախ անվանում էին ոչ թե իր անունով, այլ՝ ազգանունով (ուսուցիչները սիրում են միմյանց այդպես դիմել): Նա նաև պլեբեյական ազգանուններ էր համարում՝ յան վերջավորություն ունեցողները պարզ չէր, կատակում է, թե՛ իրոք այդպես է մտածում. չէ որ նա գիտեր, որ Մամիկոնյանները պլեբեյներ չեն: Եվ վերջիվերջո պարզվեց, որ նա ճիշտ էր՝ ծոռներից ոչ մեկի մտքով չէր անցնում, որ բոլորը Ռշտունի պետք է լինեին, և անհայտ ու անփառունակ Կիրակոսյաններն ու Սաֆարյանները վազվզում էին իրենց տան շուրջը:

Մեսրոպը սև ամպից մտայլ էր, ոչ մեկի հետ չէր կարողանում խոսել: Թ՛ու, էս ինչ օրի հասանք: Ամեն ռուպե պետք է լարված սպասես՝ դուրը կթակեն, թե չէ, ճոռաց, վախից հոգիդ կփչի... Կյանք չի, չես Ուզում ապրել:

Գրեթե տարուց ավել ձեռքակալությունները չէին դադարում: Գյանքն անտանելի էր դարձել: Մարդիկ սկսեցին վախենալ ոչ միայն չեկիստներից, այլ նաև միմյանցից, ուլթեր պարզապես չէին անհետացել նոր օրադասաբարերի արանքում: Ուլ ասես չէր անհետանում հարազատներից, ծանոթներից, պարզապես հարևաններից: Նույնիսկ երեխաներին ինչ-որ տեղ էին տնտում: Ամուսինը բախտարկվեց, կնոջն էլ աքսորեցին. նույնիսկ ամուսնավաճառությունները չփրկեցին: Իմանա՛ս որ մեղքի համար, և դեռ հեռացրածի մասին բոլորը մտածում էին, թե «Հավանաբար, ինչ-որ բան կար...»: Մարիամը գիշերը հագնված էր քնում, վախենում էր, որ կգան ու չի հասցնի հագնվել:

1937-ի հուլիսի 2-ին բռնակալը հրաման էր ստորագրել: Այո՛, այո՛, հենց այդպես էլ ասվեց. «Մկսեք մահապատժի ենթարկել և գեղակահարել ժողովրդի բոլոր թշնամիներին»: Մնում էր ցուցակները կազմել:

1937 թվականի հուլիսի 2-ի հայտնի հրամանը հակասովետական տարրերի մասին

«Ուղարկել Շրջանային կոմիտեների և Ազգային կոմունիստական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների քարտուղարներին հետևյալ հետագիրը: «Նկատվել է, որ նախկին կուլականերից և հանցագործներից շատերը, որոնք միանգամից ուղարկվել են հյուսիսային և սիրիոյան շրջաններ և վերադարձել իրենց շրջաններ, բոլոր տեսակի հակասովետական և դիվերսիոն հանցագործությունների հիմնական հրահրողներն են: Առաջարկվում է գրանցել բոլոր վերադարձած կուլականերին և հանցագործներին, որպեսզի նրանցից ամենաթշնամականներն անմիջապես ձերբակալվեն ու գեղակահարվեն, իսկ մնացածները ավելի քիչ ակտիվները, այնուամենայնիվ, որպես թշնամական տարրեր, վերագրանցվեն և ուղարկվեն շրջաններ ՆԳԿ-ի ցուցումով... առաջարկվում է հնգօրյա ժամկետում Կենտրոնական կոմիտեին ներկայացնել գեղակահարվածների, ինչպես նաև վտարվողների թիվը»:

Սկսվեցին գեղակահարությունները, և ինչն էլ ամենաանհավանականը, որ նրանց համար գեղակահարելու քվոտաներ ուղարկեցին, կոչվում էր քվոտաներ իջեցրին: Մենք կորցրինք մեծ բանաստեղծների, մեծ հրամանատարների, մեծ ոեմիսորների, գրողների և անհայտ գյուղացիների ու բանվորների՝ ձեռք բերելով բռնաճնշումների հավերժական վախը:

Միայն 1937 թվականին փոքրիկ Հայաստանում ձերբակալվեց 5000 մարդ, որոնց կեսից ավելին դատապարտվեց մահվան, իսկ խորհրդային իշխանության տարիներին սպանվեց 42 հազար մարդ, որոնց մեծ մասը գեղակահարվեց: Մոտ 800 մտավորական՝ գրողներ, երաժիշտներ, արվեստագետներ... Մովետական դասագրքերում դա երբեք չի հիշատակվել, ուղղակի անուկներն էին ջնջվում:

Եթե տան մեջ իբրև կոկորդ են կրծում, դժբախտ օրեր են սպասվում: Եվ սև ագռավը սարսափի թևերը տարածեց ամբողջ երկրի վրա՝ սև «վոռոնկները» մահ ու վիշտ էին բերում անմեղ մարդկանց ընտանիքներին... Վերացրին ներկա ու ապագա բանաստեղծներին, երաժիշտներին, հաշվապահներին, մարշալներին, սպաներին... . . .

Գուցե կարելի է մի կերպ հասկանալ դատապարտյալների անվճար աշխատուժի օգուտի մասին. աղքատ երկիրը հարստանում էր և այդ դատապարտյալների հաշվին: Բայց ինչու էին նրանց գեղակահարում: Մի թե այն պատճառով, որ բանտերում այլևս տեղ չկար:

Եվ մի քանի տարի անց սկսվեց մեկ այլ աղետ՝ Հայրենական պատերազմը՝ երկար ու սարսափելի... Գյուղի բարձրախոսը՝ մեծ սև ոռոգիտն տնկված գյուղամեջում հեռագրասյան վրա, ամռան մի գեղեցիկ առավոտ սև լուրեր հաղորդեց: Սկսվեց մեկ այլ պատերազմ՝ ինքնաթիռներով ու ուժբակոծություններով, դրանք արդեն նոր ու սարսափելի աղետներ էին, որոնք չէին տեսել թուրքերի օրոք:

Վահանին ու Ասատուրին չտարան ռազմաճակատ: Մինչև 1942 թ. կեսերը ուսուցիչներն ազատված էին զորահավաքից, նրանք վերապահում՝ այսպես կոչված «բռնայա» էին ստանում: Ռազմաճակատ տանում էին նրանց, ուլքեր ծնվել էին 1905 թվականից հետո: Եղբայրները որոշեցին Թբիլիսի մեկնել՝ հորեղբայր Մարտիկին այցելելու: 1915 թվին Ղարաբաղիայից, շատերն էլ Իգդիրից, տեղափոխվեցին Երիվան կամ Թիֆլիս: Նրանց թվում էր նաև Մեսրոպի կրտսեր եղբայրը որդու և դստեր հետ: Դեռ պատերազմից առաջ Մարտիկը մի քանի անգամ մեկնել էր Ռուսաստան Թիֆլիս: Քաղաքը նրան շատ դուր եկավ, ասաց, որ այնտեղ մեծամասնությունը հայեր են, քրդերը գրեթե անտեսանելի են, թաթարներ կան, բայց քիչ են, բոլորն իրենց հանգիստ են պահում: Թուրքն զգում է ռուսի գորությունը: Մնացածները քրիստոնյա են: Եվ ամեն անգամ վերադառնալով Ալաշկերտ, նա եղբայրներին կանչում էր Թիֆլիս: Մասունում տեղի ունեցած սպանողը նրանց զգուշացրեց, բայց եղբայրները, չնայած դողում էին, ակնակց չդրին: Ըստ ամենայնի պատմություն դասավանդելը նրանց պարտադրում էր ապրել սեփական ժողովրդի մեջ և իր տեղում:

Իսկ մյուս եղբայրը՝ քահանա Գրիգորը, Ռուսաստանից անմիջապես հրաժարվեց շվիման ընթացքում նրան դուր չեկան ո՛չ կազակները, ո՛չ ռուսական բանակը: Մեծ փորով ու յուրուս պարեզոտով մի ռուս տերտեր ման էր գալիս մեջները, Գրիգորին էլ հերետիկոս անվանեց: Գրիգորը հազիվ իրեն զսպեց, որ չպոկի տերտերի բարակ սորոսը:

Դե, Մարտիկին Թիֆլիսը շատ դուր եկավ՝ զվարճալի քաղաք էր: Գաղթից հետո տղաները մի քանի անգամ գնացել էին Թիֆլիս: Մարտիկը սազ էր նվագում ու ձայնն էլ Աստծուց լսվեքում էր: Միշտ հացի տեր էր, դուքլանի սազանդար, լավ փողեր էր վաստակում հարսանիքների ու թաղումների ժամանակ: Նրան գտան հենց Հավլարարի դուքլանում: Մարտիկն Ասատուրին օգնեց ընդունվել Ներսիսյան ճեմարան:

Ճեռտ Մարտիկին սարսափելի դժբախտություն պատահեց՝ կինը և դուստրը վրաերթի ենթարկվեցին, բեռնատարը, գրեթե միակն ամբողջ թաղամասում, անսարք էր: Որդին մեկնել էր Լենինգրադ. մայրիկի հետքերով էր գնում՝ բժիշկ էր դառնալու: Կուլակաթափությունից հետո Ասատուրը գնաց Թիֆլիս, փնտրեց տունը, բայց չգտավ: Ճարնաններն ասացին, որ տեղափոխվել է, բայց դեռ հասցեն չգիտեին: Մարտիկն ինքը երբեք չէր եկել Երևան, ասե՛ք, Մեսրոպյանք էլ Երևանում չէին, լեռներում հազիվ թաքնվում էին լիազոր ներկայացուցիչներից:

Պատերազմն արդեն մոլեգնում էր, երբ հանկարծ, ամռան արձակուրդների վերջին, Ալվարդն ու Ջավենը Մարտիկից տարօրինակ ձեռագրով և թոռնուհուն պահելու նույնպես տարօրինակ խնդրանքով նամակ ստացան: Բոլորն անհանգստացան: Վահանն ու Ասատուրը շտապ մեկնեցին Թիֆլիս՝ այցելելու հորեղբորը: Պատերազմի առաջին ամիսներին ամեն ինչ գլխավոր էր շրջվել, ճանապարհները խցանված էին, գնացքները գերցված էին: Բոլորն շտապ ինչ-որ տեղ էին գնում: Վահանն ու Ասոն հազիվ գնացք նստեցին: Երկար ու դժվար ճանապարհից հետո հաջորդ երեկոյան վերջապես ժամանեցին Թիֆլիս: Գնացքում բոլորը ահուրդով խոսում էին նահանգի մասին:

Ճակատից շատ վառ լուրեր էին հաղորդում: Եուրջ բոլորը վախենում էին Հիտլերից, գերմանացիներից ու Գերմանիայից: Իսկ Վահանն ու Ասատուրը նստել էին վերին քնադարակում և ամաչում էին ասել, որ իրենք անձամբ ավելի շատ վախենում են նենգ քրդերից և Թուրքիայից:

Մարտիկը կոտնուկա բնակարանում մի մեծ, ընդարձակ սենյակ էր զբաղեցնում: Պատերազմից առաջ նա հրաշքով հասցրեց նույնպիսի կոմունալ սենյակ էլ ձեռք բերել որդու համար: Որդին անմիջապես զորակոչվեց՝ որպես բժիշկ, մեկնեց ռազմաճակատ, բայց նույնիսկ չհասցրեց կռվել: Օգոստոսին իմացան, որ զոհվել է, որից հետո գիշերը Մարտիկը կաթվածահար եղավ և մի կերպ կարողացավ մի քանի տող գրել Երևանի

բարեկամների հասցեով: Նրա բարի հարևան Մայան խուզարկեց տան բոլոր պահարանները այդ հասցեն փնտրելով:

Այս մտայլ աչքերով հայտնիին պատմեց այդ ամենի մասին: Նա խոսում էր Մարտիկի փոխարեն: Խեղճը լրիվ կաթվածահար էր, բայց Մայան նրա հնչեցրած ձայներից ինչ-որ կերպ հասկանում էր:

– Ես կին եմ վարձել, չեմ կարող իրեն մենակ շուտ տալ: Իսկ փող առայժմ ունի, – ասաց հարևանուհին, – բայց շուտով կպրծնի: Մեկ ամսից ավել դժվար թե հերիքի: Նա փողի փաթեթը հանեց կաթվածահար Մարտիկի դռակի տակից, մի քանի նամակ նա և դրեց եղբայրների առաջ:

Երկրորդ հարևանը բեղերով, մտայլ, մոտ հիսուն տարեկան, նայեց դռնից, վրացերենով բարևեց ու գնաց իր սենյակ: Հարևանուհին շշուկով ծանոթացրեց հարևանի հետ.

– Մեզրել է, իրեն զինվորական է անվանում, բայց իրականում... Սենյակն իրեն կվերցնի, – և դառապարտված ավարտեց խոսքը՝ շրթունքները կծկելով: Աղջիկն արդեն քնած էր վարագույրի հետևի հեռավոր անկյունում: Հանկարծ Ասատուրը կողքից հրեց Վահանին: Անօգնական հորեղբոր տեսքից ցնցված նրանք մոռացան հարցնել, թե որտեղ է երեխայի մայրը:

– Ես կարծում էի, որ գիտեք: Նա... նա հիվանդանոցում է... հոգեբուժական...


Եղբայրները սարսափած փակեցին աչքերը:

– Շուտվանի ց...

– Անմիջապես, ծնունդի վրա: Օնկոբարեության ժամանակ դա լինում է... Անհնար էր միասին ապրել: Էնքան փող տվեց լավ սենյակ ստանալու համար:

– Եվ ի՞նչ:

– Աղջկան սկսեց ծեծել: Մի անգամ հագիվ խլեցինք ձեռից: Նա առաջ էլ գիծ էր խոհանոցը կապույտ ներկեց... Մի բան չախես...



Узарты во время правления царей Руси I и Сардури II, 630 — 620 гг до н.э.

Желтый	Царство Армения	Синий	Средиземное море
Фиолетовый	Царство Урарту (685 — 585 гг до н.э.)	Зеленый	Царство Ван
Зеленый	Царство Ван (620 — 540 гг до н.э.)	Красный	Царство Армавир
Синий	Царство Армавир (540 — 510 гг до н.э.)	Серый	Царство Таврос

## Ուրարտուի քարտեզը



Ալթամար կղզու ամրոցը



Ռշտունիների զինանշանը

Ռշտունիքի ազատության համար  
 ինչի վերջ կտոյի արարանքսն զեմ:



Քիչորոս Նշտունի


Ռշխան Թեոդորոս Ռշտունի



Հայաստանի առաջին բաժանումը



Վասպուրական



Չորանամակ



Միտինի քարտեզը 1911-1915



Կամավորականեր



Հայկական կամավորական զուեղ



Կազակները






Հայկ Ասատրյան



Ջորավար Անդրանիկ



Ալաշկերտը  
այսօր



Վանի շրջակա գյուղերը



Հայաստանի Ժամանակավոր կառավարության անդամները



Գալուստ Գյուլբենկյան



Երկու առաքյալների  
եկեղեցին Բաբվում



Վանեցի տիկին, 2014թ.



Ճամբարների բարտեզը



Գնացքը Սիբիրի ճանապարհին



Գնացքի բեռնավորումը

1949

1949թ.  
հունիսի 14-ին  
Հայաստանից  
արտրվածները  
Սիբիրի  
Ռատսիսկայա  
ակաևում:




Սիբիրի արտրված հայ աղջիկները



Ներքին գործերի նախարարի հրամանը



Բարվի ջարդերը



Գևորգյան ճեմարանը

Տեսնելով, որ տղամարդիկ գունատվում են, հարևանուհին սկսեց հանգստացնել:

– Մի՛ վախեցեք, աղջիկը վերցրած է: Աստղիկ մորաքույրն էր դասավորել, հիվանդանոցում գլխավոր բուժքույր էր... Լավ աղջիկ է, մի փոքր վախեցած էր այն վթարից հետո: Տարանք հեքիմի մոտ, ջուր տվեց, վախը չափեց, համարյա անցավ:

Առավոտյան տեսան աղջեակին: Հրեշտակ՝ կապույտ աչքերով, ինչպես փերի: Նա լուռ մտտեցավ եղբայրներին ու տխուր հարցրեց.

– Դուք ինձ հայրիկ եք լինելո՞ւ, թե՞ պապիկ:

Օրերն արագ անցան: Կեսօրին բժիշկը եկավ: Ծանր կուպերը թափ տալով՝ հասկացնում էր, որ բուժումն ապարդյուն է, սիրտը կանգ է առնում...

Այնուամենայնիվ, ինչ-որ կերպ տեղափոխեցին քաղաքի ծայրին գտնվող հիվանդանոց: Դասավորեցին աղջկա իրերն ու խաղալիքները, իսկ մնացած իրերը դրեցին հարևանուհու պահարանում: Հարևանուհին, դեռ մոայլ, խնդրեց ինչ-որ բան կախույքից էլ իր սենյակը քաշել, որովհետև «այս մեկը միանգամից կտանի»: Արանք որոշեցին, որ Վահանը մի որոշ ժամանակ կմնա, ինչը լսելուց հետո բժիշկը հուսահատորեն թափ տվեց գլուխը: Առավոտյան Ասատուրին ու աղջկան, նույնիսկ ավելի դժվարությամբ, քան նախորդ օրը, Վահանը մի կերպ հրեց գնացքի մեջ ու անհայտ ժամանակով մնաց օտար քաղաքում:

Երեկոյան վրացի հարևանի մոտ եկավ մի ընկեր, և միջանցքում երանք սրտանց Վահանին հրավիրեցին իրենց մոտ: Մեծ ու լուսավոր սենյակում պատերի երկայնքով տեղավորված էր անտիկ կահույք, հատակները ծածկված էին գորգերով, իսկ առաստաղից կախված քյուրեղապակյա մեծ ջահը վառվում էր ընդամենը մեկ էլեկտրական լամպով: Սեղանին ամուրի տղամարդու հասարակ ուտեստ էր դրված: Դարգվեց, որ հյուրը հարևանի աշխատանքային գործընկերն է: Հարևանը

շատ ժպտերես էր, անընդհատ բաժակ էր շխկացնում ու ասում.  
«Շենի ճիրիմե, շենի ճիրիմե»:

Նրանք խոսեցին Թիֆլիսի նորություններից և այն մասին, թե ինչ էր կատարվում ճակատում, ու որ մինչ այժմ միայն տազնապալի նահանջ կա: Բայց հարևանի գործընկերը խապոտ ձայնով բացատրեց.

– Մենք ֆաշիստին ձուղակի մեջ ենք քաշում, դա ինչպիսի մարտավարություն է: Ընտրվում ենք: Կուսուղովի պես: Կուսուղովին ճանաչո՞ւմ եք:

«Ահա, թե ինչ: Ռուս գեներալները Կուսուղովից սովորեցին նահանջել: Միայն թե հետո թուրքերը չհարձակվեցին, ընկերներ էին ձեռք բերում», – տխուր մտածեց Վահանը՝ հիշելով հետավոր 15 թիվը...

Չարևանն ընկերոջ հետ Վահանին հարցնում էր ամեն ինչի մասին. ինչպես են նրանք ապրում Երևանում, ինչից են բողոքում, ինչքան աշխատավարձ են ստանում... Վահանը չէր սիրում խմել և անմիջապես հրաժարվեց իրեն անծանոթ չաչալից: Նման օտի երբեք չէր խմել վախենում էր, որ կվատանա: Եվ նա կատակեց.

– Թուրքն ասում է՝ հոնքի փոխարեն աչքս կհանեմ:

– Դուք թուրքերեն գիտե՞ք, – զարմացավ հյուրը:

– Իհարկե, ես գիտեմ և քրդերեն, և թուրքերեն: Ռուսներենն էլ՝ բայց վատ...

Եվ ինչո՞ւ ասաց:

– Դե, ռուսերեն սովորելն այդքան էլ դժվար չէ: Նրանք ամենուր կան, և սա անհրաժեշտ լեզու է:

– Այո, հիմա նրանք մեզ թուրքերի փոխարեն են, այն իմաստով, որ այժմ մենք ապրում ենք ռուսների հետ: Այստեղ համարվում էր, որ թուրքերի մոտ ենք ապրում, չեայած՝ սկզբում մերն էր էյ երկիրը... Պատմությունը բոլորին հայտնի է...

Ու հանկարծ սթափվեց և մանկան անմեղությանը ավելացրեց.

– Բայց ռուսները մեզ փրկեցին. Թուրքերը բոլորին մորթելու էին:

Գործընկերներն իրար նայեցին.

– Թուրքերը ձեզ մորթել է՛ն: Հա՛, հա՛, հա՛: Ահա դու նստած ես դիմացս: Իսկ թուրքական անձնագիր էլ ունե՞ք:

– Ի՛նչ թուրքական անձնագիր: 15 թվից մենք ռուսահպատակ էինք, հետո դառանք սովետական:

Վահանն զգաց, որ չպետք է բացվեր նրանց հետ կինոտյի մասին իրենց սրտանց կատակներով ու անեկզուտներ լսելով:

– Դե, դա երկար պատմություն է. ես չեմ ուզում հիշել թուրքերին և ինչո՞ւ հիշեմ: Այստեղ լավ է. գոնե ամեն րոպե չենք վախենում: Եվ երեխաները սովորում են, և դպրոցներն ամեն քայլափոխում կան: Եկեղեցիներն են քիչ: Մենք արանձնապես հավատացյալ չենք, բայց սիրում ենք եկեղեցիներ, – անսպասելիորեն ավելացրեց Վահանը:

– Թրիվիսիում նույնպես եկեղեցիներ կան: Գնացեք այնտեղ, եթե այդքան շատ եք սիրում, – երկուսն էլ ծիծաղեցին իրենց տափափությունից գոհ:

– Ո՞վ է գնում խալխի եկեղեցի:

Վահանն իրեն անհանգիստ էր զգում: Ինչ էլ որ ասի, ուրիշ բան է ստացվում: Պետք է խմեր նրանց հետ, այլապես խոսակցությունը լավ չէր ստացվում, երբ դիմացինը հարբած է, իսկ դու՝ սթափ:

Մի քանի օր անց հորեղբայրն անցավ այլ աշխարհ: Դուքյանից երաժիշտներ եկան, ամեն ինչ վերցրին իրենց վրա, պատվով-հարգանքով թաղեցին: Գերեզմանատանը նրանցից մեկը շատ երկար էր երգում Մայաթ-Նովայի «Դուն են գլխեն» երգը՝ երևի կրկնում էր մի քանի անգամ: Չէր սպասում, որ այն կարող է երգվել թաղումների ժամանակ: Կինը միշտ երգում էր տանը. ապակիները զրնգում էին:

Ուղղափառ հարևանների համար Մայան *կուտրա* էր պատրաստել, հայերի համար՝ խաչլանա: Հուղարկավորու-

թյունից հետո մի քանի հայ տուն եկան, բաժակ բարձրացրին լավ մարդու համար, հիշեցին նրա կնոջը, դստերը, որդուն ու բաժանվեցին: Հաջորդ ատավոտ Վահանը շուտ պարկեց քնելու, ստիպված պիտի գնար տնային կառավարիչի մոտ՝ բանալիները հանձնելու:

Այ հենց գիշերն էլ եկան տարան:

*Ռշտունի Վահան Մեսրոպովիչ  
Մնվել է 1896 թ., Թուրքիայում: Ազգությամբ՝ հայ, կրթությու-  
նը՝ բարձրագույն, բանտարկյալ՝ Իրկուտսկի մարզի Տայշեթ  
քաղաքում:*

*Շերբակյավել է 1941 թվականի նոյեմբերի 23-ին: Դատա-  
պարտված է ՌՍՖՍՀ Քրեական օրենսգրքի 19-րդ, 58-10-րդ մա-  
սի 2-րդ և 8-րդ հոդվածներով:*

*Դատավճիռ. Մահացել է 10/30/42 թ.-ին, Ալեքսանդրովյան  
բանտի հիվանդանոցում:*

*Վերականգնվել է 1993 թվականի հոկտեմբերի 15-ին  
Իրկուտսկի մարզի դատախազության կողմից:*

Ազդուրը՝ Իրկուտսկի շրջանի հիշողության գիրք:

Մտալ Մայան իրեն քնած էր ձևացրել և դողում էր իր սենյակում՝ չհամարձակվելով անգամ դուրը բացել: Բայց լսում էր ամեն ինչ: Վահանն անընդհատ հարցնում էր.

– Իսկ ի՞նչ է պատահել: Ես նույնիսկ իրեր չունեմ այստեղ:  
Հիվանդ հորեղբորս մոտ եմ եկել:

– Մեզ Թուրքիայից հենց այսպես, առանց իրերի լրտեսներ են ուղարկում: Այնտեղ ամեն ինչ կախումք:

Տեցիք մեկ-երկու շաբաթ ոչ մի լուր չունեին Վահանից: Մտածում էին, որ նստած է իր հիվանդ հորեղբոր հետ և խնամում է նրան: Ասատուրը, զբաղված իր դպրոցներով, գյուղերից տուն չէր գալիս: Թռռուռիկն մնաց Մեսրոպի մոտ, այդ նուրբ, սիրալիք աղջնակը անմիջապես սիրվեց: Հանկարծ հարևան Մայայից լուր եկավ, մեկ այլ տարօրինակ նամակ

ուղարկեց. «Հորեղբայրը մահացավ, թաղվեց, Վահանին տարան: Պերեդաչին ՎԵՆՏԻՆ (չգիտես ինչու՝ մեծատա-  
ներով), այնուհետև ԶՎԵՆՏԻՆ»:

Երանք զգուշորեն իրենց ծանոթներին հարցրին՝ ո՞վ կարող է բացատրել, թե սա ինչ է նշանակում: Խորամանկ Ջավերը վախեցած ասաց.

– Երբ պերեդաչեն վերցնում են, նշանակում է, որ նա ողջ ու առողջ է: Երբ չեն վերցնում, կամ տարան, կամ... – և սկսեց տրորել աչքերը:

Առանկիքը սգի մեջ էր... Վախենում էին հայտնվել Թիֆ-  
լիսում. սկսեցին սպասել այստեղ: Այնպիսի մարդիկ սկսեցին անհետանալ, այնպիսի մարդիկ: Նրանց բոլորին կոչում էին կամ տրոցկիստ, կամ դաշնակցական: Իսկ էթե կրթություն է ստացել, շատ լեզուներ գիտի, ուրեմն լրտես էր: Նախ Յագոբային գնդակահարեցին, հետո Եժովին, հետո անագին գինվորական սպաների... Մի փոքր հանգստացան: Բայց մինչ այդ շատ մարդկանց գնդակահարեցին:

Եթե Վահանը մնար այստեղ, մինևույն է, համալսարանից կվերցնեին... Անմխիթար Մեսրոպն ու Մարիամը համոզված էին, որ ինչ-որ մեկը մատուել, զրպարտել է իրենց տղային...

Մարիամի աչքերն անընդհատ թաց էին, թաքցնում էր բոլորից: Եվ Վահանն անհետացավ, և սիրելի կրտսեր եղբորը Բալաբեկին, զիշերը տարան, հետո տարան նաև նրա կնոջը: Տղաները թաքնվեցին, փառք Աստծո, նրանց չգտան: Այստեղ գյուղում էին. նրանք մեծացան իրենց բոլոր թոռների հետ: Իսկ Բալաբեկի տանն ինչ-որ մեկն արդեն տեղավորվել էր, ասում էին՝ նույնիսկ տանն է գինվորական համազգեստով գրոսնում:

Պատերազմից Բալուն կենդանի վերադարձավ: Պարզվեց, որ նրան քշել էին պատժագումարտակ: Ծանր վիրավորվել էր, բայց գեղեցիկ, հզոր տղամարդը ողջ էր մնացել (դուրս արծավ, բայց հաշմանդամ դատնալու համար): Խեղճ Բալաբեկ: Հազիվ էր խելքի եկել, և 1949 թվին նրան կրկին արտոբեցին Ալթայի

երկրամաս՝ Բառնաուլի մուտակայքում ինչ-որ տեղ, ո՞վ իր ընտանիքում գիտեր այդպիսի քաղաքի մասին:

Բայց մի թե փորձությունը մենակ է գալիս: Վահանի որդիներից Խաժակը՝ մի անխելք պատանի, աշնան վերջին երկու-երեք ծխախոտի տուփի դիմաց «աթանդայի» կանգնեց լրիվ անծանոթ տղաների համար: Իհարկե, հենց որ գողերին բռնեցին, նրանք Խաժակին մատնանշեցին որպես հանցակից: Խաժակը երդվում էր, որ առաջին անգամ է տեսել նրանց, որ իրեն չեն զգուշացրել, թե իրենք «աշխատելու են»: Նրանք ընդամենը երեք տուփ ծխախոտ առաջարկեցին, որ տան անկյունում կանգնի և եթե ինչ-որ մեկին տեսնի, սուլի: Եվ նա՛ անտուղել հիմարը, չգիտեր գողերի կանոնները:

Քննիչն անհավատորեն ձգեց իր բարակ շրթունքները.

– Դե հա՛, դու էլ չհասկացար, թե ինչն էս զգուշացնելու, թե ինչ է կատարվում անկյունից այն կողմ:

– Ասում են՝ արդեն մոպե՛ էր: Ինչ-որ մեկը թակեց դուռը, ներս մտավ, ես էլ սուլեցի... Ո՞վ կմտածեր, որ այդպիսի սրիկաներ են, – ողբում էր Խաժակը ու միանգամից խելոքացավ՝ չհաշտվելով այն մտքի հետ, որ ամեն ինչ կորած է:

Երբ սրիկա ավազակներն ապակին անձայն հանեցին, և մինչ հանցակիցը լուռ դնում էր ապակին գետնին, երկրորդը ցատկեց ներս... ու ընկավ մահճակալի վրա՝ ճիշտ տան տիրուհու սիրեցյալի գիրկը, որը դեռ չէր մերկացել: Բայց ախր խեղճ ընկերը «ճշգրիտ» տեղեկություն ուներ, որ տերը մեկնել է գյուղ: Սիրահարը հիմար չէր՝ նա անմիջապես տանտիրուհուն ուղարկեց թղավելու ու կանչելելու հարևանների, որոնք գնացին ոստիկանություն: Հանցակից ավազակներին բերման ենթարկեցին, իսկ խեղճ Խաժակը, որն անմեղ սպասում էր անկյունում, նույնիսկ չհասցրեց զարմանալ, երբ տեսավ, որ երկու-երեք միլիցիաներ նետվեցին իր վրա:

Առաջին ժամկետը տվեցին մանկական գաղութում: Երեք ամիս անց փախավ, նոր ժամկետ ստացավ և ուղարկվեց Ռու-

սաստան, ի՛նչն էր բոլ՝ Սիբիրի բանտերը: Մեկ-երկու տարի անց նա այնտեղից էլ փախավ՝ ռեցիդիվիստ, տուն կտրող բանտարկյալի հետ: Ըստ ամենայնի՝ նրան նիհար հանցակից էր պետք, և, ահա, չհայտնելու համար երեք տարին հետոհետև վերածվեց 20 տարվա... Անհայտության հետևանք:

Բոլորը, ում ճանաչում էր Մեարայը, զորցում էին, բարևում: Իսկ ովքեր մնացել էին նախորդ արհավիրքներից հետո՝ որդիներ, փեսաներ, ավագ թոռներ, հարազատներ, հարևաններ, բոլորին ռազմաճակատ ուղարկեցին... Ինչո՞ւ է այդպես դաժան մարդկային օրերը... հենց տղաները մեծանում են, մի նոր պատերազմ է սկսվում: Թերթերում կարդում էին, ռադիոյով շուրջօրյա լսում, որ գերմանացին ռմբակոծում է և՛ Եվրոպան, և ԽՍՀՄ-ը՝ Ուկրաինան, Բելառուսը, Ռուսաստանի քաղաքներն անընդմեջ ռմբակոծվում են... Իսկ մերքե կրվում էին ու առայժմ նահանջում: Բայց այն, թե ինչ էր իրականում տեղի ունենում այնտեղ, միայն պատերազմից հետո սկսեցին իմանալ, սակայն, իհարկե, ոչ ամբողջ ճշմարտությունը:

Ամբողջ ճշմարտությունը դեռ լրիվ հայտնի չէ, և, չգիտես ինչու, վերինից արգելում են, արխիվները փակում...

Մեարայը լավ գիտեր, թե ինչ է նահանջը: Նրա աչքերի առաջ դաշտեր ու գյուղեր էին գալիս, որոնց միջով ռուսական բանակը նահանջում էր... Հայերի համար դա վատ է, շատ վատ, երբ ռուսական բանակը նահանջում է: Աստված չանի, եթե հարավից թուրքերը հարվածեն, ապա այդ փորձանքից ու՛ր փախչես, մեր ճամփեքը փակ են... Վտանգի այդ սպասումն արմատավորված է տաճկահայերի մեջ, ովքեր դարեր շարունակ ապրել են թուրքի կողքին: Ինչ էր որ պատահի, առաջին հերթին պետք է զգուշանալ դրանցից...

– Եթե միայն թուրքերը նորից չխելազարվեն, գոնե լավ է, որ ռուսը կա, – հոգոց հանեց Մարիամը:

– Մե՛ք, աղոթի՛ք, որ ռուսն ու թուրքն ընկերներ չդառնան, – Ասոն նույնիսկ այս օրերին կարողանում էր հանաք անել, իսկ

անհավատ Մարիամը վախեցած խաչակնքում էր: Բայց թուրքերը, զգիտես ինչու, պատերազմի դաշտ չէին մտնում՝ հավանաբար նրանք սպասում էին, թե ով է ավելի ուժեղ կամ վախենում էին Անգլիայից ու Ֆրանսիայից:

Վախկոտ շնագայլեր: Նրանք քաջ են միայն, երբ անգնեքրիստոնյաների հետ գործ ունեն: Բայց Մեսրոպը, միննույն է, անհանգստանում էր, թե հիմա գլուխն ուր խփի, եթե ռուսները նահանջում ու նահանջում են: Ձմեռը գալիս է. առաջ ձմռանը կռիվ չէին անում:

Մարիամն ամբողջ օրն զբաղված էր տան գործերով ու աշխօր հավաքելով: Մեսրոպն օգնում էր, ինչքան կարող էր, իսկ իր գրառումներն անում էր գիշերները, երբ բոլորն անկողնում էին, և գլուխն ավելի պարզ էր: Երբեմն, չաքերը կիսախուփ, տեղի հարևանների համեմատում էր իր հարսների, թոռնուհիների և Մարիամի հետ: Տարբեր, շատ տարբեր էին: Մշեցին, երզրումցին տարբերվում էին իրենց խառնվածքով, պայթյունավտանգ ու կոպիտ էին, մանավանդ սասունցիները: Ալաշկերտցի կանայք լուռ էին, սիրում էին ծիծաղել, թեթևակի կատակել, բայց իրար մեջ: Երբ թոռները դարձան կոմսոմուլ, արդեն ծիծաղում էին բակով մեկ, բոլորի հետ միասին: Բոլորովին այլ աղջիկներ կմեծանային, քան թուրքերի ժամանակ... Թուրքերի օրոք աղջիկներին ի՛նչ կրթություն, միայն ամուսնություն՝ 10-12 տարեկանից, որպեսզի ստոր քրդերը չգողանան: Աչքերն ամեն ինչի վրա դնում էին. աչքը թեքեցիր, բալիղ տերը չեա:

Բոլորը, ովքեր մնացել էին, աշխատում էին ռազմաճակատի համար: Կամ, կարելի է ասել, որ աշխատում էին երկու ճակատում: Մի թոռնիկն ու իր փեսացուն ընդունվել էին պարաշյուտիստների խումբ: Նրանք մտա կես տարի մարզվեցին, փեսան թռավ և անհետացավ առանց որևէ հետքի՝ պատերազմի մեկնարկից անմիջապես հետո, իսկ թոռնուհուն արդեն արգելեցին մասնակցել: Մկենց դասավանդել գյուղական դպրո-

ցում: Չամուսնացավ... Սպասում էր ու սպասում տարիներ շարունակ, նույնիսկ լսել չէր ուզում ամուսնության մասին...

Ամենաերիտասարդ Ասատուրին վերապահման թուղթ տվեցին: Կրթության ժողովրդական կոմիսարիատը շարունակեց ընդլայնել շրջանների նոր դպրոցները: Բայց, միննույն է, նրա բախտը չբերեց. թուրքերի հետ այն պատերազմում վիրավորվելուց հետո Ասոն հաճախ էր հիվանդանում...

Պատերազմի ծանր, սոված տարիներ... Օրեցօր հույսը փոխարինվում էր նոր դժբախտության ակնկալիքով, բայց հույսերը չէին կտրում: Պատերազմն այդպես է՝ գոհն ու հավատն իրար կողքի են... Մեսրոպը զգիտեր որևէ մեկին, ով ավելի լավ է ապրում, քան մնացածները: Միգուցե և եղել են, բայց նա երբեք չի տեսել և չի ճանաչել նրան. տարբեր ճանապարհներով են գնացել: Ձգեստներն ու վերարկուները փոխում էին մի բուռ ցորենով... Մարտիկի թոռնուհին թերսնումից գունատվել էր: Անգամ հողն էր հրածարվում կերակրելուց, բերք չկար... Մարիամը կացաբուլկեղենի գործարանում աշխատանքի ընդունվեց. կանքը մի փոքր հեշտացավ...

Երկար տևեց այս պատերազմը, շատ երկար: Մն թուղթ ստացան յուրաքանչյուր երկրորդ կամ երրորդ տանը... Բայց այս անգամ Ասոված խնայում էր Մեսրոպի օջախը, երկու թոռները, երեք փեսան ողջ վերադարձան, թեկուզ վիրավոր ու խելաված... Ձավենի հարազատներն ավելին կորցրին, իսկ երա երկու որդիներն անհետ կորան: Ոչ մի նամակ: Վերջինը Կերչից էր, պատերազմն սկսելուց գրեթե անմիջապես հետո... Նրանց մայրն օր օրի հալվում էր... Երկրորդ փեսան հազիվ դուրս եկավ շրջապատումից... Կերչում բոլորը կամ մահացան, կամ ընկան շրջափակման մեջ և գերեվարվեցին: Ասում էին, որ գերեվարվածներիև վերադարձից հետո կամ քշում էին շուրաֆ-բաու քրեակատարողական գումարտակներ՝ իրենց մեղքը քավելու համար, կամ՝ Միբիր... Ո՛վ գիտի, ճիշտ էր, թե ոչ, բայց քիչ մարդ էր այնտեղից վերադառնում...



Վահանի որդու՝ Մարտունից, ոչ մի նորություն, նույնիսկ սև թուղթ չստացան: Միգուցե նա նույնպես գերի էր ընկել ու ողջ էր: Բալաբենկից ոչինչ չկար, ինչ պատերազմը սկսվել էր... Մեկին հանդիպում էս, այքերն իջեցնում է, միայն կորուստների մասին են խոսում կամ սպասում են նրանց, ումից լուր չկա... Բոլոր հարևանները թաքցնում են իրենց սուգն ու ասի՝ բոլորի վիշտը կամ քո տուն մտավ, կամ էլ անցավ հարևանի տուն...

Երբ ոչինչ հնարավոր չէ անել կամ փոխել, մարդկանց մնում է միայն սպասել:

Իսկ երբ պատերազմը վերջացավ, իհարկե, ուրախացան, նայում էին շուրջներն ու չէին հավատում. հոգու ներսում արդեն ուժ չկար ուրախանալու նույնիսկ հաղթանակի համար... Դանդաղ ու դժվար էին դուրս գալիս պատերազմից... Նույնիսկ երեզ զինվորն անտու ու անթև տուն գար, բոլորը երջանիկ կլինեին, որ ողջ վերադարձավ: Օտար երկրում թաղված երիտասարդների հարսնացուների այքերը սատել էին անհուսությունից. այրիները երեխաներին անհայր պետք է մեծացնեին, մայրերի այքերը կուրացել էին արցունքներից, շուրջն ավերածություն, սով, լրիվ պաշարները կերան, դաշտն էր կերակրում... Հաղթանակը հույս սովեց բոլորին. շուտով ավելի լավ կլինի՝ ընդ որ թշնամիները պարտված և ուժասպառ են: Մի թշնամի մնաց միայն. անհաղթահարելի էր: Ի վերջո, խորամանկ թուրքերը պատերազմի հենց վերջում դուրս եկան արդեն պարտված ֆաշիստի դեմ: Անիծյալ զերմանացիներ. երկրորդ պատերազմն ու արհավիրքը բերին գլխներին...

Այս անգամն էլ չեղավ, չստացվեց վերադարձնել իսկված հողերը... Համառ լուրեր էին պտտվում, որ դրանք կցվելու են ԽՍՀՄ-ին, նույնիսկ սառն էին, որ Մոսպիլեն այնտեղ արդեն Կոմունիստական կուսակցության քարտուղար է նշանակվել: Հետո միտքը փոխեց կամ չստացվեց, մյուս պետություններն ինչի կբողենին... Ու դեռ հայտնի էլ չէր, թե ում կմիացնեին վրացիներին, թե՛ Բարբին: Երանք էլ թուրքից հեշ պակասը չէին

20-25 տարի առաջ Շուշվա ջարդի մասին ո՞վ չգիտի. քաղաքն ավերեցին, ժողովրդին կոտորեցին:

Մերսույր մի ձեռքով դժվարությամբ փեթակից հանում էր մեղրի շրջանակները. նա կուզեր մտածել միայն մեղուների մասին: Բայց չէր ստացվում՝ անընդհատ միտքը շեղվում էր թուրքերի և պատերազմների կողմը:

Թոռներից մեկը՝ Վահանի ավագը, պատերազմի վերջում, դայրոցն ավարտելուն պես՝ անմիջապես գնաց ռազմաճակատ: Նա ծառայեց երկու տարի, ինչ-որ կերպ հասավ Բեռլին, դարձավ բժշկի օգնական և այնտեղ սովորեց խմել: Հետանիքում ոչ ոք չէր խմում: Ըստ երևութի՝ տղայի դեռ չձևավորված հոգեբանությունը չէր դիմանում տեսածին. այդ ամենը նա խեղդում էր տան արաղի մեջ: Ինքն էլ այդ արաղը քաշում էր նկուղում՝ երբեք չվաճառելով ավելցուկը, և չէր էլ հյուրասիրում՝ անմիջապես կմատնեին: Ոչ ոքի չէր լսում, անգամ պապին, որին բոլորը ենթարկվում էին: Սթափվում էր. ոսկե ձեռքեր ուներ, այնպիսի վարպետություն. իսկական նկարիչ էր: Բայց խմելով՝ իր կյանքը պղտորում էր:

Մի անգամ աղաղակեց տատիկի մոտ.

– Մե՛ծ մամա, նույնիսկ Բեռլինում... թվում է, թե Եվրոպա է, մենք էլ՝ սովետական մարդ... բայց այնքան ահավոր էր: Միրոս խառնում էր տեսածիցս, չի լինի քեզ պատմել...

Երիտասարդը չհասցրեց ստել իր համար նոր թշնամուն, ինչպես սառն էն՝ մեր տան թշնամին ուրիշ էր: Երա կարծիքով՝ այնտեղ ապրում էին վախեցած, հասարակ մարդիկ ու կանայք. նրանք թերթերում նկարված ֆաշիստներին նման չէին... Բայց նրանց որդիներն ու ամուսինները ... դա ուրիշ. նրանք արդեն իսկական ֆաշիստներ էին, իսկ այդ կանացից վրեժ էին առնում... . . .

Մարիամը շոյում էր թոռի շեկ գանգուրները և շշկջում.

– Ոչ ոքի մի ասա, բայա ջա՛ն, փա՛կ պահիր բերանդ, անունդ հակահեղափոխական կդնեն: Գերմանացիներն էլ են

մեր թշնամին: Ես ու պապը հիշում ենք՝ նրանք թուրքերի հետ միասին էին պատերազմում կոտորածի տարին: Միայն թե Ռուսաստանի դեմ լինեն, իսկույն միանում են: Պապը ասում է, որ բացի մեզանից ոչ ոք չի սիրում Ռուսաստանին՝ ոչ չ գերմանացիները, ոչ էլ անգլիացիները... Այնպես որ, ինչքան գիտեմ՝ տառապում ենք, բայց ուրիշ մեկը չկա, ում վրա հույսներս դնենք:

Երբեմն Մետրոպիտ թվում էր, թե իր շրջապատում միայն մատնիչներ են ապրում, ոչ ոքի չէր վստահում, իսկ տեսրոն ու գրառումները պահում էր պուտուկների նկուղում:

Պատերազմից հետո թոռներն Ավվարդի, Ասոյի ու Ղազարի հետ տեղափոխվեցին քաղաք. ապրում էին կենտրոնում, որն առաջներում Թափարաշ էր կոչվում, այժմ կրկին Կոնդ էին անվանում: Կոնդի բլուրում պարսից կամ թուրքական սևներն արքատ գյուղացիների համար էին, նրանք վաղուց թողել գնացել էին: Ահա այդպիսի նվեր ստացան մարդաշատ ու գերբնակեցված քաղաքում: Նրանց ընտանիքին մեկ սենյակ տվեցին: Բայց դա արդեն քաղաք էր, չնայած Կոնդը առանց հարմարությունների էր, կեղտոտ ու խայտաբղետ, բայց որտեղից ասես, չէին եկել բնակվելու...

Փեսան նույնպես տեղափոխվեց այնտեղ: Նրանց բակն ավելի հարուստ թուրքի էր եղել՝ առվակով ու փոքրիկ լողավազանով: Իսկ տունը հաստ քարե պատերով էր, կարծես ամրոց լիներ, և գեղեցիկ, կամարակապ պատուհաններով: Բակում մեծ թթևիներ, ծաղիկներ էին, ոչ մի բանջարանոց. կարծես այգի լիներ: Փեսան աշխատում էր առևտրի ցանցում, լավ փող վաստակում: Նրա ընկերները, պարզ է, նույնպես հարուստ էին: Առևտուրը ձեռք համար դասավանդել հո չի, ուր միայն չոր աշխատավարձն է: Ինչ-ինչ, բայց առևտրի աշխատողները միշտ գոհ են իրենց գործից: Բոլորն ապրում էին կոոք կոոքի, պատից պատ, հարմարավետ և ուրախ, թոռներն ու ծոռներն էլ աչքների առաջ:

Բայց հային հավերժ ուրախություն չի հասնում, ճակատագիր է:

Մի օր եկավ հերթական սև գիշերը...

Հաղթանակից հետո չորրորդ գարունն էր, թե՛ արդեն ամառ էր: Ինչպե՞ս կարելի է մոռանալ այդ օրը՝ հունիսի 13-ը, այդ սև երկուշաբթին, սև երեքշաբթի օրը հայերի համար: Օրը գիշեր էր:

Հարսի ծնողները գյուղից նորածնին այցելության էին եկել: Միս էին բերել, փլավի համար բրինձ ճարել, նշում էին երկար սպասված տղա-ծոռի ծնունդը. միևն այդ բոլոր ծոռներն արջիկ էին ծնվում: Այս ծոռն էլ էր հրեշտակի նման՝ շեկ մազերով ու կապույտ աչքերով. իրենց ցեղի գույները: Կինն ու հարսները սեղան էին գցում: Գաթա, փլավ, խաշլամա: Էլ ի՞նչ է պետք սոված մարդուն:

Մետրոպի դուստրերն աշխատասեր ու ճարպիկ էին: Ինչ որ կերպ այնպես էր ստացվում, որ ընտանիքի իգական մասը՝ դուստրերն ու թոռները, գնում էին սովորելու՝ հայ գրականություն ուսուցանելու համար: Ճիշտ է, շատ լավ ձայն ունեցող թոռնուհիները երգում էին Ռոմանոս Մելիքյանի երգախմբում (այնտեղ մենակատար էին, մտածում էին, որ երգիչ կլինեն), բայց նույնպես գրականության ուսուցիչ դարձան: Նրանց աղջիկներն էլ ավարտեցին մանկավարժականը և պատմաբան դարձան: Անիկն իր երեխաների և ամուսնու հետ հանգստյան օրերին գնացել էր Կոտայքի գյուղ սկեսրոջը խնամելու. նա վաղուց էր հիվանդ: Եվ այն հունիսյան գիշերը մնացին այնտեղ, իսկ հետո վախենում էին նույնիսկ հայտնվել քաղաքում:

Օրը մնալ էր, անձրևոտ. գիշերն անձրև էր գալիս: Ավագ փեսան մրսել էր, տենդով պատկել տանը: Մեղանն արդեն օցել էին, ծոռան հայրը բացակայում էր՝ ռենտգեն-տեխնիկ էր և աշխատում էր հեռավոր շրջաններում: Ուշանում էր, սպասում էին՝ Աստված տա մեքենան չհիշանա: Երբ հասավ, աչքերն արդեն փայլում էին. մի տեղ հասցրել էր մի բաժակ դատարկել:

Կանայք սկսեցին միահամուտ և զգուշորեն հավաքել սեղանը՝ փորձելով անաղմուկ լվանալ սպասքը: Օտորը հագիվ քնեց: Բավականին ուշ էր, երբ դուռն ուժեղ թակեցին:

Մեսրոպը պատրաստվում էր քնելու: Ուզում էր քնելուց առաջ գնալ բակի զուգարանը, կանգնած էր դուռն մոտ և թխկոցը լսելուն պես անմիջապես բացեց:

Երեք տղամարդ ներս մտան՝ սև բաճկոններով, այնպիսի մտայլ դեմքերով, կարծես բուլոբն իրենց պարտական էին: Երկուսը նիհար էին, ինչպես «չխոտկա», մեկը կարճահասակ ու գեր: Նրանք նայեցին շուրջը շուրջը և, չգիտես ինչու, մոտեցան օրորոցին: Հոտոտեցին օդը՝ տապալկած սոխի և մսի հոտը դեռ չէր վերացել, ըստ երևույթին սուված էին, երկի շուտվանից էին սկսել շրջայցը:

Մեսրոպը մեկնեց իր միակ ձեռքը՝ անկոչ հյուրերին հրավիրելով սեղանի մոտ:

– Նստեք, խնդրեմ, ծոռ է ծնվել, քառսուներև ենք նշում, – սկսեց Մեսրոպը, բայց նրանց ավագը կոլուտը, կտրուկ կանգնեցրեց:

– Դուք ունե՞ք Ռշտունի Ասատուր, Ռշտունի Ղազար, Ռշտունի Կահան, Ռշտունի Մեսրոպ, որ մասնակցել են պատերազմին:

– Այո՛, իհարկե, փառք Աստծո, նրանք ողջ վերադարձան: Ես չեմ կռվել, դեռ Թուրքիայից ձեռք չունեմ: Իսկ ի՞նչ է պատահել:

– Այստեղ մենք ենք հարցեր տալիս, – ատամների արանքից նետեց կոլուտը: – Եվ զգուշացնում եմ ձեզ՝ չգոռաք կամ ոռնաք, – դիմեց նա վախից կուչ եղած կանանց:

Մեսրոպը ոչ մի բանավոր կապ չունեի հարսների հետ: Պապենական սովորույթները խոր ու ամուր ներթափանցված էին նրա մեջ, ինչը խորհրդային կառավարությունը դեռ չէր կարողացել արմատախիլ անել կամ «հին» մարդկանց վերակրթել: Հարսների հետ խոսում էին սկեսուրներն ու տալերը. սկեսրայ-

րի հետ չէր թույլատրվում: Ամենաբացառիկ դեպքերում հարսն ամենաշատը կարող է ինչ-որ բան հարցնել:

Բայց երբ հարսն սկսեց լաց լինել, իր համար էլ անսպասելիորեն Մեսրոպը բղավեց նրա վրա:

– Մի՛ լացիր, կաթը կկտրվի:

– Մեր տեղեկություններով՝ նրանք կռվել են դաշնակցական ջոկատներում, և նրանց հրամանատարներն էին ցարական կամ ալիտակ գվարդիայի գեներալները: Իսկ դուք, գերմանացիների հետ պատերազմում գտնվելով, ուզում եք թաքնվել: Նրանց հրամանատարները վաղուց ստացան իրենց արժանի պատիժը, իսկ մարտական ընկերներից մի քանիսը դեռ թաքնվում են: Բայց մենք բոլորին գիտենք, արդեն բերման ենք ենթարկել... Ոչ միայն Ղաշնակցություն և կուսակցության անդամներ են: Դուք նաև թուրքահայտակա եք:

– Ո՛չ, ո՛չ, մենք Նորհրդային Միության քաղաքացիներ ենք: Գրեթե 30 տարի, նույնիսկ ավելին...

– Բայց դու ծնվել ես այնտեղ, – ճկույթի կեղտոտ եղունգը խոթեց ինչ-որ թղթի մեջ, – և հետո ի՞նչ տարբերություն, եղև ոչ եք, թե ոչ:

Պուտի տրամաբանությունն սպանեց Մեսրոպի բոլոր փաստարկները, որոնք նա պատրաստվում էր բերել: Երբ «չխոտկեքը» գնացին ննջասենյակ, անկողիները հասակին տեսնելով, գեր մարդը ցածրացրեց ձայնը:

– Կարծում եք՝ ես գո՛հ եմ, որ թշնամու կուսակցականների փոխարեն հոյի ու նորածին կերակրողներին անկողնուց հանում եմ, – և շրջվեց, – այստեղ չի սավում, որ դուք հաշմանդամ եք: Ես գեկույց կգրեմ վարչության պետին, ցուցակներից կիեռացնեն:

Մեսրոպը տխուր նայեց կոլուտին:

– Ես երբեք ոչ մի կուսակցությունում չեմ եղել: Ո՛չ, ես երեխաների հետ եմ, առանց նրանց չեմ մնա: Ի՞նչ անեմ այստեղ, – տարեց մարդը շփոթված նայեց շուրջը՝ գերազանց հասկա-

նալով, որ ինքն «ԱՅՆՏԵՂ» էլ այլևս անելիք չունի: Եվ գաղափար անգամ չունի, թե որտեղ է «ԱՅՆՏԵՂ»-ը:

Լսելով «բերման ենթարկվածներին» մասին, Մարիամը միշտ հանգիստ և ուժեղ կիևը, ուշաթափվեց: Մի կերպ ուշքի բերեցին: Բայց դա նրան չխանգարեց խփել ձևկներին ու լացակուրմած շուրջը նայելով տևրալ: Աղջիկներն արթնացան, հագնվեցին և հետաքրքրությամբ ու վախեցած դիտում էին հյուրերին զգալով, որ նրանց հետ ինչ-որ փորձանք է եկել իրենց տուն:

Կուտոր մի բույե լրեց, ապա կարգադրեց.

– Հագնվե՛ք, պատրաստվե՛ք, մեկ ու կես ժամ ունեք, կարող եք անկողին վերցնել, գրքեր, աման-չաման, կոշիկներ, տաք հագուստ: Շտապե՛ք:

Հայացքն ընկավ մանկան օրորոցին: Ձեռքի շարժումով նա պահանջեց վերցնել քնած երեխային: «Չիխտակերև» սկսեցին խառնել անկողինը: Սենյակը լցվեց նորածնի թույլ, աննման բույրով:

Հյուրերը գնացին դեպի գրքերը, բացեցին, փակեցին, ոչ մի հետաքրքիր բան չգտան, այնուամենայնիվ, ցցեցին հատակին, ապա բարձրացրին մահճակալը, շրջեցին: Մտերույը հասկացավ, որ նրանք ձևի համար են խուզարկում՝ հիմա ի՞նչ դաշնակներ կարող են լինել: Կամ, գուցե, բարուրով երեխան ամաչեցնում էր:

Թոռն արդեն թեթև խմած էր և, ըստ երևույթին, լավ չէր հասկանում, թե ինչ է կատարվում:

– Ընկերներ՛ք, սիրելիներ՛քս, կարո՞ղ ենք խմել որդուս կենացը: Ես հասա Գերմանիա ու ողջ մնացի: Եկեք դրա կենացն էլ խմենք:

Կարճահասակը, որն ավագն էր, մերժեց հրավերը.

– Ձեզ պետք չէր թույլ տալ մեկնել Գերմանիա այնտեղից բոլոր թուրքերն ու դաշնակցականները վերադարձան որպես

լրտես: Մենք ժամանակ չունենք, հավաքվե՛ք, ստորագրե՛ք, մեկ ու կես ժամ ունեք:

– Ի՞նչ թուրք: Ո՞վ է այստեղ թուրք, – չհասկացավ թորը:

Բայց գիշերային բաճկոնավոր հյուրերն արդեն իջնում էին բակ...

Մտերուպի ոտքերը ճկվում էին, նրա միակ ձեռքը չէր ենթարկվում: Նա նոթատետրն աննկատ խցկեց ծոցը, մինչ նրանք դես ու դեն էին նետվում պատշգամբի շուրջը, ապա գնացին ինչ-որ տեղ: Վերադառնալով՝ բոլորին պատրաստ տեսան, սգավոր դեմքերը պատերին հատած՝ մի քանի գորգ էր մնացել կախած: Եկածները նույնպես նայեցին, և «կարո՞ղ ենք գորգերը վերցնել» հարցը, կոտորը լուտ շարժեց ձեռքը՝ ըստ երևույթին՝ իրենց այրքան էլ դուր չէին եկել մաշված գորգերը: Նրանք վերցրին մի քանի բարդան, բարակ միևնույնները պինդ կապեցին մի պարկի մեջ, ոչխարի բրդի մի պարկ ևս շարժեցին իրերի կույտի մեջ: Որքա և օգտակար դարձավ այս մանվածքը սիբիրյան ցրտաշունչ օրերում: Կլորեցին գորգերը, որոնք հասան Միբիրի աղքատ գյուղերը: Այնտեղ գորգ տեսնելիս հայերին անվանում էին «խարուստ»:

Տանը հաց կար, լավաշ, մի քիչ պանիր՝ ընդամենը երկու-երեք օրվա ուտելիք... Հարսը կարսայի մեջ հապճեպ խաշեց բրինձը, դառնման ճանապարհի սպիտակեղևի հետ նետեց տոպրակի մեջ: Կուտորը խորհուրդ տվեց ջուր վերցնել: Բանալիները հանձնեցին ներքևի հարկի հարևանուհուն, որոնք շատ երջանիկ էին նրանց բազմանդամ ընտանիքը չէր տեղավորվում մեկ սենյակում: Երբ շվարած վերցրին բանալիները, նրանք չգիտեին, թե ում շնորհակալություն հայտնեն՝ չեկիստների՛ն, թե՞ իրենց խեղճ հարևաններին:

Իջան բակ: Փողոցում դարպասին քիփ կպած մի բռեռատար մեքենա էր կանգնած: Բուրբը մի կերպ խցկվեցին՝ մեքենան արդեն լիքն էր: Նույն արցունքոտ ու շփոթված դեմքեր, ի-

բերի վրա նստած, և համարյա բոլորը ծնկներին մի բոխչա էլ դրած:

Բեռնաթափվեցին պարետատան գրասենյակի մոտ, իսկ մեքենան վերադարձավ, հավանաբար, նոր գոեերի համար:

Մոտ 60–70 մարդ էր հավաքված բակում՝ երեխաներ, կանայք, ծերեր: Տղամարդիկ մտալ կանգնած էին մի կողմում: Լուռ էին, միայն դեմքերն էին խոսում: Մարիամը նայում էր շուրջը.

– Ղազարն ո՞ր է:

– Չգտանք, Մարիամ ջան: Ասոն էլ չկա, հարցնում են՝ որտեղ են, բայց ես էլ չեմ կարող պատկերացնել՝ որտեղ կարող են լինել: Մերոնք բոլորն այստեղ են՝ բակում:

Ասոն միշտ այս աշխարհից չէր: Բոլոր իրադարձություններն ինչ-որ կերպ նրա կողքով էին անցնում: Երևի զվարճաւում էր ընկերների հետ. շենք էին գցել ընկերոջ ընտանիքի համար: Եկել էր տուն, և երբ հարևանները պատմեցին, թե ինչ է պատահել, առանց երկար մտածելու՝ ոտքով ճանապարհ ընկավ քաղաքով մեկ և հասավ ուր պետք էր: Իր սեփական ոտքերով: «Չո չէի կարող լքել ես իմ հսկայական ընտանիքը»: Բայց կայարանում շատ զարմացան և նրան խորհուրդ տվեցին գնալ Ուլուխակուր:

Լավ է, որ չլսեց. մտածեց՝ կատակում են:

Ղազարն էլ մեկ շաբաթ առաջ ընտանյոր հանդերձ գնացել էր Վրաստան՝ աներոջ հուղարկավորությանը, Քուչչի գյուղ, հարսն այնտեղից էր: Ընտանիքը հյուր մնաց, իսկ նա Երևելյան վերադարձավ, գնաց ծնողների մոտ, Երևազ, վազեց աշխատանքի. շատ էր զբաղված ամառային նստաշրջանով: Գիշերվա կողմ տուն վերադառնալիս նայեց իր պարտեզից ու հանկարծ ձայն կողմի հարևանների դարպասի մոտ սև «վառա-նուկը» նկատեց: Լապտերը կախված էր հարևանի տանիքի տակ, ամեն ինչ տեսանելի էր: Տանտերերը կապոցներով, կուշ էկած, դուրս էին գալիս տնից, կողբերից էլ՝ սև բաճկոններով երկու պահակ:

Երկար չմտածեց: Վազեց տուն, վերցրեց փաստաթղթերով թղթապանակը, արագորեն պահոցից հանեց կնոջ մի քանի մատանիներն ու աշխատավարձից հավաքած փողերի փաթեթը, անջատեց լույսը և թռավ հարևանի պարսպից այն կողմ, անցավ մյուս կողմի հարևանի ցանկապատի վրայով: Այնտեղ երկար ու դանդաղ շինարարություն էր կատարվում, տուրը կանգնած էր առանց պատուհանների, տանիքը չէին կարողանում ավարտել: Միրոն արագ զարկում էր. թվում էր, թե հիմա դուրս կարծնէր: Ղազարն սպասեց, մինչև փողոցում ոչ մի մարդ չլիք, սպա դուրս եկավ դատարկ շենքից, միաժամանակ և վախ, և համարձակություն զգալով, շտապեց դեպի կայարան:

Գետառի մոտ հացի մեքենայի նման մի ծածկված ֆուր-գոն էր կանգնած: Վարորդը կողքին ծխում էր:

– Կտանե՞ս կայարան:

– Հիմա գնացք կա՞, – զարմացավ վարորդը:

– Ես այնտեղ եմ աշխատում, ուշանում եմ, – արագ հեռ-բեց Ղազարը:

– Նստի՛ր, ես մի ժամով ազատ եմ, կայարանն էլ մոտ է:

Երբ տեղ հասան, Ղազարը գրպանից հանեց ճմրթված թղթադրամը:

Տղան ծիծաղեց.

– Մի՛ շտապեք, գնացքում ձեզ մի կտոր հաց պետք կգա գիշերը: Չճանաչեցի՞ք: Չէ՞ք հիշում ինձ:

Ղազարը սարսափած հետ նայեց:

– Ոչ, ոչ. . .

– Ես քանաքեռից եմ, քո Վալոդի տղեն, Ձեզ մտ սովորել եմ Քանաքեռի դպրոցում: Վատ էի սովորում, Ղուք ինձ «երեք» դրեցիք, որպեսզի ավարտեմ:

Ղազարը չհիշեց ոչ կույր հորը, ոչ էլ վատ սովորող աշակերտին՝ այնքա և երեխաներ են սովորել իր մոտ. . . Բայց հացի համար ուրախացավ, չէր մտածել այդ մասին: Ո՞վ գիտի, թե երբ է գնացքը տեղ հասնելու:

Մեկ օր անց Ղազարը հայտնվեց գյուղում, որտեղ դեռ շաբաթ անկում էին 90-ամյա հանգուցյալ աներոջ յոթը նշել: Այդպես աները նրան փրկեց այն աշխարհից: Այստեղ յուրաքանչյուր գյուղից մի քանի հայ ընտանիք տարան: Հետո իմացան նաև Բողոքատվկայի հայերից, ատորիներից ու հույներից՝ նրանք էլ էին փախստական: Ասում էին, որ նույնիսկ մի բրդի շփոթել էին թուրքի հետ... հիատերիաների մեջ էր ընկել, թե «ես մաքուր բուրդ եմ, հետո՞ ինչ, որ գիտեմ թուրքերեն»: Ասա քո համար ապրում էիր Թուրքիայում, ոչ ոք ձեռք չէր տալիս... Բայց ես, չգիտես ինչու, ուզում էր ապրել Ռուսաստանում, տխմարավարի կազակների հետևից էր ընկել, եկել: Այստեղ ոչ մի վրացու ձեռք չտվեցին, դա էլ իմացան հետո՝ ավելի ուշ:

Այո, հետո մենք շատ բան իմացանք...

*«1930 - 1940-ականներին, ԽՍՀՄ - ում հայերը բազմիցս ենթարկվել են հարկադիր փոստման: Միևնույն ժամանակ հայերին փոստելով՝ խորհրդային կառավարությունն ամեն անգամ կարողանում էր չկենտրոնանալ էթնիկ պատկանելության վրա, չնայած, ըստ էության, հայերի փոստումների մեծ մասը էթնիկական էին: Նույնիսկ 1949 թ. հայերի ամենազանգվածային տեղահանումն իշխանությունները բողոքի էջին որպես քաղաքական աշրձափ, չնայած նրանք դա որակեցին որպես «պայքար ազգայնականության դեմ»: Չափազանց հետաքրքրական է նաև այն, որ առավել հաճախ հայերը փոստվում էին իսլամ դավանող էթնիկ խմբերի (թուրքեր, աղբրեջանցիներ, քրդեր և այլն) հետ միասին:*

*Հայերի փոստման առաջին ալիքը տեղի ունեցավ արդեն 1937-1938 թվականներին՝ ԽՍՀՄ հարավային սահմանների մաքրումների ժամանակ: Հետազոտողները մինչ այժմ շատ քիչ բան գիտեն այդ տեղահանությունների մասին:*

Եվ, այսպես, Ղազարը գնաց ու անհետացավ՝ ինչպես իր հարազատների, այնպես էլ բանիմաց, ճանաչող մարդկանց համար... Շատ տարիներ անց անձի պաշտամունքի բացահայ-

տումից հետո, Ղազարը հուզված, կարոտած բարբառող սրտի ցավով իջավ Թբիլիսի-Երևան գնացքից ու զարմացրեց և ուրախացրեց պատերազմից ու քաղաքից բավականին տուժած հարազատներին: Պարզվեց, որ ծնողներն արդեն չկան, բոլոր հարազատներն անցել են սփրիդյան առօրյա կյանքի դժվարություններով և մտա մի տարի առաջ վերադարձել, տարօրինակ է ասել, հայրենի տուն... Տունը երկար ժամանակ զբաղեցնում էին ինչ-որ անծանոթ մարդիկ: Փառք Աստու, տեղ տվեցին, թույլ տվեցին ապրել առաջին հարկում: Վերնահարկի համար անհրաժեշտ էր դատի տալ, բայց որ ներս թողեցին, նույնիսկ ուրախացան: Հետո որոշեցին մի նոր տուն կառուցել գյուղում կամ մերձավանում:

Բայց հիմա ոչ ոք չգիտեր այս ամենը և չէր էլ ենթադրում, թե ինչ է պատահելու նրանց հետ: Ամռան այդ անիծյալ գիշերը բոլորը խմբով կանգնած էին լապտերի թույլ լույսի ներքո, տագնապալի անտրոշության մեջ: Առավոտ կանուխ հավաքեցին 150-160 հոգանոց ամբիոնը և բեռնատարներով տարան կայաքան: Բայց ոչ թե Երևանի կայարան, այլ ինչ-որ մեկն ասաց Ռուլուխանլու: Ինչպես շատ հետո պարզվեց, ծրագիրը նույնիսկ գերակատարվել էր: Որքան էլ որ սարսափելի ինչի, նրանք տրվել էր ձեռքակալման քվտաների ծրագիր, և ումանք գիտեին այդ մասին... Տարիներ անց շատերն իմացան... Պարզվեց, որ գերակառնարման քվտաներ էլ կային: Դա մարդկային հասկացողությունից վեր է...

Հաշվի առնելով, որ, տեղափոխման սարսափելի պայմանների հետ կապված, շատ զոհեր են եղել, մեկ տարի անց նույնիսկ ես մի քանի էշերն «լրացուցիչ առաքում» արվեց... Դաժան գործողությունն իրականացրել էր ումն չեկիստ, գեղապետ Կորիսմագյանը:

Գեղապետը, համաձայն Քաղբյուրայի կողմից տրված ցուցումների և հրամանագրերի, ակտիվորեն ու հստակ կատարեց կարգադրագրի հրամանները:

Ի դեպ, երբեմն իրականանում է արդարությունը:

*«Բերիային և նրա դաշնակիցներին ձերբակալելուց հետո, Կորյանագրանի գլխի վրայի ամպերն ավելի խտացան: Նրան հետաքրին պետական անվտանգության մարմիններից, ապա մեղադրեցին Ալթայի երկրամաս հայերի վտարման մեջ: 1949 թ. տեղի ունեցավ երկար դատավարություն, որի արդյունքում Կորյանագրանը դատապարտվեց 10 տարվա ազատազրկման»:*

«Վերապետ չեկիստը կրեց իր պատիժը. «գանգից գանգ» ևստեց, վերադարձավ: Բայց այնքան անեծք էր լցված նրա գլխին, որ չվերականգնվեց. ուժասպառությունից ու բանտային հիվանդություններից մահացավ:

Ընդհանուր առմամբ, սա առաջին վերաբնակեցումը չէր սովետական իշխանության կողմից: Քաղաքացիական պատերազմը դեռ բոբբոբվում էր, երբ կազակներն սկսեցին վտարվել իրենց գյուղերից, չեչեններն ու ինգուշները՝ իջեցվել սարերից: Եվ այնտեղ սկսվեցին կովկասյան դիմակայություններն ու ակարգությունները...

Դադատանում ու Ադրբեջանում լեռնային հրեական գյուղերից մարդկանց բռնի ուժով «ցած էին իջեցնում», իսկ Վրաստանում սկսվեց Թիֆլիսից հայ բնակչության դուրս մղման ակտիվ գործընթացը:

Ըստ ամենայնի՝ բոլշևիկները մտադիր էին պլանային վերաբնակեցման միջոցով «շտկել» բնության ու հասարակության բոլոր «մխալները»՝ հաղթահարելով պատմականորեն ձևավորված անհամապատասխանությունը Ռուսաստանի ու ԽՍՀՄ հսկա երկրի բնական և ժողովրդագրական ռեսուրսների միջև: Նախնիները նվաճեցին հնարավորինս մեծագույնը, և հետևորդներն այն վերաբաշխեցին նրանց, ովքեր երբեք չէին մտածել նվաճել այդ երկրները կամ ապրել այնտեղ:

Ճիշտ է, Անդրկովկասից կուլակների առանձնապես եական վտարում չի եղել, բայց 1937-ի վերջին Հայաստանից և

Ադրբեջանից քրդերի ու հայերի 1120 քնտանիք արտաքսվել է Ալմա-Աթայի շրջան:

Իսկ 1949-ի հունիսին տեղահանվեց մոտ 15 455 հոգի, որոնք մեղադրվեցին Դաշնակցություն կուսակցության անդամակցելու մեջ: Բնարկեց, այդքան դաշնակցական չէր կարող լինել, հագիվ թե՛ հազարից ավել, բայց միայն այդ բառը կուսակցության անվանումը, դարձավ համարյա հայիոյական խոսք և վախ էր ներշնչում:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի թիվ 2214-856-ս հրամանագիրը.

*«Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ԽՍՀՄ ավիամերձ շրջաններից բռնազաղթած անձանց վերաբնակեցման մասին»* Ստալինի ստորագրությամբ՝ դաշնակցականները, Թուրքիայի քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող թուրքերը, Հունաստանի քաղաքացիները (Հունաստանի նախկին քաղաքացիները, ովքեր ստացել են խորհրդային քաղաքացիություն) արտաքսվել են: Չնայած այս ցուցակում «հայ» բառի բացակայությանը՝ ակնհայտ է, որ դաշնակցականները, ինչպես շատ «Թուրքիայի նախկին քաղաքացիներ»,

«Հունաստանի քաղաքացիներ» և «Հունաստանի նախկին քաղաքացիներ», հայեր էին, քանի որ ոչ մի վրացի և ոչ մի ադրբեջանցի այս ցուցակում չկար:

Այսպիսով՝ հայերի որոշ մասի ազգանունները վրացականով փոխելու և նույնիսկ ուղղափառ եկեղեցիներ այցելելու համաձայնության համար բացահայտվում է ևս մեկ պատճառ: Ճիշտ է՝ ժողովուրդը շատ բան չգիտի, բայց շատ զգայուն է արձագանքում միտումներին:

## ՀԱՎԵՐԾ ԱՔՍՈՐԸ

Մենք հայրենիք եկանք՝ չճանաչեց,  
Եվ մեզ հավերժ բաժանելով՝  
Դրախտի տեղ նա արար մեզ ուղարկեց,  
Օտար երկրին, օտար հողին  
Հավերժորեն նա մեզ հանձնեց:

«Սեծույան ամերը և Անդրկովկասը քաղաքականապես ոչ հուսալի տարրից մարդելու համար Կենտրոնական կոմիտեի քաղցրություն որոշում է:

ԽՍՀՄ պետական անվտանգության նախարարությանը (ընկեր Արակուտով) պարտավորեցնել փտարել Սև ծովի ափին և Անդրկովկասում բնակվող Թուրքիայի բոլոր քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող թուրքերին և նախկին թուրքերին, ինչպես նաև ներքին գործերի նախարարության մարմինների հսկողության ներքո Տոմսկի մարզում մշտական բնակություն հաստատելու համար խորհրդային քաղաքացիություն ստացած Թուրքիայի քաղաքացիներին:

ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությանը (ընկեր Կրուզովա) պարտավորեցնել ապահովել փտարվածների ուղեկցումը, երկաթուղային տրանսպորտով փոխադրումը և նրանց հսկողությունը Տոմսկի շրջանի նոր բնակավայրերում՝ բացառելով փախուստի հնարավորությունը, ինչպես նաև նրանց վերաբնակեցումը և զբաղվածությունը: Լուբյանկա, Ստալին և ԽՍՀՄ պետական անվտանգության նախարարություն:

Դարձյալ չլեյխտներն ու միլիցիոներները վազվզում էին գնացքների երկայնքով ու նորից մարդկանց լցնում բեռնատար վագոնները, տեղափոխում անհայտ վայրեր... Գայարանի բաց դիտակետում կանգնած էր այդ «օձի ձագը», այդ «իժի ծնունդը»՝ Հայաստանի Չեկայի նախագահի տեղակալ Կորիմազյանը:

այս արարի հստակ կազմակերպիչն ու ղեկավարը: «Արածող Աստված դեմդ կրերի»,- տեղահանվածներից յուրաքանչյուրն այդպես էր մտածում՝ իմանալով իր անսպասելի ողբերգության մասին: Եվ Բերիայից հետո «օձն», այնուամենայնիվ, ձերբակալվեց խախտումների համար՝ արտաքսման թվացյալ պարզ կազմակերպության գործում: Նրանք նույնիսկ խտտովանեցին, որ այս ամենն իզուր են սկսել... Քանի՛, քանի՛ դժբախտություն ու քանի՛ հայի կոտորված կյանք...

Ես պատկերացնում եմ, թե որքան վիրավորական էր դա Կորիմազյանների համար, որոնց վրա հասան Աստծո պատիժը և խոշտանգվածների անձայն անեծքները:

Երկիրը մեծ էր, շատ մեծ, ոչ թե իրենց փոքր Հայաստանի նման: Նրանք երկար ժամանակ էին գնացքով գնում, թվում էր մի ողջ կյանքի ճանապարհ: Ոչ չարասրտեմից որևէ ուղեկցող, ոչ էլ փոխգնդապետը «ո՛ր են տանում» միակ հարցին չպատասխանեցին: Անցան Մասիսի կայարանով, որտեղ թուրքեր էին ապրում: Այնտեղ ՄԵրսուրը միայն մի թուրք ծանոթ ուներ ամուսնացած հայ կնոջ հետ: Լավ մարդ էր, կինն էլ մանկապարտեզի դաստիարակչուհի էր: Նրա կնոջ երբայրը կոլովում էր կամավորական ջոկատներում, ապա ծառայության ինչ-որ տեղում աշխատում էր դաշնակցականների հետ: Ջարմանալի էր, որ նրան նույնպես հանդիպեց այդ կեղտոտ գնացքում, որ Աստված գիտի, թե մինչ այդ ինչ էին փոխադրել: Կարծես թե ինչ-որ հանքաքար: Բայց վագոնները ծածկված էին, դժվար թե քար... Այո, այնտեղ նույնիսկ նեղ նստարաններ կային, բայց... բայց կեղտոտները տեղ չկար:

Վագոնները ցեխոտ էին, օդը՝ գարշելի, երեխաների լաց, ձեր մարդկանց հառաչանք, մեկ շարքա՞ անց արդեն և մահ... Տեսան, որ հանում են վագոնից, իսկ հարագատներին չէին թողնում մտնելալ: Միայն մեկն էր գլուխը դուրս հանում, հետևում, թե ինչպես են դիակները տանում:



- Մեր մարդիկ կան. թող մի քիչ օղ շնչենք, շոգ է, կրակը հիմա կմեռեն,- խնդրում էին երիտասարդներն ու կանայք:

- Ոչինչ, - պատասխանում էր պահակը, - շուտով դուք այնքան կթարմանաք, որ այս տաք կտաքը ձեզ դրախտ կթվա:

- Մենք ձեզ այս գնացքի մեջ ենք տանում ոչ թե նրա համար, որ դուք կարողանաք հանգիստ ապրել, դաշնակցական վիժվածքներ, այլ որպեսզի մեռնեք շների պես, - մի օր բարկացած բոլավեց նրա կողքին կանգնած ակնհայտորեն հայ զինվորականը:

Գնացքի կանգ առնելուն պես բոլորը դուրս էին ցատկում վազոններից, ուղեկցողը պահակների ներկայությամբ հենց գծերի մոտ թեթևանում: Կանայք անավոր ամալկոտ էին, հետո ամոթից լուռ լաց էին լինում: Կանգ առան Նախիջևանում. այնտեղից ևս 10-12 արտոբյակների ավելացրին: Կայարանում գտնվող աղբյուրներից աշխատողները բացահայտ ցանկությամբ ու ծիծաղով էին նայում ամոթից լաց լինող կիսամերկ հայ կանանց, իսկ հայ պահակախմբերը, մտրակները ձեռքներին, շտապեցնում էին նրանց:

Արդեն շուտվանից հեռացել էին Հայաստանից, Վրաստանից ու Կովկասից... Գիշերները խավար, միայնակ լայտերների տակ երբեմն կարգում էին անծանոթ կայանների անունները, որպեսզի անմիջապես էլ մոռանան: Այլևս տեղեկություններ չկային արտաքին աշխարհի մասին, թե ուր են իրենց տանում և ինչու... Միայն անիվների չխլչխլուց...

Լեռներն ավարտվեցին, եկան տափաստանները: Երկար ու անվերջ... Շետո արդեն ձյունով մի փոքր փոշոտված... Ու բշեցին դեպի ձմեռ ու ցուրտ... Այստեղ արդեն ձմեռ էր...

Ճանապարհն անտանն էր սկսվել: 1949 -ի հունիսի 14-ին Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից ու Կրասնոդարի երկրամասից արտաքսվեց շուրջ 18000 հայ՝ մեղադրվելով Դաշնակցություն կուսակցությանն անդամակցության և «Թուրքիայի քաղաքացիություն» ունենալու մեջ:

Այս կրկնակի դժբախտ, այսպես կոչված, Թուրքիայի քաղաքացիները 35 տարի ապրել են իրենց խորհրդային հայրենիքում, որտեղ միասին են մեծացել և որտեղից դուրս են հանել, քանի որ նրանք փայտել են թուրքական ջարդերից ու փրկվել ցարական բանակի կողմից... Ավելին, քիչ էր, որ 1915-ին թուրքերը ոչնչացրին մեկ ու կես միլիոն հայ իրենց հայրենիքում, այսօր էլ ցարական Ռուսաստան փայսած վերապրածներն ընկել էին բուշեյիզացման գիրկը և ապրել ավելի քան 30 տարի կոմունիստների իշխանության տակ. նրանցից պահանջեցին ստորագրել հայտարարություն, որ թուրքեր են, քանի որ ծնվել էին Թուրքիայում: Չետաքքբիր է, երբ պետությունը նույն մարդկանց է ընկալում և որպես հայեր, և որպես թուրքեր, չնայած նրանց համար դրանք միմյանց բացառող հասկացություններ են: Եվ դա հայ մարդիկ էին պահանջում՝ վիժվածքները:

Եվ արտոբյակն, և դրա հիմնավորման մեջ ամենասարսափելին ու անարդարն այն էր, որ իշխանությունները մեղավոր էին համարում ամբողջ ընտանիքին՝ «փոքրից մեծ»: Նրանք խորհրդային քաղաքացիություն էին ստացել 1924 թվականին: Բոլոր թոռները ծնվել էին ավելի ուշ, էլ ի նշ Թուրքիայի քաղաքացիներ: Ինչու և ինչպե՞ս բոլորը հայտնվեցին այդ ցուցակներում:

*«Հաշվի առնելով, որ ժամանած կոնտինգենտները հավելք կմնան Նաոիսի և Այրթայի երկրամասերում, ջրջանների ու քաղաքների գործադիր կոմիտեներից պարտավորեցնել վտարվածների համար ստեղծել անհրաժեշտ կուրսական պայմաններ, հանձնարարել ընդհանուր հիմունքներով յուրաքանչյուր ընտանիքին անձնական հողամաս ու վարկեր տրամադրել անհատական շինարարության, անասունների համար և գործնական օգնություն ցուցաբերել շինանյութերով ու տրանսպորտով», - նշված է հրամանի տեքստում: Այսինքն՝ վտարվածի կարգավիճակը ժառանգական էր:*

Սա այն հրամանագիրն է, որով Եկատերինան, նույն պատճառով, Ղրիմի հայերին տեղափոխել, վերաբնակեցրել է Ղոնի շրջանի անապատային տափաստաններում...

«Այնուամենայնիվ, յուրաքանչյուրի իր կողմից ընտրված պետական գործիչների ցեղ մտնելուց հետո ես ձեզ թույլ եմ տալիս **հավերժ և ժառանգաբար** օգտագործել այն ամենը, ինչը, ըստ ՄԵՐ ընդհանուր հրահանգների, օգտագործում է պետական այրերի յուրաքանչյուրը, օրինակ ազատ առևտուրը պետության ներսում և դրսում, և մեծազույն օգուտի համար թույլատրվում է ձեր սեփական ուժերով կառուցել առևտրական ծովային նավեր, բուծել անհրաժեշտ և օգտակար գործարաններ, բույսեր և այգիներ, որոնց մշակման համար ձեր գյուղերում փոքր չափերով արտահանվող խաղողի բոլոր գինիները... արհեստներ տարածել ըստ սեփական կամքի ու բարգավաճման, և այդ ամենը վայելել ՄԵՐ Ինքնավար Գավազանի ներքո և օրենքների պաշտպանությունը վայելել...»:

Արտագրել էին, ինչ է կայսրուհուց...

Զուգադիպությանը երկուսն էլ այն աշխարհ գնացին ապուլլեքսի հարվածից ինտուլտից: Ո՛վ զիտի, էթե Եկատերինան ինտուլտ չստանար, հասցնել տիրապետել Կոնստանդնուպոլսին՝ Ցարգրադիին, որը երբգու՞մ տեսնում էին բոլոր ռուս ցարերն ու նախարարները, միգուցե աշխարհն այլ ճանապարհով ընթանար... Իսկ Ստալինի հետ, ցավոք, ապուլլեքսի հարվածը շատ ուշ պատահեց (միլիոնավոր զոհերի համար): Բայց բարեհաջող և ժամանակին կատարվեց, այլապես Հայաստանը նույնպես չէր լինի: Ահա թե ինչ էին մտադիր անել այս երեքը անկյուններից կրճած տարածքի մնացած մասի հետ, որը ժառանգել էին ողջ մնացած հայերը:

«1933-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Ռուբեն Ղուկասի Ռուբենովին փոխարինեց Միր Զաֆար Բաղիրովը:

*Իր թագավորության քսան տարիների ընթացքում (1933-1953) Բաղիրովն սկսեց համարվել «ադրբեջանական ժողովրդի հայր»: Նա հաճախ էր պնդում, որ ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը պայմանավորված է ադրբեջանական նավթագործներով: Նրան անվանում էին «տեղական Ստալին»:*

Նրա գահակալության ընթացքում Ադրբեջանում տասնյակ հազարավոր մարդիկ հետապնդումների ենթարկվեցին, հիմնականում հայեր, քրդեր, լեզգիներ և թալիշներ:

Երբ Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը նամակ է գրում Ստալինին՝ Լեոնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու առաջարկով (1945 թ. Նոյեմբերի 11), Բաղիրովն էլ գրում է Կոմունիստական կուսակցության կենտկոմի քարտուղար Մալեևիկին, որում մասնավորապես ասվում է. «Ես դեմ չեմ Լեոնային Ղարաբաղի հանրապետության վերադարձին, բացառությամբ Շուշիի շրջանի, պայմանով, որ Հայաստանի Ազգաբնակչության Կեդրիի և Ղարաբաղի շրջանները լինեն Ադրբեջանի մաս, որոնք հիմնականում բնակեցված են ադրբեջանցիներով (1937-1948 թվականներին Կեդրիի շրջանի արևելյան մասը առանձնացվել է որպես Ղարաբաղի շրջան)»:

Ստալինի մահվան հետ խզվեց Բերիա-Բաղիրով առանցքը, Բաղիրովը նույնպես դատապարտվեց: Դատավարության ընթացքում ռազմական տրիբունալի նախագահ և գլխավոր դատախազ Ռուդենկոյի խաչաձև հարցաքննությունը ցույց տվեց, որ Բաղիրովը մտադիր էր Դադաստանը միացնել Ադրբեջանին, և որ նա, Ստալինն ու Բերիան որոշեցին 1953-ի ամռանը կազմակերպել հայերի ևս մի նոր զանգվածային արտաքսում՝ մանավանդ Հայաստանից, որի արդյունքում հանրապետության բնակչությունը կկրճատվեր և կդառնար մեկ միլիոնից էլ պակաս, ինչը կզրկեր միութենական հանրապետության իրավունքներից:

– Այսինքն՝ Հայաստանը պետք է բաժանվեր, կցվեր իր հարևաններին: Այսպես պետք է հասկանալ, – հարցրեց ռազմական տրիբունալի նախագահը:

– Այո, – հանգիստ, գուցե և ավստոսանքով պատասխանեց Բաղիրավը, – միայն Ստալինի մահը կանխեց ծրագիրը:

– Բայց ի՞նչը միավորեց Ձեզ ու Ստալինին, – հարցրեց գլխավոր դատախազ Ռոման Ռուդենկոն:

– Ես Ադրբեջանի ղեկավարն էի: Արևելքում մահմեդական աշխարհի առաջացման նախօրեին, Կրեմլի շահերից ելնելով, աներաժեշտ էր ունենալ այնպիսի ուժեղ և հավատարիմ հենակետային հանրապետություն, ինչպիսին է հզոր Ադրբեջանը, – պատասխանեց այս եռյակի վերջին ներկայացուցիչը:

Բերիա – Բաղիրավի ռճրագործությունների մեղսակցության մեջ մեղադրվողը դատապարտվեց մահապատժի: (Բագրատ Ուլուբաբյան, «Արցախյան գոյամարտ», Երևան, 1994):

Ձեռագրերը չեն վառվում, ծրագրերը չեն անհետանում:

## ՏՈՄՄԿԻ ՏԱՐԱԾՔ: ՆԱՌԻՄ

Աստվածն է պարզել մեզ Ղրիմ,  
Իսկ սատանան ստեղծել Նաոիմ:

Իհարկե, կանայք իրենց հետ որոշ ուսույլիք էին վերցրել, այն վաղուց էր վերջացել: Վագոններում անտանելի գարշահոտություն էր, առանց ջրի ու լվացքի, կեղտն ու ոջիլն էր տանջում մարդկանց: Մահացածներին ինչ-որ տեղ էին տանում՝ թույլ չտալով թաղել: Մարդաշատ օդը հագեցած էր անլվա մարդկանց գարշահոտով, վշտոտ ու լուռ անեծքներով: Ամսվա վերջին ճանապարհի եզրերին անուսունը հայտնվեցին: Նաև ճմեռ: Երբեմն գնացքը կանգ էր առնում, ինչ-որ մեկի ընտանիքն իջնում էր ու կորչում այդ անծայրածիր երկրում: Վագոնի վերջում երկու երեխա մահացավ՝ կամ սովից, կամ ցրտից... Ինչ-որ կանգառում, որտեղ ոչինչ, նույնիսկ նշաններ չէին երևում, երեք ընտանիք իջեցրին: Եվ գնացքը նորից առաջ գլորվեց:

Ցերեկ էր, երեկոյան ևս մի քանի ընտանիք իջավ՝ ուղիղ սառած գետնին, ձյան մեջ: Հեռվում՝ գիշերային խավարում, թրթռում էին տների լապտերները: Գնացին դեպի այդ՝ հագիվ նշմարվող լույսերը...

Հիմնական մասին իջեցրին մի լայնահուն գետի մոտ: Աղաղակներով և մանկան լացով փոխադրվեցին մի բեռնանստվի մեջ, այժմ տարան ջրով: Մոծակները և արևախում մոխրուքը միացան ամբողջ ճանապարհին կծող ոջիլների բանակին:

Մոտ տասը օր անց երանք իջան նավերից: Սայլեր մոտեցրին և կրկին ինչ-որ տեղ թշեցին:

– Որտե՞ղ ենք մենք, – ռուս երիտասարդ պահակին հարցրեց ծեր Մեդրոպը:

– Շուտով կլինի Նաոիմը, – պատասխանեց երիտասարդը և համարյա ուրախ ավելացրեց, – Աստված ստեղծել է Ղրիմը, իսկ սատանան՝ Նաոիմը:

Թաղվելով ձյան մեջ և հազիվ հանելով սառած ոտքերը՝ իջան սայլերից: Բոլորը լուռ էին: Բոլորովին սպիտակած, կույ էկած, ուժասպառ Մետրոպը երբեմն հազում էր: Քի՞չ է, ինչ է՝ յոթերորդ տասնամյակը վաղուց բոլորած: Ասենք՝ բոլորն էլ ուժասպառ էին՝ սնունդ գրեթե չկար: Ասելու բան էլ չկար. ամեն ինչ ցամաքել էր: Եվ ո՛ւմ, ի՛նչ կարող էին ասել:

Նրանք և գիտեին, և չգիտեին իրենց «մտքը»: Այն գալիս էր հին ժամանակներից, երբ ապրում էին իրենց հողի վրա, և նվաճողները նրանց նայում էին որպես սեփական օտարածին լինելու վկաներ՝ փորձելով այնպես անել, որ նրանք կամ երկրպագեն իրեն՝ եկվորների աստծուն, կամ էլ իրենց օտար զգան այնտեղ, ուր ծնվել ու ապրել էին իրենց խախտիները: Նրանց մեղքն էլ էր փոխանցվել իրենց խախտիներից, ովքեր ավելի քիչ էին, քան գավթիչ արարների, սելջուկների, թաթարների ու մոնղոլների այս խավարը...

Նրանց, շատ ավելի նուրացած, «փրկեցին» հավատակիցները՝ զրավելով նաև նրանց հողերն ու ջրերը: Բայց դա է՛րբ է՛ղավ: Նրանք, ովքեր փորձեցին բանակ կանգնեցնել գավթիչների դեմ, կամ գեղակահարվեցին, կամ սպանվեցին, կամ փախան: Բոլորը, ովքեր ավելի ուժեղ են, մնացածների համարում են օտար: Դա՛ էր նրանց մեղքը: Նրանք ծնվել էին արտերկրում . . . ԽՍՀՄ տարածքում բոլշևիկների համար սա համարվել է թիվ մեկ հանցագործություն: Ցարական բանակը փրկեց, իսկ այն երկիրը, որում նրանք ապրում էին, նույն բոլշևիկները խլեցին ու նվիրեցին թուրքերին . . .

Մետրոպը լավ գիտեր, որ եթե երկրում թագավոր կա, նա է որոշողը և պատասխանատուն ամեն ինչի համար: Այս երկրում կարծես երկու թագավոր կար՝ մեկը որոշում էր, մյուսը բանու նստեցնում: Իսկ այս հսկայական հատվածում, որտեղ տարվա մեծ մասը ցուրտ էր, իշխում էր միայն նստեցնողը:

Գլուղում, ուր արդեն գիտեին եկվորների մասին, արտորված վերաբնակիչներին դիմավորեց երկար մուշտակով ինչ-որ

լիագոր ներկայացուցիչ: Նա ոչ թե մենակ էր, այլ մի քանիսի հետ, չնայած թվում էր, որ այնտեղ մարդու շունչ անգամ չկար: Այս երկրում լիագորվածները դուրս էին պրծնում ամեն տեղից և ամենուր... Ժամանածներին տարան կիսադատարկ տնակ, որտեղ մի քանի մանկական մահճակալ կար, և հանդիսավոր ու խիստ ասացին.

– Դուք վտարված եք ցմահ՝ առանց մեր շրջանը լքելու իրավունքի: Նման կարգադրությունը թվագրված է 1948թ. նոյեմբերի 25-ին: Փախուստի համար 25 տարի քրտևաշան աշխատանք: Առավոտյան ես ձեզ ցույց կտամ, թե որտեղ է պետք կռվել:

Ասացին ու հեռացան:

– Օ՛հ, Աստվա՛ճ իմ, – տնքաց Ասուն, – ուրեմն այդքան շուտ էր նախատեսված: Նոյեմբերի 25-ը: Մեկ տարի առաջ . . . Եվ մենք շրջում էինք փողոցներով. դպրոցներ կառուցեցինք, դասավանդեցինք, ցանեցինք, հերկեցինք ու նույնիսկ մտքնեցրով չէր անցնում, թե նրանք ինչով են զբաղված այնտեղ: Նրանք մեզ ջոկում էին մի ամբողջ տարի...

Օրն սկսվում էր, արդեն լուսաբաց էր, տղաները գնացին ջուր փնտրելու: Դատելով լքված իրերի մնացորդներից խրճիթում հիվանդանոց էր եղել: շենց այդ ժամանակ նրանք շնորհակալություն հայտնեցին Աստծուն իմանալով, որ շատերն սկզբում ապրում էին գետնափոր տներում: Գնացքում ընկերներ էին ձեռք բերել՝ մի ընտանիք, նույնպես վանեցինք: Նրանք պատմեցին, որ առանց նույնիսկ տերերին հարցնելու իրենց բռնաթափել են այն տակը, որտեղ բազմանդամ ընտանիք է ապրում: Իջեցրել են ու հեռացել: Բայց շատերը տեղավորվել էին տնակներում, որոնք ավելի հեռու էին:

Կենցաղային հոգամասերն ու վարկերը մնացին թղթի վրա, սուտը սրանցից անպակաս էր: Կամ ինչ-որ մեկը տակով արեց...

Նախկին լազարեթում ավսետեր և հին ծակոտված բաճկոններ հայտնաբերեցին, ըստ ամենայնի՝ մահացած հիվանդներից էր մնացել: Ներքնակներն այրեցին, շան հոտ էր գալիս: Աքսորի տեղը տասից տասնինը բակ էր. բոլոր բնակիչները կամ նախկին դատապարտյալներն էին, կամ նրանց ուղեկցողները: Հիմա նրանք ընկերներ էին, հարևաններ էին դարձել:

Եվ այսպես, նրանք ապրեցին այս գյուղում մեկուկես տարի, եթե դա կարելի էր ապրել համարել: Տղամարդիկ, կանայք, աղջիկները ծառ էին կտրում անծայրածիր անտառում... «Դրա համար բերման ենթարկվեցին, – դառնորեն մտածում էր Մեսրոպը: – Անտառը հատող չկար»:

Շատ նրանց տեղափոխեցին բավականին մեծ ավան «պատյուրկ»: Այստեղ նույնիսկ դպրոց կար: Որդիներն այնքան լավ չէին խոսում ռուսերեն, որ կարողանային լեզու դասավանդել, բայց նրանց թույլատրվեց ձեռքի աշխատանքի և նկարչության դասեր տալ մտակալայնում ցրված մի քանի դպրոցներում, որտեղ ոտքով էին գնում: Փեսաներն անտառահատման էին մասնակցում: Երկու տարի անց իրենց համար տնակներ կառուցեցին ու գոնե տաք տեղ էին ապրում: Նրանք աստիճանաբար լրացնում էին իրենց գիտելիքները Միբիրի, իրենց հետ կատարվածի մասին. Միբիրը լիքն էր եկվորներով, իրենց տներից վտարվածներով: Այստեղ այնքա և շատ պատմություն կար...

Հարևանը նախկին դատապարտյալ Պետրոն, գիշերը գաղտնի ինչ-որ ոտքով էր լսում, իսկ ցերեկը Մեսրոպին պատմում էր քարոքից առաջ իր կյանքի մասին: Նրան ղեռ չունեզրկած էին բերման ենթարկել, բայց ամբողջ ընտանիքը ճանապարհին մահացել էր: Այստեղ նա ամուսնացավ տեղացի մի կնոջ հետ ու մնաց: Գերեզմաններ էր փորում. այլ բան չգիտեր անել կամ մոռացել էր:

– Ինչու՞ հետ գնամ: Ու՞ր գնամ: Միբիրից էլ են կողմ ոչ մի տեղ հո չեն ուղարկի, իսկ ես արդեն այստեղ եմ: Հա բերում ու բերում են... Բակ մեք արդեն այստեղ ենք, – հռետալով

կրկնում էր, բայց մելամաղձոտ հայացքում մի հարց էր սասել. «Ինչի՞ համար»: Երբեմն նա հիշում էր իր հայրենիքը, նրան պոկել էին Խարկովի մոտերքից. «Եվ բակում միայն մեկ կով կար, նոր էր ծնել: Բերք չկար դաշտներում՝ սով: Սովամահության մասին լսած կա՞ս գոլորտո՞ւր: Ու երեք երեխա»:

– Ժինկաս գեղեցկուհի էր սև հոնքերով, ծիծաղկոտ: Այստեղ ձեռնք մի հատ չէն ժպտա երեսիդ: Բակ իմ ժինկան անընդհատ ծիծաղում էր. նա երջանիկ էր ինձնով, երեխաներով... Մահացավ, մահացավ իմ Կասնոչկան, աղջիկներս էլ... Այն տարի տիֆը գնացքներում կեսին տարավ... . .

– Բակ սա... սա ի՞նչ. մեջտեղ երեխա չկա, – շնջաց Պետրոն տխուր ու հարբած՝ չտեսնող հայացքով կայելով հեռուն:

Մեսրոպը ասրտաց, որովհետև այդ տարի նրանց մի մազ էր մնացել կուլակների արտոքի... դուրս պրծան, բայց, մինևույն է, չխուսափեցին, դե արի ու մի հավատա ճակատագրին: Բայց այդ *գոլորտո՞ւրի* մասին նա ոչինչ չգիտեր: Բակ Պետրոն՝ քրդերի մասին ոչինչ չգիտեր... Մեսրոպն էլ չէր ուզում ինչ-որ բան ասել, պետք չէր համարում: «Ապրում են իրենց համար առանց իմ դժբախտությունների սեփական հիշողություններն էլ նրանց բավական են: Պարզապես բացատրեց, որ եթե թուրքերն ու քրդերն են արտոքում, ուրեմն ոչ գնացքներ են սպասարկում, ոչ բեռնանավեր, ամեն ինչ ոտքով է: Կամ անմիջապես տեղում որոշում են կրճատել քանակը»: Պետրոն նայում էր Մեսրոպին, հիշում իր Գոլորտո՞ւրը: Պարզվում է յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր «թուրքերն ու քրդերը»: Ընդ որում՝ հենց իրենցից...

Օրերն անցնում էին՝ ն՝ նման, ն՝ տարբեր: Ընտանիքում ամեն ինչ նույնն էր, ինչ իր ամբողջ կյանքում: Կանայք ղեկավարում էին տան նիստ ու կացը, տղամարդիկ մեջք էին ծռում դաշտում: Օր կար՝ երկու խոսք չէին ասի իրար: Ինչի՞ մասին խոսեին: Արդեն ամեն ինչ հայտնի էր՝ ցմախ: Տեսնես ում *ցմախը*՝ Ստալինի, Բերիայի, թե իրենց մասին էր խոսքը: Բակ տղաներն

այնքան հոգնած էին գալիս տուն, որ ոտքերն իրենց չէին ենթարկվում: Միայն քնելու ժամանակ ունեին: Բսկ պետերն այնքան չարացած էին, կարծես ժամանածներն իրականում իրենց անձնական թշնամիներն էին: Օսմանյան կայսրությունում հայերը թշնամիներ էին թուրքին, քանի որ գլավուրներ էին, անհավատ, այլադավ: Այս պետությունում հայերը կրկին թշնամիներ են. համակրոնությունն այստեղ այլևս չի անցնում: Նրանք փորձում են ուռնատակ տալ, ուռնահարել նաև հավատը... Երեխաները գաղտնի են մկրտվում. ո՞վ է տեսել այդպիսի բան... Նույնիսկ սուլթանները չէին արգելում...

Մեարոպն սկսեց ծանոթանալ մեծ գյուղի մնացած բնակիչների հետ: Այստեղ ապրում էին ցարական քարոյալների մնացորդներն ու կուլակաթափ արվածները (ի դեպ՝ «կուլակներին» ճնշող մեծամասնությունը վաղուց անկետացել էր և հայրենի գյուղերում էր): Գային նաև պատերազմից հետո չզնդակահարված նոր քարոյալներ՝ գերության մեջ գտնվելու պատճառով: Բսկ դատապարտյալները ժողովրդի թշնամիներն են, շատերը երկրորդ անգամ են այստեղ... Այնպես որ, իշխանությունները փոխվեցին, բայց տեղը մնաց նույնը՝ ստոած, անուրախ և միշտ պատրաստ: Մոտակայքում մի ճամբար կար, որին Գուլյակ էին անվանում, գյուղացիներից շատերն աշխատում էին այնտեղ: Թռռները գնում էին ռուսական դպրոց, խոսում էին տեղացիների ռուսերենով: Նույնիսկ ավելի լավ էին սովորում: Բսկ Ալաշկերտում նրանք ունեին երկու հայկական դպրոց, բոլորը կարդալ ու գրել գիտեին իրենց մայրենի լեզվով...

Մեարոպը նրանց սկսեց սովորեցնել հայերեն տառերը, հայ գրագիտություն: Սկզբում նրանք չէին ուզում, ծույլ էին ու խուսափում էին, բայց մեծահասակները մի երկուսի հետ խիստ խոսեցին, և երկու ամսվա ընթացքում նրանք խելոք կարդում ու գրում էին: Բայց գիրք չկար: Դե, Մեարոպն էլ անգիր էր կարդում գրքերը, անգիր գիտեր, թելադրություն էր տալիս նրանց, խառնոթից եկած թղթերի վրա տպագրողով հեքիաթներ ու չա-

փածո էր գրում: Տեսրերի խնդիր էլ կար... Նրանցից ոչ հեռու՝ ձորակից այն կողմ, ապրում էին քարաված կուլակացիներ՝ կարաչայներ, կարաբոլիներ, չերքեզներ, ինգուշներ: Նման ազգություններ, որոնց մասին նա երբեք չէր լսել, միայն չերքեզ էր տեսել: Նրանք էլ մորթել գիտեին:

Մեարոպը հատկապես ընկերացավ երկու հասակակիցների՝ բազմանդամ ընտանիքի պեհներ հայրերի հետ, երկուսն էլ լոսկյաց Ումաթն ու Շամիրը: Նրանց ազգը փոքր էր, ուստի հավաքել էին ամբողջ ժողովրդին և քարտեր այստեղ: Շամիրը խոսքուած ձայնով պատմում էր, որ իրենց համարյա կեսը տեղ չի հասել՝ մահացել են սովից ու ցրտից: Նրա երկու դուստրերին ու կնոջը պարզապես ծածկել են ձյունով, պահակները թույլ չեն տվել թաղել: Բոլորին այդպես թաղեցին, յուրաքանչյուր վազոնի կեսը մնաց գծերում:

Մեարոպը սեղմեց գլուխը՝ հեռու վանելով սեփական ճանապարհորդության տեսարանները: Մարիամը դժվար ոտքի ելավ. այնքան կիհարած էր ու թույլ, որ ճանապարհի կեսից չէր կարողանում նույնիսկ քայլել: Մեարոպը վերնակը քաշում էր նրա վրա, որ տաքանա, միակ ձեռքով շոյում կնոջ բարակ, գունատ ձեռքերը: Եվ վախենում էր նույնիսկ պատկերացնել, թե ինչ կլինի իրենց հետ, եթե Մարիամը չլիմանա:

Մի փոքր հեռու մի կուլակ էր ապրում, Սոչիից էր: Երբեմն երեկոները նրանք նստում էին տան հետևը, ծխում՝ միաժամանակ շքելով մոծակներին, ավելի հաճախ՝ լուռ: Այստեղ բառերը ծանրացան, չէին ուզում մարդու մեջից դուրս գալ: Պարզվեց, որ Իվանն էլ է հայ, մկրտվել էր Հովհաննես անունով, ապրել է ծովափի մոտ գտնվող մի գեղեցիկ տեղ՝ Վարդանե: Ասում էր՝ համշենցի է: Նրանց նույնպես թալանեցին մինչև վերջին թելը: Բսկ այդ հիմարը հպարտ էր, որ խորհրդային անձնագիր ուներ, և որ հայրը ծնվել էր Ռուսաստանում: Նրա նախնիները նույնպես Թուրքահայաստանից էին՝ Տրապիզոնից: Ուրախացան, երբ ցարը գահընկեց եղավ: Հավատացին նոր իշխանություններ-

րին, մտածեցին, թե հողը կբաժանեն, կաթնամաշերքի գործարան կառնեն... Նրանք տանը մի տղա էլ ունեին, նրան սպարապետի անուն էին դրել՝ Վարդան...

– Սկզբում ինձ ձերբակալեցին, – տխուր և տարակուսանքով բողբոջեց խեղճ ընկերը, – հետո կուլակաթափ արեցին կնոջս: Նա էլ երկու ոտը դրել էր մի կոշիկի մեջ, թե մարդուս ազատե՞ք: Հետո՝ երկու ամիս անց, սալի վրա, գրեթե մերկ, նստեցրին ու քշեցին կայարան: Ինձ ազատ թողեցին ու ստիպեցին ամեն ինչ իմ ձեռքով տալ՝ տուրք, ձիերին, ցուլերին, ջրադաջը, ծխախոտի տակարկներն ու տնտեսության մնացած մասը:

Կայարանում նրանց էլ էին բեռնել անասուն փոխադրող-սպարանքատար վագոնների մեջ ու բերել այստեղ՝ ձյան թագավորության մեջ...

– Բոլոր փաստաթղթերը ձեռներիցս առան, արգելեցին որևէ տեղ գնալ. ամեն օր հրամանատարի հսկողության տակ էինք... Մենք այստեղի ժողովրդի թշնամիներն ենք: Իմ պապերը թուրքից փախան, հասան ծովափ, ափին բացի իրենցից ոչ մեկին չտեսան դատարկ էր... Հետո սրանք սկսեցին լցվել տեղը լավն էր, կազակ էր, որ գալիս էր. . .

– Պարզվեց, որ մենք էլ ենք թշնամի, մենք էլ... Ռուսները տարօրինակ ժողովուրդ են, – մտածկուտ ձայնեց Մետրալը, – հազար դեմք ունեն, երբեք չես հասկանա, թե իրականում ինչ են մտածում... Մեկ թշնամի են համարում, մեկ պաշտպանում են մեզ: Բայց թուրքերը՝ բոլորը նույնն են: Միշտ գիտես, թե ինչ կարելի է սպասել նրանցից:

– Մենք Ռուսաստանում ենք ծնվել: Պապս պատում էր, թե ոնց էր հայրը Տրապիզոնից տեղ հասել: Ասում է՝ ախր ծովափին ոչ ոք չկար, համշենցիք այդքան գյուղ չիմենցին, լրիվ անսպասուների մեջ: Հետո կազակներն սկսեցին գալ, բնակություն հաստատել. ծովից ո՞վ կիրաժարվի: Հետո ամեն տեղից նախիրով թափվեցին... Մեզ արդեն տեղ չկար: Ի՞նչ է, ամեն ինչ

նրա՞նց համար էր: Այդ պատճառով էլ արտրեցին, ճանապարհին հասկացանք: Եթե ժամանակին իմանայինք, կգնայինք սարերը: Մարգում շատ հող կա: Մերոնք սարեր չգնացին, սովոր էին ծովին... Դե, լեռներն էլ քարոտ են. ոչ ցանել, ոչ հերկել: Բայց հո այստեղից լավ կլիներ. . .

– Չէ, միևնույն է, կքշեին, նրանք մեզ ատում են: Անասունի տեղ են պահում: Այստեղ էլ կմտնեն չտեսնելով մեր հայրենիքը, – Հովհաննես-Բվանը, դողացող ձեռքերով ծխախոտ փաթեթելով, համարյա լաց էր լինում, ապա անհույս ավելացրեց, – գուցե երեխաներն ինչ-որ բան տեսնեն...

Եվ ինչն էր տարօրինակ՝ ինքը չգիտեր ատել ոչ մեկին, ժպտալով ողջունում էր նույնիսկ ուղեկցորդին:

Մետրալը լուռ գլխով էր անում. «Իհարկե, ամբողջ հույսներս երեխաների վրա է, գուցե նրանք տեսնեն»:

Բայց նա նույնպես տեսավ: Եվ բոլոր հարևանները, բոլոր աշխատանքային ընկեր վերաբեակիչները, ովքեր սուկալի ցրտից ու սոված ձմեռներից հետո ողջ էին մնացել, նույնպես տեսան:

Նրանք տեսան 53-ի գարունը...

Մի վաղ առավոտ, հենց լուսաբացին, Պետրոն ներխուժեց տուն ու մի փոքր կակազելով՝ կանչեց.

– Սառկեց:

– Ե՞րբ, – դողողուն ձայնով հարցրեց Մետրալը:

– Ոչ ոք չգիտի: Առայժմ՝ ոչ ոք, միայն ես ու դու, – ճշտեց Պետրոն՝ նկատի ունենալով ողջ տարածաշրջանը, և նշելու համար ինչ-որ խմիչք խնդրեց:

Տանը խմիչք չկար, բոլորը քնած էին: Մետրալը թեյ դրեց, Պետրոն սկսեց թեյ խմել: Նա չորս բաժակից հետո չոր մորիս հավաքեց բոյ մեջ, ապա մի բուպե կանգ առնելով՝ ասաց.

– Խանութը շուտով կբացվի, ես կիմանմ: Ուրախությունից հավատալս չի գալիս: Մենք չմեռանք, իսկ նա մեռավ: Նման ու-

բախտություն մեզ համար երբեք չի եղել և չի էլ լինի, – շշմած կրկնում էր երջանիկ Պետրոս:

Եվ այսքան սպասված ու անհավանական երջանկությունից շփոթված, առանց մի կաթիլ խմելու, հարբած մարդու նման օրորվելով, գնաց դեպի դուռը:

Երեկոյան պարզվեց, որ անտառում էլ են արդեն իմացել: Բայց չգիտեին՝ ուրախանային, թե ոչ: Ի՞նչ կարող է փոխվել: Ո՞վ է նրանց տուն տանելու: Եվ տուն մտաց էլ է Քաղաքի բնակիչները չեն սիրում դատարկություն, նրանք անմիջապես գրավում են ուրիշների տները: Աքաղաղներից շատերը բողոքում էին, որ հարևանները բնակարանին տիրանալու համար մատենել են իրենց:

Մարիամն ամեն ինչ լսել էր: Վարագույրիի ետևից շտապ դուրս եկավ, բայց մնաց կանգնած՝ վախենում էր տեղից շարժվել:

Մտքուպր փնփնթաց.

– Կարծես թե կարող ենք գնալ: Դատարկ տեղից՝ դատարկ տեղ...

– Երեխաները կորոշեն: Արի տեսնե՞ք՝ ինչ կասեն... Մենք պատրաստ ենք նույնիսկ հիմա. ինչ ունենք, մեր վրա է, – ու սկսեց լաց լինել:

Տեսնես ո՞ր մի ունեցվածքն էր Մարիամն այդքան ախտառում: Երևի խնոցին ու պուտուկների շարանը նկուղում...

Շնորհիքից հետո նորից սկսեցին քննարկել իրավիճակը: Եթե դա ճիշտ է, ապա... Բայց շարունակելու միտք չկար: Երկաթե կապանքները պիղո փակվեցին, նույնիսկ հարագատ դարձան մի ամբողջ մայրցամաքի բազմալեզու ժողովրդին, որը կապանքներով միավորված էր չարագործ ծուղակում:

Սատկեց... Ի՞նչ է սպասվում մնացածներին: Ո՞վ է նրան փոխարինելու: Մի քանի օր անց ճշմարտությունը բացահայտվեց աշխարհով մեկ, և ամբողջ երկիրը համակվեց անկեղծ հեկեկոցներով: Սակայն արտասովորներից շատ բշերը գիտեին, որ

մայրցամաքի կեսը, փշալարերի այն կողմում թաքնված, ուրախությամբ էր լցված: Գուլակները (ԳՈՒԼԱԳ) կրետի պարսի նման բզզոցով էին լցված: Բուրբը, ուլքեր այս դժոխքում էին, արդեն ազատության հույս էին փափագում: Իսկ նրանք, ուլքեր վերահսկում և ապրում էին լարի հակառակ կողմում, վախենում էին կորցնել իրենց աշխատանքը:

Հարևան գյուղում՝ հեռավոր կյիրճի մյուս կողմում, չեչեններից ու ինգուշներից հեռու ապրում էին Հյուսիսային Կովկասի արքայալները: Դա շատ վաղուց էր: Սկզբում Մտքուպր չէր հասկանում, թե ուլքեր են. նրանց հանդիպեց խանություն: Բայց խոսում էին կիսաքնկալելի լեզվով. միաժամանակ թուրքերեն և հայերեն շատ բառեր կային խոսքի մեջ: Հարցրեց՝ հայե՞ր են, թե՛ թուրք:

– Մենք հեմշինիկ ենք, հայրի՛կ: Ոչ՝ հայ ենք, ոչ՝ թուրք, – պատասխանեցին նրանք, – իսկ դուք հայ էք: Թուրքի նման եք թուրքերեն խոսում:

Մտքուպր խփեց ավազի ուսին.

– Երկրացի ենք ուրեմն: Մենք Ալաշկերտից ենք՝ Մուրադ գետ: Իմ այստեղի հարևանս էլ Վարդանեից է՝ նույնպես այդ տեղերից. մենք տաճկահայ ենք:

– Ձեր հարևանը քրիստոնյա համշենցի է, մենք ճանաչում ենք նրանց՝ Նիկոլոզին ու Իվանին, լավ մարդիկ են: Բայց մենք հեմշինիկ ենք՝ մահմեդական... Մենք տարբեր ենք, ի՞նչ հայ, – բացատրեց տղան:

Այդ բուպեին Մտքուպր մտածում էր, որ, մինևույն է, նույն ճակատագրի տեր դարձան և մահմեդականները, և քրիստոնյաները: Գոմունիստների համար տարբերություն չկա, եթե նրանք չեն որոշել միմյանց դեմ հրահրել:

– Մենք Ժորդիսից ենք: Այսինքն՝ մենք չե՛, մեր պապերը: Մեր պապը մահացավ «տեպալուշկայի» (վագոնի) մեջ, չհասցրեց տեղ հասնի: Այդպես էլ Հորոյաթ չտեսավ:



Քիչ անց բոլորը, նստած սեղանի շուրջը, մեկ ընդհատելով, մեկ լուս լսելով, յուրաքանչյուրն իր պատմությունն էր պատմում...

– Հիմա դու ո՞վ ես: Թո՞ւրք ես, հա՞յ ես: Ո՞վ ես:

– Հայրի կ, մենք թուրքերի համար վաղուց թուրքեր ենք: Հայի համար էլ ենք համարյա թուրք: Բայց ասում են, որ մեր շատ հեռավոր նախնիները հայեր էին: շատ նվաճողները նրանց ստիպեցին հավատը փոխել: Մե՞զ ինչ: Մեծացել ենք թուրքերի մեջ, թուրքերի շրջանում, դպրոցում ու ուսուցանել են Թուրքիայի պատմությունը, շրջապատում՝ թուրքական երաժշտություն, թուրքական ավանդույթներ, սնունդ... Նախնիները փոխել են իրենց հավատքը, որպեսզի նրանց հանգիստ թողնեն, բայց պարզվեց, որ ճակատագրից փախչել չես կարող... Վագոնի կեսը մահացավ, նույնիսկ թույլ չտվեցին հողին հանձնենք...

Մեքոպի համար հեմշիլների և համշենցիների լեզուն գոյություն ունի: Բոլոր բառերը՝ կամ թուրքերեն, կամ գրաբարին մոտ, խառնված էին միմյանց: Բայց մտերմություն չէր զգում հեմշիլների նկատմամբ. մինևույն է՝ թուրք են, ինչ-որ չեն ձգում: Հասկանում էր, որ հայկական արյուն է, բայց, ըստ իրեն, բացի նույն ճակատագրից, նրանք ոչ մի ընդհանուր բան չունենին: Վտարանդի են՝ նույն ճակատագրով, որտեղ էլ որ լինեն: Սակայն հաճախ էր մտածում այդ մասին. նրանք դեռ հայեր են, թե՛ շուտվանից թուրքեր են: Հավատքով թուրք են, լեզուն էլ հայերեն չէ...

Մյուս կողմից, միտք էր անում Մեքոպը՝ Լիբանանում արաբ-մուսուլմանների հետ մեկտեղ ապրում են արաբ-քրիստոնյաներ, բայց բոլորն արաբ են համարվում: Եվ ի՞նչ: Եթե հայր արեհատ է, Քրիստոսիս չի հավատում, բայց չէ՛ որ նա շարունակում է մնալ հայ, իսկ եթե հայր մահմեդական է, ուրեմն հայ չէ՛: Իսկ քրիստոնեությունից արագ հայերն այլ դավանանք ունենին, բայց հայ են համարվում... Մտազգիում է, որ հայը հավատք չէ, այլ ազգություն: Նշանակում է՝ նրանք հայեր են: Ներ-

քին ձայնը հուշում էր, «բայց մեզ համար, իրենց համար վաղուց թուրք են»:

– Մահմեդականները մեզ երբեք չեն նեղացնում, նրանք հարգում են մեզ, մենք նույն հավատքի մեջ ենք, – ասաց այդ տղայի հայրը՝ շատ տեսած, ակեհեր տղամարդ, որի աչքերի մեջ հայկական համբերատարություն և տխրություն կար:

– Ավելին, – ավելացրեց նա, – երբ նրանք վիճում են, մեզ խնդրում են լինել երրորդ կողմ՝ կանչում են հաշտեցնելու:

Բայց և այնպես, համաձայնեք, հայ մուլան տարօրինակ է թվում... Եվ այս թուրքի համար ցանկացած քրիստոնյա, ու մահալանդ հայ, անպայման այլադավան կլինի: Պատերազմի ժամանակ նրանք այլ մահմեդականների հետ կկանգնեն հայի դեմ, նույնիսկ եթե արդարությունը լինի հայերի կողմը: Այստեղ Մեքոպը կծկվեց ու փորձեց վանել տհաճ մտքերը: Պատերազմի ընթացքում, ամբողջ ժողովրդին ուղարկել են այստեղ: Եվ չէնչեներ և ինգուշներ, մեսխեթցիներ, թաթարներ՝ իբր գերմանացու լրտես են: Լցրին անասուններ տեղափոխելու վագոնների մեջ, որտեղ կարող էին միայն հաստակին նստած գնալ... Նրանց կեսը տեղ չհասավ, ճանապարհին դուրս էին նետում ձյան մեջ:

– Հայրի կ, մենք ֆաշիստներին անգամ չենք տեսել, – երդվում էին խեղճ հեմշիլները:

Իսկ միամիտ Մեքոպը կարծում էր, թե աշխարհում միայն թուրքերն ու ֆաշիստներն են ոչնչացնում ազգային պատկանելության պատճառով...

«Տե՛ր, եթե Դու կաս, ապա որտե՞ղ ես եղել այդ ժամանակ»:

Մեքոպը խոժոռված լսում էր նրանց ու նույնիսկ չէր սարսափում: Իր կյանքի ընթացքում նա վաղուց հասկացել էր, որ այդպես էլ պետք է լինի. փոքր ժողովուրդը թույլ ազգ է: Եվ ուժեղները չեն սպառվի, մինչև իրար չուտեն:

Բայց ահա թե ինչ են մտածում իրենք՝ համաշնեցիները. «Հայր ոչ թե հավատ է, այլ՝ ազգություն: Ոչ որ չի կարող սա ժխտել: Հեմշիր, Համշենի տարածքի անունն է, ոչ թե մարդկանց: Եվ մենք հիշում ենք, որ համաշենցիների գիրը 1600 տարի առաջ Մերսոպ Մաշտոցի ստեղծած այբուբենն է: Ստացվում է, որ կրոնը ոչ մի ընդհանուր բան չունի ազգության հետ: Քրիստոնյա ու մահմեդական արարելները նույնպես միասին ապրում են Լիբանանում: Եվ ի՞նչ: Արդյոք ք դա նրանց այլմոդորակայիներ է դարձնում»:

Երկար նստեցին: Երեխաները եկան. մշուշոտ աչքերով ունկնդրում էին նրանց սարսափելի պատմությունները, որոնք հիշում էին ամեն օր (դեռ վեց-յոթ տարի էր անցել)...

– Հայրի կ, մտացել է նք, ինչ է: Մենք մեղավոր ՚ ենք, որ այնտեղ ենք ծնվել: Մեղավոր ՚ ենք, որ Թուրքիայում որոշել են մեզ սպանել ու դուրս հանել մեր դարերով ապրած հայրենիքից: Որ կազակները փրկեցին մեզ, որ նրանց հետ եկանք Ռուսաստան, իսկ այնտեղ արդեն Հայաստան հռչակեցին: Եվ թուրքերը որոշել են կուլ տալ այդ հողի կտորը նույնպես: Մենք մեղավոր ՚ ենք թշնամուց մեր քաղաքները հետ նվաճելու: Մահար: Մտակ ուրիշների մրցամարտերի մեջ ու կրակն ընկանք...

– Ինչպե՞ս թե մեղավոր չենք, որդիս: Մեզանից յուրաքանչյուրն իր մեղքը թողնում է երեխաների վրա... Բոլորս մեկ մարդու նման ուտի չելանք, գենք չպահեցինք, փախանք բռնությունից... Մենք շատ հերոսներ ունեինք. ասում են Ձեթոնում կովեցին, Մատանում կովեցին: Նրանք կովել են հանուն մեր դարավոր հողի: Ես կասեի, որ լավ կլիներ մենք էլ բռնությամբ զբաղվեինք, բայց գիտես, որ ես չէի կարող նույնիսկ հավ մորթել, – դառնությամբ եզրափակեց ծեր ուսուցիչը:

«Ռուսները դավաճանել են մեզ: Բրիտանացիները վաճառել են: Մեր գեներով և մեր արյունով նվաճեցինք Կիլիկիան, բայց ֆրանսիացիները մեզ անզեն լքեցին թուրքական յաթաղանի առջև: Իտալացիները զինեցին թուրքերին՝ հույներին Բզմի-

րից վտարելու համար, և մեզ այրեցին ամբողջ քաղաքի հետ միասին: Ամերիկացիները քաղցր խոսքերով շոյեցին մեզ և մի քանի նավթահորերի հետ փոխանակեցին»: Շահան Նատալին. ռուս-բուլշևիկների մասին:

Չէ, չեն մտացել: Հնարավոր չէր հեռու վանել իրենց բաժին ընկած անարդարության մասին այդ մտքերը: Սա նմանություն է վախեցնող ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ այն ամենին, ինչ պատահել է իրենց անցյալում: Իրականում իրենց բաժին ընկած հայի ճակատագրի մեղքը հայկական չէր և ոչ էլ դաշնակցականությանը կամ էլ քաղաքացիությանը, որ 35 տարի առաջ թուրքական էր: Նրանց ճակատագիրը որոշող ոչ մի փաստաթղթի մեջ նշված չէր իրենց ազգությունը. «Հայերը պետք է արսորվեն»: Ոչ, պատճառը բոլորովին այլ էր, և այս բոլոր մեղադրանքներով ենթադրվում էր նրանց մեջ մեղքի զգացում առաջացնել: Դարերի մեջ էր թաքնված պատճառը՝ հայության հետ հայերը պահպանել էին բնակություն հաստատելու ունակությունը:

Ժամանակին ռուս թագավորները, «ցամաքն աճեցնելով», գրավել էին մայրցամաքի գրեթե կեսը և հանկարծ հայտնաբերել, որ այնտեղ ապրող չկա: Չկա մեկը, ով կարող է մշակել այս նոր հողերը, հաստել անտառները՝ հերկելու և քաղաքներ կառուցելու համար: Թագավորներին պետք էր պահել, սպասարկել: Մի կողմից Իվան Անեղը կուղարկի Թոմյ բանտ-բերդ, ամբողջ կառուցելու համար, որպեսզի պաշտպանի ժողովրդին թոչվորների արշավանքներից, մյուս կողմից՝ Եկատերինան քրիստոնյաներին կտեղափոխի Ղրիմից դեպի Դոնի ամառի տափաստանները, որտեղ կարիճներից ու օձերից բացի այլ բան չկա: Հայերն անմիջապես սկսեցին քրիստոնեական եկեղեցիներ, քաղաքներ, դպրոցներ կառուցել, դաշտեր մշակել և զարգացնել առևտուրը: Ավերիչ պատերազմից հետո, ցարական իշխանությունից հսկայական տարածքներ ժառանգելով, բուլշևիկները դեմ առան նույն խնդրին՝ նույնիսկ ավելի սուր:

Արևելյան հողերը գրկվեցին բնակչությունից, ոմանք տեղափոխվեցին քաղաք, ոմանք չվերադարձան պատերազմից: 20 տարվա ընթացքում երեք պատերազմներն արյունաքամ արեցին Ռուսաստանը:

Այնպես որ, բնակչության խտությունը պետք է հասցվեր պատշաճ աստիճանի, մնում էր համապատասխան խրտվիլակ գտնել: Կոիվը խորհրդային ռեժիմի թշնամիների դեմ ոչ ոք չեղյալ չէր հայտարարել, և հայերի հայրենադարձությունն իրականացվեց դաժան ծրագրերով՝ միևնույն ժամանակ հիմնովին լուծելով չարաբաստիկ «հայ ազգայնականության» հարցը: Հայաստան ժամանելուց երեք ամիս անց հայրենադարձ հայերի մոտ մեկ երրորդը, որոնք զալուց առաջ այլ պետությունների հպատակներ էին, ուր դաշնակցականներին դուրս էին մղել, տեղահանվածների ցուցակներում էր: Հայրենի Արարատը տեսնելու երազանքով վերադառնալով հայրենիք՝ հավատացյալ հայրենիքի մասին հեքիաթներին և հայտնվեցին ցրտահարված, ձյունոտ Միբիբում հիվանդ, նվաստացած, աղքատացած... Դաշնակցականների ընդհանուր թիվը կազմում էր արտերկրում ապրող հայերի ընդհանուր թվի միայն 2.14 % -ը: Բայց, դատելով ցուցակներից, նոր ժամանած հայրենադարձների գրեթե կեսը գրանցված էր որպես դաշնակի: Ինարկեն, անհրաժեշտ էր նրանց ուղքից գլուխ ծածկել մեղքի զգացումով, մեղադրել լրտեսության, գերմանացիների հետ համագործակցության մեջ, ըստ էության, Ռուսաստանի մարդկային ռեսուրսների քարտեզը վերաձևելու անվան տակ: Իզուր չէ, որ հրամանագրեր-հրաման-հրահանգներում մենք կարդում ենք. «ՎԵՐԱԲՆԱԿԵՏՆԵՆ, ՀԱՎԻՏՅԱՆ»: Ցեղասպանությունից հրաշքով մազապուրծ եղած այս մարդկանց ողբերգությունը ոչ ոքի չի անհանգստացրել: Իշխանությունը պահպանելու համար ավելի կարևոր էր պահպանել և զարգացնել բուշնիկյան պետությունը, թեկուզ ավիններով:

*«Հաշվի առնելով, որ ժամանած քանակակազմը հավերժ է մնում...»:*

Ստալինի մահից հետո, ինչը աննկարագրելի թեթևացու՜մով ու թաքնված ուրախությամբ ընդունվեց, կարգերն աստիճանաբար սկսեցին մեղմանալ: Մարդիկ աննկատ փախչում էին դեպի արևմուտք՝ իրենց տները: Աշխարհն այնտեղ էր արևմուտքում: Վերև ուղարկվեցին գեկույցներ. «Վերջին շրջանում հաճախակի են դարձել տարածաշրջանի սահմաններից դուրս հատուկ վերաբնակիչների չթույլատրված մեկնումների (փախուստների) դեպքերը, հատկապես հայազգի անձանց շրջանում»: Չնայած կարգված «հավերժությանը», նրանց հոգու խորքում դեռ չէր մտնել ազատության զգացումը: Որդիները, բռնները հատում էին անտառը, միսում, հիվանդանում: Այս բանտում, որը բնության զրկում էր, միայն զոյախոնելու ցանկություն էր մնում: Ջզվելի էր ապրելը, բայց նրանք նույնպես ծիծաղում էին, հայիցում ու հիվանդանում: Եվ բոլոր վերաբնակիչները երազում էին միայն մեկ բանի մասին, թե ինչպես և երբ դուրս կգան այնտեղից մյուս՝ նախկին աշխարհ:

Այնպես որ, բռնապետի մահը վերականգնացրեց բոլորին. և՛ աքաղաղները, և՛ գաղթականները, և՛ քաղաքական գործիչներն ու նույնիսկ հանցագործները կրկին սկսեցին պլանավորել իրենց հետագա կյանքը: Այս ամբողջ ընթացքում երանցից յուրաքանչյուրն ապրում էր չձևավորված կամ անավարտ ինչ-որ երազներով ու հույսով: Կամ գուցե ոչ մի երազ էլ չկար, կար ցանկություն՝ գոնե վերադառնալ սեփական անցյալ: Անցյալն, ինչպիսին էլ լիներ, հիմնալի դարձավ գնացքային մղձավանջի առաջին իսկ օրվանից: Բսկ ի՞նչ սպասել այս անորոշ ապագայից: Միայն թե ավելի չվատթարանար: Բսկ ապագան, չգիտես ինչու, քանի գնում, անցյալից ավելի վատ էր դառնում: Չնայած ուրախություններ էլ սկսեցին պատահել:

Մի արևոտ առավոտ ընտանեկան ռադիոսլետատոր Պետրոն չգնաց աշխատանքի, ասաց, որ հիվանդ է: Բայց շիճ

առած վազեց դեպի Ասատուրի տնակը՝ զվարթ, արդեն մի փոքր օրորվելով.

– Խորտի կ բերեք: Մարիա մորաքույր, սեղա՛ն գցիր:

– Ի՛նչ է, ազա՛տ են արձակում, – Մարիամը խառնվեց իրար:

– Չէ, ավելի լավ, քան ազատագրումը: Երջանկություն, քեռի՛ Մետրոպ, երջանկություն, Մարի՛յա մորաքույր:

Մետրոպն աչ դրած սունկ հանեց, դրեց սեղանին ու անհամբեր համարյա բղավեց.

– Խոսի՛ր, մի՛ ձգիր: Վերջերս արդեն մի երջանկություն կատարվեց, բայց ձեռքներս չի ընկնում, որ օգտվեմ:

– Քեռի՛ Մետրոպ, Քերիային են ձերբակալել: Քերիան այդ անառակ իծը, ձերբակալվեց: Գիշերը որ լսեցի, կարծում էի, թե կմտնեն երջանկությունից: Ես անընդհատ վախենում էի, որ չեմ ապրի մինչև դրանց մեռնելը: Եվ, ահա, հիմա նա ժողովրդի չարագույն թշնամին է: Մենք միայն ժողովրդի թշնամի ենք, իսկ նա՛ չարագույն թշնամի: Վերջապես նրանք մտածեցին մեր մասին: Նա մեր ամենաոխրերիմ թշնամին է, – գույշը դես ու դեն շարժելով՝ Պետրոսն բղավում էր՝ ուրախանալով իր արտասանած յուրաքանչյուր բառի վրա:

Մարիամը ձեռքերն իրար զարկեց ու շտապեց դեպի հարսները: Գյուղն այդ լուրն իմացավ երևկոյան: Այնտեղ վերին մասում, որտեղ ապրում էին պանակներն ու հսկիչները, հանդարտվեց: Իսկ ներքևի տներում ուրախ սպասումից և ադուտ, տազնապալի անորոշությունից երկար ժամանակ չէին կարողանում քնել...

Ո՛վ գիտի, թե ինչ բան է երջանկությունը:

Երևի գիտեն միայն նրանք, ովքեր այն տարիներին ապրանք ու անասուն փոխադրող գնացքներով Սիբիր թշվեցին, ովքեր ցրտահարված գետինն էին փորում ու երեսուն աստիճանի ցուրտ օրերին, տարիներ շարունակ, իրենց փայտացած ձեռքերով հատում անտառը, ովքեր կորցրին աշխարհում ամեն

ինչ՝ ընտանիք, երեխաներ, առողջություն ու արժանապատվություն...

Միայն նրանք գիտեին, թե ինչ է երջանկությունը՝ 1953 թվականի մարտի սկզբներին ու դեռ մի քանի ամիս հետո: Երբ արտոթյակներն ու զարթածները թոչում են բարաքից բարաք և խոպտո ձայնով շշջում վստահելի հարևանի ականջին. «Կորսային գնդակահարելու են: Դե, էն ակնոցավորին, էլի»: Իսկ բարաքի մարդիկ, մի կերպ քողարկված ոգևորությամբ, խուլ են ձևանում և խնդրում կրկնել և նորից ու նորից լսում ու հրճվում...

Կրկնակի երջանկություն: Չէ որ բոլորովին վերջերս, ճիշտ է, իր մահով բեղերով շուն էր սաստկել:

Վերադարձի թույլտվություններն սկսեցին մեկը մյուսի հետևից տեղ հասնել, սայլերն սկսեցին արքայալներիս զտրել դեպի գետը:

Չերթը հասավ նաև Մետրոպի ընտանիքին: Նրանք վաղուց էին պատրաստ, անմիջապես ճամփա ընկան: Քեռեանավից հետո վագոնի կեսն զբաղված էր, բայց այս անգամ մարկավորի քնում էին: Երկու շաբաթ անց նրանք հասան Ռոստով և դեռ չէին որոշել, թե ուր գնան, երկու թոռներն ընկերացան Բաքվից լեռնային հրեաների մի հիանալի ընտանիքի հետ, ովքեր էլ համոզեցին իրենց հետ գնալ Բաքու: «Գեղեցիկ քաղաք է, ծովի ափին, շատ հայեր կան, մեծ մայրաքաղաք է», – թոռները կրկնում էին նրանց հետ:

– Հայրի կ, Քանաքեռ, Կոնդ, Երևան, միևնույն է, մեզ համար այնտեղ ոչինչ չկա... Դե, Երևանը մեզ ի՛նչ հայրենիք: Մենք այստեղ գյուղում ենք մեծացել... Դուք ինքներդ էլ եկել եք ընդամենը քառասուն տարի առաջ, տեղավորվել եք մի օտար վայրում: Լավ, մենք կգնանք, հայրի կ, կտեղավորվենք, և եթե լավ լինի, բուռնս այնտեղ կհավաքվենք... Դուք ինքներդ ասացիք, որ Թիֆլիզը զրեթե հայկական քաղաք էր, բայց Բաքուն նույնպես հայերն են կառուցել ու հարստացրել:

Մետրալը համոզվեց: Անկատ է մոտենում այդ օրը, երբ դու սկսում ես ենթարկվել սեփական երեխաներին:

Կրտսեր թոռները շատ լավ էին սովորում, պարապում էին՝ ուզում էին համալսարան ընդունվել, անկախ կյանքով ապրել: Չնայած ծերունիին այլևս չէր հավատում ոչ ժամանակին, ոչ էլ մարդկանց՝ աշխարհի ոչ մի անկյունում: Ամեն անգամ մի ինչ-որ նոր վիշտ է տղոսկում նրանց կյանք, բայց տարրերը կամ նույնիսկ արմատները չնոստացված անցյալից էին:

Այնուամենայնիվ, պետք է ապրել այնտեղ, որտեղ բոլորը բռնեցր են: Կյանքը քեզ ոչինչ չի՝ սովորեցրել: Եթե չլինեիր թուրքիայում ծնվելը, անիծյալ լինի, մենք մեզ համար կապրեինք: Մա, միևնույն է, սատկելու եր:

– Եթե վատ լինի, կվերադառնանք:

Երկու մեծ թոռները իրենց ընտանիքներով ազատ արձակվեցին:

Մնացածները հոգեւէ էին հաճախակի արմատական փոփոխություններից, վերադարձան հայրենիք կոչված տուն, գնացին իրենց Կոնդ-Քանաքեռ: Երկիրը փոխվում էր այքերի առաջ: Մետրոպոլի արդեն 80-ի անց էր, բայց լավ տեսնում ու կարդում էր: Նա իր հուշերի տեսրները կտակեց ավարտել կրտսեր ծոռանը, ով, որպես ժողովրդի թշնամի, մեկ ամսական հասակում քարոզվեց: Նա ավելի հարմար էր. լավ էր սովորում, քարտեզներից չէր պոկվում, անգիր էր սովորել աշխարհագրությունը, հարցնում էր ամեն ինչի մասին՝ միզուցե դառնար պատմաբան:

Իսկ Մտալինի անձի պաշտամունքի մասին հաղորդագրություններից հետո, Մետրոպոլի ամաչելով՝ թոռներին խնորեց լավ սեղան գցել: Հյուրերն ուսում էին դժվար ճարվող բրինձը և լուս ուրախանում: Երևի իսկական ուրախությունը չի աղմկում:

Մտալին չկար, բայց վախճ ոչ մի տեղ չէր գնացել: Ասոն փորձում էր կատակել.

– Հայրի՛կ, հիշու՛մ ես Նաոմի՛ցի օստյակ պահակին, ով հանգստյան օրերին ճանճասպան սունկ էր ուտում, Էրզում,

պարում, թշկոտում, սիրային, որսորդական ու հերոսական երգեր հորինում, ուժը ցույց տալիս, հետո լավ խմածի պես ոչինչ չէր հիշում:

– Միբիցիցներն ուժեղ մարդիկ են, թունավոր սակից չեն վախենում. թույր չի ազդում...

– Հիշու՛մ եք բարձր ցանկապատով այն տունը մեր Նաոմի փողոցի հետևանաւում: Բոլորն ասում էին, որ ինքը՝ Մտալին է այն վարձել այնտեղ, երբ քարոքում է եղել:

– Ափսոս՝ այնտեղի ճահիճներում անիծյալը չի խեղդվել:

Արդյոք նրանցից որևէ մեկն ակնկալու՞մ էր պայծառ պագա: Երիտասարդները, իհարկե, սպասում էին, թե ինչպես կարող էր այլ կերպ լինել: Մետրոպոլ ու Մարիամը պարզապես ապրում էին ինչպես միշտ՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր...

Հասցը կար, ուրախությունը կար, տուն-տեղ, երեխաներ, թոռներ, էլ ի՛նչ է պետք մարդուն: Երեխաները լավն են, թոռները՝ գերագանց ուսանողներ. ինչի՞ց բողբոջեն: Չնայած՝ ամեն ընտանիք իր ծուռն ունի:

Թոռներից մեկը՝ Ասիկի որդին, ծուռ գնաց: Կապվեց արամի մի կնոջ հետ լիքը առանց անցյալի աղջիկ թողած: Իսկ նրա անցյալը արասփելի էր. իր տնօրենի ու հաշվապահի հետ բանտարկվել էր հափշտակությունների համար: Ամուսինն այդքան չէր ցանկացել սպասել. թողնելով փոքրիկ երեխային կնոջ ծնողների մոտ, հեռացել էր Ռուսաստան:

Ոչ մի յարատև ու հորոքոր չէր ազդում, ասում էր՝ իրան եմ ուզում: Իմանալով այդ գրույցների մասին, հպարտ կլինե ինքը՝ հրաժարվեց ամուսնանալու մտքից, բայց թողը հետ չկանգնեց, և նրանք ամուսնացան: Երեխային որդեգրեց, տարավ ընկերոջ արհեստանոց, շատ լավ նկարում էր: Հասցրեց համարյա մինչև յոթերորդ դասարան, բայց սկեսրանք այդպես էլ չհամակերպվեցին թոռան ընտրության հետ: Մի օր էլ կլինե անսպասելիորեն կապվեց մեկ ուրիշի՝ «տրեկի» որդու հետ, շտապ բաժանվեց, ամուսնացավ ու մեկնեց արտերկիր:

Փուշը սրտում, թողը երկար ժամանակ չէր ամուսնանում: Շատ տարիներ անց նկարիչ ընկերներից մեկը նրան ողջույն բերեց այն օտարի որդուց, որին որդեգրել էր: «Տարիներ շարունակ մտածում էի գրել ձեզ, բայց չէի ուզում նեղացնել մորս: Հիմա նա գնաց, և կարող եմ խոսել: Ես ողբում եմ նրա և ձեր սերը: Նա շատ էր սիրում ձեզ... Թույլ տվեք երբեմն զանգահարել...», – գրել էր նրան ամերիկացի հայտնի նկարիչ Ռակոսը (այն ամենը, ինչ մնացել է Կիրակոսյանից՝ նախկին Ռշտունու ազգանունից)...

«Փող եմ ուղարկում, կխնդրեմ ինքներդ նվեր ընտրեք»:

Այդ փողը չէր տեղավորվում ոչ գրպանում, ոչ գլխում, ոչ էլ կարող էր հետ ուղարկել... Հիշողությունը վաղուց չէր պահում ոչ ուրիշին նախընտրած այն կնոջ պատկերը, ոչ էլ ծնողների արգելքի դառնությունը: Վաղուց մոռացել էր անցյալի այդ պատառիկը՝ նույնիսկ առանց ներելու: Վերջապես մի օր գնաց Աբովյան, մանկատան երեխաների համար մի ամբողջ մեքենա խաղալիքներ գնեց: Ոչ տխրող կար, ոչ էլ տխրելու կարիք...

## ՃԱԿԱՏԱԳՐԻ ՓՇՐԱՆՔՆԵՐԸ

Երկնքի տակ փշրանք երգվների,  
Ամեն փշուր՝ մի դարավոր կարոտ...  
Անվերջ բախման ու ռազմերից  
Մեր սուրբ վայրերն են արյունոտ...

Իսկ տարիները թոչում էին, ավարտվում էին հերթական խառնակ ու ծանր ժամանակները: Երկրի ու բոլորի հետ միասին՝ սայթաքելով, ընկնելով ու բարձրանալով, գնում էին, բայց ոտքի կանգնեցին: Երեխաները մեծանում, ամուսնանում էին, թոռներ շարում... Մեսրոպի որդիները ծերացան, իսկ ինքն ու Մարիամն էլ վաղուց չկային, հրաշքով հասել էին անհատի պաշտամունքի մերկացման օրերին: Որդիներն էլ, փառք Աստուծո, չտեսան, թե ինչ տեղի ունեցավ 30 տարի անց... Չտեսան ոչ Մուսգալիթը, ոչ էլ Բարվի ջարդերը:

Բաքուն ջերմորեն հանդիպեց եղբայրներին: Նայեցին շուրջը, գննեցին: Ուրախ, ազատ ժողովուրդ. արագ ու հեշտությամբ ծանոթանում էին: Բանտերում չէին նստել, արստում չէին սատել... Օով, սեր, շատ-շատ երեխաներ... Շուրջ բոլորը ժպտում էին: Գրեթե բոլորը խոսում էին ռուսերեն: Հայերը շատ էին, սակայն հոգու խորքում ինչ-որ տեղ զգում էին, որ չնայած հայ են, բայց մտերմություն չէր առաջանում (հագիվ նշարվող տարբերություն կար բազմեցիկների և, ասենք, Կոտայքի կամ Տոմսկի հարևանների միջև): Շուտով պարզվեց, որ բռնապետի մահից հետո նրանց հրեա ընկերների հարազատները ոգեշնչվել էին, իսկ անձի պաշտամունքի հայտարարությունից հետո՝ պարզապես բռնկվել:

Մարկը՝ նրանց Բաքու գալու հարցում համոզող եղբայրներից ավագը, գործարանում բարդ սարքեր էր վերանորոգում և երագում էր մեկնել Իսրայել:

- Ինչո՞ւ, Մարկ: Մի՞ թե այստեղ վատ է:

- Հազիվ կյանքում մեկ անգամ սուրբ հողը տեսնելու և այրելու հնարավորություն բացվեց, սեփական հողը: Մերժվածներին սկսել են բաց թողնել: Կարծում ես, թե բոլոր հրեաները պաշտոնում են իրար: Գործը տանի, ո՞չ: Բայց բռնոնք են բռնորը, քո՞ն են: Մենք բոլորս մեկ բան ենք ուզում ունենալ՝ մեր սեփական հողն ու երկիրը: Հայրությանակներ շարունակ, - Մարկը փակեց աչքերը և արտաշնչեց, - և ոչ ոք այդ սեփական երկրում թեզ չի ասի ջնույ:

Լոնց մի պահ, հետո ավելացրեց.

- Դե, երևի կմտածի, բայց չի ասի: Ես այստեղ տեղափոխվել եմ Ուկրաինայից: Ընկերներս գրեցին, որ Բաքվում մեզ լավ են վերաբերվում: Այո՞, լավ, բայց, միևնույն է, կհիշեն: Երբեմն ինքներս ենք մոռանում, որ հրեա ենք: Ուրեմն իսկապես լավ են վերաբերվում: Բայց ավելի լավ է թո սեփական ժողովրդի հետ լինես: ով գիտի, ժամանակներն ու առաջնորդները փոխվում են...

Գևացին Վրաստան, այստեղից մտա եր: Պապն ասում էր, որ Թիֆլիսում հեռավոր հարազատներ ունեն, բայց Ռեշթու-կաշվիլի դարձած, ու ի գնաս: Գեղեցիկ քաղաք է՝ լցված օտարներով... Եվ Բաքուն նրանց համար դարձավ երջանիկ հանգրվան: Գտան նոր ընկերներ, բերեցին իրենց ընկերներին, օգնեցին նրանց լավ, հեռանկարային աշխատանք գտնել, և մի քանի տարի անց, իրենց կյանքում առաջին անգամ, նոր շենքում պետությունից հարմարավետ բնակարան ստացան: Երանց երջանկությանը չափ ու սահման չկար... Երեխաները կարողացան սովորել: Դուստրերը մեկ տարվա ընթացքում ընտանիք կազմեցին դարաբաղցի հայերի հետ:

Աշխատանքի վայրում տղաներն սկսեցին առաջ գնալ, սակայն շուտով հասկացան, որ այստեղ որոշ կանոններ կան, բայց նրանք արդեն սովոր էին ենթարկվել կանոններին: Ինչպե՞ս կարող էր այլ կերպ լինել: Բայց և այնպես, Սմբատի ավագ

որդին՝ Հովսեփը, սկսեց աշխատել կառույցի արտադրամասում: Ոսկե ձեռքեր ուներ, արագ ընտելացավ, աստիճանաբար դարձավ արտադրամասի վարիչ, սապա գլխավոր մեխանիկ: Իսկ կրտսերը՝ Վանունը, ընդունվեց համալսարան, դարձավ նավթաքիմիկոս, սովորում էր ասպիրանտուրայում, հաճախ գնում էր գործուղումների: Կնոջ ծնողների բերել էին իրենց մտա, նեղվածք էր, և հանկարծ անսպասելի առաջարկեցին աշխատանք Մումգայիթում՝ խոստանալով ապահովել բնակարանով:

Ադրբեջանը հպարտանում էր այս բազմազգ քաղաքով, ուրը կառուցել էին ԽՍՀՄ տարբեր մասերից եկած երիտասարդները: Այնուամենայնիվ, 1949 թվին կառուցված քաղաքը վաղուց դարձել էր Կասպից ծովի կեղտոտ քաղաքներից մեկը: Կառուցողներից շատերն արդեն թողել, գնացել էին: Երանց փոխարեն քաղաքն սկսեցին բնակեցնել, որպես բանվորական զանգված, հեռավոր գյուղերից եկած ադրբեջանցիները, և ավելի ու ավելի շատ թափուր աշխատատեղեր էին մտում ինժեներների համար: Հարկը՝ տեղացի, կիսառուս, կիսաադրբեջանցի, մի լավ ընտանիքի աղջիկ, մի քանի տարում երեք երեխա ունեցավ ու չէր պատրաստվում կանգ առնել: Մտերիմները չէին հասկանում՝ լուրջ էր ասում, թե կատակով...

Վանունը չէր ուզում տեղափոխվել իր ծնողների մոտից, բայց շատ հաճախ մարդու փոխարեն աշխատավարձն է որոշում, մտածեցին ու համաձայնեցին: Տունն առանց երեխա դատարի էր, բայց հաճախ գեում-գայիս էին, ինչ-որ կերպ հազեցնում երեխաների կարտուր: Ամենավաղը թորը հաճախ հաղթում էր բոլոր մանկական օլիմպիադաներում, անչափ հետաքրքրասեր էր. հետաքրքրվում էր բացարձակապես ամեն ինչով, կարդում այն ամենը, ինչն իրեն հետաքրքիր էր՝ կենսաբանություն, աշխարհագրություն, զրականություն: Եվ հատկապես սիրում էր պատմությունը:

Ժամանակ առ ժամանակ գնում էին Հայաստան, կամ հարազատներն էին գալիս: Գնացրով ճանապարհը նույնիսկ չէին նկատում: Միմյանց ուղևորություններն ու հանդիպումները վերածվում էին անմիտ տոներին: Ամանտրի ևսօրեին նրանք անայսման հերթով էին գնում: Այս անգամ Կանուրը եկավ Երևան երեխաների, կեռչ և նույնիսկ ընկերոջ հետ: Եվ հանկարծ կրտսեր թոռը Կահանիկը, հերթական ընտանեկան այցի ժամանակ ասաց.

– Մա՛մ, ես ուզում եմ այստեղ մնալ: Ինձ այստեղ ավելի շատ է դուր գալիս: Բոլորը մերոնք են:

Ոչ որ չէր սպասում նման բան լսել: Մերո՞նք: Ստացվում է, որ այնտեղ Բաքվում ծնված տղան ինչ-որ մեկին համարում էր ոչ իրենը: Կամ իրեն էր համարում օտար, ինչը նույնիսկ ավելի վատ էր: Բոլորն անհանգստացան դպրոցի հարցով. սկսեցին հարցնել, թե ինչն է նրան այդքան դուր եկել: Երեխան չթաքցրեց.

– Ինձ դուր է գալիս Մանեն՝ հուպարի հարևանը:

Հարազատները «փեսացուին» ուղարկեցին քնելու, իսկ իրենք երկար ժամանակ թրջում էին:

Բայց երեխան չէր կատակում և ջերմտանդորեն համոզում էր ծնողներին.

– Պա՛ պ, գոնե մինչև զարնանային արձակուրդը: Ես այստեղ երկու լավ ընկեր ունեցա, ուզում եմ նրանց հետ ավելի ընկերանալ:

Ծնողները ծիծաղեցին ու Բաթու մեկնեցին առանց նրա: Մեկ ամիս անց Կանուրը գործուղում ձևակերպեց. դպրոցից բերեց գնահատականներով փաստաթղթերը: Այդ օրերին Երևանում դարաբաղյան կրթերն էին բուռն ընթացքի մեջ: Հանրահավաքներ, աջակցություն Ղարաբաղին: Եղբայրները նստած էին հյուրասենյակում և չէին հասկանում միմյանց.

– Նրանք միայն ին՞ք արթնացան: Այնքան տարի է անցել. չի ստացվի:

– Չե՞ս հասկանում: Ստալինն ու ձեր Բաղիբովն ամեն ինչ արեցին թուրքերի հետ, որ հայերի երկիրն իրենցով անեն: Հիմա ամեն ինչ իր տեղը կընկնի, մեզ բռնի կերպով կապում էին նրանց հետ: Պերեստոյկա: Նախ՝ Ղարաբաղը, հետո թուրքերից կպահանջեք մեր հողերը:

– Ի՞նչ հող, չե՞ս հասկանում: Ո՞վ է հող վերցնելու կամ տալու: Պետք է պայքարե՞ք բոլոր թուրքերի դեմ: Մտկվան, Կենտկոմը հավանություն չեն տա նման բաներին: Նրանց ձեռքում է ամեն ինչ:

– Դու, դու, – կրկնօրինակեց Նուսիկը՝ Մարտունի հարսը: – Նախ և առաջ՝ մենք: Եվ երկրորդ՝ ավելի լավ է ձեր կեղտոտ Մուսկայիթից տեղափոխվեր Բաթու: Ինչպե՞ս եք ապրում այնտեղ, ինչ ապրելու տեղ չի... .

Փետրվարի 14-ի գիշերը, երբ Ստեփանակերտում տեղի ունեցավ առաջին ցույցը՝ շրջանային կուսակցության կոմիտեի քյուրտյի նիստում, Աղյբեջանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի բաժնի պետ Ասադովը հայտարարեց, որ «*հարյուր հազար արդրեջանցիներ պատրաստ են ցանկացած պահի ներխուժել Ղարաբաղ և այնտեղ սպանող կազմակերպել*»:

Կեղտոտ Մուսկայիթը, ինքուրեք, ավելի վատն էր, քան նույնիսկ Հայաստանի, նրանց կարծիքով, ձանձրալի մայրաքաղաքը: Հարազատները նրան տարան, ման անձեցին հիշարժան վայրերով, բայց, միևնույն է, չհավանեց Երևանը: Միայն հրապարակն իր շարտվաններով ու Արարատի համայնապատկերը դուրը եկան, այն էլ ոչ միշտ է տեսանելի: Մի տեսակ հետամնաց քաղաք է, անծանոթ, մոռյալ մարդիկ քայլում են փողոցներով, բոլորովին ուրիշ բան է Բաթուն: Միայն ծովն ինչ ասես արժի, առափնյա փողոցում դու անպայման հանդիպելու ես մի խումբ ծանոթների. շրջում են քաղցրահամբուր ժպիտով: Երևանի դարդոտներին արդեն բազմելցի դարձած գաղ-



թականի թողը լավ չէր հասկանում, հեռու էր նրանց դարավոր տարօրինակ ցավերից:

Ինքն էլ էր ուզում նորից տեղափոխվել Բաբու, սպասում էր՝ հարևար տեղ գտնել: Վերջապես տոներից առաջ գտան.

– Մենք արդեն փոխանակում ենք ձևակերպել. հենց գևամ՝ կսկանեք տեղափոխվել: Ամեն ինչ նորը կգնեն: Հազիվ կարողացա փոխել երեք սենյականոցը երեքի հետ, այն էլ հավելավձարով: Մեծ օգնություն էր տվածը: Անչափ շնորհակալ եմ, եղբայր: Մեկ տարի հետո պարտքը կվերադարձնեն:

– Ձեր «փեսացուն» դասարանում գերազանց ուսանող է. գիտե՞ս: Իսկ Մանեն զուգահեռ դասարանում է սովորում: Նրա բախտը չի բերել. իմ Վարսիկն ամեն ինչ արեց չխանկարելու համար: Նա նրանց անզվերեն է սովորեցնում, տղան գրեթե վարժ խոսում է:

– Բա ի՞նչ էիր կարծում: Ես եմ նրան շախմատ խաղալ սովորեցրել, և արդեն ինձ հաղթում է: Մեր ընտանիքում ոչ ոք շախմատ չի խաղացել:

– Մեր ընտանիքում ինչ-որ մեկը շախմատ տեսած կա՞ր: Ի դեպ, Մետրոպ պապի տետրը տանն է: Մտածում եմ տալ, երեխան ի մի բերի, արտագրի կարդալու համար: Օրերս հարցնում էր, թե ինչ գիտեմ մեր ցեղի մասին: Նրանց դասարանում Մելիք-Շախնազարովներից մեկն է սովորում. պարծենում է իր մեկիքների ընտանիքով: Բայց ես դիմացա, լռեցի. Աստված մի արասցե՛ սխալ բան ասեմ. նա արդեն ամեն ինչ գիտի, կսկսի շտկել, կամաչնա:

– Տո՛ւր նրան, Մելիևան հետո կտպագրի, նա կհասկանա ձեռագիրը: Ես ինքս վաղուց էի մտածում, բայց էս անտեր ժամանակ չի ներում:

– Անհրաժեշտ է վերնի պահարանից իջեցնել: Ո՞ր ամսաթվին են տոմսերը:

– Կիրակի: Երկուշաբթի օրվանից արդեն փոխանակումն ավարտել է պետք, գործ շատ կա:

– Կիջեցնեմ, թող «փեսացուն» զբաղվի:

Բայց, ինչպես հաճախ է լինում, երկուշաբթին ուրբաթից շուտ եկավ... Կիրակի առավոտյան հանկարծ Մելիևան գանգեց ու սկսեց լաց լինել, շփոթված և անկապ պատմել ինչ-որ ջարդերի մասին, որ ամբողջ քաղաքը խոսում է, սարսափելի լուրեր են տարածվում Մումգայիթից, որ նա վախենում է այնտեղ գնալ, բոլորը վախենում են: Հավատալու չէ, բայց դա հաստատ է և ճշմարտություն: Մելիևան դատեր հետ մի շաբաթով գնացել էր Կիրովբաբա՝ հարազատների մոտ: Ծրագրել էին Մումգայիթ վերադառնալ մինչ Երկուշաբթի: Ոչ ոք ոչինչ չգիտեր: Վանունը հանգստացրեց կեռօքը, բայց ինքն էլ անհանգստացավ: Ղարաբաղի գործից արդեն լավ հոտ չէր գալիս...

– Արի՛ Բաբու, մերոնց մոտ, կխոսենք:

Կիրակի գիշերը նա արդեն Բաբվում էր: Նախ գնացին ձնողների մոտ: Ե՛նքի կետը հայերն էին զբաղեցրել: Կոոպերատիվ նոր տունը դգգում էր մեղվի փեթակի պես: Ինչ-որ մեկը տեսել էր, ինչ-որ մեկը՝ լսել, բայց ոչ ոք չէր կարողանում հավատալ: Հետո բոլորն սկսեցին ասել. «Ես վաղուց ինչ-որ բան սկսել էի զգալ» կամ . «Ես դա գիտեի»:

Աշխատավայրում արդեն որոշ անհանգստություն էր տիրում. խմբերով փափսում էին, իսկ ճաշի ընդմիջման ժամանակ հայերն առանձնացան վարչության պետ Պողոսովի աշխատասենյակում և միմյանց հերթ չէին տալիս խոսելու:

Մեկը բղավում էր.

– Ճիշտ չէ՛:

Մեկ ուրիշը երդվում էր.

– Այիկն ինքն ինձ գանգահարեց: Ինքն իր աչքերով է տեսել, հազիվ է փախել: Հետասպնդել են, քարկոծել, մեքենայի ծածկի վրա լրիվ փոսեր են, նոր մեքենա էր: Նավթագործներ են, ինքներդ գիտեք, թե ինչպիսի մաշոյիկ են կամ նախկին դատապարտյալ, կամ խելագար բաշխուղուկներ...

Արհմիութենական հանձնաժողովի նախագահը վախեցած ձայնով կրկնում էր.

- Կարիք չկա ճռնել և շիկացնել իրավիճակը: Այդպիսի բան Բաբելում չի կարող լինել: Մենք ԽՍՀՄ ամենաբազմազարգացն ենք:

Վանունն առանձնապես չէր սիրում Պողոստյանի, կուսակցությունը ընդունվելու համար նա հանձնարարական չուղեց: Եվ ընդհանրապես, նրան կասկածում էին օրգանների հետ կապի մեջ:

Սա արդեն տագնապալի էր: Եթե պաշտոնյան ասում է, որ չի լինի, ապա ով գիտի, միգուցե և լինի: Ինչո՞ւ ոչ: Նույն հիմար բանվորները, որ Մուսկալիթում էին, գյուղերից գալիս էին նավթահանքերում աշխատելու: Եվ բոլորն ապրելու տեղ չունեին՝ մեծ մասը հանրակացարաններում... բավական է մի կայծ, որ բռնկվի: Բայց, մինևնույն է, ո՞վ կարող էր նման բան մտածել:

Վանունը մի պահ ցնցվեց՝ պատկերացրեց իր տոր մանրահատակը խուժանի յուրտոված կոշիկների տակ: Գուցե բնակարան կորցնելու վախը նրան դրոշեց սկսել փոխանակման տարբերակներ փնտրել հանրապետությունից դուրս: Երևկոյան ծնողների հետ քննարկեցին բարդ իրավիճակը: Ոչ որ այդպիսի բան չէր կարող նույնիսկ պատկերացնել: Բայց հոգու խորքում ինչ-որ ծանոթ պատկերներ էին հայտնվում: Վանունը գիտեր, որ Մելինան անմիջապես սկսելու է հոգավ իր կիրովաբացի հարազատների մասին. «Իսկ մայրիկը, իսկ հայրիկը, իսկ Սյավիկն ու Արկադիկը...»: Բայց սպասելն արդեն աղետալի էր թվում: Եվ ամենավատն ու տարօրինակն այն էր, որ նրա նման մտավախ մարդիկ շատ քչերն էին: Ոչ որ չէր հավատում, ոչ որ չէր պատկերացնում:

Աշնան կողմ ջարդարարները հայտնվեցին Կիրովաբադում: Այնտեղ ռազմական դրություն մտցվեց, և Մելինայի հարազատները Երևանով թռան Մոսկվա: Նրանց հաջողվեց կա-

հույրը վաճառել կես գնով, իսկ տան բանալիները տվեցին հարևան ադրբեջանցիներին. դեռ մանկապարտեզից մտերիմ ընկերներ էին: Հինգ տարի անց ադրբեջանցի ընկերները վաճառեցին ինչպես Մելինեի ծնողների, այնպես էլ իրենց տունը, եկան Մոսկվա և երկու վրան վերցրին Չերկիզովի շուկայում: Ու հանկարծ փոխադարձ ծանոթների շրջանակում շուկայում պատահաբար հանդիպեցին: Ասես չլինեին այս բոլոր տարիները... Տիբրեթն ու Նանան նամուսով դուրս եկան և մեղավորի պես առաջարկեցին.

- Տան գնի կեսը կարող ենք տալ: Մենք պարզապես կորցրել էինք ձեզ, հասցրել ենք ծախսել:

Լրիվը մերձմուսկովան քաղաքում կարող էր բավարարել, կեսը բավականացրեց Կյազմայից ոչ եռուու գտնվող մի գյուղում մեծ հողակտորով փոքր տան համար: Մելինայի ծնողներն ու նրանց որդին մեկնեցին այնտեղ՝ պարտեզը մշակելու:

Այդ ամենը հետո: Իսկ այժմ նա կանգնած էր արագ որոշում ընդունելու անհրաժեշտության առաջ: Նրանց համար տուն գնալն արդեն իմաստ չունեւր. ոչ որ քցիտեր, թե ինչ է կատարվում այնտեղ: Ավելի լավ է սպասել և տեղափոխվել այստեղից: Դաշտագործների նման էին... Գուցե գեները հուշեցին նրան, որ պետք է տեղափոխվել:

Առավոտյան Վանունն ու Հովսեփը խոհանոցում թեյ էին խմում ու Աստուն փառք տալիս.

- Ինչ բախտ՝ Վահանիկը մնաց Երևանում: Հավանաբար, Աստված կա...

- Աստված չկա: Ինչի՞նչ է պետք այդպիսի Աստված: Այնքան մարդ է սպանվել ու այրվել: Իմ տամգայիտցի հայ ծանոթներից միայն ես փրկվեցի ընտանիքիս հետ: Իսկ Բարանան՞ ըր, Առակելովնե՞րը: Իսկ Մարտիրոսովնե՞րը... Ամենախելացի մարդիկ, ի՞նչ երկխաներ ուներ... Նրանց էլ քարշ տվեցին այնտեղ բնակարանների պատճառով... Ի՞նչ հանձարեղ տղա ուներ Մարտիրոսով Արկադին... Եվ մնացած բոլորը: Ես համարյա

ամբողջ քաղաքի հայերին էի ճանաչում, – հառաչում էր Վա-  
նուկը:

Մմբատը, գորշ դեմքով նստած բազմոցի անկյունում, նա-  
յում էր որդիներին, սեկյակի պատերին ու հագիվ էր զսպում  
ծանր հոգոցը: Նա էլ էր մի քիչ շուտ սկսել ինչ-որ բան զգալ,  
բայց ո՞վ կարող էր մտածել:

Անհավատալի էր, բայց մեկ ամիս անց՝ ապրիլի սկզբնե-  
րին, փոխանակման տարբերակ գտան: Նրանց թվում էր, թե  
հիմա ողջ Բաքուն շտապելու է փոխանակվել, բայց նրան նույ-  
նիսկ համոզում էին շտապ որոշումներ չկայացնել և «հիմա-  
ռություններ» չանել: Ցավալի ու ափսոս էր և խճանկարային  
մանրահատակը, և իռանացի ու սեյյակների շքեղ կահույքը  
թողնելն օտարին: Բայց ամենաափսոսն ավերվեց բնակարան-  
ների կորստից ավելի շուտ. հարաբերություններն այլևս այլ  
էին լինելու...

Վերցրին որոշ իրեր, որոնք անհրաժեշտ էին թվում: Ամեն  
ինչ հնարավոր չէր տանել, բայց որքան ուրախություն և աշխա-  
տանք կար սովորական իրերի մեջ... Քննարկում էին, ինչպե՞ս  
գնեցին, ուրախացան, էլ ավելին ուզեցին, բայց պարզվեց, որ  
այդ ամենն ավելորդ է, միայն ոտքերն է կպայում: Անհրաժեշտ  
իրերով առաջին բեռնարկվերը գնացին Մոսկվայի մարզ... Ա-  
մառային արձակուրդի ավարտին ժամանեց Վահանիկը հուզ-  
ված և միաժամանակ մի փոքր ընկճված, կտրված ընկերներից:  
Բայց արդեն մեկ շաբաթ անց արագ ընտելացավ և սկսեց նա-  
մակներ գրել ընկերներին:

Մմբատի կրտսերը՝ Հովսեփը, զանգահարում էր երկու-ե-  
րեք ժամը մեկ և պատում, թե ինչ են փոխանցում իրենցից ոչ  
պակաս վախեցած աղոթքանցի ընկերներն ու հարուսները:  
Երեկոյան նրանք առաջարկեցին պատրաստվել. ըստ ամենայ-  
նի՝ ինչ-որ բան էին իմացել: Կարմիր թևկապներով Ժողովրդա-  
կան ճակատի անդամները սկսեցին քայլել փողոցներով՝  
սպառնալիքներով ու հայրենասիրական ինչ-որ լզուկնգ-

ներով... Նույնիսկ պատուհանից նայելն էր սարսափելի: Հան-  
րահավաքներում ու հեռուստատեսությամբ հայտարարվում  
էր, որ Բաքուն լցված է անօթևան հայաստանցի փախստական-  
ներով՝ փաստորեն՝ կոչ անելով բռնություն գործադրել հայերի  
դեմ:

Բաքվում իրավիճակը թեժանում էր լույսի արագությամբ:  
Ժողովրդական ճակատը Ամանորից անմիջապես հետո համա-  
գումարի հավաքվեց: Հայտնվեցին զինված ջոկատներ, որոնք  
շտապում էին Ղարաբաղ: Քաղաքի ռազմական հրամանատար  
մի ռուս գեներալ, ի պատասխան Ժողովրդական ճակատի ակ-  
տիվիստների պահանջին՝ վտարել քաղաքից ոչ աղոթքանցի  
բոլոր բնակիչներին, պատասխանեց, որ «... դա կարող է արվել  
ընդամենը չորս օրվա ընթացքում, բայց հետո քաղաքը դարձնել  
մեկ մահմեդական մեծ գերեզմանատուն»: Պահանջողները նա-  
հանջեցին, բայց ոչ երկար ժամանակով: Իսկ հունվարին  
սկսվեց Բաքվի հայերի Գողգոթան...

Հունվարի 13-ին սկսվեցին հայկական ջարդերը: Հիմա-  
կան մասը, ով կարողացավ փախչել, փախավ, փրկվեց շուրջը  
մեծ տերություն է: Ինքնաթիռները վայրէջք էին կատարում Մո-  
չիում, Մոսկվայում, Կրասնոդարում, Երևանում... Մանրակը-  
կիտ պատրաստված և կատարելապես կազմակերպված էին:  
1989-ի վերջին Բաքվի բնակյաթմի բոլոր գրասենյակները,  
սննդի կտրոնների ցուցակներ կազմելու պատրվակով, պա-  
հանջեցին էին, որ բոլորը հարցաթերթիկները լրացնեն և այնտեղ  
իրենց ազդությունը նշեն: Ուստի ջարդարարները ռուսների,  
հայերի և իսառը ընտանիքների հասցեներով ամբողջական ցու-  
ցակներ ունեին: Հետո սկսվեց սարսափելի նրանք այդ հաս-  
ցեներով ներխուժեցին տները, սպանեցին, նետեցին նրանց  
պատուհաններից, պատշգամբներից, ծնողների առջև հավաք-  
ված բազմության առաջ բռնաբարեցին մանկահասակ երեխա-  
ներին... Կատաղած ամբոխը թափառում էր փողոցներում՝

«Ռուսներ, մի՛ հեռացեք, մենք ստորակների և մարմնավաճառների կարիք ունենք» պատահաներով:

Բոլոր հայերն արդեն գիտեին, որ թե՛ մարդասպանները տուն են մտնում, նրանք նախ ծարարակն են ենթարկում, հետո բռնաբարում, իսկ հետո դաժանորեն սպանում են երեխաներին իրենց ծնողների, կանանց, ամուսինների աչքի առաջ: Մարդիկ ենթարկվում էին բարբարոսական խոշտանգումների: Չէին խնայում ո՛չ ձերերին, ո՛չ երեխաներին, կողոպտում էին բնակարանները նախապես իմանալով քաղաքում ապրող բոլոր հայերի հասցեները: Նրանք մտնում էին ծնեղատները, մորթում ծնեղաբերող կանանց, պատուհաններից դուրս շարտում նորածիններին, պատում հոլիների որովայնները... Ոստիկանությունը ոչինչ չարեց: Բոլորը լուռ հետևում էին, թե ինչպես են ոչնչացնում հայերին: Նման կոտորածի պատմություններ Բաքվում և Մումգայիթում եղել են հարյուրավոր հայերի հետ: Այդ հրեշավոր բարբարոսությունները բերանից բերան էին փոխանցվում՝ մնացած հայերին գգուշացնելու և փրկելու համար:

Միայն զարմանալ կարելի է, թե ինչպես ոչ մի իրավաբան չկարողացավ այդ ամենի դիմաց նրանց միջազգային հանցագործ համարել և Ղարաբաղի հարցը փակել հենց միայն դրանով:

Ասատուրի դստեր՝ Անիկի տունը լեփ-լեցուն էր. ծանոթները Բաքվից գալիս ու գալիս էին: Քրոջ՝ Վարսիկի, ինչպես նաև Երևանի շատ բնակիչների հետ, նրանք հերթապահում էին օդանավակայանում և դիմավորում իջող ինքնաթիռներին՝ չիմանալով, թե որ ինքնաթիռով են ժամանելու հարազատները: Բաքվի բնակիչները, որ միշտ լավ հագնված էին լիևում, այս անգամ իջնում էին կրելով այն ամենը, ինչ հասցրել էին հագնել արևոտի պահին... Հողաթափերով ձերուսին օդորվելով, շոշափելով հազիվ էր գտնում ճանապարհը: Նրան ձեռքից ձեռք էին փոխանցում, մինչև դուստրը փաթաթվեց հորը:

— Պապա ցաւ . . .

Մերունուն լուռ և գգուշորեն հանձնեցին իր դստերը, ով, ինչպես պարզվեց, թող էր գիշերային ինքնաթիռով, մնացել օդանավակայանում և ամբողջ օրն սպասում էր հորը: Նրանց տարան Գիրովակակնից երկու անձանոթ տղամարդ, որոնց հետ աղջիկը նստած էր նույն նստարանին: Մերունին ընդամենը 50 տարեկան էր: Այս վախի ամիսներին այնպես էր ձերացել, որ 80 տարեկանի տեսք ուներ: Նա չէր ուզում հեռանալ իր պապերի տնից, չէր հավատում... Այս օրերին բոլոր հայերը հասկարձակի եղբայրացան: Հոգատար, համակրող, ընդհանուր վիշտը միավորեց բոլորին...

Ժամանողները դեռ օդանավում դառնորեն հեկեկում էին: Բորտադեկցորդուհիները, լսելով ոռնոցի պես լացը, սանդուղքով իջնում էին գերվելով, լաց ու հառաչանքով: Բաքվեցիք պատմում էին Մումգայիթի ու Բաքվի ջարդերի սարսափի մասին: Գիշերանցով մի պատով կին իջավ՝ կապտակներով, ձեծված: Մարդիկ կային, որոնց դեմքերին խաչ էր փորագրված: Միմյանց հետ կարծես մրցելով, նրանք պատմում էին, որ ամեն ինչ կազմակերպված էր, գալիս էին՝ հաստի իմանալով հասցեները: Լույսիսկ ռեստորաններն էին ստուգվում: Ուղևորներից մեկն առաց, որ կիրառի օրը Մումգայիթում նշվում էր հայտնի հայի մահվան քառասունը, երբ այդ հրոսակները վրա հասան: Այնտեղ շատ աղբբեջանից հյուրեր կային, սկսեցին գոգոտալ նրանց վրա.

— Մեր քառասունքն է, մերն է, դու՛րս եկեք այստեղից:

Բայց նրանք ներխուժեցին նախաարահ.

— Ձե՛րն է, ասում եք: Բա ինչու է սեղանին հաց դրված:

Մենք հաց չենք դնում:

— Այո՛, մատուցողները հիմար են, բերեցին, ուզում են հին հացը մեզ վրա «սաղացնել»: Տարև՛ք:

Հրոսակները երկու անգամ վերադարձան, հազիվ համոզեցին, որ դաշիվձում հայ չկա:

Լավ էր, որ Անիկի մորաքրոջ որդին՝ Երևանի գործարաններից մեկի տնօրենը, մեկնելուց առաջ Վանունին հաստոտ ծրար տվեց.

– Վերցրու՛, վերցրու՛, մեծ բան չի: Տեղափոխվելը փող է պահանջում: Ուզում եմ, որ կահավորումը հարմար ու սրտովդ լինի:

Ճիշտ էլ պետք եկավ, հենց ճիշտ պահին: Նա զանգահարեց, որ իրերն ուղարկեն...

Բայց շատ երկար էր ճանապարհը:

Վանունի բույրը կարմրաեղբ գեղեցկուհի Մարգուշկան, նույնպես չսպասեց, թե ինչ կլինի: Իր ամուսնու՝ հայտնի նկարիչ Արկադի Նազարյանի հետ, կարծես զենտիկորեն իմաստացած, անմիջապես սկսեցին հավաքվել դեպի Մոսկվա և հրաշքով հասցրին բնակարանը փոխել Մոսկվայի մարզում: Մակայն հինգ սենյակի փոխարեն ընդամենը երեքը, այն էլ կայարանից բավականին հեռու: Բայց այն, ինչ տեղի ունեցավ քիչ ավելի ուշ, նրանց երկար տարիներ հիշելիս ցնցում էր. եթե չհասցնեին, ապա ինչ էր սպասում իրենց: Բհարկե՛ նույնը: Իսկ Արկադիի՝ թանգարանի համար պատրաստած հինգ սենյակի կանոց բնակարանն անցավ ինչ-որ անհայտ կենդանու... Երկու բեռնարկի պատվիրեցին, շատ գրքեր կային, հազիվ փաթեթավորեցին: Ամենակարևորը, որ իրենց հնարժեք կահույքը չմնաց Բաքվում:

Բեռնարկները դեպի Մոսկվա երկար էին գնում, իսկ մի քանի շաբաթ անց փակվեցին դեպի Երևան տանող երկաթօձի ճանապարհները:

Սկսվեց շրջափակումը...

– Հայրի կ, համա թե խուճապահար ես, հ՛ա: Այստեղ ամեն ինչ մերն է, այն ամենը, ինչին մենք տարիների ընթացքում գրոյից հասել ենք այսպիսի ժամանակներում... Այնքան ընկերներ կան այստեղ՝ մանկապարտեզից սկսած...

– Դուք նրանց չգիտեք ...

– Բայց հիմա այլ իշխանություն է:

– Դուք իշխանություններին չգիտեք, – հոգնած սասց Միբատը, – անարդար ու վախկոտ, ինչպես ցանկացած իշխանություն, որն առաջին հերթին իր սեփական փտանգն է տեսնում ու պաշտպանում: Մեզանից փտանգ չկա, ուրեմն փտանգը մեզ է սպասում:

Դա արդեն լուրջ էր: Հայրը երբեք այդքան դրոշակի չէր արտահայտվել, նույնիսկ ամենամոտ շրջապատում: Մեկնան և Վանունն իրար նայեցին՝ հասկանալով, որ պետք է ենթարկվեն: Հայրը երկրորդ դասերն էլ համոզեց անհապաղ տեղափոխվել և փոխել բնակարանը:

Իսկ ավագ եղբայր՝ Հովսեփը, կամակորեց: Կուսակցական արդրեջանցիներն մեջ նա ազդեցիկ ընկերներ ուներ, որոնք բացահայտ ծիծաղում էին նրա կասկածների վրա: Մնաց... և նրանք հրաշքով կարողացան մեկնել հունվարյան այդ արսափելի օրերին... Նույն արդրեջանցի ընկերներն օգնեցին. ուրիշ մեկը չկար, բացի այդ տղաներից, որոնք փտանգեցին իրենց կյանքը... Գազել գտան մտերիմ աղերբեջանցի ընկերների միջոցով, հարասանիք պատկերելով՝ զիզգագներով շտապեցին օդանավակայան: Թեքվեցին պատուհաններից դուրս, երաժշտություն միացրին, թաշկինակներով թափահարեցին...

Վայրեք կատարեցին իրերի նվազագույն քանակով, որը կարողացան ընտրել գիշերվա մի երկու ժամում: Զարդ, փող, փաստաթղթեր՝ ի նչ են մարդիկ տանում հետները, երբ փախչում են թաղերով շրջող հրոսակալաբերից: Նոտան շորերն առանց դասավորելու կապեց երկու տուպրակի մեջ, պատի վրայից հանեց երկու փոքրիկ նկար, երկու ասեղնագործություն վերցրեց ու մի քանի տաք հագուստ: Նկարների արանքում ևս մի նկար դրեց՝ Բաքվի ամենազեղեցիկ՝ Առաքյալների եկեղեցու լուսանկարը, որը նկարել էր Հովսեփի աշխատանքային լավա-

գույն ընկերը՝ Մաիդը: Պոկել էր դպրոցի պատից, որտեղ նրանք միասին էին սովորում...

Ասատուրի որդին՝ Հովսեփը, արտրից վերադառնալուց հետո համոզեց մեծերին իր բարվեցի հրեա ընկերների հետ գնալ ու հաստատվել Բարվում, այժմ նույն ընկերների օգնությամբ դժվարությամբ հասան օդանավակայան, գրեթե առանց հագուստի, թեթև վերարկուներով: Աղոթեցանցի ընկերները վերկել էին նրանց: Կարմիր գլխակապներ հագած Գազելի պատուհաններից հակահայկական կարգախոսներ էին վանկարկում՝ մեքենային կցելով Աղոթեցանի դրոշը: Օդանավակայանից ինքնաթիռներն օդ էին բարձրանում ցանկացած ուղղությամբ. որը՝ Երևան, որը՝ Կրասնոդար, ոմանք էլ Մոսկվա:

Բակ Երևանում մոյզգնում էր շրջափակումը: Ոչ գազ, ոչ էլէկտրակներգիս, հեռախոսները համարյա չէին աշխատում, ջուրը մի քանի ժամով էին տալիս... Հարազատներն ու նույնիսկ անձանոթ մարդիկ երէխաներին տանում էին իրենց տները, հացցնում, կերակրում: Մուռ ու ցուրտ բնակարաններում որոշում էին՝ ինչ անել, ուր գնալ... Բարվի բնակիչները վիրավորված էին ամբողջ աշխարհից. ռուսներից, որոնք, ինչպես միշտ, ուշացան, ինչ-որ բանի էին պատում, կոմունիստներից, ժողովրդական ճակատից, հեկց մնացած աղոթեցանցիներից էլ... Բայց, հավանաբար, ամենից շատ Ղարաբաղի հարցն առաջ քաշողների վրա էին զայրացած: Նրանցից շատերը հետո լքեցին Երևանը՝ յուրաքանչյուրն իր հիմնավորումներով: Բայց երևանցիներն էլ էին հեռանում համարյա նույն պատճառներով, միայն մի պատճառ պակաս՝ տուն ունեին...

Հանկարծ պարզվեց, որ ոսկե ձեռքեր ունեցող Ասատուրի որդի Հովսեփը ոչինչ չի կարող անել՝ աշխատելու իմաստով: Ավելին, անսպասելի թոչիքի ու անհանգստությունների պատճառով նա իր պարկեշտ կերպարը ամբողջովին կորցրեց. սթրեսից համարյա լրիվ ճաղատացավ, կիսաբեկ: Ջարդերից առաջ Բարվում արհեստական ատամնաշար սարքելու համար

բոլոր ատամները հանեցին, բայց չհասցրին շտկել: Անատում շատ ավելի ծեր էր երևում և խոսելիս սարսափելի շվշվացնում էր: Ոչ ոք չէր հավատում, որ նա հիանալի հաշվապահ է, հիանալի երգում և նվագում էր ակորդեոն, որն այնտեղ մնաց... Հարազատներն ինչ-որ գործի տեղ գտան, բայց հետո Հովսեփը թողեց ամեն ինչ և սկսեց պիցցա մատուցել: Առնվազն՝ տանն ուտելիք կար: Բայց պիցցա մատուցելն ինչ գործ է որ, ոչ մի գումար խնայել չես կարող, ապրել կարող ես, բայց եթե քո տանը չես...

Ժամանակ առ ժամանակ Հովսեփն ինչ-որ օտարություն էր զգում: Փողոցում նրան նայում էին որպես փախստականի, խղճում էին, երբ լսում էին՝ որտեղից է, օգնում՝ ով ինչով կարող էր: Բացատրում էին. «Բա հայ ենք բոլորս»: Մակայն մտերմանալ չէին ձգտում: Երբեմն զայրանում էր, իրենց հավաքների պատճառով չէ՞ր, որ Բարվի հայերը կորցրին հայրենիքն ու տունը: Հետո զայրույթը հալվում էր: Տեղացիներն էլ պակաս չէին տատապում՝ շրջափակման պատճառով սառում էին ու ապրում համարյա առանց էլէկտրականության, քանի որ դարբարոցիները որոշեցին դուրս գալ աղոթեցանցի թուրքերի դաժան լծի տակից, ժողովուրդը սատարեց, բայց և արտագաղթեց ավելի էր ուժեղացել:

Թուրքերի հետ, եթե նրանք իրենց թուրքի պես են պահում, անհնար է ապրել: Բայց սրանք՝ բարվեցի թուրքերը, այսքան տարի նրան թվում էին սովետական, այսինքն՝ անվնաս թուրքեր: Բարվում նա առանձնապես ճնշում չէր զգում. գիտական ինստիտուտներում, հաստատություններում շատ պաշտոններ հայեր էին զբաղեցնում: Պետական պաշտոններն արդեն *իրենց* էին: Ինչ-որ կերպ հարմարվում էին կարծես գիտենալով, որ այդպես էլ պետք է լինի: Երևանում ջանասիրությամբ թարգմանված պահանջները խանգարում էին իրար ընդունել: Նա հաճախ էր վիճում՝ համոզելով, որ ամեն ինչ սկսվել է Ղարաբաղից, իրենց պահանջներից և հակահանավաքներից, հիմա

էլ թող իրենք ապահովեն Բաքվից փախածներին: Նույնիսկ երկրաշարժից հետո արևտի գոտին նրանց չէր շեղում:

Նրան գոռալով մինչև խաչատուեղը պատասխանեում էին, որ թուրքը թուրք է մնում, և որ ոչ ոք իրեն պարտք չէ: Երևանում իրենք էլ են նստած ցրտի ու մթության մեջ և թերսևումից քաշ են կորցնում, բայց Ղարաբաղի հարցը համահայկական է ու առաջնային:

Այդ ամենը տևեց կարճ ժամանակ, մինչև որ նա նայեց տեսաֆիլմը, ուր կատարված վայրագություններն էին պատկերված կրկին, օրը ցերեկով, ամբողջ աշխարհի առաջ, և հասկացավ, թե ինչու են իր պապն ու ծնողները լուս դիմացել անարդար քարոզի դժվարություններին: Դա անարդար էր, նվաստացուցիչ, անտանելի: Բայց այն, ինչ նրանք լսեցին Մուսկալիի մասին, իսկ հետո իրենց աչքերով տեսան Բաքվում... Նրանք իսկական թուրքեր էին, որոնք անսպասելիորեն նորից ներխուժեցին հայերի կյանքն ու սպառնացին նրա գոյությանը:

Ջարմանայի է, որ մինչ այսօր Բաքուն ոչ մի պատիժ չկրեց ու ոչ մի պատասխան ու չտվեց. ցավալի է և զարմանալի: Բայց վերջինս համաշխարհային սուգ է նշում հունվարին սովետական զորքերի Բաքու մուտքի արթիվ:

Հովսեփի կինը գրեթե ամեն օր կրկնում էր. «Բողոքը հեռացան 89-ին, ապուշները՝ 90-ին, իսկ խելացիները՝ 88-ին»: Նա հասցրեց իր գարդերը ցնել կապոցի մեջ, ինչը նրանց մի որոշ ժամանակ փրկեց: Բայց հարմարավետ չորս սենյականոց կոռպորատիվ բնակարանը, գրեթե կենտրոնում, գերազանց վերանորոգված, նրբագեղ կահույքը, սպասքը և ամեն ինչը մնաց այդ վայրենի, մոնչացող ամբոխին:

Կարմիր դիպլոմ ստացած Հովսեփի համար պիցցայի առաքիչ աշխատեղը նվաստացուցիչ էր ու միանգամայն անշահավետ, և նա, ձեռք բերելով մի քանի համակուրսեցիների հասցեներ, որոշեց մեկնել Մոսկվա: Մեկ տարի անց կլին ու երեսնամյակն էր թռան նրա մտ: Շատ բաբվեցիներ չկարողացան

դիմակալել պաշարված Երևանի շրջափակմանը, ցրտին ու աղքատությանը, իսկ այն ամենը, ինչը նրանք հաղթահարեցին սուսկալի հունվարյան օրերին, ուժ և համբերություն չթողեց:

Տեղի հայերն էլ չէին դիմանում շրջափակման առօրյային. ամբողջ գյուղերով էին տեղահանվում: Քաղաքներում արժեզրկված բնակարանները վաճառում էին Ամերիկայի երկու տոմսի համար: Տները վարձով տալիս էին օտարերկրյա փախստականներին ու տարրալուծվում այլոց ապաստարաններում: Նոր արտագաղթի հոսքի առվակները ձգվեցին երկրից դուրս: Եթե պապերը փախչում էին յաթաղանից, ապա այժմ փրկվում էին ցրտից, մթությունից ու անհույս աղքատությունից: Թվում էր, թե երբեք փրկություն չի լինի այն ծուղակից, որտեղ իրենք ընկել էին Միության փլուզումից հետո՝ կտրված լուսավոր ու տաք աշխարհից:

Որքան էլ տարօրինակ թվա, բայց Հովսեփին արագորեն հարմարվեց Մոսկվայի կյանքին: Վանունն ապրում էր շատ հեռու, աշխատում էր էլ ավելի հեռու, նրանք հազվադեպ էին տեսնում միմյանց, բայց եկեղեցու բակում շատ ծանոթ բաբվեցիների գտավ: Մեկը նույնիսկ համակուրսեցի էր՝ Սլավիկը, որը ծանոթ առամնաբույժի մոտ տարավ և պլաստմասե էծան պրոտեզով ապահովեց: Կայարևանում նա իր հորեղբոր ծխախոտի կրպակն էր աշխատեցնում, նույնիսկ երկուսն էին: Վաճառողուսիին մեկնել էր Խարկով: Աշխատանքը ծանր չէր, փողն էլ վատ չէր: Սկզբում նա ապրում էր կայարանին մոտ գտնվող մի տատիկի տանը, ում հետ արագ ընկերացավ: Կինը նույնիսկ ապուրներ էր պատրաստում նրա համար: Հետո աշխատանք գտավ մոտակա ամառանոցային տնակներից մեկում: Տեղը Մոսկվայի կենտրոնում խանութ ուներ, հենց խանութում էլ առաջարկեց, երբ Հովսեփն օգնեց նրան սայլալը հասցնել մեքենայի մոտ: Ամառային տնակ էր գեղեցիկ տեղում, կայարանին մոտիկ. լավ էլ փող էր սպասվում:

Բակի փայտանոցը լիքը շինանյութ էր: Տարածքը մաքրեց չորացած ծառերից, կարգի բերեց ցանկապատը, թեթև վերակառուցեց: Քանդեց, նորից հավաքեց վառարանը, այս գործին տիրապետում էր դեռ աքսորից: Ամռանը նա ապրեց այդ ամառանոցում: Ամեն ինչ անում էր այգում, բայց տերը չէր շտապում վճարել և չէր էլ երևում:

Վերջապես մի օր արտասոված աչքերով մի երիտասարդ աղջիկ՝ տիրոջ կիևը, արտասահմանյան մերենայով ժամանեց: Երանք երկու անգամ եկել էին տեսնելու, թե ինչպես են գործերն ընթանում: Աղջիկը մտավ տուն, անտաքրեր նայեց շուրջը և հանկարծ ասաց.

– Իգորիին սպանեցին, ես էլ մեկնելու եմ: Կարո՞ղ եք ամառանոցը գնել:

– Ի՞նչ եք ասում: Ես էլ սպասում եմ...

– Ինձ հրաշքով խճճացին: Ես մնացի վերելակում, սեղմեցի կոճակը, նրանք ծուլացան հետևիցս վազել...

– Տե՛ր իմ, ինչու՞:

– Ոչ մեկին չեն բռնի, այնքա՛ն սպանություններ կան ներ շուրջը՝ բոլորը չքացահայտված, – հեկեկաց աղջիկը:

– Ափսոս, լավ մարդ էր... Ես էլ սպասում էի...

Աղջիկը չէր հասկանում, որ Հովսեփը փողին էր սպասում:

– Դե՛ ինչ կարո՞ղ եք գնել... . . .

– Անգամ չեմ պատկերացնում, թե որքան արժեն այստեղ տնակները...

– Ինչքա՞ն եք տալիս, ես արդեն տուն ունեմ: Իգորը գնել էր հազար դոլարով:

– Հազար, – քիչ էր մնում ասեր՝ «ընդամենը»: – Կգնեմ, կառնեմ, այդքան ունե՛մ, – ուրախությունից նա մոռացավ հարցնել իր աշխատանքի վճարման մասին՝ համարյա նույնքան, եթե ոչ ավելի:

– Ահա հասցեն: Անձնագիրդ բե՛ր, արի՛՛ նախագահի մոտ, նա պետք է վերաձևակերպի պարտեզի գրքույկը:

Նախագահն ակնհայտորեն չէր ցանկանում ձևակերպել: Երան գտան երկու ժամ անց հարբած: Ինչ-որ մեկը «շնորհակալություն» էր հայտնել գնման առիթով: Բայց պարզվեց, որ աղջիկը խառնվածքով համառ էր. կես ժամից մի նոր պարտեզի գրքույկ հայտնվեց Հովսեփի գրպանում: Հարբած նախագահին հազիվ կարողացան դնել անկողին, և նա այրի աղջկա հետ եկավ Մոսկվա: Ճանապարհին ուզում էր հարցնել՝ երեխաներ ունե՞ն՝ և թե՛ ոչ, քանի որ Իգորը նրանից մի 30 տարով մեծ էր:

Աղջիկն ինքն սկսեց պատմել: Իգորը երկար ժամանակ ապրում էր առանց ընտանիքի: Քանի դեռ բախում էր, նրա կիևը երեխաների հետ փախչել էր սկեսրոջ տանից՝ վերցնելով այն ամենը, ինչ կարող էր: Նստած էր սևամորթին ծեծելու համար: Ռեստորանում սևամորթը մոտեցել էր նրա ընկերուհուն, քաշել պարելու: Իգորը ընկել էր նրա վրա, իսկ վերջինս ծխախոտով այրել էր աղջկա այտը: Խեղճացած Իգորը սաստիկ ծեծել էր հարբած սևամորթին՝ դե, նրանք խմել չգիտեն: Բայց պարզվել էր, որ սևամորթը դիվանագետ էր, Իգորին անմիջապես 10 տարի էին տվել: շեռոտ փախել էր այնտեղից. ավելացրել էին... 85-ին վերադարձել էր, իսկ նրա կիևը վաղուց ամուսնացել էր: Երեխաները մեծացել, մեկնել էին Մերձբալթիկա: Իգորը գտել էր ընկերներին, կոռպորատիվ գործ սկսել, կայարանում՝ խանութ, այնուհետև, մի քանի տարի անց կենտրոնական Մյասնիցկայա փողոցում երկու–երեք միջերային խանութ գնել: Հարստացավ, իսկ ինչպե՞ս էր սիրում... . . .

– Ես եկել եմ Վոլգոգրադից: Ընկերուհուս հետ ապրում էի հանրակացարանում, – ասաց աղջիկը, – անմիջապես համաձայնեցի... Եվ հիմա պետք է հեռանամ, քանի ինչ-որ մեկը չի ստիպել ինձ վերաձևակերպել բնակարանը: Երկու միջերային խանութների համար արդեն ստորագրեցի, երրորդը մի կերպ պահեցի: Ահա այսպես...



– Իսկ թե ով են, պարզվում է, եւ գիտե՞ք:

– Միասին էին նստած Պերմի բանտում, երանք՝ թալանի համար...

Հանկարծ Հովսեփը վեր թռավ:

– Գիտե՞ն դաչայի մասին:

– Ո՛չ, դրանից հետո եւ մեկ այլ ամառանոց գտավ, նույնպէս էծան: Գնեցրալի ձեր այրին վաճառեց. նրանց դուստրը Լեհաստանում է: Ինչ-որ բան կոտանում են այն ամառանոցի մասին, բայց տեղը չլիտեն: Ես պետեցի, որ չունեն, հավատացին, իսկ եթե հեռանամ, կկորցնեն հետքերը: Հետո, ով գիտի, միգուցե այստեղ ավելի հանգիստ դառնա...

Հովսեփը տնակի պատերը տաքացուցիչով պատեց, օգտագործված հին Օ6-Միգուլի ավտոմեքենա գնեց և արդէն կարող էր զանգահարել, կանչել ընտանիքին: Երկվորյակները որդին ու դուստրը, ամուսնը գործերը հանձնեցին իրավաբանական և ընդունվեցին: Նրա երջանկությանը չափ-սահման չկար:

– Բոլոր Ռշտունիներն ուսուցիչներ էին, իսկ հիմա փաստաբաններ կլինեն, – մի անգամ կատակեց նա:

Դուստրը քրքջաց և, մագերը փաթաթելով մատին, առարկեց:

– Նման ազգանունով այստեղ մենք ապագա չենք ունենա, հայրիկ: Մայրիկին արդէն ասել ենք՝ ազգանուններս փոխելու ենք:

– Փոխելու՞ եք: Ի՞նչ ազգանվան:

– Դե, օրինակ՝ «Բուրե և գործընկերներ», – բացատրեց դուստրը:

Հովսեփը չէր հավատում ականջներին, բայց ոչինչ չասաց: Դեռ համալսարան պետք է ավարտեն, հենց այսօր հո չլիտենցին:

Նա չգիտեր, որ արդէն դարձել էին Բուրե: Ֆակուլտետում պետք է ընտելանան. վաղը նրանք գործընկերներ կդառնան... Ի՛նչ ազգ, ի՛նչ ազգանուն...

Հույսեր էին կապում Ասիկի որդու թոռան՝ Ասատուրի հետ, որն արդէն ավարտում էր դպրոցը և երագում էր պատմաբան դառնալ: Տղան խնամքով ու ապահով պահում էր իր նախապապի երկրորդ հաստ տետրը, հաճախակի նայում ու գրառումներ անում: Առաջին տետրը վերցրեց Վանունի որդին՝ Վահանիկը: Տղաները ջանասիրաբար սովորում էին և հեռախոսով ստուգում իրենց նախապապի գրառումները: Նրանց դուր էր գալիս ապրել Ռուսաստանում. ջեռուցում կա, զազ կա, և էլեկտրաէներգիան հովիարային չեն անջատում, իսկ աղջիկները պարզապէս հիանալի են: Եվ ամենակարևորը, որ այստեղ շատ գրադարաններ, թատրոններ, մարզադահլիճներ կան, ու բոլորը աշխատում են:

Իսկ Երևանն սկսեց բնակեցվել նոր մարդկանցով, լցվել նոր բարբառներով: Փոխատականներ էին գալիս ինչպէս կիսարանդ Գյումրիից, անտերացած գյուղերից, այնպէս էլ Ադրբեջանից, Ղարաբաղից, Խանկարից, Կիրովաբադից, Գետաշենից: Շահումյանը չլիմացավ խորհրդային և ադրբեջանական զորքերի եղբայրական հարձակմանը, որոնք միահամուռ ուժերով մարտեցին Ղարաբաղի շատ գյուղեր: Նրանք ուղարկվեցին վրեժխնդրության վախից փախած թուրքերի լքված ամայի գյուղերը, ուր երկար ժամանակ կողք կողքի ապրել են Հայաստանում: Ղարաբաղցիները հաստատվում էին Երևանում և մեծ մասամբ՝ կենտրոնում, մանավանդ պատերազմից հետո: Դարձյալ Երևանը դարձավ խայտաբղետ, ինչպէս երևանցիներն իրենք էն սիրում ասել՝ ալաք-բալաք: Ով տեղում չէր կարողանում գլուխ պահել, փախչում էր: Էլ չասած, թե ինչքան էլ Ռուսաստան մեկնեցին...

Իսկ փրկված ալաշկերտցիների, սասունցիների, բասենցիների, վանեցիների, երզրումցիների տարեց թոռներն ու ծոռները նույնպէս քիչ չէին, որոնք իրենց քաղցր «Երգիլը» թողած, եկան դեպի նոր երկիր, ուր անգամ թուրքի հոտ չկար, ու իրենց ճանապարհն սկսեցին հույսով... Նրանք էլ այլևս չէին կարող

դիմանալ ոչ այդ ցրտին և ոչ էլ այդ կյանքին. երևի ավելի առողջ էին, որ ոչ թուրքերին էին հիշում, ոչ էլ այն երկիրը: Այնուամենայնիվ, ո՞վ է հաշվել կամ հաշվապահություն արել, թե ով են և որտեղից են նրանք եկել: Հեռացան ցանկացած պատմական արձատներով: Ոչինչ չէր կարող նրանց կանգնեցնել: Երևի, դարերով հալածվելով, սովորել են փախչել: Ասատուրի հարսը կիրովականցի աղջիկ Ջարիկը, ընտանիքի միակ բժիշկը, աշխատում էր վիրաբուժական բաժանմունքում: Մի օր նա եկավ ու լացակումած ասաց.

– Հիվանդը փախավ, հագիվ հասցրինք կարերը հանել: Փախավ Լեեհիսական: Հայրը մահացավ, գնաց թաղելու: Պատում էր, որ ամեն օր Լեեհիսականից երկու լիքը ՌԱՍՁ մեքենա է ուղևորվում Ռուսաստան՝ անկողիններով, այսինքն՝ ընդմիջա: Եվ շուտով մեր Վանաձորում էլ մարդ չի մնա, բոլորը մեկնում են Ռուսաստան՝ շինարարությունում աշխատելու...

Ճանապարհ ընկան նաև կրտսեր ծոռները: Ինչ-որ տեղ ավելի լավ էր, քան անտանելին: Բայց, հետաքրքիր է, թե այն չգնացածներն ինչպես դիմացան:

Ասատուրի թորը, դեռ երեկ Սմբատիկ էր, փայլուն կերպով քննությունները հանձնեց և ընդունվեց համալսարանի պատմության ֆակուլտետ: Մրցակցությունն այդ տարի առանձնապես մեծ չէր: Ժամանակներ կային, երբ պատմության բաժինը 40-50 հոգի էր հավաքում մեկ տեղի համար: Բայց այն տարիներին պատմության ֆակուլտետի շրջանավարտները գնում էին շրջկոմներ հրահանգիչներ աշխատելու, որպեսզի հետագայում բարձր թոշեին կուսակցական գծով...

Երրորդ կուրսում Սմբատ–կրտսերը կարգի բերեց իր նախապալի գրառումների երրորդ տետրը և ցնցվեց: Մեսրոպ պապն իր կյանքի 85 տարվա ընթացքում օրագրում նկարագրել էր ոչ միայն Ռշտունիների տոհմի, այլև հայ ժողովրդի պատմությունը: Իր գիտակցական բոլոր տարիներին նա փորձում էր հասկանալ, թե ովքեր և ինչու են փրկել իրենց: Այս իշխանութ-

յունը հանգիստ սպանում և հետապնդում էր նաև իր ժողովրդին: Նա անընդհատ համեմատում էր, կշռադատում, քայց չէր կարողանում գուշակել ռուսական, ավելի ճիշտ, բոլշևիկների հանելուկը: Վերջում՝ ինչ-որ տեղ, գրված էր. «Ոչ թե նրանք են մեզ պետք, կամ նրանց կարիքը մենք ունենք, այլ մենք ենք նրանց պետք: Նրանք կիրառարվեն մեզանից, հենց որ տեսնեն, որ մենք խանգարում ենք... Ու հենց թողնեն, թուրքերն անմիջապես վրա կհասնեն: Բայց նրանք մեզ ազատ չեն թողնի... Լավ չի լինի, եթե Ռուսաստանում վատ լինի. եթե ռուսները լավ չապրեն, մենք էլ կվատթարանանք»:

Սմբատն արդեն գիտեր այն, ինչը չգիտեր ու այդպես էլ չիմացավ իր նախապալը: Օրինակ, որ ռուսը նախկինում բավիցս պատերազմել է թուրքիայի հետ, քայց միայն իր սահմաններն ընդլայնելու համար: Եվ դեռ կշարունակեր, եթե Ռուսական կայսրության որոշ ձգտումներ ժառանգեր Մովսեսական միությունը: Կայսրությունը, այո, զավթում էր դարձնելով սեփական տարածք, քայց բոլշևիկները միացնում էին տարածքները, այնտեղ ապրող ժողովրդի հաշվին առևտուր անում իր այս կամ այն հաշվարկներով: Ու երբեք չէին փոխում այդ վարվելաձևը: 100 տարուց ավել բոլշևիկների ժառանգորդները շարունակում են նրանց բռնած գործն ու մեթոդները՝ աջակցելով ցեղասպանող թուրք ղեկավարներին: Բերեք ընդամենը մեկ օրինակ: Հուլիսի 21-ի երեկոյան Թիֆլիսի կենտրոնում սպանեցին Ջենալ փաշային: Ջենալը ունեցրել էր 50-ամյակը Մոսկվայում՝ Կենտկոմի և Չեկայի կարևոր անձանց շրջանում և մեկնեց Թիֆլիս: Այսպիսով, յոթ տարի անց տեղի ունեցավ Ամենայնի հատուցման հերթական ակտը: Ջենալը, Թալեաթի և Էնվերի հետ միասին, Հայոց ցեղասպանության ոգեշնչողն ու կազմակերպիչն էր:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմում, լսելով Շավարշ Ա-միրխանյանի զեկույցը, որոշում կայացրին. «Չեկային թույլ տալ ընտրողական ձեռքակալություններ դաշնակցականների

շրջանում՝ Ջենալի սպանության կապակցությամբ: Նույն օրերին Չիչերինի միջատության Մոսկվայում Ջենալի ընտանիքին բաղթյուրոյի հաստուկ որոշմամբ 5000 ռուբլի ոսկով օգնություն տրամադրեցին:

Տղաները իրենց զարմիկների հետ միասին, որոշեցին տպել պապի գրառումները և վերադարձնել իրենց ազգանվան հիշատակը, Ասիկն ու Վահանիկը նրան փոխանցեցին կոկիկ վերաշարադրված տետրերը: Սմբատը մեկ ամսի չափ հազար շեմք մաշեց ցանկանալով վերադարձնել ազգանունը: Նա ստիպված էր լավ վճարել ազգանունը Մաֆայանից Ռշտունի փոխելու համար: Շրջեց բազմաթիվ գրասենյակներով, և 60 տարի անց բոլոր փաստաթղթերը խնամքով փաթաթելուց հետո, նորից կրեց պապերի ազգանունը: Ցավոք, մնացած հարազատներից ոչ ոքի մտքով ազգամ չէր անցնում միանալ ազգանվան այս փոփոխությանը, իսկ սովորական «-ով» մասնիկով ոչ մի կերպ հնարավոր չէր փոխել. Սաֆարովը լրիվ թուրքական ազգանուն էր դառնում:

Սմբատը, օգտագործելով իր նախապապի այս անգնահատելի գրառումները տարբեր ու հավաստի աղբյուրներից, երազում էր շարադրել իրենց տոհմի պատմությունը, բայց փոխեց միտքը թողնելով այն ապագայի համար: Արդեն ինտերնետ կար. տղան ուսանողների փոխանակման ծրագիր գտավ, դժվարությամբ գումար հավաքեց ուղևորության համար և այդ ծրագրով թռավ Սիեթլ: Սկզբում ընտանիքն ուրախացավ, սակայն հետագայում եկավ բաժանման կարոտը: Իսկ երբ նա զանգահարեց ու ասաց, որ կպաշտպանի դիսերտացիան «Հայաստանի իշխանական ընտանիքներ» թեմայով, պարզ դարձավ, որ Սմբատ Ռշտունին այդքան շուտ Հայաստան չի վերադառնա: Եթե վերադառնա...

Եվ ինչ փրկություն բերեց շվեդների կողմից հորինված Skyp-ը: Ովքեր մեկնում էին հարազատ երկրից դուրս, կապեց իրենց մնացած հարազատների հետ: Ուրախության եկրաննե-

րը փայլում էին ամբողջ Ռուսաստանում, Եվրոպայում, Ամերիկայում, իսկ մյուս ծայրում՝ Հայաստանի քաղաքներում և գյուղերում, ուրախությունը խառնված էր վշտի ու անչափ կարոտի հետ: Ամուսնանալու համար Սմբատը չէր էլ մտածում այնտեղ աղջիկ փնտրել, եկավ դարձնել երուհուն տարավ: Հաճախ հարմար է այն, ինչին սովոր էս: Սմբատին Երևանը ձգում էր զուցե այն պատճառով, որ իր հարազատները տանը հայերեն էին խոսում: Ռուսաստանում Բաքվի հարազատները խոսում էին ռուսերեն, իսկ փոքր երեխաները հայերեն լեզուն նույնիսկ չգիտեին: Հասկանալի է, թե ինչու են աներաժեշտ անգլերենը կամ ռուսերենը ուր՝ գնաս առանց լեզու: Բայց ոչ մի համալսարանում հայոց լեզու չի դասավանդվում: «Ինչու և իմանալ», – թողվում էին ուները...

Երբ սկսեց ուսումնասիրել հայկական տոհմերի պատմությունը, փոքրիկ Հայաստանը նրան թվաց մի հսկայական աղանակ, որն իր մեջ կլանել էր դարերի էությունը:

Եվ այս հոյակապ անցյալը լուսավորում է հայի դժվարագույն ճանապարհը դեպի ապագա, որը դատարկ ու աննկատ է առանց քո արմատները գիտակցելու:

Մի անգամ Սմբատն ընտանիքին կիսակատակ մի հետաքրքիր ցուցակ ուղարկեց.

«Ռշտունի ազգանունը Հայաստանում ավելի է տարածված, քան ցանկացած այլ ազգանուն: Ռշտուն անձի անունն ամբողջ աշխարհում հանդիպում է 63 անգամ:

Ռշտունի ազգանունն առավել հաճախ հանդիպում է Հայաստանում, որտեղ այն ունի 174 մարդ: Հայաստանում հիմնականում Երևանում է՝ 74%, Արարատի մարզում՝ 11% և Արմավիրի մարզում՝ 5%: Ռուսաստանում 17% է, ԱՄՆ-ում՝ 10%:

Երևան-129

Արարատի մարզ -19

Թբիլիսի -10

Արմավիրի մարզ - 8

- Շիրակի մարզ -7
- Լոռու մարզ-5
- Կոտայքի մարզ -3
- Արագածոտնի մարզ -2
- Սյունիքի մարզ -1
- Մոսկվայի մարզ -16
- Մոսկվա -12
- Նովոսիբիրսկի մարզ -5
- Վոլգոգրադի մարզ -3
- Կրասնոդարի մարզ -2
- Սանկտ Պետերբուրգ -2
- Աստրախանի շրջան -1
- Նիժնի Նովոգորոդի մարզ -1
- Ռոստովի մարզ -1

Եվս մի զվարճալի տեղեկատվություն. «ԱՄՆ-ում Ռշտու-  
նի ազգանունով մարդիկ Դեմոկրատական կուսակցությունում  
գրանցվելու 47% -ով ավելի շան ունեն, քան ազգային միջին  
ցուցանիշը:

Ռշտունիև միջին եկամուտից շատ ավելի քիչ է վաստա-  
կում: Միացյալ Նահանգներում նրանք 49,71% -ով պակաս են  
վաստակում, քան ազգային միջինում՝ տարեկան աշխատելով  
21,701 դոլար»:

«Ես դեռ չեմ ուսումնասիրել Ռշդունու, Ռեշդունու, Ռաշ-  
դունու, Ռախդունու, Ռախդունիի և Ռուշդունու թիվը. դա կօգնի  
ինձ հետևել Ռշտունիների անցած ճանապարհները դարերի  
կտրվածքով...»

Այսպիսով, Ռշտունիների տոհմի հսկայական ճյուղից  
Ռշտունիքի մի մեծ ընտանիքից, միայն մեկն ուներ Ռշտունի  
ազգանունը: Իհարկե, շատ Ռշտունիներ դեռ ապրում էին մնա-  
ցած «բներում», ոչ բոլորն էին ցրված ուրիշների օտար լայնար-  
ձակ տարածություններում: Բազմաթիվ Ռշտունիներ մինչև  
1915 թվականը մնացին Գյավաշում (Ոստան), Նարեկավա-

նում... Գևորգ IV-ն իր կաթողիկոս եղած ժամանակ շատերին  
վերադարձրեց Ռշտունի ազգանունով հարազատներին, բարե-  
կամներիև ու հեռավորներին, անձանտթներին ու ընկերներին:

Ուն է նա: Արդյո՞ք նախարարական տոհմի կաթողի-  
կոսներին է, որոնք երկար տարիներ ղեկավարել են Ադրասմա-  
րում, թե՞ Ռշտունիք անունով այդ ծաղկած երկրում ապրող  
նախնիներինը: Ոչ ոք չգիտի: Բայց Մմբատը վստահ էր, որ ինքը  
նախարարների ընտանիքի հետնորդ է: Եվ մի օր նա մի ամսա-  
զիր ուղարկեց այնտեղ տպագրված հոդվածով, որն Ասիկն ու  
մնացածները տասն անգամ վերընթերցեցին:

Այնտեղ ասվում էր.

*«Գալուստ Գյուլբենկյանի ընտանիքի տոհմածառը գալիս  
է 4-րդ դարից: Նրա նախնիները Ռշտունի իշխանների էին, ո-  
րոնց պատկանում էր Ռշտունիքի գավառը՝ Վանա լճի հարա-  
վային ափին պատմական Հայաստանի Վանի շրջանում:*

*XI դարում, երբ Սենեբերիմ Արծրունի թագավորը Վաս-  
պուրականի թագավորությունը միացրեց Բյուզանդիային, Ռշ-  
տունի իշխանների մնացորդները տեղափոխվեցին Կապարով-  
կիա և հաստատվեցին Գեսարիա քաղաքում: Մինեույն ժամա-  
նակ նրանք ստացան Վարդ Պատրիկի Բյուզանդիայի բարձ-  
րաստիճան պաշտոնյայի կոչում»:*

*17-րդ դարում Օսմանյան կայսրությունում ընտանեկան  
անունը թարգմանվում էր այլ կերպ՝ Գյուլբենկյան (կալկա՝ հա-  
յերեն «վարդ» և «գուլ»՝ թյուրքերեն «վարդ», Բայց իմացք է հի-  
շեք, որ սա Վարդյանն է): Այդ ժամանակվանից ազնվական և  
հարուստ ընտանիքը ձեռք բերեց Գալուստ Գյուլբենկյանի կող-  
մից փառաբանված ազգանունը՝ «բիզնեսի ճարտարապետ»,  
նախքի մազնատ, ամենահայտնի հայերից մեկը, կոլեկցիոներ և  
բարերար, որն այժմ հայտնի է ամբողջ աշխարհում:*

*Թիֆլիսի Գյուլբենկյանների տոհմը, որը բիզնեսի մեջ ա-  
ռանձնանում էր իր բռնելածնով, հարստացավ առևտրի միջո-  
ցով: 19-րդ դարի սկզբին նրանք եկան Պոլիս, որտեղ 1869 թվին,*

*Սկյուտարի թաղամասում, գործարար Մարգիս Գյուլբենկյանի ընտանիքում, ծնվեց Գալուստը:*

Գյուլբենկյանների ճնշող մեծամասնությունը գործարարներ էին: Նրանք ապրում էին Ջմյունեհայում և Պոլսում, Մանչեսթերում, Լոնդոնում, Փարիզում ու Մարսելում, ԱՄՆ-ում, Իրանում, Եգիպտոսում: Կեսարիայում նրանք կառուցեցին Վարդ-Պատրիկյան դպրոցը: Այո, սա նույն Վարդ Պատրիկ Ռշտունին էր և նրա հեռու հետնորդները:

1930-ին Պողոս Նուբար փաշայի մահից հետո, Գալուստ Գյուլբենկյանը գլխավորեց Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Գյուլբենկյանը ծրագրել էր 30 հազար հայ փախստականներից մի մասին, ովքեր հրաշքով Հունաստանում փրկվել էին ցեղասպանությունից և վրանային ճամբարում թշվառ գոյություն են ունեցել, վերաբնակեցնել և Սիրիա տեղափոխել նավթամուղի կառուցման աշխատանքներն ապահովելու համար: Այնուամենայնիվ, Թուրքիան մի համատեղեցրեական ոտնոց բարձրացրեց այդ կապակցությամբ, իբր Գյուլբենկյանն իր սահմանների մոտ հայկական «օջախ» է ստեղծում և պատրաստվում է հարձակվել Թուրքիա ներխուժել:

Բարդ ու լկտի նենգությունն առանձնահատուկ է թուրք դեկավարներին: Նրանք գիտեն ինչպես թոգ փչել բուրդի աչքերին և այնքան հմտորեն, որ գրեթե բոլորը հավատում են նրանց ակնհայտ ու լկտի ստերին: Ցավոք, խայծը կուլ տվեց Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի այն ժամանակվա առաջին քարտուղար Ադափի Խանջյանը, որը դատապարտող զեկույցով հանդես եկավ Գյուլբենկյանի ծրագրերը «ներկացնելու» մասին (գուցե և ստիպված է եղել): Վերջինս, հոգու խորքում վիրավորված, հեռացավ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահի պաշտոնից, իսկ Թուրքիան, որն այդ ժամանակ կրկին բարեկամացած էր Ռուսաստանի հետ, ուրախությամբ շփում էր ձեռքերն այն փաս-

տից, որ ի վիճակի է ապարեզից հեռացնել մի հայ կապիտալիստի մյուս հայ բուշնիկի ձեռքով:

Այսօր «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը գրեթե 60 տարի է, ինչ համագործակցում է Հայաստանի հետ: Հայ երիտասարդների ներկայացուցիչներին տարեկան հատկացվում է բոլոր միջոցների 10% -ը: Դրանք բաշխված են Հայաստանի և սփյուռքի գիտական, մշակութային, կրթական և այլ հաստատությունների միջև: Սիրիայում, Լիբանանում և Թուրքիայում հասուկ ուշադրություն է դարձվում Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի և Հարավային Ամերիկայի հայկական համայնքների օժանդակելուն և պահպանմանը:

Բայց դու արի տես, որ երբեմն գեներն անգոր են լինում. Նուբարը որդին, ընդհանրապես հորը չէր քաշել: Վաղ տարիքում հայրը տղային փոքրիկ ճամպուկով գաղտնի Կոստանդնուպոլսից Լոնդոն տեղափոխեց, քանի որ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության ջարդերն արդեն սկսվել էին:

Լոնդոնում Նուբարը լավ կրթություն ստացավ սովորելով Հարրոու դպրոցում, Երրորդության քոլեջում և Քենթրիջի համալսարանում, ապա կրթությունը շարունակեց Գերմանիայում: Նուբարը որպես չվարձատրվող աշխատող, իր կարիերան սկսել էր հոր մոտ: Այնուամենայնիվ, նա այդ աշխատավարձը պոկեց հորից: Մեծահարուստ փյեյթոյը հայտնի դարձավ հայրիկին դատի տալով՝ պահանջելով վճարել ռեստորանում կերած տապակած հավի համար: 1939 թվականին Նուբարը 10 միլիոն դոլարի դատական հայց ներկայացրեց հոր դեմ, քանի որ ընկերությունը հրաժարվեց վճարել 4,5 դոլար արժողությամբ հավի ընթրիքի համար: Գյուլբենկյան ավագը 84,000 դոլար ծախսեց պաշտպանության վրա և պարտվեց: Սա առանձնապես կարևորություն չունի, բայց ինչպիսի թվեր են և բարբեր:

Հաճելի էր Գալուստի և նրա կրթական ծրագրերի մասին կարդալը, բայց մի քիչ զարմացնում է ազգական բացատրույթ-

յունը. ինչպե՞ս է «ն» տառը հայտնվել բեկ բառի մեջ՝ *բենկյան*. Գալուստի ծոռն ասում է, որ «նրանք փաստաթղթեր ունեն 1800 թվականից ի վեր, բայց կա ՇՆՏԱՆԻՔԻ ԱՎԱՆՂՈՒԹՅՈՒՆ, որ «արմատները գալիս են 4-րդ դարից»: Իսկ տոհմաբանական հետազոտություններում ընտանեկան լեզվեցիները հաշվարկվում են: Այսինքն, եթե Ռշտունիների տոհմը 11-րդ դարում Կեսարիա տեղափոխված հետնորդներ է թողել, ապա կային այլ հետնորդներ. այն ժամանակ ո՞վ էր մեկ երեխա ունենում: Եվ նրանք նույնպես կարող էին տեղափոխվել Էյուզանդիա, այսինքն՝ ուղիղ ապագա Օսմանյան կայսրության գիրկը:

Գալուստի նախնիները Թիֆլիսից հեռոտ հայտնվեցին Սկյուտարում (Պոլսի շրջան): Եվ պապյն ասում էր, որ Թիֆլիսում իրենք հարազատներ ունեն: Դեռ Պասկևիչից առաջ էին տեղափոխվել Վանից: Ազգանունը փոխել էին, որպեսզի աչքի չընկնեին. տարբեր պատճառներ կային... Արդեն խորհրդային իշխանության օրոք Վրաստանում ազգանուն փոխելու գործընթացն սկսեց ավելի զանգվածային բնույթ կրել. գյուղերում գրեթե ամբողջովին պարտադիր ազգանվափոխում էր կատարվում:

Անթիվ են արահետները, ճանապարհները, որոնց երկայնքով տարածվում են տոհմերի ու ընտանիքների հոսքերը: Ռշտունին, Ռեշտունին, Ռաշտունին, Ռախդունին, Ռախտոնին և Ռուշտունին... Վերևում են թվարկել եմ տարբեր ուղղագրություններ: Դրանք տարբեր ընտանիքների ճակատագրեր են, որոնք ժամանակին ունեցել են նույն Ռշտունիք-Վասպուրական հայրենիքը: Դրանք նաև հայոց բախտի ճանապարհներն են:

Ամեն անգամ, երբ նրանք հայտնվում էին նոր վայրում, կառուցում էին նոր տուն... Երբեմն նույնիսկ նոր կյանք էին սկսում՝ կառուցելով նոր քաղաք.

*«Ես Միրիայում մեծացած հայ եմ: Հեշտ չէր հայկական ինքնությունը պահպանել մի երկրում, որը բազմամարդ էր տարբեր ազգությունների մարդկանցով՝ քոչեր, արաբներ և*

*թուրքեր: Սկզբում Հայաստան գալու դրոպապատճառն արվեստն էր: Երկու տարի Հայաստանում գտնվելուց հետո ի սկզբանե՝ «ծննդյան իրավունք» ծրագրի ներքո, ես սկսեցի հասկանալ, որ արվեստն իմ կիրքն է, բայց ես ուզում էի այլ բան ունենալ: Հետո սկսեցի հետաքրքրվել պատմությամբ: Մրա համար խթան հանդիսացավ այն փաստը, որ ես Ռշտունի (Ռշտունի) արքայական տոհմի հետնորդ եմ և ինձ վրա մեծ պատասխանատվություն է դրված: Հատ էուրթյան մեր հայկական սփյուռքը ծանոթ չէր Ռշտունի (Ռշտունի) ազգանվանը: Դեռ դպրոցում, երբ ներկայացա, ինձ խնդրեցին կրկնել իմ հայկական ազգանունը: Շատերը ծանոթ չէին հայոց պատմությանը, որն ասում է, թե ինչու է Ռշտունին (Ռշտունին) հայկական ազգանուն և թե ինչու եմ ես հայ:*

*Իմ սերունդների պատմությունն սկսվում է 3-րդ դարից: Իմ նախնին՝ Մանացիի Ռշտունին (Ռշտունին), ապրում էր Վասպուրականի Աղթամար կղզում:*

*1895 թվականի համիդյան կոտորածի ժամանակ հայրիկին նախնիներն ստիպված էին լքել Մասունը և տեղափոխվել Տիգրանակերտ: Նրանք այս ժամանակահատվածում ապրել են քրդական գյուղերում: Ռշտունի (Ռշտունի) ընտանիքն այդ ժամանակ բավականին մեծ էր, և հայրիկին տատիկը հավաքեց բոլոր երեխաներին, որպեսզի կարողանան գոյատևել: Նրանք երեք տարի ապրել են քրդերի հետ: Միրիայի սանձանք մտնում էր անապատին: 1921 թվականին ֆրանսիացիները գրավեցին Միրիան:*

*Որպես քրիստոնյաներ՝ նրանք հեշտությամբ կարող էին փախչել անապատ և ապրել այնտեղ: Այն ժամանակ այս տարածքում ընդամենը երկու տուն կար, բայց ժամանակի ընթացքում անապատը հետզհետե վերածվեց Ալ-Հասեբ քաղաքի, որը դարձավ միլիոնավոր մարդկանց տուն: Քաղաքը հիմնադրել են հինգ հայ, երկու-երեք արաբ և ատուրական ընտանիքներ».* – գրում է Միրիայից ժամանած հայրենադարձ Սարգիս Ռշտու-

նին: Թվում է, թե նա իր տանն է գգում՝ հայտնվելով երբեմնի Մեծ Հայաստանի մյուս ծայրում:

Տարբեր են նրանց գրադոմեքները, վերաբերմունքները... Օրինակ Թուրքիայում կա Ռշտունիների ընտանիքից երկաբամյա հիմնական դարպասապահ Ռոշտուն Ռեչքեր ազգանունը կրողը, որն ամենաճանաչված թուրք ֆուտբոլիստներից մեկն է ինչպես իրենց երկրում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Երբ իր թիմի կազմում եկավ Երևան, Ռշտունիների տոհմի հետնորդներից մեկը հանդիպեց նրա հետ, երկար խոսեցին: Ինչեր էր նրան ասել ու պատմել, չգիտեմ, բայց դրանից հետո մարզիկն ասաց. «Ես չեմ խաղա Հայաստանի դեմ»:

Կարող ենք հիշատակել նաև քրդական ազնվական Ռշտունիների տոհմ Դիարբեքիրում: Բհարկե, նրանք կամ Ռշտունիքից են, կամ քրդացած (ծայտյալ) հայեր հայտնի հայկական ազգանունով: Ի միջի այլոց, որոշ քրդեր հակված են նաև Մամիկոնյան տոհմի ծագումը համարել իրենցը: Վառա լիճը շրջապատված է քրդական գյուղերով: Անհիշելի ժամանակներից Ռշտունիքի, Վաապուրականի, Տարոնի, Տուրուբերանի հայոց իշխանությունների տարածքներն այժմ բնակեցված են քրդերով: Հիմա այդ ամենը նրանց տարածքն է: Այլ կերպ չէր կարող լինել. հայերը ոչնչացվեցին, փախան, իսկ նրանց կիսաայրված տներում ու մոխրակույտերում բնակվեցին քոչվորները...

Իսկ հիմա Թուրքիան ճնշում է նաև նույն դավանանքի քրդերին (քրդերը նույնպես սուննիներ են): Այսիսեր, կրոնական տարբերությունները, այնուամենայնիվ, վերածվում են սովել լուրջ բանի, և իրական պատճառը տեսանելի է, ու դրանք հնացած կրոնական գույներ չեն: ստան, Քուրդիստան: Հայերից նույնպես վայելեում էին, որ կրթական իրենցից կամ կներգրավեն ռուսներին, ու բոլորը կարծում են, թե դա էթնոկրոնական բախում էր: Այս սուտն ամբողջովին բացահայտվեց դարաբաղյան պատերազմում:

Արևելք և հարավ-արևելք հատվածում կա ոչ պակաս, քան 15 միլիոն քուրդ, իսկ արևմուտքում՝ կիսով չափ: Ուլթեյի են դրանք պատանդնեյ ը, թե՛ օգնականներ, դեռ վաղ է կռահել, բայց սրանք արդեն 1915 թվի անգնե հայերը չեն: Նրանց հետ կրկին ապրելն, իմ կարծիքով, անընդունելի է: Եվ հետո, կան ուսուպիական կոչներ «մխասին» կամ «Քրդերն ու հայերն այժմ ունեն ընդհանուր թշնամի»: Հոգեբանությունն ու ներքին կարգը չեն կարող փոխվել, ինչը 2020-ի ամռան այդ ջարդերի վառ ապացույցն է ԱՄՆ-ում, որոնք կարող են տարածվել եվրոպական մայրցամաքում:

Բայց ամենահետաքրքիր պատմությունը մեզ սպասում է վերջում և ոչ թե հետավոր երկրներում՝ Պորտուգալիայում կամ Միքիայում, այլ Երևանի հարևանությամբ՝ Մուրբ Էջմիածնում:

Բոլոր նրանք, ովքեր գիտեն Մայր Աթոռի մասին, Գևորգյան ճեմարանի մասին էլ նաև պայման կիմանան: Գարեգին Բ կաթողիկոսի հանձնարարությամբ նորակառույց ժողովական դահլիճում կազմակերպվեց առաջին շնորհանդեսը Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մասին իմ գրքի կապակցությամբ: Ինձ նույնիսկ պարզևստրեցին Վազգեն Առաջինի արծաթե մեդալով: Մեմինարիստներն ու ուսուցիչները շատ հուզիչ խոսեցին: Այնուհետև, որպես շնորհակալություն, բավականին մանրամասն ուսումնասիրելով այս հայտնի ինտիմուտի ու նրա ճեմարանականների պատմությունը, երկու մեծ հողված գրեցի Մոսկվայի թեմում հրատարակվող «Հայոց եկեղեցի» ամսագրի երկու համարում:

Բնականաբար, Գևորգյան ճեմարանի պատմությունը նշվում է ամեն անգամ, երբ գրում են նրա շրջանավարտների մասին: Մա Մուրբ Էջմիածնի աշխարհահռչակ մշակութային և հոգևոր կենտրոնն է... Գրական անձնակազմի այս դարբնոցում կրթություն ստացած Հայ առաքելական եկեղեցու քահանաներ և շատ անվանի հայեր կան: Կոմիտասն է այնտեղ սովորել, դա-

սավանդել, դաստիարակել իր ուսանողներին ու աշակերտներին...

Ճեմարանը հիմնադրել է Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ IV-ը: Բոլոր աղյուսները նշում են, թե որտեղ է նա ծնվել և երբ, ինչ է նրա խակական անունը (Քերեստեջյան):

Բայց պարզվում է, որ Ռշտունի ազգանունով պատրիարքներին պետք է ավելացնել նա մեկ կաթողիկոսի՝ Գեորգ IV-ին, քանի որ նա նույնպես փառախեղ Ռշտունի տոհմի սերունդներից է:

1869 թ. մայիսի 18-ին, Սուրբ Էջմիածնի հյուսիսային մասում, անձամբ Գեորգ IV կաթողիկոսի կողմից դրվեց Գեորգյան ճեմարանի հիմնաքարը: Տոնակատարության արարողության ժամանակ գրող Ղազարոս Աղայանը սրտանց խոսքեր արտասանեց. «*Մենք ականատես ենք եղել երկու ուրախ առիթների, որոնցից մեկը կաթողիկ սրբալայսման երկրորդ տարեդարձն է, իսկ մյուսը՝ ճեմարանի հիմքը*»: Շենքը կառուցվում էր գրեթե հինգ տարի: Ցարական պաշտոնյաների ու Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների հետ բազմաթիվ ձգձգումներից ու խոչընդոտներից հետո վերջապես բացվեց ճեմարանը: Ի դեպ, համարյա ամեն եկեղեցական շենքի կառուցման կապակցությամբ նույն Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները պատմություն էին սարքում: Հայ եկեղեցու պատմությունը ճեմարանում դասավանդելու հրավիրվել էր Մաղաքիա Օրմանյանը: Դասավանդում էին Կոմիտասը, Մանուկ Աբեղյանը, ապագա կաթողիկոսներն ու արքեպիսկոպոսները, հայ անվանի այլ գործիչներ...

Չնայած այն հանգամանքին, որ ճեմարանը հիմնադրվել է որպես աստվածաբանական դպրոց, 19-20-րդ դարերում այն դարձել է մշակութային կրթական հաստատություն:

Եվ քչերը գիտեն, որ Գեորգ IV-ը՝ Գրիգորի Քերեստեջյանը՝ Գեորգ Կոնստանդնուպոլսեցին, Կարապետ Ռշտունու որ-

դին էր: Մակայն նույնիսկ Վիքիպեդիայում ոչինչ չկա այդ մասին:

Ռշտունու այս ճյուղի պատմությունն արժանի է նկարագրության և ուսումնասիրության, շատ փառախեղ անուններ են պատիվ բերել այդ տոհմին:

Գրիգորի հայրը՝ Կարապետ Ռշտունին, որպես դպիր, ծառայում էր Նարեկավանքում, ապա տեղափոխվեց Պոլիս: Այնուամենայնիվ, ֆինանսական իրավիճակն այնքան ցավոտ ու անհույս դարձավ, որ, հիվանդանալով և սպասելով իր վախճանին, բացառիկ կարողություններով աչքի ընկած իր որդիներից մեկին հանձնեց վաճառական Քերեստեջյանի շատ հարուստ և կրթված ընտանիքի խնամքին, որն էլ որդեգրեց տղային: Բայց Գրիգորը բոլորի կողմից ճանաչվում էր որպես Ռշտունի, քանի որ նա շատ էր սիրում եղբայրների և ապագայում օգնեց նրանց, որ լավ կրթություն ստանան: Հետո նրանց թոռները, ծոռները՝ նույնպես Ռշտունիներ...

Գրիգորի ավագ եղբայրը՝ Մարգիսը, լավ կրթություն ստացավ: Հետագայում հրավիրեցին Հունգարիա, որտեղ նա հիմնադրեց և սկսեց հայկական թերթ հրատարակել... Իսկ նրա որդուն՝ Կարապետին, կանչեցին Գյավաշ (Ռուսան), որտեղ մնում էր երկայր տարիներ: Նա իր պոլսեցի եղբայրների տեղափոխեց ու վերականգնեց Ռշտունիքում մնալու նրանց իրավունքը... Մարգիսը, արդեն բավականին հասուն տարիքում, ընտանիքի հետ տեղափոխվեց Նոր Բայազետ (Գավառ)՝ իր հետ տանելով Գալուստ և Հարություն եղբայրներին, Հարությունի որդի Վահանի հետ, որը սովորում էր Էջմիածնի Գեորգյան ճեմարանում...

Հետագայում Վահանը դարձավ հայտնի պատմաբան Վահան Ռշտունի՝ հայտնի դատապաշտպան Ռուբեն Ռշտունու հայրը, իսկ Գալուստը քաղաքական գործիչ Գալուստի մի ոտքն էջմիածնում էր, մյուսը՝ Նոր Բայազետում: Երևանի Աբովյան փողոցի սկզբնամասում, նախկին Կենտրոնական



հանրախանութի (այն կոչվում էր նաև «Օտբորոգ», այնուհետև դարձավ «Մանկական աշխարհ») դիմացի բակում, Գալուստը տուն գնեց, ամուսնացավ Արուսյակ Լուսինյանի հետ: Մտածված թե պատահաբար, հայտնի չէ, բայց պարզվեց, որ աղջիկը հին հայկական Լուսինյանների տոհմից էր, ունեցան չորս երեխա՝ Սարգիս, Մուրեհ, Մեղա, Հենրիկ...

Սարգիսը վերցրեց Հեկտոր գրական կեղծանունը, դարձավ գրականագետ, հայտնի բանասեր Հեկտոր Ռշտունին: Փիլիսոփաների ու դպրոցի ուսուցիչների մի քանի սերունդ մեծացել են նրա գրական հողավածներով ու հիանալի գրականագիտական գրքերով:

Իսկ Գալուստի եղբայրը՝ Օնիկ Ռշտունին, մնաց Թուրքիայում, դարձավ ֆիդայի և ոչ մի տեղ չգնաց Ռշտունիքից: Ջենքը ձեռքին «կետային վրիժառուն» սարերում կռվում էր թուրքերի ու քրդերի դեմ: Կարելի է ասել՝ պարտիզան էր՝ վրեժ էր լուծում կորցրածի համար... Թուրքերը շատ ոսկի էին խոստանում նրա գլխի համար, բայց երկար ժամանակ ոչ ոք չէր մատնում:

Տարիներ շարունակ, ավերված ու լքված տնից հեռու, նա գաղտնի ընտանիք ստեղծեց, քանի որ դառնալով ֆիդայի՝ երդվել էր, որ չէր կարող ամուսնանալ եկեղեցում: Եվ գաղտնի էր պահում իր կնոջ ու երկու երեխաների գտնվելու վայրը: Բայց գտնվեց մի սրիկա, որը գնվեց ոսկով: Այն պահին, երբ ֆիդային կոռացավ գետից ջուր խմելու, նրան հետապնդող թուրքը դանակով խփեց մեջքին: Իսկ կնոջն ու որդիներին ուրիշ քրդեր թաքցրին:

Հետաքրքիր է, թե ինչպես Ռշտունու որդիները, թոռները, ծոռները շրջում են նախկին Ռշտունիքով, ապրում են թուրքական անուններով գյուղերում և չեն էլ պատկերացնում, թե իրենք ովքեր են իրականում... Հետաքրքիր է, թե՞ ռդերգական:

Նրանց քույրը նույնպես ապրում էր Ռշտունիքում՝ Գլավաշում: Ամուսնացավ հարուստ մարդու հետ, անհետացավ

կամ մահացավ 1915 թվին... Ի դեպ, նրա փաստաթղթերը հրաշքով հայտնաբերվել են ամերիկյան ապահովագրողների մոտ, մեծ գումարներ են փոխանցվել Հայաստան՝ ժառանգներին՝ նրա եղբոր թոռներին: Բայց, չգիտես ինչու, գումարն անհասկանալի ձևով անհետացավ կամ յուրացվեց մինիստրության մութ ծալքերում:

Բավականին հետաքրքիր է Գալուստի որդի Հեկտոր Ռշտունու դոկտորական դիսերտացիայի հրատարակման ու պաշտպանության պատմությունը: Պետական անվտանգության կոմիտեն թույլ չտվեց հաստատել ն՝ թեման, և՛ պաշտպանությունը: Բայց առեղի քանակությամբ նյութերը, տարիների քրտնաջան աշխատանքը և, վերջապես, սուր գիտակցումը կոնկրետ այս թեմայով աշխատելու անհրաժեշտության մասին, Հեկտոր Ռշտունուն դրոշեցին դիմել ակադեմիկոս Լիխաչևին՝ նրա անկասկածելի հեղինակությանը: Լիխաչևը, ծանոթանալով խնդրին, անհրաժեշտ համարեց միջամտել, ինչի համար նա երեք անգամ այցելեց երկրի գլխավոր գաղափարայնու Մուսուլին:

Վերջապես, այլևս ոչնչի հույս չունեցող Հեկտորը կանչվեց հատուկ բաժին, որտեղ նրա առջև մի ձևաթղթի վրա տպած թուղթը դրին ու սկսեցին հարց ու փորձ անել իր դոկտորական դիսերտացիայի մասին, թե ինչու է այս թեման ընտրել, ո՞վ է թույլ տվել: Շնտանիքի վախեցած անդամներն արդեն սկսել էին անհանգստանալ. մարդը մեկնել էր Պետկոմիտեի հատուկ բաժին և այսքան երկար ժամանակ չէր վերադառնում: Իսկ նա ՊԱԿ-ի սպային հանգիստ պատմում էր արևմտահայ մեծ բանաստեղծ Միամանթյոյի մասին: Կարդաց նրա բանաստեղծությունները, խոսեց նրա ճակատագրի, իր եղբայրների ճակատագրի մասին... ՊԱԿ-ի սպան լսեց, լսեց և, այնուամենայնիվ, որոշեց խորհրդակցել ինչ-որ մեկի հետ: Հետևապես պես Հեկտորը մի այցով նայեց սեղանին ընկած թղթին: Չհավատալով

աչքերին՝ կարգաց մի փոքրիկ տեքստ, որի իմաստն էր «ԹՈՒՅԼԱՏԻՎՈՒՄ Է»:

Այսպես առաջին անգամ հրատարակվեց մեն Միաման-թոյի և նրա ստեղծագործության մասին մի գիրք, որն այն ժա-մանակ հասարակության համար բացեց մի փայլուն ուսումնա-սիրություն բանաստեղծի մասին, ում պատկանում են բոլորիս հայտնի անմահ բառերը. «Ո՛վ մարդկային արդարություն, թող որ թթնե՛ս ըմ ճակատիդ»: «Միսսք Մեծարեցը», «Ղանիել Վա-րուժանը», «Գեղամ Սարյանը» նրա մյուս գործերն են: Այս մա-սին նրա որդին՝ Տիգրան Ռշտունին, ավելի մանրամասն պատմվածք-շարադրություն է գրել: Մա շատ բնութագրական պատմություն է սովետական կարգերի համար, որոնք արևմ-տահայ պոեզիայի և գրականության հրաշալի մարգարիտները կտրում էին արևելահայերենից: Ցարական ժամանակներում նույնպես արգելվում էին այն բանաստեղծներն ու գրողները, ովքեր գեթ մի փոքր ազգային հարց էին բարձրացնում:

Իսկ Գալուստը... Գալուստը ջերմեռանդ դաշնակցական էր: 21թվին տեղի ունեցած ապստամբության ժամանակ, երբ բուլշևիկները վտարվեցին Հայաստանի գրեթե բոլոր մարզերից, Մտեփան Թոփչյանի հետ կես տարի իշխանություն ստանձնե-ցին Քյավառում... Եվ երկու տարի առաջ 1919 թվին, լինելով օգ-նության բաշխման հարցերով հանձնակատարի տեղակալ, նա իմացավ, որ գյուղացիներն Էջմիածնի պահեստներից գողա-նում էին այնտեղ պահված օգնությունը, որը եկել էր հեռավոր Ամերիկայից: Եվ այս գողությունը տեղի էր ունենում ընդիա-նուր տվի ժամանակ, որն ավերում էր երկիրը: Գալուստ Ռշ-տունին, կանացի զգեստ հագած, հասնում է Էջմիածին և առը-ճանակը ձեռքին, թաքնվում ինչ-որ հարուստ մարդու գոմում ու դիմադրություն ցուցաբերելու ժամանակ գնդակահարում գո-ղին : Այդ ժամանակ, պատժից վախենալով, Էջմիածնի բոլոր հարազատները փոխեցին իրենց ազգանունները և դարձան Աբրահամյաններ... Դա 1921 թվականն էր...

Գալուստը, այնուամենայնիվ, ընկավ բուլշևիկների ճի-րանները: Նրան դատեցին, չնայած որ նա կատարում էր իր պաշտոնական պարտականությունները ու ստիպված գնդա-կահարեց գողերին: Նա արտոլվեց: Աբուրից հրաշքով փախավ Պարսկաստան, դասավանդեց Թեհրանում, և շատ մարդիկ կա-յին, ովքեր նրան լավ ճանաչում ու հիշում էին...

Մոտ 50 տարի անց՝ 70-ականներին, Բրեժնևը Երևանում էր և, ի միջի այլոց, փաստաթղթեր ստորագրեց դաշնակցական Գալուստ Ռշտունու ներման ու ԽՍՀՄ ներգաղթելու թույլտ-վության մասին... Թույլտվությունը նա ստացավ Իրանում ԽՍՀՄ դեսպանատանը, բայց այնտեղից դուրս գալուց գնդա-կահարվեց, նրան սպանեցին հեեց դեսպանատան առջև: Թե-րանում հուղարկվությունը վերածվեց համաժողովրդա-կան ցույցի... Երկրի դրկավարն արդեն ՊԱՎ էր, ոչ թե Բրեժ-նևը կամ Քաղբյուրուն... Դե, նրանց հավերժական ձեռագիրն է դասակարգային թշնամիների ոչնչացումը աշխարհի ցանկա-ցած կետում՝ առանց վաղեմության ժամկետի:

Նրանք գնդակահարեցին ողջ թագավորական ընտանիքը երեխաների հետ միասին...

Ի դեպ, ինչպես Վահան Ռշտունին ճնշման ենթարկվեց, այնպես էլ նրա զարմիկը՝ Հեկտոր Ռշտունին, որն այդ ժամա-նակ ուսանող էր: Հետագվեց համալսարանից՝ որպես հակահե-ղափոխականի որդի: Բայց Հեկտորն էքստենսով քննություն-ներ հանձնեց, նստեց չորրորդ կուրս, ավարտեց ուսումը, այնու-հետև շարունակեց այն Մոսկվայում:

Վահան էլ պակաս չէր հալածվում: Բայց փայլուն գիտե-լիքների տեր էր, անվանի պատմաբան ու դասախոս. նրան հանգիստ աշխատելու հնարավորություն հաջողվեց ստանալ:

Շատ տարիներ առաջ, իշխանական տներից՝ Փախլավու-նիները, Գևուկիները, Արծրունիները, Բագրատունիները, Բզ-ունիները, Կամսարականներն ու Մանավազյանները և այ-լքհանձնարարեցին Հայոց իշխանների միության կնիքը փո-

խանցել չեկտոր Ռշտունու որդուն՝ Տիգրան Ռշտունուն՝ հոչակելով նրան իշխանների միության առաջնորդ: Հաշվի առան և այն, որ Տիգրան Ռշտունկին Արուսյակ տատի կողմից Լուսինյան է, որի քույրերն ապրում էին շքմիածնում, եղբայրները՝ Թբիլիսիում: Արտյուշա Լուսինյանը ժողովրդական արտիստ էր, ծառայում էր հայկական «Թբիլիսի» թատրոնում, իսկ Ռուբենը...

Ռուբենը լեզենդ էր:

Սա այն անձն է, ով ապտակել է Քերիային... Այս դրվագը անմահացրեց Թենգիզ Աբուլաձեն իր «Ապաշխարություն» ֆիլմի մեջ: Տիգրան Ռշտունու պատմելով՝ Ռուբեն Լուսինյանին, որը Վրաստանում ազգություների մշակույթի ու մամուլի գծով բաժնի վարիչ է եղել, Քերիան կանչել ու ասել է, որ Թիֆլիսի հայկական մամուլը ջուր է լցնում ժողովրդի թշնամիների ջրադացին, և հանրությունը պահանջում է այն փակել... Ռուբենի վերջնական պատասխանն ապտակն է լինում... Բայց այդ անասունը, բանից պարզվում է, էպիլեպտիկ է լինում... ընկնում է գետին ու բերանից փրփուր է դուրս գալիս... Թիկնապահը ներս է մտնում, որ կրակի, տեսնում է Հավլաբարի իր մանկության ընկերոջը... Ատրճանակի պոչով գլխիկ տալիս, շշմեցնում է, ապա հագցնում համապատասխան համարակալված պարկի մեջ, որով դիակներն էին դուրս հանում ու ձևակերպում մեռած... Կինը, լուրն իմանալով, իրեն նետում է Քոստը, իսկ աղջիկը կորչում է... շեռտ պարզվում է, որ այդ համարակալված պարկը նետվել է աղբատար մեքենան ու դուրս բերվել երկրից (Լեհաստան): Ապրում է ուկրաինացու անվան տակ... Մնացածը կարելի է իմանալ Վիբիպեդիայից: Հայ արձակագիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ 1936 թ.-ից:

Անցած տասից ավելի դարերին Ռշտունյաց, Բագրատունյաց, Արծրունյաց, Պահլավունյաց տոհմերի հետևորդների մեջ ընտրյալ լինելու զգացումը չի վերացել: Եվ նույնիսկ ավելին արքայական արյունը խոտում է:

Արուսյակ Լուսինյանը, երբեմն կեկատակ, ծաղրում էր հարսին՝ Վահանի կնոջը, նույնպես Արուսյակին, բայց Միլիկովային:

Գալուստի կինը՝ Արուսյակ Լուսինյանը, ըստ իր ընտանիքի հիշողությունների, Գալուստի եղբորորդու՝ Վահան Ռշտունու կնոջը, ով վերցրել էր նրա ազգանունը, ասում էր.

– Դու նույնիսկ հայ չես, քեզանից ի՞նչ Ռշտունի:

Իսկ նա պատասխանում էր.

– Ես հայտնի գեներալ Մովսես Միլիկովի քույրն եմ: Իսկ դու նույնիսկ Ռշտունի չես, այլ պարզապես Գալուստ Ռշտունու կինը:

– Այո, ես Ռշտունի չեմ, բայց ես Լուսինյան եմ: Իսկ դու ուր եղբայրն ուղիներ եք, – առանց չարության խոսակցությունն ավարտում էր արքայական արյուն կրող աղջիկը:

Գալուստի թոռն այսօր Հայ իշխանների միության առաջնորդն է, որն իր մեջ ներառում է մի ժամանակ ազնվական ազգանուններ կրող ընտանիքներ՝ Բագրատունի, Արծրունի... Միությունը հիմնադրել է հունգարահայ (ամենայն հավանականությամբ՝ տրանսիլվանական. այնտեղ ժամանակին հայերի մեծ գաղութ կար) Ռոյալդ Անեցի Բագրատունին...

Այս միությունը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում... Սրա համար ստուգվեցին տոհմաբանական ծառերը (Մուլը Էջմիածնի տվյալները) երբեմնի հզոր Բագրատունիների տոհմի ժառանգ Ռոյալդ Միսոն Անեցիի կողմից, որը եկել էր Հայաստան: Նրա կոչումը ճանաչում են Բուպանիայի թագավոր վրացի Բագրատունիների, Մայթայի մեծ Իշխանի, Լյուքսեմբուրգի դուքսի և Շվեդիայի թագավորի ազնվական ընտանիքները: ՀՀ ակադեմիայում, նրա տոհմաձառը ուսումնասիրելիս, նրանք գտել են տոհմաձառի ընդամենը երկու աննշան տարբերություն անուն, որը կարելի է այդպես գրել:

Միսոն Անեցու հատկիպումը տոհմերի ներկայացուցիչների հետ փակ էր: Նա ցուցակից դուրս հանեց շատերին, հաստ-

կապես նրանց, ովքեր հաճոյանում էին՝ հույս ունենալով նվերներով կոչում ստանալ: Նա նախանշեց միտոյան նպատակները, ներկայացրեց կանոնադրությունը, շատ բան պարզեց Հայաստանում ժառանգների հնարավոր պահանջների վերաբերյալ ու հեռացավ:

Աշխարհի ամենահին իշխող տների ներկայացուցիչները՝ Վաղլետայում հանդիպում են երկու տարին մեկ: Նա նկարահանել և իր հետ տարել է Հայաստանի իշխող տների ժառանգների տեսանյութը...

Երկար ժամանակ միտոյան ղեկավարն էր գեներալ-գեղապետ Արամ Փահլավունին, ապա Տիգրան Գևուկին, այժմ՝ Տիգրան Ռշտունին է (Հեկտորի որդին), իսկ Փահլավունին պատվավոր նախագահն է:

Ահա այսպիսի թագավորական ու իշխանական գործեր և մանրամասնություններ...

Ի դեպ, Թուրքիան (նրա պատմաբանները) հայտարարում է, որ երբ նրանք նվաճեցին Բյուզանդիան, Հայաստան պետության այդ քոչվորները չեն հանդիպել: Այո՞, պետություն չկար, բայց իշխաններն իրենց հողերով, որոնք վստահեցին եկեղեցուն, մնացին իշխող տան ժառանգորդներ, և այդ ունեցվածքը որոշ տեղերում պահպանվեց: Այս իշխող տները հարաբերություններ էին հաստատել Եվրոպայի, եվրոպական իշխանական կենտրոնների հետ: Նրանք նույնիսկ սաքսոնական արհեստավորներին սպասք էին պատվիրում, որոնք, որքան էլ տարօրինակ է, դարեր շարունակ փոխանցվել են սերնդեսերունդ և գոյատևել մինչ օրս: Դրանք հայկական իշխանական տների ներկայացուցիչներն են, որոնք կարող են օրինական հավակնորդներ հանդիսանալ մեր հողերի համար՝ բացառությամբ նրանց, ովքեր ազնվականության կոչում են ստացել թագավորից:

Ոչ, ավարտված չէ հայոց տոհմերի, ինչպես և Ռշտունիների տոհմի պատմությունը: Եվ տոհմը դեռ կենդանի է՝ չնայած

այդքան ազնվական, բայց վաղուց այդքան անվանի չէ: Շատ ժամանակներ են անցել, բայց այս ազգանունները կրողները մարդիկ՝ Ռշտունիները, Արծրունիները, Բագրատունիները, Ամատունիները և շատ ուրիշներ, պահպանել են կրթության տենչը, հայրենիքի ազնիվ պաշտպանների որակները: Դրանք միակ կամուրջն են, միակ թելը անցյալ դարերի հարուստ պատմության և մեր օրերի միջև: Եվ նրանք շատ բան կարող են պատմել իրենց ազդեցիկ հայ ընտանիքների փառահեղ, հիմնականում ողբերգական պատմություն մասին:

Մնում է, որ հաշվի առնվի փորձը...

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Արզազ, Հայաստանի պատմություն, Մանկո Պետերբուրգ, 1988թ.:
2. Մանուկ Աբեղյան, Հին հայ գրականության պատմություն. (ՀՍՄՀ ԳԱ հրատարակ.), Երևան, 1975թ.:
3. Աբլաժեյ Լ.Ն., Օտար երկրից օտար երկիր... Այսպիսի արտոյալ հայ ներգաղթյալները (1949-1958թ.թ.), Լոկոսիլիբրակ, «Լատվա», 2018. -320:
4. Հակոբյան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքներ., Եր., «Հայաստան», 1987թ., էջ 256:
5. Հայկ Ասատրյան, Ընտիր երկեր, Երևան, «Ամարաս» 2004թ., էջ 412:
6. Հայկ Ասատրյան, «Անիվ» ամսագիր: <http://aniv.ru/archive/2/armjane-i-armjanskoe-nagore-ajk-asatryan/#forVote>
7. Փավստոս Բուզանդ, Հայաստանի պատմություն /թարգմ. և մեկնաբանություններ/ Գևորգյան Մ.Ա, Երևան, 1953թ.:
8. Արվինդիկ Ալեքսանյանի սիբիրյան օրագիրը 1949-1954թթ. «Գիտություն» հրատ. ՀՀ ԳԱԱ, Երևան, 2007 թ.:
9. Վիրաբյան Ա., Տեղահանության փաստաթղթերը, 1949 թ., Հայաստանի արխիվների տեղեկագիր. 1990. N 3.P. 68-76 (հայերեն):
10. Պոլյան, Լեքսիկոնական հարկադիր միգրացիա <http://old.memo.ru/history/deport/polyan1.htm>:
11. Ղևոնդը VIII դարի հայ պատմաբան է «Խալիֆայների պատմության» հեղինակ, ով նկարագրել է Հայաստանի քաղաքական պատմությունը 640-788 թվականներին: Գրքի վերջին մասը գրել է որպես ակնարկ: «Խալիֆաների պատմության» տեքստը երկար ժամանակ կորած էր համարվում և հայտնաբերվել էր միայն XIX դ 40-ականներին:
12. Թումաս դե Վալա, «Սև պարտեզ» գեղարվեստական-փաստագրական գիրքը դարաբաղյան հակամարտության պատմության մասին 2005 <https://www.litmir.me/br/?b=120760&p=1>:
13. Ալեքսանդր Վասիլևսկի, Մումգայիթի ջարդերի և Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին: «Ամպ սարերում», «Ավրորա» ամսագիր, թիվ 10, 1988թ.:
14. Ասադով, «Ավրորա» ամսագիր, թիվ 10, 1988 թ., <http://sumgait-info/press/zhurnal-avrora/ avrora-october-1988թ.htm>:

15. Անդրեան Ֆ.Տ., Հատուկ բնակավայր Մարտոշ: փաստաթղթերով պատմություն (վիպակ) Կամենսկ-Ուրալսկի [Կուրգան 2004. - 397 էջ, դիմանկարներով:

16. Ռուբեն Գարսիա Նեմկանդի, ճակատամարտ, Ինչպես արարները թրերի ծայրով իլլամը բերեցին Պարսկաստան: [tj.sputniknews.ru/Sputnik](http://tj.sputniknews.ru/Sputnik) (21 մայիսի, 2019 թ.):

17. Գրյուսե (1885-1952) ֆրանսիացի պատմաբան, հեղինակավոր Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Լա գրել է մի քանի խոշոր գործեր: Ասիայի և արևելյան քաղաքակրթությունների մասին, Խաչակրաց արշավանքների և Տափաստանային կայսրության պատմություն, (Rénét 18. Grousset, Rue de L'Arménie des origines à 1071, Փարիզ, 1973թ.) :

19. Հայերի տեղահանում 1949 թ. հունիսի 14-ին Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Գործադիր խմբագիրներ պատմական գիտությունների դոկտոր Լ.Ն. Աբլաժեյ, պատմական գիտությունների թեկնածու Հ.Լասաույան, Լոկոսիլիբրակի «Գիտություն», 2016թ., բաժին III: Հետազոտություններ Լատալիա Աբլաժեյ, IV Հ. Լասաույան:

20. Ելիսևն Ֆյոդոր, «Կազակները կովկասյան ձակատում 1914-1917», 2010 թ., Վոյեննիզդատ:

21. Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին», 32, 71:

22. Տեղահանման ընթացքում տեղահանությունների պատմություն, Աղբյուրը՝ <https://cyberleninka.ru/article/n/repressii-odnoy-semi-istoriya-repressii-semi-semke> Բովանդակություն 1. 1919-1933 թվականների կազակական և կուլակական կապեր: 2. Քաղաքների և սանհանտներն հողերի մաքրում: 3. Պատերազմական հարկադրված միգրացիաներ: 4 Հետպատերազմյան տեղահանումներ: 5 Տեղահանությունների ռեպրեսիվ բնույթը ԽՍՀՄ-ում:

Աղբյուրը [https://hister1.ru/kurs\\_5sssp/deportacii-narodov-v-sssr.htm](https://hister1.ru/kurs_5sssp/deportacii-narodov-v-sssr.htm):

23. Հայաստանի պատմությունը հեագույն ժամանակներից մինչ օրս: Ալադեմիկոս Ա. Մեյրոնյանի խմբագրությամբ, Երևան 2005թ.:

24. Ռինա Վարժապետյան, Հրեաների պատմությունը Հայաստանում. Հայաստանի հրեական համայնք, Երևան, Լուսարաց հրատարակչություն, 2012թ., էջ 191, Հրեաները Հայաստանում:

25. Իվիցկի Լ.Ա., Կոլեկտիվացում և կուլակաթափում (30-ականների սկիզբ), դասագիրք համալսարանների և դպրոցների համար, 1996 թ.:

26. Ղազանջյան Ռ.Վ., Ռուս-թուրքական հարաբերությունները 1920-1922թթ. և Հայաստանի հարցը մոսկովյան արխիվների գաղտնի փաստաթղթերի լույսի ներքո:

27. Կորզանով Գ. Գ., Հայերի մասնակցությունը Համաշխարհային պատերազմին Կովկասյան ճակատում (1914-1918): M. MAX Press, 2011:

28. Կետենջի Էրոլ, «Կրոնը և ազգը տարբեր հասկացություններ են», հարցազրույց (Անտոն Եվտրասով) <http://kavkazgeoclub.ru/content/-religiya-i-naciya-eto-raznye-ponyatiya>

29. Ջոն Կիրակոսյան, Արևմտյան Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Երևան, Երևանի հրատարակչություն, 1971 թ.:

30. Կրիվով Ա., Բյուզանդիան և արաբները վաղ միջնադարում, Լոբ բյուզանդական գրադարան:

31. Ի. Լևիպիուս, «Հայ ժողովրդի իրավիճակի մասին գեկույցը՝ գերմանական արևելյան առաքելության նախագահ և գերմանահայ հասարակության նախագահ ռուկտոր Ի. Լևիպիուսի», Կ. Պոլիս, 1919թ:

32. Լեո, Անցյալից: Հիշողություններ, փաստաթղթեր, դատողություններ, Թիֆլիս, 1925թ., էջ. 321-323 (հայերեն)

33. Մյուլլեր Ա., Իսլամի պատմություն, հատոր I, էջ 290-291:

34. Գուրգեն Մահարի, Օաղկած փշալարեր, Երևան, 1988թ. (հայերեն):

35. Ա. Յա. Մանանդյան, Հայաստանում ժողովրդական ընդվզումներ՝ ընդդեմ արաբական տիրապետության, Երևան, 1939թ.

36. Օզանեայան Է.Վ., Կուլակների որպես դասի վերացում Հայաստանում ամբողջական կոլեկտիվացման հիմքի վրա: Թեզ. գիտությունների թեկնածու: Երևան, 1949 (հոլոմ):

37. Վաչե Հովսեփյան, Գարեգին Լժդեհը և ՊԱԿ-ը: Հետախույզի հուշեր, Երևան – 2007թ.:

38. Озджарк М. 1920-1922 թվականներին Անկարային սովետական օգնության քննարկում (հոլոմ):

39. Օրբելի Ի.Ա., Հայկական ճարտարապետության պոմանները Ախարամար կղզում // Orbely I. A. Քաղված աշխատանքներ, Մ., 1968 թ. Հատոր I:

40. Раскулачивание в Армении Термины репрессий <http://www.armeniatotalitaris.am/?p=1697>

41. Հովհաննիսյան Ա., Գլխը Թումանյանի մասին (կա թվային):

42. Էդուարդ Հովհաննիսյան, Պայքարի դարաշրջան. (Կա և թվային): [https://vtorayaliteratura.com/pdf/oganesyan\\_vek\\_borby\\_tom2\\_1991ocr.pdf](https://vtorayaliteratura.com/pdf/oganesyan_vek_borby_tom2_1991ocr.pdf)

43. Piotrovsky B. B. Վանի Թագավորություն (Ուրարտու) / խմբ. Ի. Ա. Օրբելի: Մոսկվա. «Արևելյան գրականություն» հրատարակչություն, 1959.286 էջ.

44. <http://www.vostlit.info/Texts/rus4/Schapuch/frametext1.htm>

45. Դեկուլակացում և «կուլակ արտո» 1930-1931 թվականներին: [https://www.bbc.com/russian/russia/2010/02/100202\\_russia\\_collectivization](https://www.bbc.com/russian/russia/2010/02/100202_russia_collectivization)

46. <http://old.memo.ru/history/deport/polyan1.htm> Դեկուլակացում Հայաստանում 47. Ռուսներին պայաններ <http://www.armeniatotalitaris.am/?p=1697>

47. Վերականգնում, ինչպես դա եղել է <http://pmem.ru/index.php?id=154> ԵՍ

48. Տիգրան Ռշտունի «Մեկ զրքի պատմություն» 2015, Երևան, «Գրաշխարհ» թերթ, համարներ 1-4

49. Վտարման կարգ: ՌԳԱՄՊԻ. F. 17. Օր. 162. Դ 40. Լ 141 (Պատճեն): Լուրյանկա. Մտալինը և ԽՍՀՄ Պետական անվտանգության նախարարությունը ... էջ 261-262: № 83:

50. Մտալինյան տեղահանությունները 1928-1953թթ. ԽՍՀՄ-ում և Ա. Ն. Ցակովկա Մ., 2005 թ.

51. Մեքենո եպիսկոպոս, «Հերակլ կայսր պատմություն»:

52. Ա.Ն. Տեր-Ղևոնդյան, Հայաստանը և Արաբական խալիֆայությունը, 1977թ.:

53. Կիրիլ Լեո Թումանոֆֆ, Երրորդ դարի հայկական Արսիցիդներ., Ժամանակագրական և ծագումնաբանական մեկնաբանություն (revue des études arméniennes no 6 (1969) էջեր 233 – 281:

54. Կիրիլ Թումանոֆֆի ուսումնասիրությունները կովկասյան քրիստոնեական պատմության մեջ: Washington D.C.: Georgetown University Press, 1963, էջ 213:

55. Տրիֆոնովա Ե., Արևածաղիկ մայրամուտ., Թուրքիայի քեմալական դարաշրջան, Historikus պատմական և քաղաքական ամսագիր <https://historikus.ru/kemalizm/>:

56. Տաժմա Ե., Հանրապետություն Արևազիայում, պատմություն, ինքնություն, սցիպական հարմարվողականություն // Սփյուռքեր, Անկախ գիտական հանդես, 2015թ., թիվ 1-2 - հետ 89-90թթ.

57. Մովսեսական գյուղի ռդերգություն Կովկասի վարչական կոլլեկտիվացում և կուլակաթափում: T 65 1927-1939. Փաստաթղթեր և կրթություն. 5 հատորում: / T. 5. 1937-1939: Գիրք 1.1937 / էր. Վ. Դանիլովա, Ռ. Մենիկե. Մ. «Ռուսական քաղաքական հանրագիտարան» (ՌՈՍՍՊԵՆ), 2004. -648 էջ:

58. Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը և Արարական խալիֆայությունը, էջ. 35-36):

59. Թուլվաժյան Ար., Aniv տնտեսագիր <http://aniv.ru/archive/23/zemlja-i-korni-ardavast-tulumdzhan/>:

60. Խալիֆայայան Հ., Ալիքամարի ճարտարապետական հուշարձաններ // ճարտարապետական ժառանգություն Մ., 1969թ., թողարկում 18:

61. Խալիկյան Ա.Ե., Հայաստանի պատմություն, «Ֆիլին» հրատարակչություն, Երևան 2004թ.:

62. Խոմիզորի «Հայ առաքելական եկեղեցի. Սուրբ Լահատակներ, ականավոր հոգևորականներ, աստվածաբաններ, քրիստոնեական մշակույթի աշխատողներ: <https://textarchive.ru/c-2259158-p4.html>:

63. Մովսես Խորենացի, «Հայաստանի պատմություն», հ. 2, գլ. 8 (կաթվային):

64. [http://www.armeniaonline.ru/armenia/movses\\_xorenaci\\_2.php](http://www.armeniaonline.ru/armenia/movses_xorenaci_2.php) և <http://www.vehi.net/istoriya/armenia/khorenaci/01.html>:

65. Հրանտոշ Խառատյան, Քանակակազմային և կամ էթնիկ պատկանելություն, հայերը 1949-ի տեղահանության առանցքում:

66. Մերենց, Թեոդոր Ռշտունի (կաթվային) <https://www.litres.ru/terents/t-eodoros-rhshtowni/chitat-onlayn/page-6/> <https://mybook.ru/author/terents/teodoros-rhshtowni/reader/>:

67. Shashkov Վ.Յ., Կուլակաթափում ԽՍՀՄ-ում և հատուկ վերաքննախիչների ճակատագիրը, 1930-1954թթ., դոկտորական ատենախոսության թեմա:

69. Շահիկյան Ա.Կ., Հայաստանը և Հարավային Կովկասի երկրները բյուզանդա-իրանական և արարական հզորության պայմաններում, - ՏՔԻ. Ալեկսեյ, 2011. -512 էջ:

70. Հայ կաթողիկոսների հանրագիտարան. Ամենայն հայոց Կաթողիկոսներ հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008թ.:

71. Սարգիս Ռշտունի/ Ռշտունի <https://blognews.am/rus/news/172500>

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՆԱԽԱԲԱՆԸ.....	4
ՉԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ.....	8
ԱՆԱՇԿԵՐՏԻ ՀՈՎԻՏ՝ ԾԱՂԿԱԾ ԱՆԴԱՍՏԱՆ.....	13
ՌՈՒՄԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՇԵՏԵՎԻՑ.....	25
ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ, ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐ.....	57
ԻՇԽԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆ.....	73
ՀՈՐԶԱՆՈՒՏ.....	120
ԿԱՐՃԱՏԵՎ ԴԱՂԱՐ.....	141
ՀԱՎԵՐՃ ԱՔՍՈՐԸ.....	192
ՏՈՍՄԿԻ ՏԱՐԱԾՔ: ՆԱՌԻՄ.....	199
ՃԱԿԱՍԱԳՐԻ ՓՇՐԱՆՔՆԵՐԸ.....	221
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	266

ԳՈՀԱՐ ՌԵՏՈՒՆԻ

## ՀԱՅՈՑ ԲԱՆՏԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ

Խմբագիր՝ Հովիկ Վարդումյան  
Սրբագրիչ՝ Գալյա Հովանիսյան, Լիլի Ղարիբյան  
Համակարգչի դասավորությունը՝ Գևորգ Շառոյան  
Կազմ՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Ռուբեն Արուտչյան  
Ձևավորում և էպիգրաֆներ – հեղինակի  
Դիզայնում օգտագործվել են նկարագաղարումներ և նյութեր  
ազատ աղբյուրներից

«ԳԵՎՈՐԳ – ՀՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ 055-52-79-74  
Էլ. փոստ [Iusakn@rambler.ru](mailto:Iusakn@rambler.ru)



9(47.925)

72-58

հ<sub>2</sub>



Ավելի քան քսան գրքերի հեղինակ Գոհար Ռշտունին ձեր ուշադրությանն է ներկայացնում հայ ականավոր հրամանատար՝ Սպարապետի, Հայաստանի իշխան Թեոդորոս Ռշտունու մասին գիրքը: Գիրքը նաև պատմում է հայ ժողովրդի պատմության մեջ Ռշտունի ազգանվան հետ կապված իրադարձությունների մասին: Եվ այն ընդգրկում է այս պատմության երկու հազարամյակները: Պատերազմներ Պարսկաստանի, Բյուզանդիայի, արաբների, թաթար-մոնղոլների, օսմանցիների, երիտթուրքերի և բուլղարների հետ...

ISBN 978-9939-899-12-1



9 789939 899121